

Հոբիտ կամ գնալն ու գալը

Բովանդակություն

- 1 ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՅՈՒՐԵՐ
- 2 ՈՉԽԱՐԻ ԽՈՐՈՎԱԾ
- 3 ԴԱԴԱՐ
- 4 ԼԵՌԱՆ ՄԻՋՈՎ ԵՎ ԼԵՌԱՆ ԸՆԴԵՐՔՈՒՄ
- 5 ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԽԱՎԱՐՈՒՄ
- 6 ԱՆՁՐԵՎԻՑ ՓԱԽՉԵԼ, ՋՈՒՐՆ ԸՆԿՆԵԼ
- 7 ՉՏԵՍՆՎԱԾ ԱՊԱՍՏԱՐԱՆ
- 8 ՍԱՐԴԵՐ ԵՎ ՃԱՆՃԵՐ
- 9 ՏԱԿԱՌՆԵՐԻ ՄԵՋ ԴԵՊԻ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ
- 10 ՍՐՏԱԲԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
- 11 ՇԵՄՔԻՆ
- 12 ԻՆՉ ԷՐ ՍՊԱՍՈՒՄ ՆՐԱՆՑ ՆԵՐՍՈՒՄ
- 13 ՔԱՆԻ ՏԱՆՏԵՐԸ ՏԱՆԸ ՉԷՐ
- 14 ԿՐԱԿ ՈՒ ՋՈՒՐ
- 15 ԱՄՊԵՐԸ ԿՈՒՏԱԿՎՈՒՄ ԵՆ
- 16 ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՈՂԸ
- 17 ԱՄՊՐՈՊԸ ՃԱՅԹԵՑ
- 18 ԵՏԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ
- 19 ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՅՈՒՐԵՐ

Ժամանակով գետնի տակ, իր բնում մի հոբիտ էր ապրում: Ոչ թե ինչ-որ զգվելի, կեղտոտ, խոնավ բնում, որտեղ բոլոր կողմերից որդեր են կախված և գարշելի նամշահոտ է տարածված, և ոչ էլ ավագե չոր բնում, ուր չգիտես որտեղ նստես և ինչ ուտես: Ոչ, դա հոբիտի բույն էր, ուրեմն՝ բարեկարգ:

Բույնը սկսվում էր լուսանցույցի պես անթերի կլոր դռնից, որ ներկված էր կանաչ ներկով և ուղիղ կենտրոնում պղնձե փայլուն բռնակ ուներ: Դուռը դեպի ներս էր բացվում, մի երկար միջանցքի մեջ, որ նման էր երկաթուղային թունելի, բայց առանց ծխի ու մրի, և նույնիսկ շատ բարեկարգ. այստեղ պատերը փայտամած էին, հատակը սալիկապատ էր ու գորգածածկ, պատերի տակ փայլուն աթոռներ էին դրված և չորս կողմը կեռիկներ էին կախված՝ վերարկուների ու գլխարկների համար, քանի որ հոբիտը հյուրեր շատ էր սիրում: Թունելը գալարվում էր ավելի ու ավելի հեռու և բավականին խորաում էր, բայց չէր հասնում, իչպես մի քանի մղոնի վրա ապրող շրջակա բնակիչներն էին անվանում Բլուրի ամենախորքը: Թունելի երկու կողմերում դռներ էին, շա՛տ-շա՛տ, կլոր դռներ: Հոբիտը աստիճաններով բարձրանալ չէր սիրում. ննջարանները, լողասենյակները, նկուղներն ու մառանները (շա՛տ-շա՛տ մառաններ), հանդերձարանները (հոբիտը մի քանի սենյակ հատկացրել էր հագուստների պահպանման համար), խոհանոցն ու ճաշասենյակները գտնվում էին միևնույն հարկում և, դեռ ավելին, միևնույն միջանցքում:

Լավագույն սենյակները ձախ թևի վրա էին և միայն դրանք պատուհաններ ունեին՝ կլոր խորադիր լուսամուտներ, որ նայում էին այգուն և դեպի գետն իջնող հեռավոր մարգագետիններին:

Մեր հոբիտը բավականին ունևոր հոբիտ էր՝ Բեգինս ազգանունով: Բեգինսները Բլուրի շրջակայքում ապրում էին անհիշելի ժամանակներից և շատ հարգարժան ընտանիք էին համարվում ոչ միայն նրա համար, որ հարուստ էին, այլև, որ նրանց երբեք ոչ մի բան չէր պատահում, և իրենք էլ իրենց ոչ մի անսպասելի բան թույլ չէին տալիս. միշտ կարելի էր նախապես առանց հարցնելու կռահել, թե հատկապես ինչ կասի այս կամ այն Բեգինսն այս կամ այն առիթով: Բայց մենք ձեզ կպատմենք, թե ինչպես Բեգինսներից մեկին արկածների մեջ քաշեցին, և նա, ինքն էլ իր վրա զարմացած, սկսեց ամենաանսպասելի բաներ ասել և ամենաանսպասելի արարքներ թույլ տալ: Գուցե նա կորցրեց հարևանների հարգանքը, բայց դրա փոխարեն ձեռք բերեց... ի միջի այլոց, ինքներդ կտեսնեք, վերջ ի վերջո որևէ բան ձեռք բերե՞ց, թե ոչ:

Մեր հոբիտի մայրիկը... Ի դեպ, ի՞նչ բան է հոբիտը: Երևակայեցեք, արժե հոբիտների մասին ավելի մանրամասն պատմել, քանի որ մեր ժամանակներում նրանք հազվագյուտ են դարձել և իրենց հեռու են պահում Բարձր ժողովրդից. նրանք արդպես են անվանում մարդկանց: Իրենք ցածրահասակ ժողովուրդ են, մոտավորապես մեր կես բոյին և

մորուքավոր թզուկներից կարծիլ: Հոբիտները մորուք չունեն: Նրանց մեջ կախարդական, ընդհանուր առմամբ, նույնպես ոչինչ չկա, եթե կախարդական չհամարենք արագ և անշշուկ անհետանալու կարողությունը այն դեպքում, երբ ամեն տեսակ անուղեղ անճոռնի լողլողներ, ասենք մեզ ու ձեզ նմանները, աղմուկ ու շփոփոց են դնում, ասես փղեր լինեն: Հոբիտները ցմփոր են, վառ գույներ են հագնում՝ առավելապես կանաչ ու դեղին, ոտնաման չեն հագնում, որովհետև նրանց ներբանների կաշին բնականից հաստ է, իսկ ոտքերը, ինչպես և գլուխները, ծածկված են տաք, գորշ մորթով: Միայն թե գլխի մորթին զանգուր է: Հոբիտներն ունեն երկար ճկուն ու թուխ մատներ, բարի դեմք, ծիծաղում են թավ, խուլ ծիծաղով (հատկապես ճաշից հետո, իսկ նրանք, որպես կանոն, ճաշում են օրը երկու անգամ, եթե հաջողվում է):

Այժմ դուք բավականին բան գիտեք և կարելի է շարունակել:

Ինչպես արդեն ասել եմ, մեր հոբիտի, այսինքն՝ Բիլբո Բեգինսի մայրը առասպելական Բելադոննա Տուկն էր, ծերունի Տուկի, Գետի Այն Կողմում, այսինքն՝ Բլուրի ստորոտով հոսող գետակի մոտ ապրող հոբիտների գլխավորի երեք արժանահիշատակ դուստրերից մեկը: Ասեկոսներ էին պտտվում, իբրև թե հի՛ն-հին ժամանակներում Տուկերից մեկը Էլֆերից է կին առել: Հիմարություններ են, իհարկե, բայց Տուկերի բոլոր սերունդների մեջ իսկապես էլ ինչ-որ ոչ լիովին հոբիտային մի բան կար. ժամանակ առ ժամանակ Տուկերի տոհմից որևէ մեկը գնում էր արկածներ որոնելու: Նրանք շատ նրբանկատորեն անհետանում էին և ընտանիքն էլ ջանում էր կոծկել այդ բանը: Բայց փաստը մնում էր փաստ: Տուկերը այնքան պատվարժան չէին հարավում, որքան Բեգինսները, չնայած, ամենափոքր կասկած անգամ լինել չէր կարող, ավելի հարուստ էին:

Ճիշտ է, չի կարելի ասել, թե Բելադոննա Տուկը միստր Բանգո Բեգինսի հետ ամուսնանալուց հետո երբևէ արկածներ է որոնել: Բանգոն մեր վիպակի հերոսի հայրը, կնոջ համար (մասամբ և նրա փողերով) շքեղ հոբիտական բույն կառուցեց, որից շքեղը չկար ո՛չ Բլուրի ստորոտում, ո՛չ էլ Բլուրի ետևում, ո՛չ էլ Գետի Այն Կողմում, և ապրեցին նրանք այնտեղ մինչև իրենց օրերի վերջը: Եվ, այնուամենայնիվ, շատ հավանական է, որ Բիլբոն՝ Բելադոննա Տուկի միակ որդին, որ արտաքինով ու վարքագծով իր բարեվայելուչ, պատկառելի հոր ճիշտ պատճենն էր, Տուկիներից ինչ-որ տարօրինակություն էր ժառանգել, որը դրսևորվելու համար առիթ էր հարկավոր: Այդ առիթը երկար ժամանակ չէր ներկայանում, այնպես որ Բիլբո Բեգինսը հասցրեց մեծահասակ հոբիտ դառնալ, այսպես, հիսունին մոտ: Նա ապրում էր հոբիտական մի հիանալի բնում, որ հայրն էր կառուցել, նույն բնում, որ այնպես մանրամասնորեն նկարագրեցինք այս գլխի սկզբում, և թվում էր, թե նա իր տեղից այլևս չի շարժվի:

Բայց այնպես պատահեց, որ մի խաղաղ առավոտ, այն հեռավոր ժամանակներում, երբ աշխարհում շատ ավելի քիչ աղմուկ կար և առավել շատ կանաչ, իսկ հոբիտները քանակով շատ էին ու ապրում էին բախտավոր, Բիլբո Բեգինսը նախաճաշից հետո կանգնել էր դռան շեմին

ու ծխում էր փայտե երկար ծխամորճը, այնքան երկար, որ համարյա հասնում էր նրա փռչոտ ոտքերին (ի դեպ խոզանակով խնամքով սանրած): Եվ հենց այդ ժամանակ մոտերքով անցնում էր Հենդալֆը: Հենդալֆը... Եթե դուք նրա մասին լսած լինեիք գոնե քառորդն այնքանի, ինչքան ես եմ լսել, իսկ ես լսել եմ ընդամենը մի չնչին մասը այն ամենից, ինչ պատմում են նրա մասին, ապա դուք նախապատրաստված կլինեիք ամենաանհավանական պատմության համար: Պատմություններն ու արկածները սնկերի պես աճում էին ամենուրեք, որտեղ որ նա հայտնվում էր: Այս կողմերում նա արդեն վաղուց չէր եղել, այսինքն՝ այն օրից, ինչ մահացել էր նրա բարեկամ Ծերուկի Տուկը, և հոբիտներն արդեն մոռացել էին, թե Հենդալֆն ինչպիսի արտաքին ունի: Նա գործով հեռացել էր այն ժամանակ, երբ հոբիտները դեռ ձագեր էին:

Այնպես որ, այդ առավոտ միամիտ Բիլբոն պարզապես գավազանը ձեռքին մի ինչ-որ ծերուկ տեսավ: Ծերուկի գլխին բարձր, սրածայր, կապույտ գլխարկ էր, հագին՝ մոխրագույն երկար թիկնոց, արծաթավուն շարֆ, հսկայական սև սապոգներ, և ուներ նաև երկար, գոտկատեղից էլ ներքև իջնող սպիտակ մորուք:

— Բարի լույս, — ձայնեց Բիլբոն, ցանկանալով ասել հենց միայն այն, որ լույսը բարի է. արևը պայծառ փայլում էր, և խոտը կանաչին էր տալիս: Բայց Հենդալֆը նրա վրա մի խիստ հայացք նետեց իր թավ ու գզուզ հոնքերի տակից:

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել, — հարցրեց նա: — Ուղղակի ինձ բարի լո՞ւյս եք մաղթում: Թե՞ ակնդում եք, որ այս լույսը բարի է, անկախ նրանից՝ ես ինչ կարծիքի եմ այդ մասին: Թե՞ նկատի ունեք, որ այս առավոտ բոլորը պետք է բարի լինեն:

— Ե՛վ մեկը, և՛ մյուսը, և՛ երրորդը, — պատասխանեց Բիլբոն: — Եվ էլի՛ այսպիսի հրաշալի առավոտյան մաքուր օդում ծխամորճ ծխելը հաճելի է: Եթե դուք ծխամորճ ունեք, նստեք, իմ ծխախոտը փորձեք: Շտապելու հարկ չկա, ամբողջ օրը դեռ առջևում է:

Եվ Բիլբոն նստեց դռան մոտ դրված նստարանին, ոտքը ոտքին զցեց ու ծխի մի գեղեցիկ օղակաձև գորշ քուլա բաց թողեց, որը վերև բարձրացավ ու Բլուրի վրայով լողաց հեռուն:

— Հրաշալի է, — ասաց Հենդալֆը: — Բայց այսօր ժամանակ չունեմ օղակներ բաց թողնելու: Արկածի մասնակից եմ փնտրում, որ ես հիմա կազմակերպում եմ, բայց գտնելն այնքան էլ հեշտ չէ:

— Բան ասացիք, այն էլ մեր կողմերում: Մենք հասարակ, խաղաղասեր ժողովուրդ ենք: Արկածները մեզ մոտ հարգի չեն: Դրանցից միայն անհանգստություն ու տհաճություններ կտեսնես: Եվ դեռ, մեկ էլ տեսար, դրանց պատճառով ճաշից կուշանաս: Չեմ հասկանում, ինչ լավ բան են գտնում դրա մեջ, — ասաց մեր միստր Բեգինսը և, բութ մատը տարատակալի տակ մոցնելով, էլ ավելի գեղեցիկ մի օղակ բաց թողեց: Ապա փոստարկղից հանեց առավոտյան փոստն ու սկսեց կարդալ՝

ձևացնելով, իբրև թե մոռացել է ծերունի մասին: Նա վճռեց, որ վերջինս վստահություն չի ներշնչում, և հույս ուներ, որ ծերունկը կգնա իր ճանապարհով: Բայց սա իսկը չէր մտածում գնալու մասին: Նա կանգնած էր, իսկ գավազանին հենված, և առանց մի խոսք ասելու այնքան երկար նայեց հոբիտին, որ Բիլբոն շփոթվեց ու նույնիսկ մի քիչ էլ բարկացավ:

— Լույսը բարի ձեզ, — վերջապես ասաց հոբիտը, — այստեղ մենք արկածների կարիք չենք զգում, շնորհակալություն: Համախոհներ փնտրեք Բլուրի Ետևում կամ Գետի Այն Կողմում:

Նա ուզեց հասկացնել, որ խոսակցությունն ավարտված է:

— Ինչ ասես, որ չի նշանակում ձեր այդ «բարի լույսը», — ասաց Հենդալֆը: — Այ հիմա այն նշանակում է, որ փասափուսաս հավաքելու ժամանակն է:

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, սիրելի սըր: Թույլ տվեք... կարծեմ ձեր անունն իմանալու պատիվը չունեմ...

— Ունեք, ունեք, սիրելի սըր, իսկ ես գտիեմ ձերը, միսոր Բիլբո Բեգինս, և դուք էլ իմը գիտեք, չնայած չեք էլ հիշում, թե դա ես եմ որ կամ: Ես Հենդալֆն եմ, իսկ Հենդալֆը՝ ես եմ: Տեսեք, թե ուր եմ հասել. Բելադոննա Տուկի որդին ինձնից գլուխն ազատում է իր «բարի լույսով», կարծես թե ես փողոցներն ընկած կոճակ եմ ծախում:

— Հենդալֆ, ողորմած աստվածներ: Մի՞թե դուք այս թափառական հրաշագործն եք, որ ծերունի Տուկին մի զույգ ադամանդե ճարմանդ էր նվիրել, դեռ դրանք էլ իրենք իրենց կոճկվում էին, բայց արձակվում էին միայն հրամանով: Նա՞, ով ընկերական քեֆերում այնպիսի զարմանալի պատմություններ էր պատմում վիշապների ու գոբլինների, հսկաների ու փրկված արքայադուստրերի, աղքատ այրիների հաջողակ տղաների մասին: Նույն ի՞նքը, որ այնպիսի անկրկնելի հրավառություններ էր կազմակերպում: Ես դրանք հիշում եմ: Ծերունի Տուկը սիրում էր Իվանի օրվա նախօրյակին այդպիսի բաներ սարքել: Ի՞նչ հոյակապ էր: Դրանք դեպի վեր էին թռչում, ասես իսկական վիթխարի հրե շուշաններ, և՛ առյուծի երախ, և՛ ոսկե անձրև և ամբողջ երեկո դրանք մնում էին մթնշաղ երկնքում:

Դուք, հավանական է, արդեն նկատեցիք, որ միսոր Բեգինսը բոլորովին էլ այնքան հասարակ չէր, որքան ինքը կցանկանար, ինչպես նաև, որ նա ծաղիկներ շատ-շատ էր սիրում:

— Աստված իմ, — շարունակեց նա: — Մի՞թե դուք այն նույն Հենդալֆն եք, որի ողորմածությամբ այնքան խելոք պատանիներ ու աղջիկներ ուղևորվեցին արկանծեր որոնելու և անհետ կորան գնացին: Ամեն տեսակ արկածներ՝ սկսած ծառեր մագլցելուց մինչև այցելություններ էլֆերին: Նրանք նույնիսկ նավերով լողում էին օտար ափեր: Աստված իմ, այն ժամանակներում ինչքա՞ն հետա... ուզում եմ ասել, դուք կարողանում էիք այն ժամանակ ամեն ինչ գլխի վրա շուռ տալ մեր կողմերում...

Ներողություն եմ խնդրում, իսկի մտքովս չեր անցնում, թե դուք դեռևս... աշխատում եք:

— Իսկ ի՞նչ անեմ, — հարցրեց կախարդը: — Դե ահա, այնուամենայնիվ հաճելի է, որ դուք գոնե որոշ բաներ իմ մասին հիշում եք: Համենայն դեպս հիշում եք իմ հրավառությունները: Ուրմեն այնքան էլ անհուսալի չեք: Դրա համար էլ հանուն ձեր պապի և հանուն խեղճ Բելադոննայի ես ձեզ նվիրում եմ այն, ինչ ինձնից խնդրեցիք:

— Կներեք, բայց ես ձեզնից ոչինչ չեմ խնդրել:

— Ոչ, խնդրել եք: Եվ ահա արդեն երկրորդ անգամ իմ ներումը: Ես այն ձեզ կտամ: Եվ ավելի առաջ կգնամ, ձեզ կուղարկեմ իմ արկածին մասնակցելու: Դա ինձ կզվարճացնի, իսկ ձեզ օգտակար կլինի, հնարավոր է նաև շահավետ, եթե մինչև վերջ հասնեք:

— Ներեցեք, ինչ-որ չեմ ուզում, շնորհակալ եմ, գուցե մեկ ուրիշ անգամ: Մնաք բարով, բայց, խնդրում եմ ցանկացած ժամանակ համեցեք ինձ մոտ թեյ խմելու: Ասենք վաղը: Վաղը անցեք: Տեսություն:

Եվ այս խոսքերի հետ հոբիտը շրջվեց, ծլկեց իր կանաչ կլոր դռնից ներս ու արագ ծածկեց այն, աշխատելով միաժամանակ շատ ուժեղ չշրխկացնել, որպեսզի անքաղաքավարություն չլինի. այնուամենայնիվ կախարդը մնում է կախարդ:

— Հանուն ինչի՞ ես նրան թեյի հրավիրեցի, — ինքն իրեն հարցրեց Բիլբոն մառան մտնելով. ճիշտ է, ինքը նոր էր նախաճաշել, բայց այդպիսի հուզիչ խոսակցությունից հետո չէր խանգարի խմիչքից, բանից մի կում անել, երկու կտոր կեքսով փորը պնդացնել:

Իսկ Հենդալֆը դեռ երկար կանգնած էր դռան ետևում ու կամացուկ ծիծաղից խեղդվում էր: Հետո մոտեցավ և կանաչ, գեղեցիկ դռան վրա գավազանի սուր ծայրով ինչ-որ տարօրինակ նշան խզմզեց: Ապա հեռացավ, իսկ հենց այդ ժամանակ Բիլբոն երկրորդ կեքսը կերավ ու սկսեց խորհել այն մասին, թե ինչպիսի ճարակությամբ խույս տվեց արկածներից:

Մյուս օրը Բիլբոն, մի խոսքով, մոռացավ Հենդալֆի մասին: Նրա հիշողությունն այնքան էլ կարգին վիճակում չէր, և ստիպված էր լինում նշումներ անել իր հյուրերի ընդունման հատուկ գրքում, օրինակ՝ «Հենդալֆ, թեյ, չորեքշաբթի»: Բայց նախօրյակին նա այնպես էր հուզվել, որ ոչինչ չէր գրել:

Հենց այն է, պատրաստվում էր թեյ խմել, երբ մեկը ուժով քաշեց դռան զանգակը, և անստեղ Բիլբոն ամեն բան հիշեց: Նա նախ նետվեց խոհանոց, թեյնիկը դրեց կրակին, մի ափսե ու գավաթ էլ հանեց, ափսեի մեջ ևս մի զույգ կեքս դրեց, նոր միայն վազեց դեպի դուռը:

Հենց այն է, ուզում էր ասել. «Ներեցեք, որ սպասեցրի ձեզ», երբ հանկարծ տեսավ, որ իր առջև բոլորովին էլ Հենդալֆը չէ, այլ ոմն թզուկ:

կապույտ մորուքը գոտու տակ մտցրած ու պսպղուն աչքերով, որ փայլատակում էին մուգ կանաչ կնգուղի տակից: Դուռը հազիվ բացած, այնպես ներս ընկավ, ասես հենց իրեն էին սպասում: Հետո կնգուղավոր թիկնոցը կախեց մոտակա կեռից և խոնարհաբար ողջունելով ասաց.

— Դվալին, պատրաստ ձեզ ծառայելու:

— Բիլբո Բեգինս՝ ձեզ ծառա, — պատասխանեց հոբիտը, որը զարմանքից նույնիսկ հարցնելու բան չգտավ: Երբ արդեն լռելն այլևս անհարմար էր, նա ավելացրեց. — Ես էլ հենց ուզում էի թեյ խմել, չե՞ք միանա արդյոք ինձ:

Գուցեն դա մի քիչ բռնազբոսիկ հնչեց, բայց նա ջանում էր սրտաբացություն հանդես բերել: Իսկ դուք ինչպե՞ս կվարվեիք, եթե մի անձանոթ թզուկ բարեհաճեր ձեր տուն ու առանց որևէ բացատրության ձեր միջանցքում կախեր թիկնոցը, կարծես թե այդպես էլ պետք է լիներ:

Սեդանի մոտ նրանք երկար չնստեցին: Ավելի ճիշտ, նոր էին անցել երրորդ կեքսին, երբ նորից դռան զանգը հնչեց, էլ ավելի ուժգին, քան առաջ:

— Ներեցեք, — ասաց հոբիտը և վազեց բացելու:

— Վերջապե՛ս, ահա և դուք, — այս անգամ մտադիր էր այսպես դիմավորել Հենդալֆին: Բայց դա դարձյալ Հենդալֆը չէր: Շեմքին կանգնած էր մի գառամյալ թզուկ՝ սպիտակ մորուքով ու կարմիր կնգուղով: Նա ևս դուռը բացվելուն պես ներս թռավ, ասես որևէ մեկը նրան հրավիրել էր:

— Տեսնում եմ, մերոնք հավաքվում են, — ասաց նա՝ կախիչի վրա նկատելով Դվալինի կանաչ կնգուղը: Կողքին կախեց իր կարմիր կնգուղը և, ձեռքը կրծքին դնելով, ասաց.

— Բալին, պատրաստ ձեզ ծառայելու:

— Շնորհակալություն, — պատասխանեց կատարելապես զարմացած Բիլբոն:

Իհարկե, նրա պատասխանը տեղին չէր, բայց, ախր, նրան բոլորովին համբերությունից հանեցին «մերոնք հավաքվում են» բառերը: Հյուրեր նա սիրում էր, բայց սիրում էր ծանոթ հյուրեր և գերադասում էր ինքը հրավիրել: Նրա մտքով մի սարսափելի բան անցավ, որ կեքսը կարել է չբավականացնել, և այն ժամանակ ինքը (իսկ նա գիտակցում էր հյուրընկալի իր պարտականությունը և մտադիր էր կատարել ինչ գնով էլ որ լիներ) ստիպված կլիներ առանց կեքսի յուրա գնալ:

— Ներս համեցեք, թեյ խմեք, — վերջապես, իրեն ստիպելով, մի կերպ ասաց նա:

— Մի բաժակ զարեջուրն ինձ ավելի հաճելի կլիներ, ողորմած սըր, եթե դա շատ դժվար չէ ձեզ համար, — ասաց ճերմակամորուք Բալինը: — Բայց չամիչով կեքսից էլ չեմ հրաժարվի, եթե դրանից ձեզ մոտ գտնվի:

— Որքան ուզեք, — ինքն իր վրա զարմացած պատասխանեց Բիլբոն և, դարձյալ ինքն իր վրա զարմացած, վազքով սուրաց նկուղ, մի պինտա գարեջուր խմեց, այնտեղից՝ մառան, կլոր, չամիչով երկու հիանալի կեքս վերցնելու, որ անձամբ էր թխել «ընթրիքից հետո» ուտելու համար, և ետ սուրաց:

Ճաշասենյակում Բալինն ու Դվալինը սեղանի շուրջ նստած գրուցում էին, որպես հին բարեկամներ (Նրանք իսկապես էլ եղբայրներ էին): Բիլբոն նոր էր սեղանին դրել գարեջրի փարչն ու կեքսը, երբ իսկույն զանգը հնչեց՝ մեկ և էլի մեկ անգամ: «Դե, այժմ արդեն անկասկած Հենդալֆն է», — մտածեց Բիլբոն և փնջացնելով արագ գնաց դեպի դուռը: Ինչպե՞ս չէ: Եվս երկու թզուկ հայտնվեցին, երկուսն էլ կապույտ կնգուղներով, արծաթ գոտիներով և դեղին մորուքներով: Երկուսն էլ աշխատանքային գործիքներով լի մեկական պարկ ու մեկական բահ էին բերում: Նրանք նույնպես ճարակորեն ներս ընկան կիսաբաց դռնից, և Բիլբոն այլևս չզարմացավ:

— Ինչո՞վ կարող եմ ծառայել, սիրելի թզուկներ, — հարցրեց նա:

— Կիլի, պատրաստ ձեզ ծառայելու, — ասաց մեկը:

— Եվ Ֆիլին նույնպես, — ավարտեց մյուսը:

Երկուսն էլ գլխներից հանեցին իրենց կապույտ կնգուղներն ու խոնարհաբար ողջունեցին:

— Պատրաստ եմ ծառայելու ձեզ և ձեր ազգականներին, — այս անգամ արդեն հիշելով քաղաքավարության մասին՝ պատասխանեց Բիլբոն:

— Տեսնում եմ, Դվալինն ու Բալինն արդեն այստեղ են, — ասաց Կիլին: — Միանանք ազնիվ ընկերախմբին:

«Ընկերախո՞ւմ, — մտածեց միստր Բիլբոն: — Ինչ-որ ինձ դուր չի գալիս այդ բառը: Գոնե մի րոպե նստեմ, մտքերս ժողովեմ ու մի կում թեյ խմեմ»:

Հագիվ էր նա տեղավորվել անկյունում ու մի կում արել (իսկ չորս թզուկներն այդ ժամանակ նստել էին սեղանի շուրջ և խոսում էին հանքերի, ոսկու, չար գորբիլների, վիշապների անկարգությունների ու էլի շատ ուրիշ բաների մասին, որը նա չէր հասկանում, ասենք չէր էլ ուզում հասկանալ, քանի որ այդ բոլորից արկածների հոտ էր գալիս), երբ հանկարծ՝ զը՛նգ- զը՛նգ- զը՛նգ- զը՛նգ, զանգը նորից հնչեց, և այնպես բարձր, ասես ինչ-որ չարածճի հոբիտիկ փորձում էր պոկել այն:

— Էլի մեկը, — աչքով անելով ասաց Բիլբոն:

— Էլի շատ մեկեր, դատելով զանգից, — նկատեց Ֆիլին: — Մենք նույնիսկ տեսել ենք նրանց, անմիջապես մեր ետևից չորսը գալիս էին:

Խեղճ հոբիտը նախասրահում փլվեց աթոռին, գլուխը ձեռքերի մեջ առավ ու սկսեց խորհել. ի՞նչ է տեղի ունենում, դեռևս ի՞նչ է տեղի ունենալու և մի՞թե բոլորը կմնան ընթրելու: Այդ միջոցին զանգը առաջվանից ավելի ուժեղ քաշեցին, և Բիլբոն նետվեց դեպի դուռը: Հագիվ

Երևա բռնակը պատել, և առ քեզ, հյուրերն արդեն միջանցքում են, խոնարհվում են ու հերթով կրկնում. «պատրաստ եմ ծառայելու»: Թզուկներն արդեն ոչ թե չորսն էին, այլ հինգը: Մինչ Բիլբոն տարված էր իր խոհերով, մեկն էլ հասավ: Նրանց կոչում էին Դորի, Նորի, Օրի, Օյն ու Գլոյն: Եվ շուտով երկու մանուշակագույն, մոխրագույն, շագանակագույն ու սպիտակ կնգուղներ կախված էին կեռիկներից, իսկ թզուկները հանդիսավոր անցնում էին ճաշասենյակ, իրենց լայն թաթերը ոսկե և արծաթե գոտիների մեջ խրած: Ճաշասենյակում այժմ իսկապես էլ մի ամբողջ ընկերախումբ էր հավաքվել: Ոմանք էլ էին պահանջում, մյուսները՝ պորտեր, ինչ-որ մեկը՝ սուրճ, և բոլորը առանց բացառության՝ կեքս, այնպես որ հոբիտը բոլորովին հալից ընկավ:

Նոր էր կրակի վրա դրվել մեծ սրճամանը, թզուկները, կեքսը վերջացնելով, նոր էին անցել վրան կարագ քսած գարեբլիթներին, երբ հնչեց ... ոչ թե զանգ, այլ ուժեղ թակոց: Հարվածների մի ամբողջ կարկուտ տեղաց Բիլբո Բեգինսի գեղեցիկ, կանաչ դռան վրա: Ինչ-որ մեկը փայտով ծեծում էր այն:

Բիլբոն արագ սուրաց միջանցքով, շատ բարկացած, կատարելապես նյարդայնացած և ուժասպառ եղած. այնպիսի անհեթեթ թեյախմություն նրա կյանքում դեռ չէր եղել: Նա դուռը քաշեց դեպի իրեն, և դռան ետևում կանգնածները ներս ընկան ու թափվեցին մեկը մյուսի վրա: Էլի թզուկներ, չորս հոգի: Իսկ նրանց ետևում, իր գավազանին հենված, կանգնել էր Հենդալֆն ու ծիծաղում էր: Նա փայտով անխնա թակել էր գեղեցիկ դուռը, ընդ որում դրա հետևանքով անհետացել էր այն գաղտնի նշանը, որ նա գծել էր նախորդ օրը:

— Հանգիստ, հանգիստ, — ասաց նա: — Դա ձեզ նման չէ, Բիլբո, բարեկամներին սպասեցնել դռան մոտ, իսկ հետո էլ վերցնել ու դուռն այդպես բացել՝ թը՛փ- թըրը՛փ- թը՛փ: Թույլ տվեք ներկայանալ: Բիֆուր, Բոֆուր, Բոմբուր և, հատուկ ուշադրություն դարձրեք, Տորին:

— Պատրաստ ենք ձեզ ծառայելու, — ասացին Բիֆուրը, Բոֆուրը, Բոմբուրը՝ իրար կողքի կանգնելով: Ապա նրանք կախեցին երկու դեղին, մեկ բաց կանաչ կնգուղներն ու մեկն էլ բաց երկնագույն, երկար, արծաթագույն փնտոց, որ պատկանում էր Տորինին: Տորինը չտեսնված երևելի թզուկ էր, ոչ այլ ոք, քան ինքը՝ նշանավոր Տորին Օուքենշիլդը, նա խիստ դժգոհ էր այն բանից, որ ստիպված եղավ փովել շեմքին, դեռ Բիֆուրը, Բոֆուրն ու Բոմբուրն էլ վրան ընկան, իսկ Բոմբուրը, պետք է ասել, անասելի գիրուկ էր ու ծանր: Դրա համար էլ Տորինը սկզբում իրեն շատ գոռոզ էր պահում և ոչ մի տեսակի ծառայություն չէր առաջարկում, բայց խեղճ միստր Բեգինսն այնքան շատ ներողություն խնդրեց, որ Տորինը, վերջապես, մոթմոթաց. «Այդ մասին էլ չենք խոսում», և դադարեց խոժոռվել:

— Ահա և բոլորս հավաքվել ենք, — ասաց Հենդալֆը՝ աչքի անցկացնելով պատից կախված տասներեք կնգուղները (լավագույն

կոճկովի գլխանոցները հյուր գնալու համար) և իր սեփական գլխարկը: — Շատ զվարճասեր հասարակություն է: Հուսով եմ, ուշացածների համար էլ ուտելու և խմելու որևէ բան կգտնվի: Ի՞նչ ունեք: Թե՞: Խորապես շնորհակալ եմ: Ավելի լավ է կարմիր գինի տաք ինձ:

— Ինձ էլ, — ասաց Տորինը:

— Լավ կլիներ, որ հաղարջի մուրաբա և խնձորով կարկանդակ էլ լիներ, — միջամտեց Բիֆուրը:

— Եվ մսով կարկանդակ ու պանիր, — լրացրեց Բոնֆուրը:

— Եվ խոզի մսով կարկանդակ ու սալաթ, — ավելացրեց Բոմբուրը:

— Եվ որքան կարելի է շատ կեքս, էյլ, սուրճ, եթե դժվար չէ, — կանչեցին մյուս թզուկները ճաշասենյակից:

— Բարի եղեք մի քանի ծուլ էլ դրեք, — հոբիտի հետևից ձայն տվեց Հենդալֆը, երբ նա քարշ գալով գնաց դեպի մառան: — Հետևերդ բերեք նաև սառը հավ և թթու վարունգ... «Կարելի է մտածել, որ նա ինձանից պակաս չգիտի, թե ինչ պահուստներ ունեմ իմ տանը», — քրթմնջաց միսոր Բեգինսը, որը վերջնականապես գլուխը կորցրել էր և սկսել էր վախենալ՝ իր անմեղ ու բանից անտեղյակ գլխին... ամենազգվելի արկածը չի՞ եկել արդյոք: Այդ միջոցին, մինչև նա հավաքեց բոլոր շշերն ու ուտելիքները, բոլոր դանակները, պատառաքաղները, բաժակները, ափսեներն ու գդալները և լցրեց մեծ-մեծ սկուտեղների մեջ, ամբողջովին շոգից խաշվեց, կարմրեց ու փրփրեց:

— Կերածները քթերից դուրս գա այդ թզուկների, — ասաց նա բարձրաձայն: — Կարծես չեն կարող օգնել:

Հասպա մի տես է՛: Բալինն ու Դվալինը, ոնց որ գետնի տակից ծլելն, կանգնեցին խոհանոցի դռան մեջ, իսկ նրանց ետևից Ֆիլին ու Կիլին, և դեռ Բիլբոն չէր հասցրել մի խոսք ասել, որ նրանք վերցրին սկուտեղներն ու երկու ոչ մեծ սեղան, քամու պես թռան ճաշասենյակ ու կորից սեղան զցեցին ամբողջ խմբի համար:

Հենդալֆը նստեց սեղանի վերին գլուխը, մնացած տասներեք թզուկները տեղավորվեցին շուրջը, իսկ Բիլբոն, նստելով բուխարու մոտ դրված նստարանին, սկսեց պաքսիմատ կրծել (նրա ախորժակն իսպառ կորավ) ու փորձեց այնպես ցույց տալ, իբր առանձնապես ոչինչ տեղի չի ունենում և արկածների հետ էլ այս բոլորը ոչ մի կապ չունեն: Թզուկներն ուտում էին հա ուտում, խոսում էին հա խոսում, իսկ ժամանակն անցնում էր: Վերջապես նրանք ետ քաշվեցին սեղանից, և Բիլբոն ձգվեց դեպի առաջ՝ փորձելով հավաքել ափսեներն ու բաժակները:

— Հուսով եմ մինչև ընթրիք դուք չե՞ք գնա, — հարցրեց նա քաղաքավարի, ոչ իր ամենաստիպողական տոնով:

— Ոչ մի դեպքում, — պատասխանեց Տորինը: — Մենք ընթրիքից հետո էլ չենք գնա: Մեր խոսակցությունը երկար է տևելու: Բայց սկզբում մի քիչ երաժշտությամբ կգբաղվենք: Հավաքեք:

Եվ տասներկու թզուկները (Տորինը շատ կարևոր դեմք էր, ևա մնաց Հենդալֆի հետ գրուցելու) աշխուժորեն վեր թռան տեղներից և վայրկենապես մեկը մյուսի վրա շարեցին ափսեները, իսկ դրանց վրա էլ՝ սեղանին եղած-չեղածը: Հետո նրանք շարժվեցին դեպի խոհանոց, և յուրաքանչյուրը պարզած ձեռքին պահել էր ափսեների մի ամբողջ աշտարակ, որի գազաթին շիշն էր, իսկ հոբիտը վազում էր նրանց ետևից և վախից տառացիորեն ծղրտում.

— Խնդրում եմ զգույշ: Մի՛ անհանգստացեք, խնդրեմ, ինքս կանեմ:

Բայց թզուկներն ի պատասխան սկսեցին երգել.

Ջարդեք ափսեները, պնակները ջարդեք,
Թող ծոմովեն դանակ, պատառաքաղ,
Շիշը գարկեք գետնին, սրբիչները նետեք,
Կեղտաշրով թրջվեն պատերը թող:

Բզիկ-բզիկ արեք սփռոցները, հյուրեր,
Ճարպոտ ճաշը թափեք աթոռներին լաքած,
Կոխորտելով անցեք, ու թող ամենուրեք
Ոսկորներ ու կճեպ լինեն թափված:

Բաժակները բերեք, գավաթները բերեք,
Լցրեք տաշտը տաք ջուր, լցրեք արագ,
Հետո խառնեք լինգով, ջարդափշուր արեք,
Տարեք աղբահորը թափեք դրանք:

Ո՞վ է անգործ այնտեղ, ո՞վ է աչքերը փակում.
Դե շուտ, ձեռքդ մեկնիր ճենապակուն...

Ոչ մի նման բան ըդիակառակը, բնական է, նրանք թույլ չտվեցին, ընդիակառակը, մի ակնթարթում ամբողջը լվացին ու հավաքեցին, մինչ հոբիտը պտտվում էր խոհանոցում, ջանալով հետևել նրանց: Հետո բոլորը վերադարձան ճաշասենյակ և տեսան, որ Տորինը նստել է, ոտքերը օջախի ճաղերին դրած, ու ծխամորճ է ծխում: Նա չտեսնված մեծության ծխի օղակներ էր բաց թողնում և հրամայում դրանց՝ ուր գնալ. մերթ խողովակի մեջ, մերթ բուխարու թարեքին դրված ժամացույցի ետևը, մերթ սեղանի տակ, մերթ դեպի առաստաղ, որտեղ նրանք շրջաններ էին գծում: Բայց Տորինի օղակն ուր էլ որ թռչեր, Հենդալֆն ավելի ճարպիկ էր գտնվում: Փո՛ւֆ, ևա իր կարճիկ կավե ծխամորճից ավելի փոքր օղակ էր արձակում, և վերջիսն լողում էր Տորինի յուրաքանչյուր օղակի միջով: Դրանից հետո Հենդալֆի օղակը կանաչում էր, վերադառնում տիրոջ մոտ և սավառնում նրա գլխավերևում: Այդ օղակներից մի ամբողջ ամպ գոյացավ, և սենյակի կիսախավարում Հենդալֆը խորհրդավոր ու իսկական կախարդական տեսք ստացավ: Բիլբոն կանգնել և հիանում էր.

օղակներ բաց թողնել ինքն էլ էր սիրում և հիմա ամոթից կարմարել էր, հիշելով, թե ինչպես էր նախորդ օրն առավոտյան պարծենում իր օղակներով, որ քամին տանում էր Բլուրի ետևը:

— Իսկ հիմա անցնենք երաժշտությանը, — ասաց Տորինը: — Բերեք գործիքները:

Կիլին ու Ֆիլին վազելով բերեցին փոքրիկ ջութակները, Դորին, Նորին և Օրին թևերի տակից հանեցին սրինգները, Բոմբուրը նախասենյակից քարշ տվեց թմբուկը, Բիֆուրն ու Բոֆորը նույնպես դուրս գնացին ու վերադարձան կլարնետներով, որ հանվելիս թողել էին ձեռնափայտերի հետ. Դվալինն ու Բալինը միաժամանակ ասացին. «Ներեցեք, ես իմ գործիքը մոռացել եմ նախամուտքում»:

— Իմն էլ վերցերք, — ասաց Տորինը:

Նրանք մի կերպ քարշ տվեցին իրենց բոյին երկու վիուլա և Տորինի՝ կանաչ կտորի մեջ փաթաթած տավիղը. տավիղը ոսկուց էր ու գեղեցիկ, և երբ Տորինը խփեց լարերին, բոլորն էլ նվագեցին ու այնպիսի մի անսպասելի քաղցրալուր, մեղեդային երաժշտություն հորդեց, որ Բիլբոն ամեն ինչ մոռացավ. մտքով թռավ անձանոթ երկրներ, այնտեղ, ուր երկնքում օտար լուսին էր կախված՝ Գետից Այն Կողմ և Բլուրի մոտ գնտվող հոբիտյան բնից շատ հեռու: Բլուրի լանջին գտնվող պատուհանից սենյակ թափանցեց մթությունը, օջախի կրակը (դեռևս ապրիլ ամիսն էր) սկսեց հանգել, իսկ նրանք դեռ նվագում էին ու նվագում, և Հենդալֆի մորուքի ստվերը օրորվում էր պատի վրա:

Սենյակը խավարով լցվեց, օջախը հանգավ, ստվերներն անհետացան, իսկ թզուկները շարունակում էին նվագել: Եվ հանկարծ, նախ մեկը, հետո մյուսը, խուլ սկսեցին երգել թզուկների խորհրդավոր երգը, որ երգում էին իրենց հնագույն բնակատեղիների խորհրդավոր լռության մեջ: Ահա մի հատված նրանց երգից, եթե միայն բառերն առանց մեղեդու կարող են երգի նման լինել.

Կապույտ լեռներից, մշուշից անդին
Քարավանները կձգվեն անթիվ
Դեպի որջերը, քարանձավները,
Որտեղ գանձերն են երկիր-հեքիաթի:

Կախարդ թզուկներն անցյալում այդտեղ
Միշտ վառ են պահել կանթեղ ու անթեղ,
Մետաղ են ձուլել, ադամանդ, սուտակ
Եվ այդ գանձերը պահել են անթաղ:

Նրանք բանել են էլֆ-արքայի մոտ,
Նրանք բանել են անխոնջ ու հմուտ,
Նրանց պատրաստած զարդերը չքնաղ
Լուսավորել են անձավները մուլթ:

Արքայավայել քեֆեր են արել,
Տավիղի ոսկի լարերն են լարել,
Հնչել է երգը ընդերքում հողի,
Հնչել են նոր ու անսովոր բառեր:

Սակայն ծառերը խենթ շառաչեցին,
Եվ քամիները խուլ հառաչեցին,
Կրակը շողաց լեռների վրա,
Հրդեհվեց նոճու անտառը անծիր:

Չանգեր հնչեցին տագնապով. ահով,
Գետինը ճեղքվեց ու լցվեց մահով,
Վիշապը դաժան և անզիջում էր.
Տները դարձան մոխրակույտ ու հուր:

Եվ թզուկները, հույսները հատած,
Երկնային պատժի սարսափով պատած,
Մտան ընդգետնյա պալատները խոր,
Նրանց հետ կորան գանձերը անդարձ:

Կգնանք կապույտ լեռներից անդին,
Կանցնենք ճամփաներ ու գետեր անթիվ.
Որ հավատարիմ մնանք մեր խոսքին,
Որ մեր թշնամուց խլենք ոսկին:

Եվ նրանց լսելով՝ հոբիտը զգաց, թե ինչպես իր մեջ ծնվում է սերը դեպի գեղեցիկ իրերը՝ արարված հրաշարգործությամբ և հմուտ ձեռքերով, կատաղի ու խանդոտ սեր, հրապուրանք, որ ապրում է բոլոր թզուկների սրտերում: Եվ նրա մեջ արթնացավ ինչ-որ տուևյան մի բան, նա ցանկություն ունեցավ տեսնելու հսկայական լեռները, լսելու սոճիների սոսափն ու ջրվեժների աղմուկը, լինելու քարայրներում և ձեռնափայտի փոխարեն սուր կրելու: Նա դուրս նայեց պատուհանից: Մութ երկնքում ծառերի վրա փայլում էին աստղերը: Նա մտածեց մթին քարայրներում շողշողացող թզուկների թանկարժեք իրերի մասին: Հանկարծ Գետի Այն Կողմում անտառի վրա կրակը երկինք բարձրացավ (երևի ինչ-որ մեկը խարույկ էր վառել), և Բիլբոն պատկերացրեց, թե ինչպես կողոպտիչ վիշապները գրավում են իր խաղաղ Բլուրը և շուրջն ամեն ինչ կրակի մատնում: Նա ցնցվեց և իսկույն դարձավ նորից սովորական միսոր Բեգինսը, Բեգ-Էնդից, որը գտնվում էր Բլրատակում:

Բիլբոն վեր կացավ: Ամբողջ մարմնով դողում էր: Նա տատանվում էր, չգիտեր ինչ աներ, ոչ այն է լամպը բերեր, ոչ այն է ձևացներ, թե գնում է լամպը բերելու, իսկ ինքը թաքնվեր մառանում, գարեջրի տակառների արանքում ու դուրս չգար, մինչև թզուկները գնային: Բայց այդ պահին նա հանկարծ նկատեց, որ երգն ու երաժշտությունը լռել են, բոլոր թզուկներն ակնապիշ իրեն են նայում, և նրանց աչքերը փայլատակում են խավարում:

— Այդ ո՞ւր, — ձայն տվեց նրան Տորինը այնպիսի տոնով, որից պարզ զգացում էր, որ նա Բիլբոյի մտադրությունները կռահում է:

— Ինչ է, չի՞ կարելի լամպը բերել, — երկչոտ հարցրեց Բիլբոն:

— Մթութունը մեզ դուր է գալիս, — խմբով պատասխանեցին թզուկները: — Մութ գործերը մթության մեջ են կատարվում: Մինչև լուսաբաց դեռ շատ ժամանակ կա:

— Այո, այո, իհարկե, — ասաց Բիլբոն ու նստեց, բայց շփոթմունքից ու շտապելուց նստեց ոչ թե նստարանին, այլ ուղիղ օջախի վանդակի վրա և թմփոցով ցած գցեց կրակխառնիչն ու թիակը:

— Շը՛շ-շ, — ասաց Հենդալֆը: — Հիմա Տորինը կխոսի:

Եվ Տորինը սկսեց այսպես.

— Հենդալֆ, թզուկներ և միսոր Բեգինս: Մենք հավաքվել ենք մեր բարեկամի և դավադրության եղբայրակցի՝ հիանալի, խիզախ հոբիտի (թող երբեք չթափվի նրա ոտքերի մազը) տանը, եկեք արժանին մատուցենք նրա գինուն և էյլին:

Նա շունչ առավ, հոբիտին հնարավորություն տալով ինչպես հարկն է քաղաքավարական խոսքեր ասելու, բայց խեղճ Բիլբո Բեգինսը ասվածն ընդունեց բոլորովին էլ ոչ որպես գովեստ: Նա շարժեց շրթունքները, փորձելով ժխտել «խիզախ» և, որ ավելի վատ էր, «դավադրության եղբայրակցի» բառերը, բայց այնպես հուզվեց, որ չկարողացավ նույնիսկ մի ծպտուն հանել: Դրա համար էլ Տորինը շարունակեց.

— Մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի քննարկենք մեր պլանները, գործելու եղանակներն ու միջոցները, մեր գաղտնի մտադրություններն ու հնարքները: Շատ շուտով, մինչև լույսը բացվելը, մենք ճանապարհ կընկնենք, մեր ճամփան երկար կլինի, ճանապարհորդություն, որից մեզանից ոմանք, հնարավոր է նույնիսկ բոլորը, բացի, հասկանալի է, մեր բարեկամից և խորհրդատուից՝ հնարամիտ հրաշագործ Հենդալֆից, կարող են չվերադառնալ: Եկել է հանդիսավոր պահը: Մեր նպատակը, ինչպես ենթադրում եմ, բոլորիս հայտնի է: Բայց հարգելի միսոր Բեգինսին, իսկ գուցե կրտսեր թզուկներից (կարծում եմ չեմ սխալվի, եթե տամ Կիլիի և Ֆիլիի անունները) որևէ մեկին ներկա պահի իրադրությունը կարող է որոշ բացատրությունների պահանջ ներկայացնել:

Այդպիսին էր Տորինի ոճը: Չէ՞ որ նա կարևոր դեմք էր: Եթե նրան չընդհատեին, նույն ոգով անվերջ կշարունակեր, մինչև որ բոլորովին շնչակտուր լիներ, բայց այդպես էլ հասարակությանը ոչ մի նոր բան չէր հաղորդի: Սակայն ամենակրպիտ ձևով ընդհատեցին: Խեղճ Բիլբոն այլևս չկարողացավ դիմանալ: «Կարող են չվերադառնալ» բառերը լսելիս նա զգաց, որ կոկորդում ճիչ է հավաքվում, և այդ ճիչը, վերջապես, դուրս թռավ սուր, իսկական թունելից դուրս սուրացող շոգեքարշի սուլոցի նման: Բոլոր թզուկները տեղներից վեր թռան, և սեղանը շուռ եկավ: Իր կախարդական գավազանի ծայրին Հենդալֆը երկնագույն կրակ վառեց,

և դրա առկայծող լույսի տակ բոլորը տեսան, որ խեղճ հոբիտը չոքել է օջախի առջև փռված գորգի վրա և դողդողում է ինչպես դոնդոլ: Հանկարծ նա բերանքսիվայր փլվեց հատակին մի հուսահատ վայնասունով. «Կայծակը սպանեց, կայծակը սպանեց», — և երկար ժամանակ նրանից ուրիշ ոչինչ իմանալ չկարողացան: Թզուկները բարձրացրին նրան ու տարան հարևան հյուրասենյակը, աչքից հեռու, պառկեցրին բազմոցի վրա, կողքը մի բաժակ ջուր դրեցին, իսկ իրենք վերադարձան իրենց «մուկ գործերին»:

— Դյուրությամբ գրգռվող սուբյեկտ է, — ասաց Հենդալֆը, երբ բոլորը գրավեցին իրենց տեղերը: — Ենթակա է անբացատրելի նոպաների, բայց լավագույններից մեկն է՝ կատաղի, ինչպես վիշապ, որի պոչը ճգմել են դռան արանքում:

Եթե ձեզ երբևէ վիճակվել է տեսնել վիշապ, որի պոչը ճգմել են դռան արանքում, ապա կհասկանաք, որ դա զուտ բանաստեղծական չափազանցություն է ցանկացած հոբիտի, նույնիսկ Ծեր Տուկի ապուպապի Եզան Մռունչ անունով եղբոր նկատմամբ կիրառված, որն այնպիսի տիտանական հասակ ուներ (հոբիտի համար), որ կարող էր ծի հեծնել: Այդ նա է հին ժամանակներում Կանաչ Դաշտի ճակատամարտում Մաունտ-Գրեմից փոթորիկի նման արշավել գոբլինների բանակի վրա և իր կոպալով թռցրել նրանց թագավոր Գուլֆիմբուլի գլուխը: Գլուխը հարյուր մետր թռել է օդում և ընկել ուղիղ ճագարի բույնը. այսպիսով շահել են ճակատամարտը և միաժամանակ հնարվել է գուլֆ խաղը:

Այդ միջոցին Եզան Մռունչի քնքուշ շառավիղը հյուրասենյակի բազմոցի վրա ուշքի եկավ: Հանգստանալուց հետո մի կում գինի խմեց և զգուշությամբ գողունի մոտեցավ ճաշասենյակի դռանը: Խոսում էր Գլոյնը, և ահա թե ինչ լսեց Բիլբոն.

— Փի՛ֆ (կամ դրա նման մեկ ուրիշ արհամարհական ծայնարկություն): Կարծում եք նա հարմա՞ր է: Հենդալֆի համար հեշտ է պատկերավոր նկարագրել, թե նա որքան կատաղի է, իսկ եթե նա գրգռվի ու գոռա ոչ այն ժամանակ, երբ հարկավո՞ր է, այդ դեպքում վիշապն ու նրա բոլոր ազգականները կարթնանան, և մենք կորած ենք: Սիրտս վկայում է, որ նրա ճիչը վախից է, այլ ոչ թե գրգռվելուց: Ճիշտն ասած, եթե դռան վրայի կախարդական նշանը չլիներ, ես կմտածեի, որ մենք սխալ տեղ ենք ընկել: Հենց որ տեսա, թե եղ ցմփորն ինչպես է թռչկոտում ու փնճում դռան առաջ, ես իսկույն վատ բան կասկածեցի: Ավելի շատ նա նպարավաճառի է նմանվում, քան գողի:

Այստեղ միստր Բեգինսը սեղմեց բռնակն ու ներս մտավ: Նրա մեջ խոսեց Տուկի արյան ձայնը: Նա զգաց, որ յուր կզնա առանց իսկական անկողնու ու նախաճաշի, միայն թե իրեն կատաղի համարեն: Ի միջի այլոց նա իսկապես էլ կատաղեց, լսելով «թե եղ ցմփորն ինչպես էր թռչկոտում» բառերը: Հետագայում շատ անգամ նրա էության բեգինսյան կողմը

զղշում էր այս անմիտ արարքի համար, և նա ինքն իրեն ասում էր. «Բիլբո, դու հիմար ես, ինքդ քո կամքով խցկվեցիր այդ գործի մեջ»:

— Ներողություն եմ խնդրում, — ասաց նա, — ես պատահաբար լսեցի ձեր խոսակցությունը: Չեմ ձևացնի, իբրև թե հասկանում եմ, խոսքն ինչի մասին է. հատկապես հասկանալի չէ գողերի մասին հիշատակությունը: Բայց կարծում եմ, որ մի բան ճիշտ եմ յուրացրել (այս բոլորը նա անվանում էր «արժանապատվությամբ պահել իրեն»): դուք գտնում եք, որ ես ոչնչի պիտանի չեմ: Շատ լավ, ես ձեզ կապացուցեմ, թե ինչի եմ ընդունակ: Իմ դռան վրա ոչ մի կախարդական նշան էլ չկա, դուռն ընդամենը մեկ շաբաթ առաջ են ներկել, և դուք, հասկանալի է, սխալ հասցեով եք եկել: Ձեր անդուր երեսները տեսնելուն պես կասկածեցի, որ դուք ուրիշ տեղ եք ընկել: Բայց համարեք, որ ճիշտ եք եկել: Ասացեք, ի՞նչ է հարկավոր անել, և ես կաշխատեմ կատարել, թեկուզ հարկադրված լինեմ Ամենաձայրամասային Անապատում մարտնչել զարհուրելի հորդարձորյակների դեմ: Ես ունեցել եմ ապուլապուլապուլապապի եղբայր՝ Տուկ Եզան Մռունչը, ուրեմն նա...

— Ճիշտ է, ճիշտ է, միայն թե դա վաղուց էր, — նրան ընդհատեց Գլոյնը: — Իսկ ես ձեր մասին էի խոսում: Եվ հավատացնում եմ, ձեր դռան վրա կա հենց այն նշանը, որն օգտագործում են կամ անցյալում օգտագործել են ձեր մասնագտիության ներկայացուցիչները: Եվ դա ահա թե ինչ է նշանակում. «Փորձված գողը հանձն կառնի լավ աշխատանքը, գերադասելի է վտանգավոր, վճարը ըստ փոխադարձ համաձայնության»: Կարող եք ձեզ անվանել «բարձրագույն կարգի գանձորոնող», եթե «գողը» ձեր ճաշակով չէ: Ոմանք այդպես են կոչում իրենց: Մեզ համար միևնույն է: Հենդալֆը մեզ հաղորդեց, որ մի տեղացի մասնագետ շտապ աշխատանք է փնտրում, և որ ժողովը նշանակվում է այստեղ, չորեքաբթի օրը, ժամը հինգին:

— Ինչպե՞ս թե նշան չկա, — միջամտեց Հենդալֆը: — Ես ինքս եմ դռան վրա դրել: Եվ շատ ծանրակշիռ պատճառներով: Դուք ինձ խնդրեցիք արշավախմբի համար տասնչորսերորդը գտնել, ես էլ միստր Բեգինսին ընտրեցի: Թող որևէ մեկը փորձի ասել, որ սխալվել եմ, որ ընտրել եմ ոչ նրան, ում հարկն է, ու եկել եմ ոչ այնտեղ, ուր պետք է, և կարող եք տասներեքով ուղևորվել ու լրիվ ստանալ ամբողջը, ինչ հասնում է այդքանին: Իսկ եթե չեք ուզում գնացեք ձեր տները, ածուխ փորեք հանեք:

Նա այնպես զայրացած նայեց Գլոյնին, որ թզուկը կծկվեց կապավ աթոռի թիկնակին, իսկ երբ Բիլբոն բերանը բացեց, որ հարց տա, Հենդալֆը շրջվեց ու թավ հոնքերի տակից այնպիսի մի ահեղ հայացք գցեց նրա վրա, որ նրա բերանը շրիկոցով փակվեց:

— Ահա այնպես, — ասաց Հենդալֆը: — Եվ այլևս ոչ մի վեճ: Ես ընտրել եմ միստր Բեգինսին, ու գոհ եղեք: Եթե ես ասել եմ, որ նա գող է՝ նշանակում է գող է, կամ գող կդառնա, երբ հարկ լինի: Նա ամենևին էլ այդպես

հասարակ չէ, ինչպես դուք եք կարծում: Ժամանակ կգա, երբ բոլորդ (եթե կենդանի մնաք) երախտապարտ կլինեք ինձ՝ նրա համար: Իսկ հիմա, Բիլբո, տղաս, լամպը բեր, մի քիչ լույս գցենք սրա վրա:

Սեդանին, կարմիր լուսամփոփով մեծ լամպի տակ նա մագաղաթի մի կտոր փռեց, որ քարտեզի էր նման:

— Սա Տրորի, ձեր պապի ձեռքի գործն է, Տրորին, — ասաց նա ի պատասխան թզուկների հուզված բացականչությունների:— Սա Սարի պլանն է:

— Չեմ հասկանում, թե դա մեզ ինչով է օգնելու,— հիասթափված ասաց Տրորինը, պլանն արագ աչքի անցկացնելով: — Ես առանց այդ էլ հիանալի հիշում եմ Սարն ու նրա շրջակայքը: Ես գիտեմ որտեղ է Մուլթ Անտառը և որտեղ՝ Արևակեզ Հողերը. այնտեղ վիշապներն են ապրում:

— Այստեղ քարտեզի վրա էլ հենց Վիշապն է նկարված,— ասաց Բալինը, — բայց քանի որ շուտով հասնելու ենք Սար, ապա առանց քարտեզի էլ այն կգտնենք:

— Մի մանրամասնություն էլ կա, որ դուք չեք նկատել,— առարկեց կախարդը,— գաղտնի մուտքը: Տեսնո՞ւմ եք ա՛յ այն ձեռքը արևմտյան կողմում և մնացած ձեռքերից վերև ցուցամատը պարզած մյուս ձեռքը, ձախից: Այստեղ գաղտնի մուտք կա դեպի Ստորին Հարկը:

— Գուցե մի ժամանակ իրոք որ գաղտնի է եղել,— առարկեց Տրորինը,— բայց ինչով կարելի է համոզված լինել, որ մինչև հիմա գաղտնի է մնացել: Ծեր Սմոգն այնքան վաղուց է այնտեղ ապրում, որ հասցրած կլինի բոլոր ելումուտներին ծանոթանալ:

— Կարող է և այդպես է, բայց միևնույն է, նա դրանից չի օգտվում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև այդ մուտքը նրա համար խիստ նեղ է: «Հինգ ոտնաչափ բարձրության դուռ, կարող են անցնել երեքը մի շարքով, կողք կողքի», բարբառում են սեպագրերը: Սմոգը այսպիսի որջ խցկվել չէր կարող նույնիսկ երիտասարդ ժամանակ, ուր մնաց հիմա, երբ Դեյլից այնքան թզուկներ ու մարդիկ է կերել:

— Իսկ իմ կարծիքով որջը շատ ընդարձակ է,— ձայն տվեց Բիլբոն (որը երբեք վիշապների հետ չէր առնչվել, իսկ ինչ վերաբերում է որջերին, ապա նա ծանոթ էր միայն հոբիտների բներին): Նա նորից տաքացավ ու տարվեց տեղի ունեցածով և մոռացավ, որ ավելի լավ է լռել: Նա պաշտում էր բոլոր տեսակի քարտեզները, նա ինքը իր նախասենյակում կախել էր շրջակայքի մեծ քարտեզը, որտեղ զբոսանքի նրա սիրելի ուղիները նշված էին կարմիր թանաքով: — Չեմ հասկանում, թե ինչպես կարելի է այդ հսկայական դուռը թաքցնել որևէ մեկից, ով էլ որ նա լինի, նույնիսկ եթե վիշապը վրիպել է ու չի տեսել, — հարցրեց նա: Մի՛ մոռացեք, որ նա ընդամենը մի փոքրիկ հոբիտ էր:

— Ամենատարբեր ձևերով, — պատասխանեց Հենդալֆը: — Բայց թե ինչպես են թացրել հատկապես այդ դուռը, մենք չենք իմանա, մինչև մեր սեփական աչքերով չտեսնենք: Որքան ես կարող եմ հասկանալ քարտեզի վրա եղած մակագրություններից, դուռը հուսալիորեն կողպված է և ձուլվում է Սարի հետ: Թզուկների մոտ ըդունված ձև է, եթե չեմ սխալվում:

— Չեք սխալվում, — հաստատեց Տորինը:

— Բացի դրանից, — շարունակեց Հենդալֆը,— ես մոռացա հիշատակել, որ քարտեզին կցված է արտասովոր ձև ունեցող մի փոքրիկ բանալի: Ահա...— Եվ Հենդալֆը Տորինին մեկնեց երկարավուն, տարօրինակ լեզվակով մի բանալի...— Լա՛վ կպահեք:

— Չէ մի չպահեհի՛նք, — ասաց Տորինը և բանալին անցկացրեց ոսկե շղթային, որ կախված էր իր վզից ու իջնում էր բաճկոնի տակ:— Այժմ մեր վիճակն այնքան էլ անհուսալի չէ: Մինչև հիմա մեզ համար պարզ չէր, թե ինչից սկսենք: Մենք մտածում էինք ճանապարհվել Արևելք, զգուշություն ու շրջահայացություն պահպանելով, և հասնել ընդհուպ մինչև Երկար լիճը: Այն ժամանակ էլ հենց կսկսվեին անախորժությունները...

— Ոչ թե այն ժամանակ, այլ շատ ավելի վաղ, ես հո գիտեմ ինչ բան է ճանապարհը դեպի Արևելք,— միջամտեց Հենդալֆը:

— Այնտեղից մենք կարող էինք Արագահոս գետով դեպի վեր բարձրանալ, — շարունակեց Տորինը՝ Հենդալֆի խոսքերը ականջի ետև զգելով,— և հասնել Դեյլի գետի հովտում Սարի հովանու տակ գտնվող հինավուրց քաղաքի ավերակներին: Ճիշտ է, Գլխավոր դարպասով անցնելը ոչ մեկիս սրտով էլ չէ: Այնտեղ գետը ուղիղ նրա տակով է հոսում, թունելով, Սարի Հարավային ստորոտի մեծ ժայռի միջով, և հենց այդ դարպասից էլ սովորաբար դուրս է թռչում Վիշապը, իմ կարծիքով շատ հաճախ, եթե, իհարկե, նա չի փոխել իր սովորությունը:

— Այո, այնտեղից անցնել չի լինի,— ասաց կախարդը,— եթե հույս չունենանք որևէ նշանավոր ռազմիկի, կամ էլ թե չէ հեքիաթային հսկայի օգնության վրա: Ես փորձել եմ հարմար մեկը գտնել, բայց հիմա ռազմիկները դրա համար ժամանակ չունեն: Նրանք կռվում են միմյանց դեմ օտար երկրներում, իսկ հեքիաթային հսկաներին այս կողմերում մատներիդ վրա կհաշվես՝ մեկ, երկու և վերջ, եթե, իհարկե, նրանք առհասարակ չեն տեղափոխվել այստեղից: Սրերը բթացել են, մարտական կացիներով հիմա ծառեր են տապալում, վահանները կաթսաների կափարիչների և օրորոցների տեղ են օգտագործում, իսկ վիշապները, բարեբախտաբար, յոթ սարի ետևն են, և այստեղի բնակիչների համար նրանք համարյա թե առասպելական արարածներ են: Այ, դրա համար ես էլ որոշեցի դիմել գողությանը, հատկապես, երբ հիշեցի կողամուտքը: Եվ հենց այստեղ է, որ խաղի մեջ է մտնում մեր սիրելի Բիլթո Բեգինսը՝ անձամբ ճակատագրի կողմից ընտրված գողը: Այնպես որ բերեք քննարկումն առաջ տանենք և գործողությունների պլան մշակենք:

— Հիանալի է, — ասաց Տորինը: — Գուցե մեր բազմափորձ գողը որևէ արժեքավոր միտք կամ առաջարկություն հայտնի:— Եվ նա չափազանցրած քաղաքավարությամբ խոր գլուխ տվեց Բիլբոյին:

— Ամենից առաջ ես կուզենայի ավելի շատ բան լսել բուն գործի մասին, — ասաց հոբիտը (նրա գլխում ամեն ինչ խառնվեց, ստամոքսում սառնություն զգաց, բայց նա, որպես Տուկերի իսկական հետևորդ, որոշեց չնահանջել): — Այսինքն՝ ոսկու և վիշապների մասին, և բոլոր մնացած բաների մասին, և թե ինչպես է ոսկին հայտնվել այնտեղ, ումն է այն, և այլն:

— Ողորմած տեր,— ասաց Տորինը:— Մի՞թե դուք քարտեզները չտեսաք: Մեր երգը չլսեցիք: Մի՞թե այդ մասին չենք խոսում մի քանի ժամ շարունակ:

— Եվ, այլուսամենայնիվ, ես ուզում եմ ամեն ինչ մանրամասնորեն ու հերթականությամբ նորից լսել, — համառությամբ ասաց Բիլբոն գործարար տեսք ընդունելով (սովորաբար նախանշված նրանց համար, ովքեր փորձում էին նրանից դրամ պարտք վերցնել) և ամեն կերպ ջանալով խելացի, շրջահայաց, պատկառելի մասնագետ երևալ, Հենդալֆի երաշխավորությունն արդարացնելու համար: — Ես կուզենայի նաև ավելի մանրամասն լսել վտանգի աստիճանների, չնախատեսված ծախսերի մասին, այն մասին, թե ինչքան ժամանակ է հատկացվում այդ ամբողջ ձեռնարկումի համար, հատուցման մասին և այլն, և այլն: Դա նշանակում էր. «Ինձ ի՞նչ կհասնի: Եվ ողջ-առողջ կվերադառնա՞մ արդյոք»:

— Դե լավ, թող այդպես լինի, — ասաց Տորինը: — Սրանից շատ տարիներ առաջ, իմ պապ Տորոի օրոք, մեր ընտանիքին Հեռավոր Հյուսիսից քշեցին, և նա ողջ ունեցվածքով ու աշխատանքի գործիքներով ստիպված եղավ փոխադրվել քարտեզի վրա նշված Սարի մոտերքը: Այդ Սարով, որ մի ժամանակ հայտնաբերել էր իմ վաղեմի նախնի Տրեյն Ավագը, մեր ցեղի թզուկները լրջորեն են զբաղվել. փորել են լայնքով ու երկայնքով, ընդարձակել բնակատեղերն ու արհեստատնոցները, ընդ որում, ինչպես ես եմ հասկանում, բավական շատ ոսկի ու թանկարժեք քարեր են գտել: Ինչ եղել է, չի եղել, համենայն դեպս նրանք առասպելական հարստության տեր են դարձել ու փառաբանվել, և իմ պապը դարձել է Սարտակի թագավորը, և նրան շատ հարգել են մարդիկ, որոնք սկզբում ապրում էին Հարավում, բայց աստիճանաբար վերաբնակեցվեցին Արագահոս գետի վերին մասերում, ընդհուպ մինչև Սարի հովանու տակ գտնվող Հովիտը: Այդ ժամանակ էլ նրանք կառուցեցին ուրախ քաղաք Դեյլը: Նրանց կառավարիչները միշտ հրավիրում էին մեր դարբիններին և առատ վարձատրում, նույնիսկ ավելի պակաս հմուտներին: Հայրերն իրենց որդիներին ուղարկում էին մեզ մոտ սովորելու և առատորեն վճարում, հատկապես ուտելիքներով, այնպես որ մենք մեզ նեղություն չէինք տալիս վարել-ցանելու և, առհասարակ, սննդամթերք հայթայթելու: Դրանք երանելի օրեր էին, և նույնիսկ

մեզանից ամենաչունևորները ավելրոդ դրամ ու ազատ ժամանակ ունեին այնքան, որ սկսեցին գեղեցիկ իրեր պատրաստել հենց այնպես, սեփական հաճույքի համար: Էլ չեմ խոսում զարմանալի կախարդական խաղալիքների մասին, որոնցից հիմա աշխարհում ոչ մի տեղ չես տեսնի: Իմ պապի ապարանքները տառացիորեն տրաքվում էին ամեն տեսակ զենքերից, թանկագին քարերից, դրվագազարդ առարկաներից ու սափորներից: Իսկ Դեյլի խաղալիքների տոնավաճառը համարվում էր Հյուսիսի հրաշքը: Այս բոլորն էլ, անկասկած, գրավեց Վիշապի ուշադրությունը: Վիշապները, ինչպես հայտնի է, ոսկի ու թանկարժեք իրեր են գողանում մարդկանցից, Էլֆերից, թզուկներից, որտեղ և ինչպես միայն կարող են, ու իրենց ավարտը պահպանում են մինչև կյանքի վերջը (իսկ վիշապները իրականում ապրում են հավերք, եթե, իհարկե, նրանց չեն սպանում), բայց երբեք չեն օգտագործում նույնիսկ ամենաեժան մատանին: Անձամբ իրենք ոչ մի բան անելու ընդունակ չեն, նույնիսկ իրենց զրահի մի թուլացած թեփուկն ամրացնել չեն կարող: Այն ժամանակ Հյուսիսում վիշապները շատ բազմացան, իսկ ոսկին, ինչպես երևում է, քանի գնաց քչացավ, որովհետև թզուկներից ոմանք փախան Հարավ, ոմանք ոչնչացան, և սնանկացման ու ամայացման պատկերն ավելի ու ավելի սպառանլի չափեր ընդունեց: Այսպես, ուրեմն, այնտեղ բոլորից էլ ազահ, ուժեղ ու զզվելի մի օձ կար, անունը Սմոգ: Մի անգամ Հյուսիսից մի խուլ թևոյուն լսեցինք, որ նման էր փոթորիկի ոռնոցի, և Սարի բոլոր սոճիները տնքացին ու ճռնչացին քամուց: Այն թզուկները, որ բաց երկնքի տակ էին գտնվում և ոչ թե Սարի ընդերքում (բարեբախտաբար ես նրանց թվում էի), հեռվից տեսան, թե ինչպես Վիշապը, ամբողջովին բոցերով պատած, վայրէջք կատարեց մեր Սարի վրա, հետո ցած իջավ, սողաց մինչև անտառ ու վառեց այն: Այդ ժամանակ Դեյլում բոլոր զանգերը դողանջեցին, և զինվորներն արագ զինվեցին: Թզուկները նետվեցին դեպի Գլխավոր դարպասը, բայց Վիշապն այնտեղ նրանց էր սպասում: Նրանցից ոչ ոք չփրկվեց: Գետը տապից եռ էր գալիս, մշուշը պատել էր Դեյլը: Ադ մշուշի մեջ Վիշապը հարձակվեց ռազմիկների վրա և համարյա բոլորին կոտորեց. սովորական տխուր պատմություն, որը, ավա՛ղ, այն տարիներին հազվադեպ չէր: Հետո Վիշապը ետ դարձավ դեպի Սար, Գլխավոր դարպասից ներս սողաց և բոլոր փողոցներն ու նրբանցքները, նկուղները, առանձնատներն ու պատշգամբները մաքրեց բնակիչներից: Եվ երբ Սարում ոչ մի կենդանի թզուկ չմնաց, Սմոգը ամբողջ գանձը վերցրեց իրեն: Երևի նա, ինչպես ընդունված է վիշապների մոտ, այդ գանձը դիզել է ամենահեռավոր մի քարանձավում և, գլուխը թալանած ոսկու վրա դրած, այդ օրվանից քնել: Գիշերները նա Գլխավոր դարպասից դուրս էր սողում, առևանգում Դեյլի բնակիչներից և ուտում, այնպես որ Դեյլը աստիճանաբար անկում ապրեց, իսկ բնակչության մի մասը ոչնչացավ, մի մասն էլ ցրվեց: Իսկությունը չգիտեմ, թե հիմա ինչ է կատարվում այնտեղ, հազիվ թե որևէ մեկը համարձակվի Սարին մոտիկ ապրել: Թե ապրեն էլ, երևի, լճի մոտերքում: Մենք՝ այդ օրը փրկված մի բուռ թզուկներս, նստել էինք ապաստարանում և, Սմոգին անիծելով, մեր բախտն էինք լալիս: Հանկարծ ներս մտան հայրս ու պապս՝ խանձված

մորուքներով: Նրանք շատ մռայլ էին ու խոսելու անտրամադիր: Երբ ես հարցրի, թե նրանց ինչպես է հաջողվել ողջ մնալ, նրանք ինձ պատվիրեցին սսկվել և ասացին, որ ժամանակին ամեն ինչ կհմանամ: Հետո մենք հեռացանք այդ վայրերից ու թափառում էինք տեղից տեղ՝ փորհաց աշխատելով, ինչպես կարողանում էինք. պատահում էր, որ նույնիսկ դարբնի արհեստի էինք ձեռք գարկում, կամ աշխատում էինք ածխահորերում: Բայց մեզանից գողացած գանձերի մասին երբեք չէինք մոռանում: Եվ նույնիսկ հիմա, երբ խոստովանում եմ, մենք որոշ բան ետ ենք գցել սև օրվա համար և այլևս կարիքի մեջ չենք (այստեղ Տորինը շոյեց վզից կախված ոսկե շղթան), դեռևս լի ենք դրանք վերադարձնելու և Սմոգից վրեժ լուծելու վճռականությամբ՝ եթե հաջողվի:

Ես հաճախ էի գլուխ կոտրում այն բանի վրա, թե հայրս ու պապս ինչպես են փրկվել: Այժմ հականում եմ, որ նրանք իմացել են կողամուտքի տեղը, որի մասին իրենցից բացի ոչ ոք չգիտեր: Ըստ երևույթին հենց նրանք էլ կազմել են քարտեզը, և ես կուզեի իմանալ, թե ինչ հնարքով է այն հափշտակել Հենդալֆը, և ինչու չի հասել ինձ՝ օրինական ժառանգիս:

— Ես չեմ հափշտակել, ինձ տվել են, — պատասխանեց հրաշագործը: — Ձեր պապ Տորին, ինչպես հիշում եք, Մորայայի հանքերում սպանեց գոբլինների թագավոր Ազոգը:

— Նզովյալ լինի նրա անունը, — արձագանքեց Տորինը:

— Իսկ Տրեյնը՝ ձեր հայրը, ապրիլի քսանմեկին (անցյալ հինգշաբթի, ի դեպ, լրացավ ճիշտ հարյուր տարին այն օրից) գնաց հայտնի չէ թե ուր, և այն ժամանակվանից դուք նրան չեք տեսել...

— Այդ բոլորը ճիշտ է, — հաստատեց Տորինը:

— Այդպես, ուրեմն, ձեր հայրը գնալուց առաջ այդ քարտեզը տվեց ինձ և խնդրեց, որ հանձնեմ ձեզ: Իսկ ինչ վրաբերում է այն ձեզ հանձնելու ժամանակի և տեղի ընտրությանը, ապա այստեղ ես մեղք չունեմ, ախր ինձ համար դժվար էր ձեզ գտնել... Երբ ձեր հայրը քարտեզը տվեց ինձ, իր անունն էր մոռացել, ոչ միայն ձերը, այնպես որ դեռ շնորհակալ եղեք... Ահա, ստացեք:— Եվ նա թուղթը մեկնեց Տորինին:

— Միևնույն է, չեմ հասկանում, — ասաց Տորինը, և Բիլբոն էլ նույնը կրկնելու ցանկություն ունեցավ: Բացատրությունը նրան էլ այնքան պարզ չթվաց:

— Ձեր պապը, — դանդաղ և մռայլ խոսեց հրաշագործը, — Մորայայի հանքերը գնալուց առաջ քարտեզը տվեց որդուն, որ պահպանի: Ձեր պապի վախճանվելուց հետո ձեր հայրը ուղևորվեց քարտեզի օգնությամբ բախտը փորձելու. բազմաթիվ ու բազմապիսի չար արկածների հանդիպեց, բայց այդպես էլ Սար չհասավ: Ես նրա հետ ծանոթացա սարսափելի կախարդ Նեկրոմանտի (Մեռելահարցունկի) գնդաններում. թե ինչպես էր նա այնտեղ ընկել՝ չգիտեմ:

— Իսկ դուք ի՞նչ էիք անում այնտեղ,— հարցրեց Տորինը սարսռալով, և բոլոր թզուկները նույնպես դողացին:

— Կարևոր չէ: Ինչ-որ բանով հետաքրքրվում էի, ինչպես միշտ և, պետք է ասել, այնտեղ բավական նեղն ընկա: Նույնիսկ ես՝ Հենդալֆս, հազիվհազ դուրս պրծա: Ես փորձում էի փրկել ձեր հորը, բայց արդեն ուշ էր. նրա ուղեղը խաթարվել էր, մտքերը խառնվում էին, նա ոչինչ չէր հիշում, բացի քարտեզից ու բանալուց:

— Մորայացի գործիչների հետ մենք վաղուց հաշիվներս մաքրել ենք,— ասաց Տորինը,— այժմ հարկավոր է Նեկրոմանտով զբաղվել:

— Անհեթեթություն... Այդպիսի թշնամուն չեն հաղթի բոլոր թզուկները միասին վերցրած, եթե նույնիսկ հնար լիներ աշխարհի չորս ծայրերից բոլորին էլ հավաքել: Ձեր հայրը մի բան էր ուզում՝ որ իր որդին գլուխ հաներ քարտեզից և բանալին գործի դներ: Այնպես որ Վիշապը և Սարը ձեզ լիովի հերիք են:

— Ուշադրություն, ուշադրություն,— դուրս թռավ Բիբլոյի բերանից:

— Ի՞նչ է պատահել,— հարցրին թզուկները ու միանգամից շրջվեցին նրա կողմը, իսկ նա, իրեն տիրապետելու ուժ չունենալով, բացականչեց.

— Լսեցեք, թե ինչ եմ ասում...

— Ի՞նչ է եղել, — հարցրին թզուկները:

— Ինձ թվում է, ձեզ հարկավոր է գնալ Արևելք և տեղում որոշել ինչն ինչոց է: Վերջ ի վերջո գոյություն ունի Կողամուտքը, և վիշապներն էլ հո երբևէ քնում են, և եթե մուտքի մոտ երկար նստես, անպայման գլխումդ մի մտիք կծագի: Համ էլ, գիտե՞ք ինչ, իմ կարծիքով այսօր բավականին խոսեցինք: Ինչպես ասում են. շուտ վերկացողի գործը աջ է, թե ինչ: Ձեր գնալուց առաջ ես լավ նախաճաշ կտամ:

— Մեր բոլորի գնալուց առաջ, ուզում եք ասել, — ասաց Տորինը: — Մի՞թե դուք չեք Գլխավոր Գողը: Եվ մի՞թե մուտքի մոտ նստելը ձեր գործը չէ, էլ չենք խոսում ներս թափանցելու մասին: Բայց շուտ քնելու, շուտ վերկենալու և նախաճաշի հարցում համաձայն եմ ձեզ հետ: Ճանապարհ ընկնելուց առաջ սովորաբար ապուխտով վեց ձվից ձվածեղ եմ ուտում, իհարկե, ոչ հարած ձվից, այլ ակնիկ, և տեսեք հա, որպեսզի աչքերը ամբողջական լինեն:

Այն բանից հետո, երբ մնացած թզուկներն էլ հայտնեցին, թե նախաճաշին ինչ են ուզում (նրանցից ոչ մեկի մտքով չանցավ գոնե «խնդրեմ» ասել, որից Բիբլոն կարգին նեղացավ), բոլորը սեղանից վեր կացան: Հոբիտը դեռ պետք է նրանց համար քնելու տեղեր պատրաստեր. Բիբլոն նրանց տրամադրեց բոլոր հյուրասենյակները, անկողին գցեց բազկաթոռների ու բազմոցների վրա, վերջապես բոլորին տեղավորեց ու պառկեց իր փոքրիկ մահճակալին՝ շատ հոգնած ու մի քիչ անհանգիստ: Միակ բանը, որ նա հաստատ վճռել էր՝ ոչ մի դեպքում լուսումնութի

չվերկենալ այդ բոլոր ճրիակերներին կերակրելու համար: Տուկյան տրամադրությունները նրա միջից ցնդել էին, և նա բոլորովին էլ համոզված չէր, որ առավոտյան որևէ տեղ կուղևորվի:

Անկողնում պառկած՝ նա լսում էր, թե հարևան ննջարանում Տորինս ինչպես է դնում:

Կապույտ լեռներից, մշուշից անդին
Քարավանները կձգվեն անթիվ
Դեպի որջերը, քարանձավները,
Որտեղ գանձերն են երկիր-հեքիաթի...

Բիլբոն այդ երգի տակ քնեց և գարշելի երազներ տեսավ: Երբ արթնացավ, արդեն վաղուց լուսացել էր:

ՈՉԽԱՐԻ ԽՈՐՈՎԱԾ

Բիլբոն աշխուժորեն վեր թռավ, խալաթը հագավ և մտավ ճաշասենյակ: Ոչ մի շունչ չկար: Այնտեղ նա տեսավ միայն առատ և հապճեպ նախաճաշի հետքեր: Սենյակում ամեն ինչ տակունվրա էր արված, խոհանոցում կեղտոտ ամանների կույտեր էին, համարյա բոլոր կաթսաներն ու թասերը կեղտոտ էին: Բիլբոն տխրությամբ համոզվեց, որ երեկոյան խնջույքը վատ երազ չէր: Բայց և թեթևություն զգաց, տեսնելով, որ հյուրերն ուղևորվել են՝ ժամանակ չգտնելով իրեն արթնացնելու («նույնիսկ շնորհակալություն չասացին»,— մտածեց նա): Միևնույն ժամանակ Բիլբոն մի քիչ հիասթափություն էր ապրում և ինքն էլ զարմացավ իր հիասթափության վրա: «Հիմար չլինես, Բիլբո Բեգինս,— ինքն իրեն համոզում էր նա,— քո տարիքում արժե՞ արդյոք մտածել վիշապների ու հեքիաթային զանազան անհեթեթությունների մասին»:

Եվ նա հագավ գոգնոցը, սալօջախը վառեց, ջուր եռացրեց ու արագորեն լվաց ամբողջ աման-չամանը: Խոհանոցում տնավարի մի լավ նախաճաշելուց հետո միայն անցավ ճաշասենյակը կարգի բերելուն: Արևն արդեն փայլում էր ողջ պայծառությամբ, մուտքի դուռը կրկնակի վրա բաց էր, զարնանային գոլ գեփյուռը տուն լցվեց: Բիլբոն սկսեց բարձր սուլել և բոլորովին մոռացավ երեկվա երեկոն: Նոր-նոր նա պատրաստվում էր նստել ճաշասենյակում, բաց պատուհանի առջև, ու երկրորդ անգամ կարգին նախաճաշել, երբ հանկարծ հայտնվեց Հենդալֆը:

— Աղավնյակս,— ասաց նա,— ախր ե՞րբ ես բարեհաճելու: Եվ դեռ խոսում էիր «վաղ վեր կենալու» մասին: Ասացե՛ք խնդրեմ, նստել նախաճաշում է, կամ, ինքդ ինչպես ես անվանում դա, մինչդեռ տասն անց կես է: Նրանք սպասել չէին կարող և քեզ նամակ են թողել:

— Ի՞նչ նամակ, — անասելի հուզված հարցրեց խեղճ միստր Բեգինսը:

— Այ քեզ բա՛ն, — բացականչեց Հենդալֆը: — Ես քեզ չեմ ճանաչում, դու նույնիսկ օջախի թարեքի փոշին չես մաքրել:

— Օջախի թարեքն այստեղ ի՞նչ գործ ունի: Բավական չէ՞, որ տասնչորս մարդու սպասք եմ լվացել:

— Եթե թարեքի փոշին մաքրեիր, ապա ժամացույցի տակ կգտնեիր այ սա,— և Հենդալֆը մի գրություն մեկնեց Բիլբոյին (գրված, բնական է, Բիլբոյի սեփական թղթի վրա):

Ահա թե ինչ կարդաց Բիլբոն:

«Տորին և Ընկ.-ը Գող Բիլբոյին իր ողջույնն է հղում... Հյուրընկալության համար սրտագին շնորհակալություն, մասնագիտական օգնության առաջարկությունն ընդունվում է երախտագիտությամբ: Պայմանները որոնելին հանձնելիս վճարել մինչև (բայց չգերազանցելով) ընդհանուր եկամուտի (թե որ այդպիսի բան լինի) տասնչորսերորդ մասը: Ճանապարհային ծախսերի հատուցումը բոլոր դեպքերում երաշխավորվում է, թաղման ծախսերն ընկնում են Ընկ.-ն կամ նրա ներկայացուցիչների վրա (եթե հանգուցյալը նախապես միջոցներ ձեռք չի առել): Հնարավոր չհամարելով ձեր թանկագին հանգիստը խանգարել, մենք ուղևորվում ենք, քանզի տեսնելու ենք անհրաժեշտ նախապատրաստություններ: Ձեր պատվական անձի գալստյանը սպասում ենք Կանաչ Վիշապ խորտկարանում, Բայուուտերում, առավոտյան ուղիղ ժամը 11-ին: Ձեր ճշտապահությանը հուսալով, պատիվ ունենք խորին նվիրվածությամբ Տորին և Ընկ.»:»

— Մնում է ուղիղ տասը րոպե: Ստիպված ես լինելու վազել, — նկատեց Հենդալֆը:

— Բայց ...— սկսեց Բիլբոն:

— Ոչ մի «բայց», — կտրեց հրաշագործը:

— Բայց ախր...— բողոքելու էլի մի փորձ արեց Բիլբոն:

— Ոչ մի «բայց ախր»: Վազքով:

Հետագայում Բիլբոն ոչ մի կերպ չէր կարողանում հիշել, թե ինչպես հայտնվեց փողոցում առանց գլխարկի, առանց ձեռնափայտի, առանց դրամի, առանց բոլոր այն իրերի, որ նա սովոր էր տնից դուրս գալիս իր հետ վերցնել: Նա կիսատ թողեց երկրորդ նախաճաշը, անվա թողեց ամանները, Հենդալֆի ձեռքը խոթեց տան բանալիներն ու փոչոտ ոտքերում ինչքան ուժ կար՝ վազեց փողոցով, մեծ ջրաղացի կողքով, անցավ կամուրջը և դեռ մի մղոնի չափ էլ առաջ գնաց Գետի Այն Կողմով:

Լրիվ շնչասպառ էր եղել նա, քրտինքի մեջ կորել էր, երբ ուղիղ ժամը տասնմեկին, ժամացույցի զարկերի հետ, հասավ Բայուուտեր: Եվ ինչ լինի, որ լավ է. պարզվեց, որ թաշկինակն էլ է մոռացել տանը:

— Կեցցե՛ս,— ասաց Բալինը, որ խորտկարանի շեմքին կանգնած սպասում էր նրան:

Այդ ժամանակ գյուղ տանող ճանապարհի ոլորանից դուրս եկան մնացածները: Նրանք գալիս էին պոնիներ հեծած, որոնց էլ ինչ ասես, որ

չէին բարձել՝ հակեր, պարկեր և այլ իրեր: Ամենափոքրիկ պոնին, ինչպես երևում էր, նախատեսված էր Բիլբոյի համար:

— Այժմ երկուսդ էլ հեծեք, և առաջ, — հրամայեց Տորինը:

— Ներողություն եմ խնդրում, — ընդվզեց Բիլբոն,— ես չհասցրի գլխարկս դնել, մոռացա թաշկինակս և փող չվերցրի: Ձեր երկտողը ստացա միայն տասն անց քառասունհինգ ռոպեին, որպեսզի ճշտապահ լինեմ...

— Իսկ դուք այդքան ճշտապահ մի՛ եղեք,— խորհուրդ տվեց Դվալինը, — և մի՛ հուզվեք: Ստիպված կլինեք մինչև ճանապարհորդության վերջը յուրազնալ առանց թաշկինակների ու առանց ուրիշ շատ բաների: Իսկ գլխարկի փոխարեն... ինձ մոտ, իրերիս մեջ ավելորդ կնգուղ և թիկնոց կա:

Ահա, այսպես, մի գեղեցիկ առավոտ, ապրիլի ամենավերջին օրը նրանք կամաց-կամաց ճանապարհ ընկան:

Բիլբոն զգեստավորվեց մուգ կանաչ թիկնոցով և մի քիչ խուճապած մուգ կանաչ կնգուղով, որ նրան փոխարինաբար տվեց Դվալինը: Հագուստը նրան մեծ եղավ, բավականին անհեթեթ տեսք ուներ: Նույնիսկ վախենում եմ պատկերացնել, թե ինչ կմտածեր հայր Բանգոն, եթե տեսներ իր որդի Բիլբոյին: Բիլբոն միայն նրանով էր մխիթարվում, որ իրեն թզուկի տեղ դնել չի կարելի, քանի որ ինքը մորուք չունի:

Հազիվ էին նրանք հեռացել խորտկարանից, երբ ետևներից հասավ Հենդալֆը, որ, սպիտակ, սքանչելի ձին հեծած, կատարելապես հրաշալի տեսք ուներ: Նա Բիլբոյին մի կապոց թաշկինակ էր բերել, սիրած ծխամորճն ու ծխախոտը: Խումբը ուրախ-ուրախ շարունակեց ճանապարհը: Ճանապարհորդներն ամբողջ օրը զանազան զվարճալի պատմություններ էին պատմում, երգեր երգում և լռում էին միայն մի փոքր հաց ուտելու համար, դադարների ընթացքում: Եվ չնայած դա այնքան էլ հաճախ չէր պատահում, որքան Բիլբոն կուզեր, բայց, այնուամենայնիվ, քիչ-քիչ կյանքը դուր էր գալիս: Եվ մտածում էր, որ արկած ասվածն էլ վատ բան չէ:

Սկզբում նրանք անցնում էին հոբիտների տիրություն, որ լայնարձակ, բարեկարգ երկիր էր, հիանալի ճանապարհերով, հարգարժան ժողովրդով բնակեցված. ժամանակ առ ժամանակ հանդիպում էր որևէ թզուկ կամ ֆերմեր, որ շտապում էին իրենց գործին: Հետո սկսվեցին այնպիսի տեղանքներ, որտեղ բնակիչները խոսում էին անծանոթ լեզվով և երգում երգեր, որ Բիլբոն առաջներում լսած էլ չկար: Վերջապես նրանք խորացան Անապատային երկիրը, որտեղ արդեն ոչ բնակիչներ էին հանդիպում, որ պատնդոկներ, ճանապարհներն էլ գնալով ավելի ու ավելի էին վատանում: Առջևում միգապատ լեռներ նշմարվեցին, մեկը մյուսից բարձր, որ խիտ անտառներով ծածկված լինելու պատճառով սև էին թվում: Լեռների վրա տեղ-տեղ երևացին հինավուրց ամրոցներ, այնքան չարագուշակ տեսքով, ասես դրանք վատ մարդիկ էին կառուցել: Շրջապատում ամեն ինչ մռայլ դարձավ, քանի որ եղանակը հանկարծ

փչացավ, ցրտեց ու խոնավացավ: Ստիպված էին գիշերել որևէ պատահական տեղում:

— Արի ու բան հասկացիր՝ հունիսը քթերիս տակ է, — փնթփնթաց Բիլբոն. նրա պոնին գյուղական ճանապարհով չլմփացնելով գալիս էր թափորի վերջից: Երեկոն իջնում էր, թեյի ժամն անցել էր, ամբողջ օրն անդադար անձրև էր մաղում, կնգուղից ջուրը հոսում էր աչքերի մեջ, թիկնոցը մինչև վերջին թելը թրջվել էր, պոնին հոգնել էր ու սայթաքում էր քարերի վրա: Ճանապարհորդներն անտրամադիր էին և լուռ:

«Հաստատ անձրևը թրջել է չոր շորերի հակերը և ջուրը լցել է ուտելիքի պարկերը, — թախիծով մտածեց Բիլբոն:— Ինչպես կուզեի հիմա հայտնվել իմ տանը: Իմ փառավոր բնում, օջախի մոտ, և որ թեյնիկն սկսեր երգել...»:

Հետագայում ավելի շատ էր երագելու այդ մասին:

Իսկ թզուկները մանր վարգով գնում էին առաջ հա առաջ, առանց նայելու, ասես բուրրովին մոռացել էին հոբիտի մասին: Գորշ ամպերի ետևում, երևում է, արևը մայր էր մտել և, երբ նրանք իջան խոր հովիտը, որի միջով մի վտակ էր հոսում, բուրրովին մթնեց:

Քամի բարձրացավ, ափերի ուռենիներն օրորվեցին ու խշշացին: Բարեբախտաբար հնադարյան քարե կամուրջն անվնաս էր, ու նրանք հարկարդված չեղան ծանծաղուտով անցնել, թե չէ գետն անձրևներից վարարել էր և աղմուկով ցած էր սլանում լեռներից ու բլուրներից:

Երբ, վերջապես, նրանք հայտնվեցին մյուս ափին, բուրրովին մթնեց: Քամին ամպերը ցրեց, լուսինը դուրս եկավ: Նրանք ձիերից իջան, և Տորինը ինչ-որ բան մռթմռթաց ընթրիքի ու գիշերելու համար մի չոր տեղ գնտլու մասին: Եվ միայն այդ ժամանակ նկատեցին, որ Հենդալֆը չկա: Նա ամբողջ ճանապարհին իրենց հետ էր, բայց այդպես էլ չասելով՝ մասնակցո՞ւմ է արշավանքին, թե ուղղակի ժամանակավորապես ուղեկցում է: Նա բուրրից շատ էր ուտում, բուրրից ավելի շատ էր խոսում ու բուրրից էլ բարձր էր ծիծաղում: Իսկ հիմա ուղղակի մեկից-մեկ չքվել է և վերջ:

— Այն էլ այն ժամանակ, երբ մեզ այնքան հարկավոր էր հրաշագործը, — տևքացին Դորին ու Նորին (նրանք համամիտ էին հոբիտի հետ, որ պետք է ուտել ճիշտ ժամանակին, հաճախակի և որքան կարելի է շատ):

Վերջիվերջո որոշեցին գիշերել այնտեղ, ուր գտնվում էին, միայն մտան ծառերի տակ, որովհետև հողն այնտեղ մի քիչ չոր էր: Բայց քամին օրորում էր տերևները, և թափվող կաթիլների ձայնը՝ «կը՛լթ-կը՛լթ», թախիծ էր բերում: Դեռ խարույկին էլ ինչ-որ բան էր պատահել, ասես կրակը կախարդել էին: Սովորաբար թզուկները կարողանում էին խարույկ վառել բառացիորեն որտեղ ուզես և ինչից ուզես, անկախ այն բանից՝ քամի կա՞ թե չկա: Բայց այդ երեկո բան չէր դուրս գալիս, Նույնիսկ Օյնը և Գլոյնը չէին կարողանում, որոնք ինչ-ինչ, բայց խարույկի վարպետ էին:

Հետո հանկարծ պոնիներից մեկը չգիտես ինչից խրտնեց ու փախավ: Չկարողացան բռնել, նա նետվեց գետը: Փորձելով պոնին ջրից հանել՝ Ֆիլին ու Կիլին քիչ էր մնում խեղդվեին, իսկ բեռը ջուրը տարավ: Այնտեղ, հակառակի պես, մթերքի առավել մեծ մասն էր, դրա համար էլ նրանց աղքատիկ ընթրիք էր սպասում և էլ ավելի աղքատիկ նախաճաշ:

Նրանք այսպես մռայլ, թրջված նստել ու փնթփնթում էին, իսկ Օյնն ու Գլոյնը շարունակում էին բզբզել խարույկն ու իրար հայհոյել: Բիբլոն տիրութամբ խորհում էր այն մասին, որ արկածները բոլորովին էլ մայիսյան շողշողուն զվարճալի զբոսանքներ չեն: Եվ հանկարծ Բալինը, որ գիշերապահն էր, բղավեց.

— Նայեք, այնտեղ կրակ է երևում:

Քիչ հեռվում սևին տվող մի բլուր էր երևում, որ տեղ-տեղ բավական խիտ ծածկված էր ծառերով: Ծառերի թավուտում իսկապես կրակ էր փյլփլում կարմրավուն, տաքուն, ասես խարույկի կամ ջահի լույս լիներ:

Նրանք նայեցին, նայեցին ու սկսեցին վիճել: Մեկն ասում էր՝ «այո», մեկն ասում էր՝ «ոչ»: Ոմանք կողմնակից էին, որ գևան և ուղղակի տեսնեն, թե դա ինչ բան է, հո սրանից էլ վատ չէր լինելու: Ուրիշները համոզում էին՝ «Տեղանքը մեզ անծանոթ է, լեռներն էլ չափազանց մոտիկ են: Ինչքան քիչ հետաքրքրասիրություն ցուցաբերենք ճանապարհին, այնքան քիչ կլինի փորձանքի մեջ ընկնելու հավանականությունը»:

Ինչ-որ մեկն ասաց.

— Բայց մենք էլ տասնչորս հոգի ենք:

Մեկն էլ ասաց.

— Իսկ ո՞ր է անհետացել Հենդալֆը:

Եվ բոլորն իարից առաջ ընկնելով սկսեցին կրկնել այդ հարցը: Այդ միջոցին անձրևն սկսեց առաջվանից ավելի առաջ թափվել, իսկ Օյնն ու Գլոյնը կռվեցին:

Դա հարցը վճռեց:

— Վերջ ի վերջո Գոդը մեզ հետ է, — ասացին նրանք ու ուղևորվեցին կրակի կողմը, բոլոր հնարավոր նախազգուշություններով, իրենց պոնիներին սանձերից բռնած տանելով: Նրանք հասան բլրին և մտան անտառ, հետո սկսեցին վերև բարձրանալ, բայց ոչ մի տեղ արահետ չէր երևում, որ տաներ դեպի տուն կամ ֆերմա: Ինչքան էլ ջանք էին թափում, միևնույն է, շրշուներ, ճայթյուններ ու ճռռոցը (նույնն է թե ասենք մեր քրթմնջյունն ու սատանայի հասեցին հայհոյանքներ տեղալը) երկինք էին հասնում, մինչ նրանք թանձր խավարի մեջ ճեղքում էին անտառի թավուտը:

Հանկարծ ծառերի արանքից կարմիր լույս փայլեց, շատ մոտիկ:

— Հիմա հերթը Գողինն է, — ասացին նրանք՝ նկատի ունենալով Բիլբոյին:

— Գնացեք ստուգեք, դա ինչ լույս է, և ինչի համար է, և արդյոք ամեն ինչ խաղաղ ու անվտանգ է, — հրամայեց Տորինը հոբիտին: — Շտապեցեք, և եթե ամեն ինչ կարգին է, իսկույն վերադարձեք: Եթե ամեն ինչ կարգին չէ, նմանապես փորձեք վերադառնալ: Չե՞ք կարող վերադառնալ՝ երկու անգամ բվեճի պես բվացեք, իսկ մեկ անգամ կռնչացեք բվի պես, և մենք կաշխատենք որևէ բան ձեռնարկել:

Եվ Բիլբոն ստիպված եղավ գնալ, այդպես էլ չհասցնելով բացատրել, որ ինքը ոչ բվի պես կռնչալ գիտի, ոչ էլ բվեճի նման բվալ կարող է: Դրա փոխարեն հոբիտները կարող են բացարձակապես անձայն քայլել անտառում: Նրանք իրենց այդ ունակությամբ շատ են հպարտանում, և Բիլբոն մեկ անգամ չէ, որ արհամարհանքով փնջացնում էր, լսելով այն «շրիսկթրիսկոցը», որ, իր կարծիքով, թզուկները գցել էին անտառով անցնելիս: Ես անձամբ այն կարծիքին եմ, որ մենք իսկի ոչինչ էլ չէինք նկատի, եթե Նույնիսկ նրանց հեծելախումբը դոփեր մեզնից երկու քայլ այն կողմ: Ինչ վերաբերում է Բիլբոյին, ապա երբ նա սողոսկում էր դեպի կրակը, Նույնիսկ գզուշավոր ժանտաքիսը ոչինչ չէր լսի: Բիլբոն բարեհաջող, ոչ ոքի չխորտնեցնելով, հասավ կրակին և ահա թե ինչ տեսավ:

Երեք վիթխարի հսկաներ նստել էին հաճարենու գերաններից վառած խարույկի շուրջը: Նրանք փայտե երկար շամփուրներով ոչխարի միս էին խորովում և լիզում յուղոտ մատները: Օդում չտեսնված ախորժալի բույր էր տարածվել: Կողքը ինչ-որ համեղ բանով մի տակառիկ էր դրված, և հսկաները գավաթները լցնելով խմում էին: Դրանք տրոլներ էին: Այստեղ ոչ մի կասկած լինել չէր կարող: Նույնիսկ Բիլբոն, չնայած իր ճգնավորական կյանքին, իսկույն գլխի ընկավ, թե նրանք ովքեր են՝ նրանց կոպիտ, անտաշ մռուլներից, հսկայատիպ չափերից, քարե ոտքերից և, գլխավորը, նրանց խոսակցությունից, որ բոլորովին բարձրաշխարհիկի նման չէր:

— Երեկ ոչխարի միս, Էսոր ոչխարի միս, երևում է եզուց էլ, արևս մեռնի, սիտաված պիտի էդ գրողի տարած ոչխարի մսիը խժռենք, — ասաց տրոլներից մեկը:

— Գոնե մի կտոր մարդու թեկուզ նեխած միս լիներ,— արձագանքեց երկրորդը: — Եվ էդ պնդաճակատ Վիլյամը ինչի համար մեզ քարշ տվեց Էս կողմերը: Խմելիքն էլ է վերջանում, — ավելացրեց նա Վիլյամի արմունկը բռթելով հենց այն պահին, երբ վերջինս գավաթից կում էր անում:

Վիլյամը շնչահեղձ եղավ:

— Ձենդ կտրիր, — գոռաց նա, հենց որ շունչը տեղը բերեց: — Դու ինչ է, կարծում ես, որ մարդուկները իրենց ոտքով կգան քո և Բերտի բերանը կընկնեն՝ առեք, խժռեք: Այն ժամանակից, ինչ մենք իջել ենք լեռներից, դու և Բերտը մեկ ու կես գյուղ եք խժռել, ոչ պակաս: Էլ որտեղի՞ց գտնենք:

Հիմա Էնպիսի ժամանակներ են եկել, որ Էսպիսի լեռնային յուզոտ ոչխարի համար էլ պետք է ասեք՝ «շնորհակալություն, Բիլլ»:

Նա ատամներով մի մեծ կտոր պոկեց ոչխարի ազդրից, որ խորովում էր, և թևքով բերանը սրբեց:

Ես կարծում եմ, որ տրոլները միշտ էլ այդպես անկուտուրական են պահում իրենց, նույնիսկ նրանք, ովքեր մեկական գլուխ ունեն: Այս բոլորը լսելով՝ Բիլլըն հասկացավ, որ հարկավոր է անհապաղ գործի անցնել. Կամ հարկավոր է կամացուկ ետ դառնալ ու նախազգուշացնել յուրայիններին, որ մի քանի քայլի վրա երեք հաղթանդամ տրոլ են նստած ամենասոսկալի տրամադրությամբ և ակնհայտ է, որ չեն հրաժարվի խորոված թզուկ կամ, բերանի համը փոխելու համար, թեկուզ խորոված պոնի անուշ անել: Կամ էլ ինքը պետք է գողություն անելու փայլուն օրինակ ցույց տա: Իսկական, առասպելական առաջին կարգի գողը նման պարագայում կդատարկեր տրոլների գրպանները (համարյա միշտ արժե դա անել), հենց շամփուրի վրայից կհաներ ոչխարը, կփախցներ գարեջուրը և կչքվեր: Իսկ տրոլները նրան իսկի չէին էլ նկատի: Գողերն ավելի գործնական են, մասնագիտական փառասիրությունից զուրկ, դեռ նախապես կխոցեին տրոլներին դաշույնով: Որից հետո ճոխ ընթրիքով ուրախ-ուրախ գիշերը կկարճացնեին:

Բիլլըն գիտեր այդ բոլորը: Նա բավականաչափ կարդացել էր այնպիսի բաների մասին, որ իր կյանքում չէր տեսել և չէր արել: Նա խիստ հուզված էր, բայց և զգվանք էր զգում: Նա կուզենար հարյուր մղոն հեռու լինել այստեղից և միաժամանակ... և միաժամանակ ոչ մի կերպ չէր կարող պարզապես վերցնել ու դատարկ ձեռքերով վերադառնալ Տորինի և Ընկ.-ն մոտ: Դրա համար էլ նա խավարի մեջ կանգնել ու մտածում էր: Տրոլների գրպանները դատարկելը գողերի նրան հայտնի բազմատեսակ գործերից ամենահեշտն էր թվում: Վերջապես նա վճիռ կայացրեց և սողաց հենց Վիլյամի թիկունքում գտնվող ծառի ետևը:

Բերտը և Թոմը գնացին դեպի տակառիկը: Վիլյամը նորից մի գավաթ կոնծեց: Վախը հաղթահարելով՝ Բիլլըն փոքրիկ ձեռքը մտցրեց Վիլյամի ընդարձակ գրպանը: Քսակն այնտեղ էր և Բիլլոյին մի պարկի չափ մեծ թվաց. «Ահա,— մտածեց նա՝ հաճույք զգալով իր նոր արհեստից և զգուշորեն քսակը դուրս քաշելով: — Դժվարը սկիզբն է»:

Այո, դա միայն սկիզբն էր: Տրոլների քսակները միշտ չարաղետ գաղտնիք են ունենում, և այս քսակն էլ բացառություն չէր:

— Հեյ, դու ո՞վ ես,— ծիծաղեց քսակը գրպանից դուրս հայտնվելով, և Վիլյամը բռնեց Բիլլոյի վզից ավելի շուտ, քան նա կհասցներ ցատկելի ծառի ետևը:

— Արևս մեռնի, Բերտ, նայիր, ես ում եմ ճանկել, — ասաց Վիլյամը:

— Ես ի՞նչ բան եմ,— հարցրին Բերտն ու Թոմը՝ նրան մոտենալով:

— Ես ինչ իմանամ: Դու ի՞նչ ես:

— Ե՞ս... Բիլթո Բեգինսն եմ, վզգ-հոբիտ,— պատասխանեց խեղճ Բիլթոն, ամբողջ մարմնով դողալով և փորձելով կռահել, թե ինչպես բվի պես կռնչա, քանի դեռ իրեն չեն խեղդել:

— Վզգհոբի՞տ,— կրկնեցին տրոլները զգուշանալով: Տրոլները մտքից խեղճ են, այդ պատճառով էլ ամեն անձանոթ բանի կասկածանքով են վերաբերվում:

— Իսկ վզգհոբիտն ի՞նչ գործ ուներ իմ գրպանում,— նկատեց Վիլյամը:

— Իսկ նրանից կարելի՞ է ճաշ պատրաստել, — հետաքրքրվեց Թոմը:

— Փորձիր՝ կիմանաս,— պատասխանեց Բերտը՝ շամփուրը վերցնելով:

— Կաշին թե հանենք, մի կծելու միս հազիվ մնա,— խոսեց Վիլյամը, որը հենց նոր էր կուշտ ընթրել:

— Գուցե ման գանք, էստեղ դրանցից էլի՞ գտնենք: Կարկանդակ կթխեինք,— ասաց Բերտը:— Հե՛յ, քեզ նմանները շա՞տ են էս անտառում: Քոսոտ ճագար,— ավելացրեց նա հոբիտի փրչոտ ոտքերին նայելով: Տրոլը բռնեց Բիլթոյի ոտքերից և ուժգին թափ տվեց:

— Շա՛տ,— ծղրտաց Բիլթոն և այդ ժամանակ միայն գլխի ընկավ, որ բարեկամներին մատնել չի կարելի: — Ո՛չ, ոչ՛, ո՛չ մեկը, — արագ ավելացրեց նա:

— Էդ ո՞նց հասկանալ,— հարցրեց Բերտը՝ Բիլթոյին օդում բռնած, բայց այս անգամ մազերից:

— Այդպես էլ հասկացեք,— պատասխանեց Բիլթոն շունչ քաշելով:— Խնդրում եմ, բարի պարոններ, ինձնից ոչինչ մի՛ պատրաստեք: Ես ինքս լավ եմ պատրաստում, ես ավելի լավ պատրաստում եմ, քան պատրաստվում եմ, հասկանո՞ւմ եք ինչ եմ ուզում ասել: Ես ձեզ համար հիանալի նախաճաշ կպատրաստեմ, եթե դուք ինձ ընթրիքի համար չպատրաստեք:

— Քնձոտ խրտվիլակ,— ասաց Վիլյամը: Նա առանց այդ էլ արդեն ընթրիքին լավ կերել էր ու գարեջուր խմել: — Քնձոտ խրտվիլակ: Բերտ, բաց թող դրան:

— Բաց չեմ թողնի, մինչև չբացատրի, թե ինչ է նշանակում «շատ» և «ոչ մեկը»,— առարկեց Բերտը:— Չեմ ուզում, որ քնած տեղը վիզս կտրեն: Այ, խարույկի վրա մի քիչ կրունկները կդադեմ իսկույն կխոսի:

— Իսկ ես էդ բանը թույլ չեմ տա,— ասաց Վիլյամը: — Ես եմ նրան բռնել:

— Վիլյամ, ես քեզ ասել եմ, որ դու ճարպակալած հիմար ես,— գոռաց Բերտը,— և էլի եմ կրկնում:

— Իսկ դու գյադա ես:

— Ես դա քեզ չեմ ների, Բիլլ Հագինս,— ոռնաց Բերտը, բռունցք արած վրա քշեց Վիլյամին ու հասցրեց աչքին:

Այստեղ մի վայրենի քաշքշուկ սկսվեց: Բերտը Բիլբոյին վայր գցեց, և սրա գլխում մնացած խելքը բավարարեց այնքան, որ մի կողմ սողաց, որպեսզի ոտքի տակ չտային: Իսկ տրոլներն սկսեցին կատաղորեն կռվել, իրար ամեն տեսակ, պետք է ասել շատ սազական, վիրավորական անուններ տալով: Քիչ հետո նրանք գետին տապալվեցին և, իրարից կառչած, աքացի տալով, գլորվեցին ուղիղ խարույկի մեջ, իսկ թոմը մի ճյուղ վերցրած ձաղկում էր երկուսին էլ, որ խելքի գան, որից նրանք, բնական է, էլ ավելի էին մոլեգնում:

Այստեղ իսկը հոբիտի ծլկելու ժամանակն էր: Բայց Բերտը իր թաթով ուժեղ ճգմել էր նրա խղճուկ փրչոտ ոտքերը, ուժերը լքել էին Բիլբոյին, գլուխը պտտվում էր, նա պառկած էր խարույկի լույսից դուրս և հևում էր:

Կռվի ամենաթեժ պահին հայտնվեց Բալինը: Թզուկները հեռվից աղմուկ լսեցին և, իզուր սպասելով Բիլբոյին կամ բվի կռնչոցին, մեկիկ-մեկիկ սողացին դեպի խարույկի լույսը: Թոմը խարույկի լույսի տակ Բալինին նկատելով, մի սարսափելի վայնասուն բարձրացրեց: Տրոլներն ուղղակի տանել չեն կարողանում թզուկներին (համենայն դեպս հում վիճակում): Բերտն ու Բիլը վայրկենապես դադարեցին կռիվը և Ֆշշացին. «Թոմ, պարկը, շո՛ւտ»: Եվ մինչ Բալինը, որ մտածում էր, թե այս խառնաշփոթության մեջ որտեղ գտնի Բիլբոյին, հասկացավ ինչ է կատարվում, պարկը հագրին գլխին, և նա փռվեց գետնին:

— Հիմա էլի կգան,— ասաց թոմը,— կամ էլ ես խիստ սխալվում եմ: Հենց էդ է որ կա՝ շատ և ոչ մեկը: Վզզհոբիտ՝ ոչ մեկը, իսկ թզուկներ՝ շատ: Իմ խելքով էդպես է:

— Դուրս է գալիս, որ դու ճիշտ ես,— հաստատեց Բերտը:

— Եկեք լույսից դուրս գանք:

Այդպես էլ արեցին: Պարկերը պատրաստ պահած, որոնց մեջ ոչխարներ ու այլ ավար էին քարշ տալիս, նրանք թաքնվեցին խավարում: Հենց որ հերթական թզուկը հայտնվում էր ու խարույկը, դատարկ գավաթներն ու կրծած ոսկորները տեսնելով զարմանքից քարանում՝ հոպ, գարշահոտ, զզվելի պարկն իջնում էր նրա գլխին, և թզուկը փռվում էր գետնին: Շատ շուտով Դվալինը պառկած էր Բալինի կողքին, Ֆիլին ու Կիլին նույնպես միասին էին պառկած, Դորին, Նորին և Օրին ընկած էին մեկը մյուսի վրա, իսկ Օյնը, Գլոյնը, Բիֆուրը, Բոֆուրը և Բոմբուրը ամենաանհարմար կերպով մի կույտ կազմած թափված էին խարույկի մոտ:

— Թող իմանան սրանից հետո,— ասաց թոմը: Բիֆուրը և Բոմբուրը մեծ անախորժություններ պատճառեցին նրանց՝ կատաղածի պես դիմադրելով (բոլոր թզուկներն էլ մահացու վտանգի դեպքում կատաղածի պես են պաշտպանվում):

Վերջինը հայտնվեց Տորինը, և նրան արդեն հանկարծակիի չբերեցին: Նա գալիս էր վատթարին սպասելով, և նրան հարկավոր չէր տեսնել պարկերից դուրս ցցված իր զինակիցների ոտքերը, որպեսզի հասկանար,

որ գործերն այնքան էլ փայլուն չեն գնում: Նա կանգնեց քիչ հեռու, կիսամութի մեջ, և խոսեց.

— Ի՞նչ է կատարվում այստեղ: Ո՞վ է հաշվեհարդար տեսել իմ մարդկանց հետ:

— Այդ տրոլներն են,— ծառի ետևից ձայն տվեց Բիլբոն:— Նրանք պարկերով թաքնված են թփուտներում:

— Ախ այդպե՛ս,— ասաց Տորինը և այնպես արագ նետվեց դեպի խարույկը, որ տրոլները չհասցրին նրա վրա պարկ գցել: Նա խարույկից մի մեծ վառվող փայտ վերցրեց և մտցրեց Բերտի աչքը: Բերտը որոշ ժամանակով շարքից դուրս եկավ: Բիլբոն էլ քնած չէր՝ բռնեց Թոմի ոտքից, պետք է ասել, մեծ դժվարությամբ, քանի որ նրա ոտքը մի մատղաշ ծառի հաստությունն ուներ: Բայց իսկույն էլ գլուխկոնծի տալով ետ թռավ ու ընկավ ուղիղ թփուտը, որովհետև Թոմը իրեն թափ տալով, ոտքով մի շեղջ կրակ շարտեց Տորինի դեմքին: Դրան ի պատասխան Թոմը փայտի մի հարված ստացավ ատամներին և կորցեց առջևի ատամը: Հո չոռնա՛ց: Բայց այդ պահին Վիլյամը թիկունքից գաղտագողի մոտեցավ և պարկը գցեց Տորինի վրա: Դրանով մարտն ավարտվեց: Ամբողջ խումբը ողբալի վիճակի մեջ ընկավ. թզուկները պարկերի մեջ կապկաված, պառկած էին, երկու քայլի վրա նստած էին երեք զայրացած տրոլ, ընդ որում երկուսը այրվածքներով ու կապտուկներով, և վիճում էին՝ թզուկներին մարմանդ կրակի վրա ամբողջությամբ խորովեն, թե կտրատեն ու եփեն, թե ուղղակի նստեն առանձին ամեն մեկի վրա ու ճգմեն, բլիթ դարձնեն: Բիլբոն պառկած էր թփուտում. հագուստը պատառոտված էր, ամբողջապես կապտուկներով ծածկված, և չէր համարձակվում նույնիսկ շնչել, վախենալով, որ կլսեն իրեն: Եվ այստեղ, վերջապես, հայտնվեց Հենդալֆը: Բայց նրան ոչ ոք չնկատեց: Տրոլներն էլ հենց որոշել էին թզուկներին խորովել հենց հիմա, բայց հետո ուտել: Դա Բերտի առաջարկն էր, և երկար դիմադրությունից հետո մյուս երկուսն էլ համաձայնեցին նրա հետ:

— Ինչ մի լավ բան է, թե որ հիմա խորովենք, ամբողջ գիշերը պետք է դրանով զբաղվենք,— լսվեց ինչ-որ մեկի ձայնը:

Բերտը մտածեց, որ Վիլյամն է խոսողը:

— Էլ մի՛ սկսկիր, Բիլլ,— ջղային պատասխանեց նա,— թե չէ իսկապես էլ ամբողջ գիշերը չարչարվելու ենք:

— Ո՞վ է սկսում,— արձագանքեց Վիլյամը, մտածելով, թե խոսողը Բերտն էր:

— Դու ես սկսում,— պատասխանեց Բերտը:

— Փչում ես,— առարկեց Վիլյամը, և վեճը նորից սկսվեց: Վերջ ի վերջո նրանք պայմանավորվեցին թզուկներին կտրատել և եփել: Տրոլները քարշ տվին հսկայական սև կաթսան և հանեցին դանակները:

— Ասենք չարժե եփել դրանց... Ձեռքներիս տակ ջուր չկա, իսկ ջրհորը հեռու է,— հնչեց մի ձայն: Բերտն ու Վիլյամը որոշեցին, որ թոմս է խոսում:

— Լռիր,— ընդհատեցին նրանք:— Թե չէ էսպես որ գնա, երբեք չենք վերջացնի: Թե որ շատ դուրս տաս, կգնաս ջրի:

— Ինքդ լռիր,— արձագանքեց թոմը, որ կարծում էր, թե Վիլյամն է խոսում: — Ո՞վ է դուրս տալիս: Հենց դու ես դուրս տալիս:

— Դմբո,— ասաց Վիլյամը:

— Դմբոն ինքդ ես,— կտրեց թոմը:

Եվ նրանք նորից վիճեցին, ավելի կատաղորեն, քան առաջ, բայց վերջ ի վերջո համաձայնության եկան՝ նստել յուրաքանչյուր պարկի վրա հերթով և տափակացնել թզուկներին, իսկ եփելը թող մնա մի ուրիշ անգամ:

— Առաջինը ո՞ւմ վրա նստենք,— հարցրեց ձայնը:

— Բերեք սկզբում վերջինի վրա նստենք,— պատասխանեց Բերտը, որի աչքը վնասել էր Տորինը: Բերտը կարծում էր թոմն է խոսում:

— Ի՞նչ ես ինքդ քեզ հետ խոսում,— ասաց թոմը:— Ուզում ես վերջինի վրա, նստիր վերջինի վրա: Ո՞ր մեկն է նա:

— Դեղին գուլպաներովն է,— ասաց Բերտը:

— Հիմարություն, մոխարգույն,— լսվեց Վիլյամի ձայնին նման ձայնը:

— Ես դիտմամբ միտս եմ պահել՝ դեղին,— պնդեց Բերտը:

— Ճիշտ է, դեղին,— հաստատեց Վիլյամը:

— Բա էլ ի՞նչ ես ասում մոխարգույն,— վրդովվեց Բերտը:

— Ես չեմ ասել: Դա թոմն ասաց:

— Ես ի՞նչ գործ ունեմ,— գառաց թոմը:— Դու ինքդ ասացիր:

— Մեկը երկուսին վեճում չի հաղթի, ձայնդ կտրիր,— հրամայեց Բերտը:

— Դու էդ ո՞ւմ ես ասում,— ճչաց Վիլյամը:

— Դե բավական է,— ասացին թոմն ու Բերտը միասին:— Գիշերը վերջանում է, շուտով կլուսանա: Գործի անցեք:

— Այգին իր լույսը կբանա, ամեն ինչ քար կդառնա...— ասաց ձայնը, որ նման էր Վիլյամի ձայնին: Բայց խոսողը Վիլյամը չէր: Այդ նույն պահին արշալույսը ծագեց, և ծառերի մեջ սկսվեց թռչունների ժխորը: Վիլյամն արդեն ոչինչ ասել չէր կարող, քանի որ, կռանալով Տորինի վրա, քարի վերածվեց, իսկ Բերտն ու թոմը աչքերը հառեցին նրան և նույնպես քարացան: Այդպես էլ կանգնած են նրանք մինչև այսօր, բոլորովին մենակ, եթե երբեմն թռչուններ չեն նստում նրանց վրա: Գուցե ձեզ հայտնի է, որ տրոլները պարտավոր են ժամանակին թաքնվել գետնի տակ, որպեսզի լույսը նրանց վրա չծագի, հակառակ դեպքում նրանք

կղառնան ժայռեր, լեռնային ապարներ, որից սերում են, և հավիտյան կանշարժանան: Հենց դա էլ պատահեց Բերտին, Թոմին և Վիյամին:

— Հիանալի է,— խոսեց Հենդալֆը ծառերի ետևից դուրս գալով և օգնելով Բիլբոյին, որ պոկվի փոշոտ ծակծկող թփուտից: Եվ այստեղ Բիլբոն ամեն ինչ հասկացավ: Հրաշագործ է Հենդալֆը... Ահա թե ում ձայնն էր ստիպում տրոլներին այդքան երկար հակճառել իրար, մինչև լույսը բացվեց ու նրանց վերջը տվեց: Հենդալֆն ու Բիլբոն քանդեցին պարկերի կապերը և ազատեցին թզուկներին: Սրանք քիչ էր մնում խեղդվեին և ծայրահեղ գրգռված վիճակում էին: Հարկավ: Հաճելի՞ է միթե պառկել ու ականջ դնել, ինչպես են տրոլները քնարկում քեզ խորովե՞ն, ճգմե՞ն, թե՞ կտրատեն:

— Գրպան մտնելու ժամանակ գտավ, երբ մեզ համար գլխավորը կրակ և սնունդ ճարելն է,— մրթմրթաց Բոմբուրը:

— Ինչ-ինչ, բայց դա, միևնույն է, նրանցից առանց կռվի չես ստանա, — ասաց Հենդալֆը:— Բայց այսպես թե այնպես հիմա դուք ժամանակ եք կորցնում: Պարզ է, որ տրոլները պետք է ինչ-որ տեղ հոր կամ անձավ ունենան, որտեղ թաքնվում են արևից: Լավ կլիներ գտնեհնք այդ տեղը...

Նրանք փնտրեցին-փնտրեցին և շուտով քարե սապոզների հետքեր գտան, որոնք անտառ էին տանում: Այդ հետքերով գնացին սարալանջով դեպի վեր, մինչև հասան թփուտներում թաքնված մի քարե դռան, որ քարանձավի մուտքի դուռ էր: Բայց ինչքան էլ բոլորը միասին հրեցին, ինչքան էլ Հենդալֆը տեսակ-տեսակ կախարդական խոսքեր ասաց, դուռը բացել չկարողացան:

— Գուցե սա՞ կբացի,— հարցերց Բիլբոն, երբ նրանք բոլորովին հալից ընկել էին ու կատաղել:— Ես սա գտել եմ այնտեղ, ուր տրոլները կռվում էին: Եվ նա մեկնեց մի շատ մեծ բանալի, որը Վիյամին, երևի, պատլիկ ու աննշան էր թվում: Բանալին, նրանց բախտից, հավանաբար, Վիյամի գրպանից ընկել էր նախքան նրա քար դառնալը:

— Ինչո՞ւ մինչև հիմա ձայն չէիր հանում,— գոռացին բոլորը միասին: Հենդալֆը Բիլբոյի ձեռքից խլեց բանալին ու մտցրեց փականքի անցքը: Խումբը ողջ հզորությամբ համերաշխ հրեց. քարե դուռը բացվեց, և նրանք ներս մտան: Գետնին ոսկորներ էին թափված, քարանձավում զգվելի զարշահոտ էր տիրում, բայց անկարգորեն իրար վրա թափված ամեն տեսակ ավարից բացի (սկսած պղնձե կոճակներից մինչև անկյուններում դրված ոսկեդրամներով բերնեբերան լի կճուճները) թարքերին ու գետնին ճամփորդները պարենամթերքի կույտեր գտան: Պատերին կախված էին մեծ թվով զանազան հագուստներ, որոնք տրոլների վրայով հաստատ փոքր էին, և կարծում եմ, նրանց գոհերին են պատկանել: Այնտեղ թրեր էլ կային՝ տարբեր որակի, ձևի ու երկարության: Դրանցից երկուսն իսկույն աչք էին ծակում իրենց գեղեցիկ պատյանների ու թանկարժեք քարերով զարդարված երախակալների շնորհիվ:

Հենդալֆն ու Տորինը այդ երկու թուրը վերցրին իրենց, իսկ Բիլբոն վերցրեց կաշվե պատյանով դաշույնը: Տրոլի համար այդ դաշույնը գրպանի փոքրիկ դանակի տեղ կանցներ, իսկ հոբիտին որպես թուր կձառայեր:

— Իսկույն երևում է, հիանալի շեղբեր են,— ասաց հրաշագործը՝ թուրը կիսով չափ պատյանից հանելով և հետաքրքրությամբ զննելով:— Սրանք ոչ տրոլներն են կռել, ոչ էլ այս կողմերի մարդիկ, և ոչ էլ մեր ժամանակներում են շինված: Երբ սեպագրերը վերձանենք, ավելի շատ բան կիմանանք սրանց մասին:

— Շուտ հեռանանք այստեղից, զգվելի հոտ է գալիս,— թախանձեց Ֆիլին:

Նրանք դուրս տարան ոսկով լի կճուճները և այն մթերքը, որ ուտելու համար պիտանի էր երևում: Նաև մի լիքը տակառիկ էլ: Նրանք արդեն բնավ էլ դեմ չէին նախաճաշելուն և չարհամարիեցին տրոլների ամբարած սննդամթերքը: Ախր նրանց ուտելիքն էր շատ քիչ էր մնացել: Թզուկները կուշտ հաց ու պանիր կերան, ուզածի չափ էլ խմեցին և խանձողների վրա խոզի ապիտած միս խորովեցին: Հետո պարկեցին քնելու: Ինչպես ինքներդ էլ հասկանում եք, այդպիսի գիշերից հետո քնելը մեղք չէ: Համարյա մինչև երեկո հանգստանալուց հետո բերեցին պոնիներին, բարձեցին ոսկու կճուճները, տեղափոխեցին ու գետի երկայնքով գնացող արահետից ոչ հեռու հորեցին: Նրանք տեղը տեղին կախարդեցին այդ վայրը և համայական խոսքեր արտասանեցին, հույս ունենալով, որ ոսկու համար կվերադառնան այստեղ: Այս գործը վերջացնելով, հեծան պոնիները և նորից դանդաղ, մանրավարճ գնացին արևելք տանող ճանապարհով:

— Այդ ո՞ւր էիք կորել, եթե գաղտնիք չէ,— ճանապարհին հարցրեց Տորինը Հենդալֆից:

— Հետախուզում էի, թե առջևում ինչ կա,— պատասխանեց նա:

— Իսկ ձեզ ի՞նչն ստիպեց այդպես ժամանակին վերադառնալ:

— Ետ նայելու սովորությունը:

— Իսկապես,— մրմնջաց Տորինը:— Իսկ ավելի պարզ չի՞ կարելի:

— Ես առաջ անցա մեր ուղին հետազոտելու: Նկատի ունեցեք, ճանապարհը շատ շուտով վտանգավոր ու դժվարին է դառնալու: Ինձ անհանգստացնում էր նաև մեր աղքատիկ մթերապաշարը լրացնելու հոգսը: Հենց մի քիչ հեռացա, ռիվենդելի երկու ծանոթ հանդիպեցին:

— Ռիվենդելը որտե՞ղ է,— մեջ ընկավ Բիլբոն:

— Մի՛ ընդհատիր,— կտրեց Հենդալֆը:— Եթե մեր բախտը բերի, ինքը շուտով այնտեղ կընկնես և անձամբ ամեն ինչ կիմանաս: Ինչպես արդեն ասացի, հանդիպեցի ռիվենդելի երկու մարդկանց: Նրանք էլ ինձ պատմեցին, որ երեք տրոլ իջել են լեռները, հիմնավորվել մեծ

ճանապարհի մոտակա անտառներում, ահաբեկել են շրջակայքի բոլոր բնակիչներին և դարանակալում են ճանապարհորդներին: Իսկույն մտածեցի, որ այնտեղ, ետևում, իմ կարիքը զգում են: Ետ նայելով՝ հեռվում խարույկ տեսա և գնացի ուղիղ դեպի կրակը: Դե, հիմա դուք ամեն ինչ գիտեք: Խնդրում եմ, մյուս անգամ զգույշ լինեք, թե չէ մենք ոչ մի տեղ էլ չենք հասնի...

— Մենք ձեզ շատ ենք պարտական,— ասաց Տորինը:

ԴԱԴԱՐ

Եղանակը լավացավ: Բայց ոչ այդ օրը, ո՛չ հաջորդ, ո՛չ էլ էլի մեկ օր հետո ճանապարհորդները ո՛չ երգում էին, ո՛չ էլ պատմություններ պատմում: Նրանց թվում էր, թե իրենց գլխին վտանգ է կախված: Գիշերում էին բաց երկնքի տակ, և նրանց պոնիներն ավելի կուշտ էին ուտում, քան իրենք, որովհետև շրջակայքում խոտը առատ էր, իսկ իրենց պարկերը դատարկ էին՝ տրոլներից վերցրած պաշարները երկար չդիմացան: Մի անգամ առավոտյան նրանք գետն անցնում էին ծանծաղ տեղով, ուր դղրոյունով քարեր էին գլորվում և ջրի երեսին փրփուր առաջացնում: Հանդիպակաց ափը զառիվայր էր ու լարծուն: Երբ, վերջապես, նրանք պոնիների սանձերից բռնած, դժվարությամբ ափ ելան, բարձր լեռներ տեսան: Այդ լեռներն ասես գալիս էին նրանց վրա, թվում էր մինչև մոտիկ լեռը մի օրվա ճանապարհ է, ոչ ավելի: Այդ լեռը մութ ու մռայլ տեսք ուներ, չնայած նրա գորշ լանջերին տեղ-տեղ արևային շերտեր էին ընկած, իսկ ետևում ձյունածածկ գագաթներ էին ցցված:

— Սա այն լե՞ռն է,— բացականչեց Բիլբոն, կլորացած մեծ-մեծ աչքերով ակնածանով լեռանը նայելով: Ավելի վիթխարի բան կյանքում չէր տեսել:

— Ոչ, ինչ ես ասում,— առարկեց Բալինը:— Մառախլապատ Լեռներն են սկսվում, իսկ մեզ հարկավոր է անցնել դրանց վրայով կամ տակով: Միայն այդ ժամանակ մենք կընկնենք Վայրի Երկիր: Եվ նույնիսկ այնտեղից մինչև Մենավոր Լեռը, որտեղ Սմոգը մեր գանձերն է պահում, ահագին հեռու է:

— Ախ, այդպե՛ս,— ասաց Բիլբոն: Եվ հենց այդ պահին նա այնպիսի հոգնածություն զգաց, որ մինչ այդ երբեք չէր զգացել: Նա նորից հիշեց իր հարմարավետ բազկաթոռը օջախի կողքին, իր սիրած հյուրասենյակում, և լսեց, թե թեյնիկն ինչպես է երգում:

Այժմ արշավը գլխավորում էր Հենդալֆը:

— Եթե ճանապարհից շեղվեցինք՝ կորած ենք,— ասաց նա:— Ամենից առաջ մեզ պարեն է հարկավոր, իսկ հետո հանգիստ՝ բավականաչափ անվտանգ տեղում: Մառախլապատ Լեռներից հարկավոր է մոտենալ՝ ճիշտ ճանապարհին իմանալով, թե չէ մուրրվելը դժվար չէ:

Երբ հարցրին, թե նա ուր է տանում իրենց, Հենդալֆը պատասխանեց.

— Դուք ընդհուպ մոտեցել եք, ինչպես հավանաբար մեզանից մի քանիսին հայտնի է, Վայրի Երկրի սահմաններին: Ինչ-որ տեղ առջևում թաքնվում է Ռիվենդելի գեղատեսիլ հովիտը, այնտեղ, Ընտանեկան Վերջին Հանգրվանում ապրում է Էլրոնդը: Ես իմ ծանոթների միջոցով լուր եմ ուղարկել նրան, և մեզ սպասում են:

Դա շատ հաճելի ու մխիթարական հնչեց, բայց դեռ հարկավոր էր հասնել այնտեղ, իսկ Ընտանեկան Վերջին Հանգրվանի ճանապարհը գտնելն այնքան էլ հեշտ չէր: Տեղանքը աստիճանաբար բարձրանում էր դեպի մոտակա լեռների ստորոտը: Նրա միօրինակությունը ոչինչ չէր խախտում. ոչ ծառեր կային, ոչ ծեպեր, ոչ բլուրներ, միայն հավամրգի գույնի փշրվող ժայռերով ընդարձակ լանջն էր, որ տեղ-տեղ ծածկված էր ջրի գոյություն մասին վկայող խոտի ու մամուռի կանաչ խալերով:

Առավոտն անցավ, օրը կես դարձավ, բայց առաջվա նման ամայի անապատում կենդանության ոչ մի նշան չէր երևում: Անհամբերությունը պատել էր ճանապարհորդներին: Ուղիղ ոտքերի տակ հանկարծ գոգավորություններ էին հանդիպում զառիվայր լանջերով, որոնց խորքում, ի զարմանք իրենց, ծառեր էին աճում և գետակներ հոսում: Վիհեր էին բացվում առջևում, այնքան նեղ, որ առաջին հայացքից թռչել անցնելը հեշտ էր թվում, բայց դրանք աներևակայալի խորն էին, և դրանց հատակում ջրվեժներ էին շառաչում: Մութ ձորեր էին հանդիպում, որոնց վրայով թռչել հնարավոր չէր և իջնել էլ չէր կարելի: Ճահճուտներ էին պատահում, որ արտաքուստ ասես վառ ծաղիկներով ծածկված, կանաչ և վառ մարգագետիններ լինեին: Բայց եթե դրա վրա ոտք էր դնում բռնված պոնին, ապա անհետանում էր ընդմիջտ:

Իրականում ծանծաղուտից մինչև լեռը ավելի հեռու դուրս եկավ, քան ենթադրում էին ճամփորդները: Միակ կածանը նշված էր սպիտակ քարերով՝ և՛ շատ մանր, և՛ մեծ-մեծ, որոնք կիսով չափ ծածկված էին մամուռով ու հավամրգով: Հենդալֆը շարունակ կռանում էր ձիու վրայից, մորուքը տարուբերում և որոնում սպիտակ քարերը, մյուսները հետևում էին նրան:

Օրը դեպի երեկո էր թեքվում, իսկ որոնումներին վերջ չկար: Վաղուց թեյի ժամանակն անցել էր, արագ իջնում էր մթնշաղը, լուսինը դեռ դուրս չէր եկել: Բիլբոյի պոնին սկսեց սայթաքել՝ ոտքերը քարերի ու արմատների խփելով: Եվ հանկարծ նրանք հայտնվեցին մի կտրուկ զառիվայրի եզրին, այնպես անսպասելի, որ Հենդալֆի ձին քիչ էր մտնում գլուխկոնծի տար ներքև:

— Ահա և հասանք,— բացականչեց կախարդը, և բոլորը հավաքվեցին նրա շուրջն ու նայեցին ներքև: Այնտեղ նրանք տեսան հովիտը, լսեցին ջրի քչքչոցը, որ վազում էր քարե հունով: Օդում կանաչի բույր էր կանգնած, գետի այն կողմում կրակներ էին երևում:

Բիւրն երբեք չի մոռանա, թե մթնշաղում, զառիվայր ու ոլոր-մուր կածանով սոթ տալով ու գլորվելով, նրանք ինչպես էին իջնում ներքև՝ Ռիվենդելի գողտրիկ հովիտը: Քանի գնում տաքանում էր, սոճու բույրը Բիւրոյին քուն բերեց, մի վայրկյան դանթեց, քիչ էր մնում ընկներ ձիուց, մի քանի անգամ էլ քիթը կպավ ետնաբաշին: Որքան ցած էին իջնում, նրանց տրամադրությունն այնքան բարձրանում էր: Սոճիներին փոխարինեցին հաճարենիներն ու կաղնիները, մուլն օրոր էր ասում: Երբ անտառից դուրս եկան բաց տարածություն, վտակին շատ մոտիկ, մթնեց, բոլոր գույները աղոտացան:

«Հը՛մ, էլֆերի հոտ է գալիս»— մտածեց Բիւրն և նայեց աստղերին: Դրանք առկայծում էին վառ երկնագույն լույսով: Եվ այդ պահին ծառերի միջից անսպասելի, ասես ծիծաղի պոռթկում, հնչեց երգը.

Այդ ի՞նչ եք անում,
Ո՞ւր եք վրազում,
Հոգնել եք, ու ձեր
Ձիերն են հոգնել,
Իսկ շուրջն ամենուր
Ջրանցքներ են խոր
Հա՛-հա՛-հա՛:

Եկեք լսեք դուք մեզ
Ու մնացեք մեզ հետ,
Բլիթներն արդեն
Պատրաստ են, տեսեք:
Տրա՛-տա՛-տա՛, տրա՛-տա՛, տա՛,
Գնացի՛նք,
Գնացի՛նք,
Հա՛-հա՛:

Թշվառներ, այդ ո՞ւր,
Անտառի մեջ պոր
Երկար մորուքով
Չարքեր կան ինչ-որ.
Ֆիլին ու Կիլին
Տեսան ու փախան
Դեպի անտառ...
Հա՛-հա՛:

Մինչև երեկո
Քիչ է մնացել.
Ախր հոգևած են
Պոնիները ձեր:
Ով ցանկանում է
Գիշերը մնալ,
Նա մեր այս երգից

Շատ գոհ կմնա
Հա՛հա՛հա՛:

Այնտեղ, ծառերի մեջ, ինչ-որ արարածներ կշկչում էին ու երգում և, որ ճիշտն ասենք, կարգին անհեթեթություններ էին դուրս տալիս: Բայց նրանք դրանից անհարմար չեն զգում, և եթե այդ մասին նրանց ասեին, առաջվանից ավելի ուժեղ կկշկչային: Իհարկե, դրանք էլֆերն էին:

Բիլբոն թանձրացող մթության մեջ նույնիսկ տեսավ նրանց: Նա մի քիչ վախենում էր էլֆերից, բայց միաժամանակ վերջինները դուր էին գալիս իրեն, չնայած հազվադեպ էր հանդիպել նրանց: Թզուկներն այնքան էլ լավ չեն էլֆերի հետ: Նույնիսկ այնպիսի խելամիտ թզուկները, ինչպիսին Տորինն ու իր ընկերներն էին, էլֆերին հիմար էին համարում (իսկ էլֆերին հիմար համարելը հենց ամենամեծ հիմարությունն է): Էլֆերը ջղայնացնում էին նրանց, որովհետև սիրում էին գժվացնել թզուկներին, ծաղրել նրանց մորուքները:

— Այ թե զվարճալի տեսարան է,— ասաց ինչ-որ մի ձայն...— Հապա մի նայեք... Հոբիտ Բիլբոն պոնի հեծած... Որքա՛ն գեղեցիկ է..

— Ուղղակի հրաշք է:

Այստեղ նրանք սկսեցին նոր երգ երգել, նույնքան անկապ, ինչքան այն, որ ես բառ առ բառ գրի առա: Վերջապես երիտասարդ բարձրահասակ էլֆը ծառերի միջից դուրս եկավ և խոր գլուխ տվեց Հենդալֆին ու Տորինին:

— Բարի եք եկել մեր հովիտը,— ասաց նա:

— Շնորհակալ ենք,— մի քիչ զայրացկոտ պատասխանեց Տորինը: Բայց Հենդալֆն արդեն իջել էր ձիուց և ուրախ շաղակրատում էր էլֆերի հետ:

— Դուք մի քիչ շեղվել եք ճանապարհից,— ասաց առաջին էլֆը,— եթե, իհարկե, փնտրում եք գետի այն կողմի տունը տանող ճանապարհը: Մենք ձեզ ցույց կտանք այն: Բայց մինչև կամուրջ և կամրջով ավելի լավ է ոտքով գնալ: Չէի՞ք ցանկանա մի քիչ մնալ մեզ հետ և երգել: Թե՞ անմիջապես կշարունակեք ճանապարհը: Այնտեղ ընթրիք են պատրաստում,— ավելացրեց նա,— խարույկներից ծուխ է բարձրանում:

Որքան էլ Բիլբոն հոգնած էր, բայց և հաճույքով կմնար անտառում: Հունիսյան գիշերին, աստղալից երկնքի տակ արժե լսել էլֆերի երգը, եթե այդպիսի բաներ սիրում եք: Բիլբոն ուզում էր մի քանի խոսք փոխանակել այդ արարածների հետ, որոնք գիտեին, թե ինչ է իր անունը և ով է ինքը, թեպետ անձամբ առաջներում երբեք նրանց չէր տեսել: Էլֆերին շատ բան է հայտնի, նրանք, ինչպես ոչ ոք, նորությունները բռնում են օդում և թափվող ջրվեժից էլ արագ իմանում են ամեն ինչ, որ կատարվում է երկրի վրա:

Բայց թզուկները միաձայն կողմանկից էին ընթրելուն, ընդ որում անհապաղ, դրա համար էլ չցանկացան ուշանալ: Պոնիների սանձերից բռնած՝ նրանք առաջ շարժվեցին: Էլֆերը նրանց դուրս բերեցին ուղիղ գետափի երկարությամբ ձգվող մի լավ արահետ: Գետակը հոսում էր արագ, աղմուկով, ինչպես բոլոր լեռնային վտակները ամառվա գիշերներին, երբ արևն ամբողջ օրը հալեցնում է լեռնագագաթների ձյունը: Մի քարե կամուրջ էր տանում մյուս փ, առանց բազրիքների, այնքան նեղ, որ պոնիները դժվարությամբ կարող էին անցնել: Ստիպված եղան առաջ շարժվել զգուշորեն, մեկ-մեկ իրենց ետևից ձիերին տանելով: Էլֆերը նրանց ուղին լուսավորում էին պայծառ լապտերներով և ուրախ երգեր երգում, մինչև ամբողջ խումբը գետն անցավ:

— Մորուքդ ջուրը չագես, հերիկ,— գոռում էին Էլֆերը Տորինին, որը կամրջոց քայլում էր երեքտակված:— Թրջել պետք չէ, առանց այդ էլ երկար է:

— Հետևեցեք, որ Բիլբոն բոլոր կեքսերը չուտի,— խնդրում էին մյուսները:

— Այդպիսի գիրուկը բանալու անցքով չի մտնի:

— Կամաց, կամաց, Բարի ժողովուրդ: Բարի գիշեր...— կանգնեցրեց նրանց Հենդալֆը, որ եզրափակում էր երթը:— Հովիտներն էլ ականջներ ունեն, իսկ Էլֆերից ոմանք՝ չափազանց երկար լեզու: Բարի գիշեր: Եվ այդ ժամանակ նրանք վերջապես մոտեցան Ընտանեկան Վերջին Հանգրվանին, որի դռները հյուրընկալորեն բաց էին:

Տարօրինակ բան է. լավի մասին, լավ անցկացրած օրերի մասին արագ են պատմում, և դրանց մասին լսելն այնքան էլ հետաքրքիր չէ: Իսկ ահա այն մասին, ինչը տհաճ է, ինչը սարսափ կամ զգվանք է առաջացնում, երկար ու գրավիչ պատմություններ են պատմում:

Ճանապարհորդները հյուրընկալ տանը շատ օրեր անցկացրին, ամենաքիչը տասնչորս, և չէին ուզում այստեղից հեռանալ: Բիլբոն ուրախությամբ դեռ էլի ու էլի կմնար, նույնիսկ այն դեպքում, եթե կարողանար առանց որևէ դժվարության, ցանկությամբ միայն փոխադրվել տուն՝ հոբիտական իր բույնը: Եվ այնուամենայնիվ այդ օրերի մասին պատմելու համարյա ոչինչ չկա:

Տանտեր Էլրոնդը Էլֆերի բարեկամն էր և այն մարդկանց առաջնորդը, որոնց նախնիների թվում էլֆեր և Հյուսիսը հայտնագործողներ են եղել: Նա դեմքով ազնվածին էր ու գեղեցիկ, որպես բարի ոգիների տիրակալ, հզոր՝ որպես ռազմիկ, իմաստուն՝ որպես կախարդ, վեհապանձ՝ որպես թզուկների արքա, և բարի, ինչպես զով ամառը: Էլրոնդի տունը ինքնին կատարելություն էր. այնտեղ բոլորի համար էր լավ. և՛ նրանց, ովքեր սիրում են ուտել ու քնել, և՛ նրանց, ովքեր սիրում են աշխատել, և՛ նրանց, ովքեր սիրում են պատմություններ լսել կամ պատմել, երգել կամ

պարզապես նստել ու մտածել, և՛ նրանց, ովքեր սիրում են ամեն ինչ, բայց չափավոր: Չարը այս հովտում տեղ չուներ:

Մեր ճանապարհորդներն ու նրանց ձիերը մի քանի օրվա ընթացքում հանգստացան և ուժերը վերականգնեցին: Նրանց տրամադրությունը բարձրացավ, հագուստները կարկատեցին, կապտուկները ու չանգովածքները բուժեցին, պարկերը լցրեցին թեթևաքաշ, բայց շատ սննդարար ուտելիքով և մեծ քանակությամբ օգտակար խորհուրդներ տվեցին: Այսպես նրանք ապրեցին մինչև Իվանի օրվա նախօրյակը և Իվանի օրը արևը ծագելուն պես պետք է ճանապարհ ընկնեին:

Էլրոնդը կատարելապես գիտեր ամեն տեսակ սեպագրերը: Մեկնելուց մեկ օր առաջ նա գննեց թրերը, որ գտել էին տրոլների որջում, և ասաց.

— Սրանք տրոլները չեն կռել: Թրերը հնագույն են, հնագույն մեծ էլֆերի աշխատանքը, որոնց հետ են ազգակցական կապեր ունեմ: Թրերը պատրաստվել են Գոնդոլիսում, գոբիլների դեմ պատերազմելու համար: Հավանաբար սրանք ընկել մնացել են կամ որևէ վիշապի գանձարանում, կամ գոբիլների ավար են դարձել, քանի որ վիշապները ու գոբիլները շատ դարեր առաջ միասին են ավերել Գոնդոլին քաղաքը: Այս թուրը նշանավոր գեղք է, Տորին, հին սեպագրերի լեզվով այն կոչվում է Օրկրիստ, որ գոնդոլիսյան լեզվով նշանակում է Գոբիլներին խորտակող: Իսկ այս թուրը, Հենդալֆ, կոչվում է Գլեմդրինգ՝ Թշնամիներին Ջարդող. մի ժամանակ սա կրել է Գոնդոլինի թագավորը: Պահպանեցեք դրանք...

— Հետաքրքիր է, ինչպես են դրանք ընկել տրոլների մոտ,— խոսեց Տորինը՝ հետաքրքրությամբ գննելով իր թուրը:

— Երևի ասել չի լինի,— պատասխանեց Էլրոնդը,— բայց կարելի է կռահել, որ ձեր տրոլները թալանել են ուրիշ հափշտակիչների կամ քանդել հանել են լեռներում թաքցրած ուրիշների ավարի մնացորդները:

Տորինը մտածում էր նրա ասածի շուրջը:

— Ես սա աչքիս լույսի պես կպահպանեմ,— ասաց նա:— Թող խորտակի գոբիլներին, ինչպես վաղեմի ժամանակներում...

— Հնարավոր է, որ ձեր ցանկությանը ի վերուստ վիճակված է կատարվել, հենց որ դուք հայտնվեք լեռներում,— նկատեց Էլրոնդը:— Այժմ ցույց տվեք քարտեզը:

Նա բացեց քարտեզը և գլուխն օրորելով երկար գննեց: Էլրոնդը թզուկների նկատմամբ այնքան էլ բարեհաճ վերաբերմունք չուներ, ավելի ճիշտ՝ այնքան էլ չէր խրախուսում նրանց սերը դեպի ոսկին, բայց նա ատում էր վիշապներին, նրանց դաժանությունն ու խարդախությունը: Նա ափսոսանքով էր հիշում Դեյլ քաղաքի ուրախ զանգերը, քանի որ հետո տեսել էր նրա ավերակներն ու Արագահոս գետի խանձված ափերը: Քարտեզի վրա ընկնում էր լայն լուսնի արծաթե լույսը: Էլրոնդը քարտեզը բարձրացրեց վեր, պահեց այնպես, որ լուսնի լույսը քարտեզի ետևից թափանցի:

— Սա ի՞նչ է,— բացականչեց նա,— սովորական սեպագրերի ետևում, որոնք ասում են. «Հինգ ոտնաչափ բարձրությամբ դուռ, երեքը կարող են անցնել մի շարքով», լուսնային տառեր են երևում:

— Ի՞նչ բան է լուսնային տառը:— Հոբիտն այլևս չկարողացավ զսպել իրեն: Ես արդեն ասել եմ, թե նա որքան էր քարտեզներ սիրում: Նրան դուր էին գալիս նաև սեպագիր և, առհասարակ, ամեն տեսակ արտասովոր տառերն ու պաճուճավոր ձեռագրերը: Նա ինքը մի երևելի ձեռագիր չուներ:

— Լուսնային տառերը նույն սեպագրերն են, բայց սովորաբար չեն երևում,— պատասխանեց Էլրոնդը:— Դրանք կարող են տեսնել միայն լուսնյակ գիշերներին. երբ լուսնի լույսը դրանց վրա է ընկնում ետևից, իսկ կան այնպիսի խորամանկ լուսնային տառեր, որ երևում են միայն լուսնի այն փուլում, որում եղել է լուսինը, երբ նկարել են այդ սեպագրերը: Դրանք հնարել են թզուկները և գրել արծաթե փետուրով: Այդ մակագրություններն արել են, ըստ երևույթին, այս գիշերվա նման մի գիշեր, Իվանի օրվա նախօրյակին:

— Ի՞նչ են նշանակում դրանք,— հարցրին Հենդալֆն ու Տորինը միաժամանակ, մի քիչ սրտնեղելով այն բանի համար, որ առաջինը Էլրոնդը հայտնաբերեց դա, չնայած, այն էլ ասենք, որ մինչև այժմ այդպիսի առիթ չէր ներկայացել:

— «Դյուրինի օրը կանգնիր մոխարգույն քարի մոտ, երբ կկզկզա կեռնեխը»,— կարդաց Էլրոնդը,— և մայր մտնող արևն իր վերջին ճառագայթը կնետի բանալու անցքի վրա»:

— Դյուրին, դե, իհարկե,— ձայնեց Տորինը:— Նա եղել է Երկարամորուք թզուկների հնագույն տոհմի ավագներից ավագը և իմ ամենավեջին նախահայրը: Ես Դյուրինի շառավիղն եմ:

— Ի՞նչ բան է Դյուրինի օր,— հետաքրքրվեց Էլրոնդը:

— Ինչպես բոլորին պետք է հայտնի լինի, մենք Դյուրինի օր ենք անվանում այն օրը, երբ աշնան վերջին լուսինը և արևը միաժամանակ են լինում երկնքում: Վախենում եմ, որ այդ իմացությունը մեզ այդքան էլ չի օգնի, քանի որ մեր ժամանակներում կորսված է այդպիսի օրվա գալու ժամկետը հաշվելու կարողությունը:

— Դա դեռ կտեսնենք,— միջամտեց Հենդալֆը:— Էլի որևէ բան գրված է:

— Այսօրվա լուսնով այլևս ոչինչ վերլուծել հնարավոր չէ,— պատասխանեց Էլրոնդը և քարտեզը տվեց Տորինին: Դրանից հետո բոլորն իջան դեպի ջուրը, տեսնելու, թե ինչպես են երգում ու պարում էլֆերը:

Իվանի օրվա առավոտն այնքան հրաշալի էր, որ միայն երազել կարելի է. լագուր երկնքում ոչ մի ամպ, արևի շողերը պարում էին ջրի վրա:

Ուղևորները ճանապարհի ընկան, նրանց ուղեկցում էին հրաժեշտի երգերն ու բարի մաղթանքները: Նրանք պատրաստ էին հետագա արկածների համար և հաստատ գիտեին ճանապարհը, որ Մառախլապատ Լեռների միջով իրենց դուրս էր բերելու լեռներից այն կողմ գտնվող երկիրը:

ԼԵՌԱՆ ՄԻՋՈՎ ԵՎ ԼԵՌԱՆ ԸՆԴԵՐՔՈՒՄ

Տասնյակ կաճաններ տանում էին դեպի բազմաթիվ խորխորատներով կտրատված լեռները: Բայց կաճանները մեծ մասամբ խաբուսիկ էին դուրս գալիս կամ վերջանում էին փակուղով: Խորխորատներում բնակվում էին ամեն տեսակ չար ոգիներ ու դարանում ահավոր վտանգներ:

Շատ օրեր ու շատ մղոններ ընկան մեր ճանապարհորդների ու Ընտանեկան Վերջին Հանգրվանի միջև: Նրանք բարձրանում էին ավելի ու ավելի վեր, արահետը դժվարին էր, վտանգավոր, ճամփան գարտուղի, ամայի ու անվերջանալի: Ետ էին նայում ներքևում փռված էր տեղանքը, որտեղից նրանք այնքան էլ վաղուց չէ, ինչ հեռացել էին: Հեռո՛ւ-հեռու Արևմուտքում, մանուշակագույն մշուշի մեջ Բիլբոյի հարագատ երկիրն էր, անվտանգ ու հարմարավետ, և երկրում նրա սեփական հոբիտական բույնը: Քանի գնում ցրտում էր, ժայռերի միջև սուլում էր ծակող քամին:

Ցերեկները, արևից հալվող ձյան միջից երբեմն քարեր էին պոկվում ու գլորվում լանջերն ի վար՝ թռչելով ճամփորդների արանքով կամ նրանց գլխավերևով: Գիշերները խոնավ էին, տհաճ, ճանապարհորդները չէին համարձակվում երգել ու բարձրաձայն խոսել, քանի որ արձագանքը տարածվում էր սարսափելի ձևով, իսկ լռությունը շատ որոշակիորեն ցանկանում էր, որ իր անդորրը ոչինչ չխանազարի, բացի ջրի խշշոցից, քամու ոռնոցից և քարերի թխկոցից: «Այնտեղ, ներքևում թե՛ ամառ է,— մտածեց Բիլբոն,— խոտ են հնձում, խնջույքներ են կազմակերպում... Մինչև մենք լեռներից իջնենք, այնտեղ արդեն սկսված կլինեն հունձն ու հատապտուղի հավաքը»:

Մնացածների գլուխներն էլ ոչ պակաս վիատ մտքեր էին գալիս: Մինչդեռ նրանք Էլրոնդին հրաժեշտ տվին ամենապայծառ տրամադրությամբ և կանխապես վայելում էին լեռներն անցնելու և արագորեն առաջ սլանալու հաճույքը: Նրանք նույնիսկ նախատեսում էին մինչև Մենավոր Լեռան գաղտնի դուռը հասնել նույն աշնանը, նոր լիալուսնի ժամանակ: «Գուցեն հասցնենք Դյուրինի օրվան»,— ասում էին նրանք:

Միայն Հենդալֆն էր գլուխն օրորում ու ձայն չէր հանում: Թզուկներն արդեն երկար տարիներ չէին անցել այդ ճանապարհով, բայց Հենդալֆը այստեղ եղել էր և գիտեր, որ այն ժամանակից ի վեր, ինչ վիշապներն այստեղից քշել են մարդկանց, և Մորայայի հանքերի մոտ թզուկների դեմ մղած ճակատամարտում պատրվեցյուց հետո գորբիկները վերաբնակվել են այստեղ, չարն անպատիժ թագավորում է Վայրի երկրում և ճամփորդներին ամեն տեղ վտանգ է դարանում: Նույնիսկ Հենդալֆի

Նման իմաստուն հրաշագործների և Էլրոնդի նման բարի մարդկանց պլաններն էլ կարող են տապալվել, եթե վտանգավոր ճանապարհորդություն և կատարվում Վայրի Երկրով: Հենդալֆը բավականաչափ իմաստուն էր, որպեսզի դա հասկանար: Նա գիտեր, որ ցանկացած թոպեին կարող է չնախատեսված մի բան տեղի ունենալ և հույս էլ չուներ, թե կարելի է շրջանցել սարսափելի իրադարձությունները անմատչելի գագաթներով և չարագուշակ հովիտներով վիթխարի լեռներն անցնելու ժամանակ, որտեղ անօրենությունն է տիրում: Եվ չհաջողվեց էլ շրջանցել... Ամեն ինչ լավ էր ընթանում, մինչև որ մի անգամ նրանք ընկան ամպրոպի տակ, այն էլ ինչպիսի... թվում էր ոչ թե ամպրոպի որոտ էր, այլ թնդանոթի: Ամեն ոք գիտի, թե ինչ կատաղի են մոլեգնում ամպրոպն ու կայծակը սարերում, գիշերը, երբ երկու ամպրոպ կռիվ են գնում իրար վրա: Կայծակները գագաթներին զարկվելով շիկանում են, ժայռերը ցնցվում են, ամպրոպի սոսկալի ճայթյունը ցնցում է օդը: Արձագանքը տարածվում է բոլոր անձավներում ու խորխորատներում, և խավարը լցվում է խլացնող դղրդոցով ու փայլատակումներով:

Բիլբոն երբեք նման բան չէր տեսել և նույնիսկ երևակայել չէր կարող: Թզուկները գտնվում էին բարձր լեռներում, մի նեղ հարթակի վրա, անդնդախոր ձորի պռնկին, որ թեքությամբ իջնում էր դեպի ներքև: Նրանք գիշերելու տեղավորվեցին մի կախված ժայռի տակ: Բիլբոն պառկել էր վերմակի մեջ փաթաթված և դողում էր ամբողջ մարմնով: Վերմակի տակից մի աչքով նայելով՝ նա կայծակի լույսի տակ հովտի մյուս կողմում քարե հսկաներ տեսավ, որոնք ժայռաբեկորներ էին նետում միմյանց, բռնում դրանք և նորից շարտում դեպի խավարը. բեկորները թափվում էին ներքև, ծառերի թավուտը, կամ դղրդյունով փշուր-փշուր լինում: Հետո քամի բարձրացավ և անձրև տեղաց: Քամին անձևով ու կարկուտով մտրակում էր ամեն կողմից, այնպես որ ժայռը դադարեց պաշտպանիչ ծածկույթ լինելուց: Շուտով ճանապարհորդները թրջվեցին, նրանց պոնիները կանգնած էին գլխիկոր ու պոչները քաշած, ոմանք սարսափից կամաց վրնջում էին: Լսելի էր, թե ինչպես են հսկաները հռհռում ու իրար ձայն տալիս բոլոր լանջերին:

— Այսպես չի լինի,— ասաց Տորինը:— Եթե մեզ քամին չքշի, կամ անձրևը չսրբի տանի, կամ կայծակը չխփի, ապա հսկան մեզնից յուրաքանչյուրին կարող է բռնել և ոտքով տշել, ինչպես ֆուտբոլի գնդակը:

— Թե որ ավելի լավ տեղ գիտեք, ուրեմն վերցրեք և տարեք մեզ այնտեղ...— կռվարար տոնով պատասխանեց Հենդալֆը, որին նույնպես հսկաների հարևանությունը չէր ուրախացնում:

Որոշ հակաճառություններից հետո վճռեցին Ֆիլիին ու Կիլիին ուղարկել ավելի հարմար թաքստոց որոնելու: Նրանք սուր տեսողություն ունեին, և քանի որ մնացած թզուկներից փոքր էին էսպես մի հիսուն տարով, ապա նրանց միշտ այդպիսի հանձնարարություններ էին տալիս (երբ պարզ էր դառնում, որ Բիլբոյին ուղարկելն անիմաստ է): «Երբ փնտրում ես, ապա անպայման գտնում ես»,— այդպես ասաց կրտսեր թզուկներին Տորինը:

խոսք չկա, եթե փնտրում ես, ապա միշտ մի բան կգտնես, բայց բոլորովին պարտադիր չէ, որ գտնես այն, ինչ փնտրում ես: Այդպես ստացվեց նաև այս անգամ: Շուտով Ֆիլին ու Կիլին սողալով ետ դարձան, ժայռերից բռնելով, որպեսզի քամին չտանի:

— Մենք չորս քարանձավ ենք գտել,— հայտարարեցին նրանք,— այստեղ, անկյունում: Բոլորիս տեղ կանի, ձիերին էլ:

— Իսկ ինչպես հարկն է նայե՞լ եք,— հարցրեց կախարդը: Դե նա հո գիտեր՝ լեռնային քարանձավները հազվադեպ են դատարկ լինում:

— Էն էլ ո՞նց,— պատասխանեցին նրանք, չնայած բոլորին պարզ էր, որ նրանք ժամանակ չունեին ուշադիր գննելու, քանի որ շուտ էին վերադարձել:

Քարանձավների խարդախությունն էլ հենց այն է, որ երբեք չգիտես՝ անձավը հեռո՞ւ է տարածվում, որտե՞ղ դուրս կբերի և ձեզ համար ինչ կա ներսում թաքնված: Ֆիլիի ու Կիլիի տեղեկությունները լրիվ գոհացուցիչ թվացին: Քամին առաջվա պես կաղկանծում էր, ամպրոպը որոտում, և նրանցից մեծ ջանքեր էին պահանջվում պոնիների հետ միասին մինչև քարանձավ հասնելու համար: Լավ էր, որ այն իսկապես էլ հեռու չէր. նրանք շուտով դեմ առան մի ժայռի, որ ցցված էր արահետի վրա, և, ժայռը շրջանցելով, պատի մեջ մի ցածրիկ մուտք հայտնաբերեցին: Պոնիները առանց թամբերի ու բեռների սեղմվելով՝ այդ անցքից ներս մտան: Հաճելի էր լսել, թե դրսում ինչպես են մոլեգնում քամին ու անձրևը, և իրեն ապահով զգալ հսկաներից ու նրանց քարե գնդակներից: Բայց կախարդը ոչ մի դեպքում չէր ցանկանում ռիսկի դիմել: Նա վառեց իր ցուպը, ինչպես արել էր մի ժամանակ (շատ վաղուց) Բիլբոյի ճաշասենյակում, և նրանք լայքնով ու երկայնքով հետազոտեցին անձավը:

Քարանձավը պատկառելի չափսեր ուներ, բայց ոչ չափազանց մեծ և ոչ շատ խորհրդավոր: Չոր հատակ, հարմարավետ անկյուններ: Օյնն ու Գլոյնը ուզում էին շեմքին խարույկ վառել, որպեսզի իրերը չորացնեն, բայց Հենդալֆը խստորեն արգելեց: Այն ժամանակ բոլորը թաց հագուստները փռեցին ուղիղ հատակին, հակերից հանեցին չորերը, փաթաթվեցին վերմակների մեջ, հանեցին ծխամորճերն ու սկսեցին քուլաներ բաց թողնել: Հենդալֆը, որպեսզի բարեկամներին հաճույք պատճառի, օղակները ներկում էր գույնզգույն և ստիպում նրանց պարել կամարների տակ: Ճանապարհորդները շատախոսեցին ու բոլորովին մոռացան ամպրոպի մասին: Նրանք քննարկում էին, թե յուրաքանչյուրն ինչ է անելու իր բաժին ոսկին (առայժմ դա նրանց անմատչելի չէր թվում): Հետո մեկը մյուսի ետևից քնեցին:

Ինչպես այդ գիշերը ցույց տվեց, նրանք լավ արեցին, որ Բիլբոյին վերցրին իրենց հետ: Երկար ժամանակ նրա քունը չէր տանում, իսկ երբ վերջապես քնեց, սարսափելի երազներ տեսավ: Երազում տեսավ, իբր քարանձավի ետին պատի ճեղքը մեծանում է, գնալով ավելի ու ավելի

լայնանում. նա սարսափեց, բայց չէր կարող ճշալ, չէր կարող շարժվել, այլ պարզապես պառկել ու նայում էր: Հետո նա երագում տեսավ իբր թե քարանձավի հատակը թեքվում է, և ինքն ընկնում է, գլորվում հայտնի չէ թե ուր...

Նա ուժգին ցնցվեց ու արթնացավ և տեղնուտեղը հասկացավ, որ տեսածները բոլորովին էլ երագ չէին: Քարանձավի վերջում ճեղքն իսկապես լայնացավ և դարձավ մի լայն միջանք, ճեղքում աղոտ երևաց վերջին պոնիի պոչն ու անհետացավ: Եվ այստեղ հոբիտն այնպիսի վայնասուն բարձրացրեց, այնքան բարձր ու սուր, ինչպես կարող են գոռալ միայն հոբիտները, չնայած իրենց կարճ հասակին: Եվ այդ ժամանակ մի ակնթարթում, որ դուք չէիք հասցնի ասել «ախ, վախ», ճեղքից դուրս թափվեցին գոբլինները, հսկա ու աժդահա, տգեղ ու այլանդակ գոբլինների անհամար ամբոխներ: Ամեն թզուկին նրանցից վեց հոգի էր ընկնում, նույնիսկ Բիլբոյին բաժին հասավ երկուսը: Նրանք հափռեցին մեր ճանապարհորդներին ու քաշեցին ճեղքից ներս այնքան արագ, որ դուք չէիք հասցնի շնչալ «փորձանքն ընկանք»: Բայց նրանք չհասցրին Հենդալֆին հափշտակել: Եվ դրա պառճառը Բիլբոյի գոռոցն էր: Կախարդն արթնացավ մի ակնթարթում, ասես չէր էլ քնել, և երբ գոբլինները մոտեցան նրան, քարանձավում կուրացուցիչ լույս փայլատակեց, վառողի հոտ եկավ, և մի քանի գոբլին տեղնուտեղն ընկան սպանված: Ճեղքը շրխկոցով փակվեց, և Բիլբոն ու թզուկները հայտնվեցին մյուս կողմում: Ո՞ւր կորավ Հենդալֆը: Չգիտեին ո՛չ նրանք, ո՛չ էլ գոբլինները, դե գոբլիններն իսկի դրանով չհետաքրքրվեցին էլ: Նրանք շարունակում էին քարշ տալ Բիլբոյին ու թզուկներին: Շուրջը մութ էր, թանձր խավար, այդպիսի մթության մեջ միայն գոբլինները կարող են տեսնել, որովհետև նրանք սովոր են լեռների խորքում ապրել: Բոլոր կողմերով անցուղիներ էին գնում իրար հասելով, իրար խառնվելով, բայց գոբլինները հարկ եղած ճանապարհն այնքան լավ գիտեին, որքան դուք մոտակա փոստի ճանապարհը գիտեք: Կածանն իջնում ու իջնում էր և ներքևում անտանելի խեղդոց էր: Գոբլիններն իրենց շատ կոպիտ էին պահում, անգթորեն կամթում էին գերիներին և հռհռում սարսափելի, փյառե ծիծաղով:

Վերջապես առջևում կարմիր լույս առկայծեց, և գոբլինները երգեցին, խռպոտ ձայնով մի զզվելի երգ ձգեցին, տափակ ներբաններով երգի հանգով քարերին չլմփացնելով և գերիներին թափահարելով.

Թրախկ ու շրախկ: Ուղիղ ճակատին:
Հասիր ու բռնիր: Անունդ: Ասա:
Հսկա գոբլիններն այստեղ են ապրում:
Եկեք: Համարձակ: Շուտ եկեք: Հասանք:
Թխկոց է: Չնզոց: Դոփյուն է: Տնքոց:
Մեկ-երկու-երեք՝ սուկոց ու հառաչ:

Երեք-չորս՝ պատրաստ պահեք մուրճերը:
Դեպի ստորգետնյա ուղին, դե, առաջ:

Ճայթյուն ու որոտ: Ճիպոտ ու մտրակ:
Չարկիր, խուզարկիր: Մռնչա, փնչա:
Ստում ես, ստում: Էլ չես ծլկի դու:

Գոբլիներն այնտեղ խմում են, երգում:
Իսկ դու՝ միշտ առաջ, իսկ դու՝ միշտ առաջ:
Դեպի ստորգետնյա ուղին՝ միշտ առաջ:

Դա սարսափելի էր հնչում: Պատերը ցնցվում էին «թրախկ ու շրախկ», «ճայթյուն ու որոտ»-ից և այլանդակ ծիծաղից: Երգի իմաստը բավական պարզ էր. գոբլիները հանեցին մտրակները և գերիներին առաջներն արած քշեցին՝ վրճժ-վրճժ... Թզուկները աղիողորմ տևքում էին և դժդժում: Եվ հանկարծ բոլորը լցվեցին մի հսկայական քարանձավ: Մեջտեղում հուրհրատում էր կարմիր մեծ խարույկը, պատերին ջահերև էին վառվում, քարանձավը լեփլեցուն էր գոբլիներով: Նրանք բոլորը հռիռացին, ոտքերով դոփեցին ու ծափ զարկեցին, երբ ներս ընկան թզուկները, և վերջինը (նշանակում է մտրակներին առավել մոտիկ)՝ խեղճ Բիլբոն: Նրա ետևից հայիույով և մտրակներով շրխկացնելով գալիս էին հալածողները: Սենյակում իրար գլխի էին հավաքվել պոնիները, գետնին թափված էին պատռված և շուռ տված հակերն ու պարկերը, գոբլիները խառնշտում էին, հոտոտում իրերը՝ շոշափելով դրանք ու միմյանց հայիոյելով: Որքան էլ դա ցավալի է, թզուկներն այլևս երբեք չտեսան իրենց հիանալի պոնիներին, այդ թվում ուժեղ, կայտառ ճերմակին, որ Էլրոնդն էր տվել Հենդալֆին: Որպես գաղտնիք կասեմ, գոբլիները ուտում են և՛ ձիերին, և պոնիներին, և էլի ուրիշների ու միշտ սոված են: Բայց հիմա գերիների հոգսը պոնիները չէին, նրանք մտածում էին միայն իրենց մասին: Գոբլիները նրանց ձեռքերը ոլորեցին, բոլորին իծաշարուկի կապեցին մի երկար շղթայով և քարշ տվին քարանձավի հեռավոր անկյունը: Ճստիկ Բիլբոն քարշ էր գալիս պոչից:

Անկյունում, կիսամութի մեջ, տափակ քարի վրա բազմել էր հսկայական գլխով մի վիթխարի գոբլին, իսկ շուրջը ռազմիկներ էին կանգնած՝ զինված մարտական կացիներով ու կեռ թրերով: Գոբլիները, պետք է ասել, դաժան, չար ու զզվելի արարածներ են: Նրանք գեղեցիկ իրեր պատրաստել չգիտեն, բայց դրա փոխարեն ամեն տեսակ չար գործեր են անում: Եթե ուզենան, թզուկներից ոչ պակաս, բացի առավել հմուտներից, կարող են թունելներ փորել և հանքեր մշակել, բայց իրենք միշտ կեղտոտ են ու փնթի: Մուրճեր, կացիներ, թրեր, դաշույններ, բրիչներ ու արքաններ և տանջելու գործիքներ՝ այս բոլորը իրենք հիանալի կարողանում են սարքել կամ ուրիշներին են սարքել տալիս: Ուրիշները՝ դրանք գերիներն են, ստրուկները, որոնք աշխատում են սրանց համար, մինչև որ մեռնում են օդի ու լույսի պակասությունից: Բացառված չէ, որ հատկապես գոբլիներն են հայտնագործել որոշ մեքենաներ, որոնք մարդկությանը տիանություն են պատճառում, մանավանդ նրանք, որոնք

նախատեսված են միանգամից մեծ քանակությամբ մարդ ոչնչացնելու համար: Մեխանիզմները, մոտորներն ու պայթյունները միշտ հետաքրքրում ու հիացմունք էին պատճառում գործիչներին: Սակայն այն ժամանակներում, որի մասին մենք պատմում ենք, և այն վայրի տեղանքում գործիչները դեռ չէին հասել քաղաքակրթության այդ աստիճանին (այդպես է դա կոչվում): Նրանք ատում էին բոլորին, առանց խտրականության, մանավանդ օրինավորներին և բարգավաճողներին, և ոչ թե հատկապես թզուկների նկատմամբ առանձնահատուկ ատելություն էին տածում: Որոշ տեղերում առանձին անամոթ թզուկներ նույնիսկ դաշինք էին կնքել գործիչների հետ: Բայց այն տոհմի թզուկների նկատմամբ, որին պատկանում էր Տորինը, գործիչները ամենախսկական թշնամանք էին տածում այն պատերազմի պատճառով, որի մասին արդեն հիշատակել ենք, բայց որի մասին այստեղ խոսք չի լինի: Իսկ առհասարակ, գործիչների համար միևնույն է, թե ում ճանկեն, միայն թե զոհին հանկարծակիի բերեն, որպեսզի պաշտպանվել չկարողանա:

— Ովքե՞ր են այս խղճուկները,— հարցրեց Գերագույն Գործիչը:

— Թզուկներ են, մեկ էլ սա,— պատասխանեց հալածողներից մեկը, շղթան այնպես ձգելով, որ խեղճ Բիլբոն ընկավ ծնկների վրա:— Նրանք թաքնվել էին մեր նախասրահում:

— Ի՞նչ նպատակով,— դիմեց Գերագույն Գործիչը Տորինին:— Գրագ կգամ, որ որևէ ստորություն եք ձեռնարկել:— Կասկածում եմ, որ լրտեսում էիք իմ ժողովրդին: Բոլորովին չեմ զարմանա, եթե դրանք գողեր լինեն: Իսկ ավելի հավանական է, ոճրագործներ են և Էլֆերի բարեկամներ: Դե՞, ի՞նչ կասեք:

— Թզուկ Տորինը ձեզ ծառա,— ասաց Տորինը (դա սովորական քաղաքավարություն է, ինչպես դուք հասկանում եք):— Այն հանցանքների մեջ, որ վերագրում եք մեզ, մենք անմեղ ենք: Մենք ամպրոպից պատասպարվեցինք, ինչպես մեզ թվաց, հարմար ու դատարկ քարանձավում: Գործիչներին անհանգստացնելու ոչ մի մտադրություն չենք ունեցել:— Եվ դա ճշմարտություն էր:

— Հը՛մ,— ասաց Գերագույն Գործիչը:— Այդպես ուրեմն: Իսկ կարո՞ղ եմ իմանալ արդյոք, թե առհասարակ ինչ գործ ունեիք լեռներում, որտեղի՞ց լույս ընկաք և ու՞ր եք գնում: Ես կուզեի ձեր մասին ամեն ինչ իմանալ: Ճիշտ է, դա ձեզ քիչ կօգնի, Տորին Օուքենշիլդ, առանց այն էլ ինձ շատ բան է հայտնի քո ցեղի մասին: Բայց ավելի լավ է ամեն ինչ պարզ ասեք:

— Մենք ճանապարհ ենք ընկել՝ ցանկանալով տեսնել մեր ազգականներին՝ զարմիկներին ու զարմուհիներին, հորաքրոջ տղաներին ու աղջիկներին, հորեղբոր ու պապի եղբոր տղաներին ու աղջիկներին և մեր ընդհանուր նախնիների այլ շառավիղներին, որոնք ապրում են այս իսկապես հյուրասեր լեռների արևելքում,— պատասխանեց Տորինը: Նա դժվար վիճակում էր գտնվում. ինչպես կարելի է ամեն ինչ ճիշտ ասել այնպիսի պայմաններում, երբ ճշմարտությունն այնքան էլ տեղին չէ:

— Լա խաբում է, ով մեծերից ամենամեծը,— մեջ ընկավ հալածողներից մեկը:— Մերոնցից մի քանիսը կայծակից զարկվեցին քարանձավում, երբ մենք այս արարածներին առաջարկեցինք մեզ հետ ներքև իջնել: Մերոնք տեղնուտեղը մեռան: Եվ հետո ևս ի՞նչ բացատրությամբ կտա այ սրա համար:— Այստեղ գորբիկը ցույց տվեց Տորիսի թուրը, որ տրուների որջից էին վերցրել:

Գերագույն Գորբիկը մի հայացք զցեց թրի վրա և կատաղության ու չարության սիրտ ճաքեցնող ոռնոց արձակեց, իսկ բոլոր զինվորները ատամները կրճտացրին, վահանները դրոճացրին ու ոտքերով դոփեցին: Նրանք իսկույն ճանաչեցին թուրը: Իր ժամանակին, երբ Գոնդոլինի պայծառ էլֆերը նեղել էին գորբիկներին և իրենց քաղաքի պարիսպների տակ կռվում էին նրանց դեմ, այդ թուրը հարյուրավոր գորբիկներ տապալեց: Բարի էլֆերն այն անվանեցին Օրկրիստ, կամ Գորբիկների խորտակող, իսկ գորբիկներն իրենց ուղղակի «Կծող» անունը տվին: Նրանք ասում էին այդ թուրը և առավել շատ նրանց, ում ձեռքին այն գտնվում էր:

— Գորբիկներին սպանողները և էլֆերի բարեկամները,— գոռաց Գերագույն Գորբիկը:— Ջարդեք դրանց: Ձաղկեք դրանց: Կծեք դրանց: Կրծեք դրանց: Դրանց զցենք փոսերը օձերի հետ, որպեսզի ցերեկվա լույսն այլևս չտեսնեն:

Լա այնքան գազազեց, որ գահից ցած թռավ և, երախը բաց անելով, հարձակվեց Տորիսի վրա: Այդ պահին քարանձավի բոլոր կրակները միանգամից հանգան և խարույկից՝ փր՛ֆ-ֆ-ֆ-ֆ, կապույտ շիկացած ծխի մի սյուն նետվեց մինչև առաստաղ, սպիտակ, այրող կայծեր շաղ տալով, որոնք սկսեցին վառել գորբիկներին: Հնարավոր չէ նկարագրել, թե ինչ վժժոց, ծղրտոց, վայնասուն, վազվռուռք ու քաշքշուկ, մռնչոց ու փնչոց բարձրացավ: Եթե հարյուրավոր վայրի կատուների ու գայլերի բոլորին միասին ողջ-ողջ խորովեին մարմանդ կրակի վրա, չէին կարող այդպիսի աներևակայելի աղմուկ-աղաղակ բարձրացնել: Կայծերը այրելով ծակում էին գորբիկներին և մյուս կողմից դուրս գալիս: Քարանձավը լցված ճենճահոտն ու ծուխն այնքան թանձր էր, որ նույնիսկ խավարին սովոր գորբիկների աչքերը ոչինչ չէին կարողանում զանազանել: Շուտով բոլոր գորբիկները թավալվում էին հատակին, կուչ գալով, կծկվելով, կծելով, ոտնահարելով ու աքացի տալով և խելագարների նման իրար դնգստելով:

Հանկարծակի ինքն իրեն փայլատակեց թուրը և խոցեց Գերագույն Գորբիկին: Լա մեռած տապալվեց գետին, իսկ նրա զինվորները վայրենի ճիչով դեսուդեն ցրվեցին ու անհետացան մթության մեջ: Թուրը վերադարձավ պատյան:

— Արա՛գ, իմ ետևի՛ց,— հանգիստ, բայց խստորեն հրամայեց ինչ-որ մեկի ձայնը: Եվ ոչինչ չհասկանալով, Բիլբոն մուռ միջանցքներով քարշ էր գալիս շղթայի ծայրից, իսկ գորբիկների ճիչն ու վայնասունն աստիճանաբար մարում էին հեռվում:

— Արա՛գ, արա՛գ,— շտապեցրեց ձայնը,— հիմա նորից ջահերը կվառեն:

— Մի րոպե,— խնդրեց Բիլբոյի առջևից գնացող Դորին: Նա, որքան թույլ էին տալիս կապկապած ձեռքերը, հոբիտին օգնեց մագլցել իր մեջքին, և ապա բոլորը վազելով առաջ գնացին, շղթաները գնագնագանելով, սայթաքելով և հազիվ իրենց պահելով, որ վայր չընկնեն: Նրանք վազեցին առաջ առանց կանգ առնելու: Երկար վազեցին և, հավանական է, արդեն գտնվում էին լեռների բուն խորքում:

Եվ այստեղ Հենդալֆը վառեց իր գավազանը: Դե, իհարկե, այս բոլորը Հենդալֆի ձեռքի գործն էր: Բայց առայժմ նրանք ժամանակ չունեին հարցուփորձ անելու նրան, թե որտեղից հայտնվեց: Նա նորից թուրը դուրս քաշեց, և նորից թուրը լուսավորվեց խավարում: Առաջին անգամ, երբ շուրջը գոբլիններն էին, թուրը կատաղությունից հուրհրատում էր, իսկ հիմա նա փայլում էր մեղմ երկնագույն լույսով, գոհ այն բանից, որ սպանել է գոբլինների տիրակալին: Նրա համար դժվար չէր շղթաները կտրատել և մի րոպեում ազատագրել գերիներին: Թուրը կոչվում էր Գլեմդրինգ, այսինքն՝ Թշնամիներին Ջարդող, եթե հիշում եք: Գոբլինները նրան Թակող անունն էին տվել և ատում էին Կծանից ավելի, եթե դա հնարավոր է: Օրկրիստին էլ հաջողվեց փրկել. Հենդալֆը նրան խլեց քարացած պահակի ձեռքից: Հենդալֆը, առհասարակ, հասցնում էր շատ բան մտածել և չնայած ամենագոր չէր, բայց շատ բան էր կարողանում անել բարեկանների համար, ում կյանքին վտանգ էր սպառնում:

— Բոլորն այստե՞ր էն,— հարցրեց նա՝ խոնարհվելով և թուրը Տորինին հանձնելով:— Հապա՛ մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, տասնմեկ... սպասեցեք, ո՞ւր են Ֆիլին ու Կիլին: Ահա այստեղ են, տասներկու, տասներեք, միստր Բեգինսն էլ տասնչորս: Վատ չէ, կարող էր ավելի վատ լինել, բայց կարող էր ավելի լավ լինել: Իսկ այսպես՝ ոչ պոնի, ոչ ուտելիք, որտեղ ենք գտնվում՝ հայտնի չէ, և դեռ չարացած գոբլինների հորդան էլ կրնակալոխ հետապնդում է: Առա՛ջ...

Նրանք առաջ շարժվեցին: Պարզվեց, որ Հենդալֆն իրավացի էր. մութ անցուղիներում, որտեղով նրանք հենց նոր էին անցել, աղմուկ, դոփյուն և գոբլինների սարսափելի գոռգոռոցներ լսվեցին: Թզուկներն ավելի արագացրին փախուստը, և քանի որ Բիլբոն չէր կարող նրանց ետևից հասնել, ապա նրանք հանձն առան հերթով շալակած տանել նրան:

Եվ, այնուամենայնիվ, գոբլինները թզուկներից արագ էին վազում, ընդ որում նրանք ճանապարհն էլ ավելի լավ գիտեին, քանի որ իրենք էին ելքերը բացել և, բայցի դրանից, կատաղությունից խելքները թեցրել էին: Այնպես որ թզուկները որքան էլ ջանում էին փախուստ տալ հետապնդումից, շուտով լսեցին մոտեցող ճիչերն ու ոռնոցները: Բազմաթիվ ոտքերի չլմփոցը լսվում էր տառացիորեն մոտակա շրջադարձից: Թունելում, թզուկների թիկունքում, առկայծեցին ջահերի լույսերը: Իսկ թզուկներն արդեն ուժասպառ էին եղել:

— Ինչո՞ւ, ախ, ինչո՞ւ ես հեռացա իմ բնից,— կրկնում էր դժբախտ միստր Բեգինսը՝ Բոմբուրի մեջքին վեր-վեր թռչելով:

— Ինչո՞ւ, ախ, ինչո՞ւ մեզ հետ վերցրինք այս դմբոյին,— կրկնում էր խեղճ գիրուկ Բոմբուրը՝ բեռի տակ օրորվելով: Շոգից ու վախից քրտինքը քթից կաթում էր:

Այդ պահին Հենդալֆը մի քիչ ետ մնաց, և Տորինը հետևեց նրա օրինակին: Նրանք շրջվեցին դեպի անկյունը:

— Թուրը պատյանից հանիր, Տորին,— բացականչեց հրաշագործը:

Նրանք ուրիշ ելք չունեին: Դա իսկի դուր չեկավ գոբլիններին: Արագ ընթացքով նրանք դուրս թռան անկյունից և հանկարծ Գոբլիններին հորտակողը և Թշնամիներին Ջարդողը սուր ու վառման փայլատակեցին նրանց աչքերի առաջ: Առջևիները վայր գցեցին ջահերը և հոգեվարքի ճիչ արձակեցին: Միջին շարքերը ավելի բարձր ոռնալով ետ շրջվեցին և ետևից եկողներին տրորելով փախան: «Կծողն ու Թակողը»,— գոռում էին նրանք: Խուճապ սկսվեց, կենդանի մնացած գոբլինները աճապարանքով սուրացին ետ, որտեղից եկել էին:

Դեռևս երկար ժամանակ գոբլինները չէին համարձակվում սարսափելի շրջադարձից ետ նայել: Այդ ընթացքում թզուկները հասցրին խորանալ գոբլինների մութ թագավորության հեռու-հեռավոր անցուղիները: Գլխի ընկնելով, թե ինչն ինչոց է, ողջ մնացած գոբլինները նորից վառեցին ջահերը, հազան փափուկ ոտնամաններ և թզուկների հետևից ուղարկեցին սուր լսողություն և տեսողություն ունեցող ամենաուժեղ արագավազների: Սրանք առաջ նետվեցին մթության մեջ՝ արագ, ինչպես կզաքիսը, և անշշուկ, ինչպես չղջիկը: Դրա համար էլ ոչ Բիլբոն, ոչ էլ Հենդալֆը նրանց մոտենալը չլսեցին: Եվ չտեսան նրանց: Դրա փոխարեն գոբլինները փախստականներին շատ լավ էին տեսնում, որովհետև Հենդալֆի գավազանը թույլ լույս էր արձակում, լուսավորելով թզուկների ճանապարհը: անսպասելիորեն բռնեցին Դորիի ոտքից, որը հիմա վերջն էր ընկել և Բիլբոյին էր շալակած տանում: Դորին ճչաց ու դրիսկաց գետնին, իսկ հոբիտը թռավ խավարի մեջ, գլուխը խփեց քարին ու գիտակցությունը կորցրեց:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԽԱՎԱՐՈՒՄ

Երբ Բիլբոն վերջապես աչքերը բացեց, ապա նույնիսկ չհասկացավ՝ բացե՞լ է արդյոք. շուրջն անթափանց խավար էր: Մոտակայքում ոչ մի շունչ: Պատկերացրեք, թե Բիլբոն ինչպես վախեցավ: Ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր գգում, բացի իր տակի սառը քարե հատակից:

Մեծ դժվարությամբ նա վեր կացավ չորեքթաթ և սողաց, մինչև շոշափեց թունելի պատը: Ոչ գոբլինների ձայն էր լսվում, ոչ էլ թզուկների, նրա գլուխը պտտվում էր, նույնիսկ չէր կարող որոշել, թե որ կողմն էին վազում իր ընկնելուց առաջ: Ընտրելով, ինչպես նրան թվաց, ճիշտ ուղղությունը, նա այդպես էլ չորեքթաթ սողաց բավական երկար, մինչև

ձեռքը դիպավ փոքրիկ սառը մետաղյա մի մատանու, որն ընկած էր գետնին: Դա շրջադարձային պահ էր նրա կյանքում, բայց ինքը դեռ այդ բանը չգիտեր: Մեքենայորեն նա մատանին դրեց գրպանը՝ հիմա դա իրեն պետք չէր: Հետո նստեց սառը հատակին և երկար ժամանակ ընկավ դառը խոհերի գիրկը: Նա պատկերացրեց, թե ինչպես է խոզի մսով ձվածեղ անում իր տանը: Ստամոքսը վաղուց էր ակնարկում նրան, որ կուշտ ուտելու ժամանակն է, և սովից իրեն էլ ավելի դժբախտ էր զգում:

Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչ պետք է անի, չէր կարող հիշել, թե ինչու են իրեն մենակ թողել, այդ դեպքում ինչու գոբլինները իրեն չեն տարել, ինչպես նաև՝ թե ինչու է իր գլուխն այսպես ցավում: Ախր պատճառն այն էր, որ ինքը նետվեց անկյունը ու մնաց իր համար մթուղայան մեջ ընկած: Ինչպես ասում են՝ աչքից հեռու... սրտից հեռու:

Որոշ ժամանակ հետո նա գրպանում շոշափեց ծխամորճը. լավ է, չէր կտորվել: Հետո քիսան հանեց, այնտեղ մի քիչ ծխախոտ էր մնացել՝ էլի մի բան էր: Հետո գրպանները քրքրեց և ոչ մի տեղ լուցկի չգտավ: Նրա երազները հոդս ցնդեցին: Մի քիչ մտածելով, ճիշտ է, նա որոշեց, որ այդպես նույնիսկ ավելի լավ է: Աստված գիտե, թե ինչի կհասցնեն լուցկու չրթոցը և ծխախոտի հոտը: Ո՞վ կհարձակվեր նրա վրա այդ սև անցուղիներից: Բայց այնուամենայնիվ լուցկու բացակայությունը մի պահ նրան վշտացրեց: Շուրջն ափլփելիս՝ նրա ձեռքը կպավ դաշույնի կոթին, որ վերցրել էր տրոլների քարանձավից և որի մասին բալորովին մոռացել էր: Լավ է, որ գոբլինները չեն նկատել. դաշույնը խրված էր գոտու տակ: Բիլբոն դաշույնը հանեց պատյնափց, և այն թույլ լուսավառվեց մթուղայան մեջ:

«Ուրեմն սա էլ էլֆերի սարքածն է,— մտածեց Բիլբոն,— իսկ գոբլինները չնայած մոտիկ չեն, բայց այնքան էլ հեռու չեն»:

Նա մի քիչ հանգստացավ: Այնուամենայնիվ, շատ լավ է, երբ մոտոզ գնը ունես, որ պատրաստված է Գոնդոլիսում՝ գոբլինների դեմ պատերազմելու համար, որի մասին այնքան երգեր են երգվել: Նա արդեն նկատել էր, որ գոբլինները, էլֆերի գենքը տեսնելով, իսկույն իրենց կորցնում էին:

«Ե՛տ գնալ,— մտածեց նա:— Բացառված է: Կողքի՞: Անիմաստ է: Առա՞ջ: Միակ խելացի բանը: Այսպես, ուրեմն, առաջ»:

Նա ոտքի ելավ և դանդաղ քարշ գալով շարժվեց առաջ, մի ձեռքով դաշույնը բռնած, մյուսով պատերին հենվելով: Նրա սիրտը թափտում էր ու դողդողում:

Այո, Բիլբոն արտակարգ դժվար վիճակի մեջ հայտնվեց: Բայց դուք պետք է հիշեք, որ դա նրա համար ավելի նվազ դժվար էր, քան ասենք ինձ համար կամ ձեզ համար: Հոբիտներն, այնուամենայնիվ, այն չեն, ինչ մարդիկ: Բացի դրանից, չնայած նրանց բները դուրեկան են, հարմարավետ, լավ օդափոխված և բոլորովին նման չեն գոբլինների թունելներին, հոբիտներն, այնուամենայնիվ, առավել շատ են սովոր ստորգետնյա անցուղիներին, քան մենք, և այնքան էլ հեշտությամբ չեն կորցնում գետնի տակ կողմնորոշվելու ընդունակությունը: Հատկապես, երբ արդեն ուշքի են գալիս գլուխը քարին թիկակացնելուց հետո: Հոբիտները քայլում են անաղմուկ, կարողանում են ճարակորեն թաքնվել և արագ կազդուրվում են վնասվածքներից ու ընկնելուց: Նրանք իմաստուն առածների ու ասացվածքների անսպառ պաշար ունեն, որոնց մասին մարդիկ երբեք չեն լսել կամ վաղուց մոռացել են:

Եվ, այնուամենայնիվ, անձամբ ես չեի ուզենա միստր Բեգինսի տեղը լինել: Թվում էր այդ թունելը երբեք չի վերջանա: Շարունակ աչ ու ձախ կողմերի վրա ուրիշ ուղիներ էին գնում: Բիլբոն դրանք տեսնում էր դաշույնի լուսավորության շնորհիվ: Այդ կողմերը նա չէր նայում, միայն շտապում էր առաջ, վախենալով, թե հանկարծ այդտեղից գոբլիններ կամ էլի ինչ-որ արարածներ դուրս կթռչեն: Նա գնում էր հա գնում, առաջ ու առաջ, ներքև հա ներքև: Եվ առաջվա պես ոչ ձեռն, ոչ ձուռն, միայն հազվադեպ մոտիկից թռչող չղջիկի թևերի թափահարումն էր լսում: Սկզբում նա վախենում էր, բայց հետո դադարեց՝ չղջիկները հաճախ էին թռչում: Չգիտեմ արդեն, թե որքան նա այդպես քարշ եկավ, բայց վերջապես զգաց, որ հոգնել է, ինչպես երբեք. նրան թվում էր, որ ինքն արդեն անցել է վաղվան և այդպես պետք է քայլի մինչև կյանքի վերջը:

Անսպասելի, ոչինչ չկասկածելով, նա չլմփաց ջրի մեջ: Բը-ռ-ռ, ջուրը ոնց որ սառույց լիներ: Դա Բիլբոյին ուշքի բերեց և ստիպեց ձգվել: Նա չգիտեր, դա պարզապես ջրափո՞ս է ճանապարհին, գետնի տակով հոսող վտակի ա՞փ, որ հատում է թունելը, թե՞ գետնի տակ գտնվող խոր ու խորհրդավոր լճի եզրը: Դաշույնը լույս տալուց համարյա դադարեց: Բիլբոն քարացավ տեղում և ականջ դրեց. «կը՛թ, կը՛թ» անտեսանելի տանիքից կաթիլներն ընկնում էին ջրի մեջ: Ուրիշ ոչ մի ձայն:

«Ուրեմն սա ջրափոս է կամ լիճ և ոչ թե գետ»,— մտածեց Բիլբոն: Նա չէր համարձակվում մթության մեջ ջուրը մտնել: Լողալ չգիտեր, և նրան պատկերանում էին գանազան զգվելի լարծուն էակներ, դուրս պրծած կույր աչքերով, որ գալարվում են ջրի մեջ: Տարօրինակ էակներ են լինում լեռների խորքերում գտնվող լճակներում. ձկներ, որոնց նախնիները լողացել եկել են այստեղ աստված գիտե թե երբվանից, և այլևս չեն կարողացել լույս աշխարհի դուրս գալ, նրանց աչքերն անընդհատ դուրս են պրծնում ու դուրս գալիս խռոչներից նրա համար, որ ջանում են մթության մեջ տեսնել: Այնտեղ արարածներ կան, որ ձկներից էլ սարսափելի են: Դրանք բնակվել են քարանձավներում գորբիկներից առաջ և հիմա թաքնվում են մութ անկյուններում, դեսուդեն են ընկնում, գաղտագողի նայում ու հոտոտում:

Այստեղ խորության և մթության մեջ, հենց ջրի ափին ապրում էր ծեր Գոլլումը՝ մեծամարմին և լարծուն մի էակ: Զգիտեմ որտեղից էր նա հայտնվել և ով էր կամ ինչ էր իրենից ներկայացնում: Գոլլում և վերջ: Սև, ինչպես ինքը խավարը, երկու հսկայական կլոր անգույն աչքեր նեղ դեմքի վրա: Նա ուներ մի փոքրիկ նավակ և դրանով հանդարտ սահում էր լճի վրա: Դա իսկապես էլ լիճ էր՝ լայն, խոր և սառը: Նա թիավարում էր իր ետևի երկար թաթերով, դրանք նավակողերից ցած կախելով, թիավարում էր անձայն, առանց մի ճողփյունի: Նա ծեր ասածներից չէր, որ աղմկեր: Իր՝ մաղի նման կլոր աչքերով հետևում էր կույր ձկներին և երկար մատներով կայծակնային արագությամբ հանում ջրի միջից: Միս էլ էր սիրում: Երբ նրան հաջողվում էր գորբիկ բռնել, շատ գոհ էր լինում. նրանց համը դուրեկան էր: Բայց ինքը իր հերթին աշխատում էր նրանց աչքին չերևալ: Սովորաբար գորբիկների վրա հարձակվում էր թիկունքից և խեղդում, եթե պատահում էր, որևէ գորբիկ մեն-մենակ հայնտնվում էր լճի ափին, այն ժամանակ, երբ Գոլլումը չափչփում էր մոտակայքը: Նրանք, իհարկե, շատ հազվադեպ էին ջուրն իջնում, որովհետև զգում էին, որ այնտեղ, ներքևում, լեռան բուն արմատների մոտ իրենց համար տհաճություն է դարանում: Նրանք լճին դեմ էին առել շատ վաղուց, երբ թունելներ էին փորում, և համոզվել էին, որ դրանից այն կողմ թափանցել չեն կարող: Դրա համար էլ ճանապարհը հենց այդտեղ վերջանում էր: Այնտեղ գնալու հարկ էլ չկար, եթե միայն հանկարծ Գերագույն Գորբիկի սիրտը լճի ծուկ չուզեր և ինքը չուղարկեր նրանց: Երբեմն նա այլևս ոչ ծուկն էր տեսնում, ոչ ձկնորսին:

Գոլլումն ապրում էր լճի մեջտեղում ընկած սոթիկ քարե կղզյակում: Նա արդեն վաղուց նկատել էր Բիլբոյին և նրա վրա չռել իր հեռադիտակի նման դժգույն աչքերը: Բիլբոն Գոլլումին տեսնել չէր կարող, իսկ Գոլլումը նրան տեսնում էր և, հետաքրքրասիրությունից նվաղելով, հասկանում էր, որ դա գորբիկն չէ: Նա մտավ նավակն ու հեռացավ կղզյակից, իսկ Բիլբոն այդ ժամանակ նստել էր ափին՝ մոլորված, գլուխը կորցրած, մի խոսքով՝ կատարելապես շշկոժած: Եվ հանկարծ անշշուկ մոտեցավ Գոլլումը ֆշշացրեց ու սուկեց շատ մոտիկից.— Ուտես-ս ու խմես-ս-ս, իմ ս-ս-ս-քանչելի... Փառավոր հյուրա-ս-սիրություն... համեղ պատառ-ռ մեզ-զ-զ

համար... Եվ նա կոկորդային ահավոր մի ձայն արձակեց. «Գուլմ»: Իզուր չէր, որ նրա անունը Գուլում էր, թեպետ ինքն իրեն «իմ ս-ս-ս-քանչելի» անվանեց: Հոբիտի սիրտը քիչ մնաց դուրս թռչեր, երբ նա հանկարծ լսեց ֆշոցն ու տեսավ իր վրա հառված երկու դժգույն աչքերը:

— Ո՞վ ես,— հարցրեց Բիլբոն՝ դաշույնն առաջ մեկնելով:

— Իսկ նա՞ ով է, իմ ս-ս-ս-քանչելի,— ֆշացրեց Գուլումը (նա սովոր էր ինքն իրեն դիմելու, որովհետև էլ ուրիշ մեկը չկար, որի հետ խոսեր): Նա հատուկ եկել էր իմնալաու, թե դա ով է: Հիմա նա քաղց չէր զգում, միայն հետաքրքրասիրություն. սոված լինել, նախ Բիլբոյին կճանկեր, իսկ հետո արդեն կֆշար:

— Ես միստր Բիլբո Բեգինսն եմ: Ես կորցրել եմ թզուկներին, կորցրել եմ կախարդին և չգիտեմ, թե որտեղ եմ: Չեմ էլ ուզում իմանալ, մենակ թե դուրս պրծնեմ այստեղից:

— Էդ ի՞նչ բ-բ-բ-ան է նրա ձեռիքն,— հարցրեց Գուլումը դաշույնին նայելով, որը նրան հաստատ դուր չեկավ:

— Թուր, պատրաստված Գոնդուլինում:

— Լս-ս-ս-տե՞ս ես,— ֆշացրեց Գուլումը և շատ քաղաքավարի դարձավ:— Չնս-ս-ստե՞ս արդյոք, իմ ս-ս-ս-քանչելի, մի քիչ չզրու-ցե՞ս-ս-ս նրա հետ: Ինչպե՞ս-ս-ս եմ դուր գալիս-ս-ս նրան հանելուկները: Գուցե դո՞ւր եմ գալիս-ս-ս:

Գուլումն աշխատում էր որքան կարելի է բարեհամբույր պահել իրեն, համենայն դեպս մի որոշ ժամանակ, մինչև որքան հնարավոր է շատ բան պարզեր թրի և հոբիտի մասին. իսկապե՞ս նա մենակ է և կարելի՞ է արդյոք նրան ուտել-լ, և արդյոք չի՞ սովածացել ինքը՝ Գուլումը: Հանելուկներ, ահա թե ինչ անցավ նրա մտքով: Հանելուկներ հորինել, մեկ-մեկ էլ շատ հազվադեպ պատասխանն ասել՝ միակ խաղն էր, որ նրան վիճակվել էր խաղալ շատ վաղուց, ուրիշ հրաշալի գազանների հետ, որ նստած էին իրենց բներում: Այդ ժամանակվանից նա կորցրել էր իր բոլոր բարեկամներին, աքսորական դարձել, մնացել մենակ և սողացել խո՞ր-խոր, լեռան ամենամուտք խորքը:

— Լավ,— ասաց Բիլբոն, որոշելով համակերպվել, մինչև որքան կարելի է շատ բան իմանա այդ արարածի մասին՝ միայնա՞յ է նա, չա՞ր է արդյոք, գորիներին բարեկամ է:— Առաջ դու սկսիր,— ավելացրեց նա, որովհետև ինքը ոչինչ մտածել չէր հասցրել:

Եվ Գուլումը ֆշացրեց.

Արմատներ ունի անտեսանելի,
Բարդուց էլ բարձր է մի քանի անգամ,
Անվերջ բարձրանում, բարձրանում է վեր,
Չի աճում սակայն:

— Դե դա հեշտ է,— ասաց Բիլբոն:— Երևի լեռն է:

— Տես-ս ինչ-չ-չ 2-2-շուտ գլխի ըն-կավ: Թող մեր մեջ մրցում լինի: Եթե իմ ս-ս-սքանչելին հարցնի, իսկ նա չպատասխանի, իմ ս-ս-ս-քանչելին նրան կուտի: Եթ-թե նա հարցնի մեզ-զ-զ, իսկ մենք չիմանանք, մենք կ-կանենք այն, ինչ նա խնդրի, լ-լ-լա՞վ: Մենք նրան ցույց կտանք ճանապարհը, իմ ս-ս-քանչելի:

— Համաձայն եմ,— ասաց Բիլբոն, չհամարձակվելով հրաժարվել և հուսահատորեն փորձելով հանելուկ մտածել, որն իրեն ուսելուց փրկեր:

Կարմիր բլուրների վրա
Երեսուն ճերմակ նժույզներ
Միանում են իրար
Ու բաժանվում,
Հետո անշարժ սպասում
Նույնի կրկնությանը:

Ահա բլուրը, ինչ նա կարողացավ քամել իրենից. «ուտել» բառը նրան խանգարում էր մտածել: Հանելուկը հին էր, և Գոլլումն, իհարկե, պատասխանը գիտեր մեզնից էլ ոչ վատ:

— Հ-հ-հին է,— Ֆշշացրեց նա:— Ատամները... Ատամները... իմ ս-ս-սքանչելի... Մերը վ-վ-վեցն է... Ապա նա երկրորդ հանելուկն առաջադրեց.

Ձայն	չունի,	բայց	կանչում	է,
Թևեր	չունի,		թռչում	է,
Կոկորդ	չունի՝		ոռնում	է,

Ձեռքեր չունի՝ բռնում է:

— Մի րոպե...— ճչաց Բիլբոն, որի ականջներում առաջվա նման հնչում էր «ուտել» բառը: Բարեբախտաբար, ինչ-որ նման բան նա երբևէ լսել էր և հիմա հիշողությունը լարեց ու պատասխանեց.

— Քամին, հասկանելի է, քամին... Նա այնքան գոհ էր իրենից, որ հետևյալ հանելուկն ինքը հնարեց: «Թող տանջվի գարշելի արարածը»,— մտածեց նա:

Մի հսկա աչք է
Երկնքում շողում,
Մի փոքրիկ աչք է խոտերում դողում:
Մեծ աչքը նայեց
Եվ ուրախ ասաց.
«Եղբայրիկս է»:

— Ս-ս-ս,— շվվացրեց Գոլլումը: Նա այնքան վաղուց էր ապրում գետնի տակ, որ մոռացել էր այդպիսի բաների մասին: Բայց երբ Բիլբոն արդեն սկսեց հուսալ, որ անճոռնի արարածը տանուկ է տվել, Գոլլումը հիշողության մեջ վերականգնացրեց այն հեռավոր ժամանակները, երբ ինքը տատիկի հետ ապրում էր բնում, գետի ափին:

— Սը՛-ս-ս, իմ ս-ս-քանչելի,— սուլեց նա,— խատուտիկը, ահա թե ինչ: Բայց այդպիսի առօրեական, վերգետնային հանելուկները ձանձրացրին նրան: Միաժամանակ հիշեցրին այն օրերի մասին, երբ նա այսպես միայնակ չէր, այսքան զգվելի չէր, չէր թաքնվում, պահ չէր մտնում: Եվ նրա տրամադրությունը փչացավ: Եվ հետոն էլ սովածացավ: Այդ պատճառով էլ այս անգամ ավելի խարդախ հանելուկ մտածեց.

Ոչ կարող ես շոշափել,
Ոչ էլ կարող ես տեսնել,
Ոչ գույն ունի, ոչ էլ համ,
Լռություն է անսահման:
Տարածվում է երկնքում
Անպարագիծ և անհուն,
Նրանով է ամեն ինչ սկսվում և վերջանում:

Ի դժբախտություն Գոլլումի, Բիլբոն ինչ-որ ժամանակ լսել էր այս տեսակ մի բան, և համենայն դեպս պատասխանը լեզվի ծայրին էր.

— Խավարը,— վրա բերեց նա, առանց նույնիսկ ծոծրակը քորելու կամ էլ մատը ճակատին դնելու:

Անդուռ, անճեղք կլոր մի տուն,
Մեջը՝ դեղին ոսկու կտոր,—

ասաց Բիլբոն հենց այնպես, որպեսզի ժամանակը ձգի, մինչև իսկականից անլուծելի մի բան հնարի: Նա մտածեց, թե հանելուկը բավականաչափ մաշված է, և աշխատեց արտահայտել գոնե նոր բառերով: Բայց Գոլլումի համար հանելուկը անսպասելիորեն դժվար դուրս եկավ: Գոլլումը սուլում էր ու ֆշշացնում, փնջում, բայց ոչ մի կերպ չէր կարողանում գլխի ընկնել:

Բիլբոն արդեն սկսեց համբերությունից դուրս գալ:

— Դե ինչ,— ասաց նա:— Քո արձակած հնչյուններից կարելի է ենթադրել, որ պատասխանը «թշշացող թեյնիկն է»:

— Ուղեղը 2-2-շարժել, թող մեզ-զ-զ ժամանակ տա, ուղեղը 2-2-շարժել, իմ ս-ս-քանչելի:

— Դե՞,— կրկնեց Բիլբոն, գտնելով, որ բավականին ժամանակ է տվել «ուղեղը 2-2-շարժելու համար»:— Ասա պատասխանը:

Եվ այստեղ Գոլլումը հանկարծ հիշեց իր մանկությունը, թե ինչպես բներից ձվեր էր գողանում և հետո, ափին նստած, իր տատիկին սովորեցնում էր ծծել դրանց պարունակությունը:

— Ս-ս-սուլ-սուլեց նա:— Ս-ս-սու, այ թե ինչ: Եվ արագ առաջադրեց.

Առանց օդի է ապրում,
Շիրիմի պես սառն է անվերջ,
Չրահ ունի՝ չի զնգում,
Ջուր չի խմում՝ ջրի մեջ:

Հիմա էլ Գոլլումն էր իր հերթին հանելուկը չափազանց հեշտ համարում, որովհետև պատասխանը միշտ պտտվում էր գլխում: Ուղղակի այդ րոպեին ձվի մասին հանելուկը նրան այնքան էլ հուզել, որ ավելի դժվարը չկարողացավ հորինել: Բայց դա խեղճ Բիլբոյին անլուծելի թվաց, ախր նա ջանում էր, երբ կարողանում էր, ջրի հետ գործ չունենալ: Դուք, իհարկե, գիտեք պատասխանը կամ ուղղակի կռահեցիք, քանի որ նստած եք հարմարավետ տանը, և ոչ ոք չի պատրաստվում ձեզ ուտել: Բիլբոն հազաց մեկ-երկու անգամ, բայց պատասխանը չհայտնվեց:

Շուտով Գոլլումն սկսեց բավականությունից սուլել՝ ինքն իրեն դիմելով.

— Հետաքրքիր է, 2-2-շա՞տ համով է արդյոք նա: Շ-շա՞տ հյուրեղ է արդյոք: Կարելի՞ է խ-խ-խրթ-խրթացնել:

Նա նորից խավարի միջից աչքերը չռեց Բիլբոյի վրա:

— Մի րոպե,— աղաչեց հոբիտը՝ տերևի պես դողալով:— Կես րոպե: Չէ որես քեզ ժամանակ տվեցի ուղեղդ շարժելու:

— Թող 2-2-շտապի, 2-2-շտապի,— խոսեց Գոլլումը և սկսեց նավակից տեղափոխվել ափ, Բիլբոյին մոտիկ: Բայց հազիվ էր նա իր նիհար, սարդային ձեռն իջեցրել ջրի մեջ, երբ այնտեղից դուրս թռավ վախեցած ձուկը և շրմփաց Բիլբոյի ոտքին:

— Վա՛խ,— ճչաց նա:— Ինչ սառն է, լարծուն...— Եվ այստեղ փայլատակեց նրա գլխում:— Ձո՛ւկ,— գոռաց նա:— Ձո՛ւկ, ձուկ:

Գոլլումը խիստ հիասթափվեց: Իսկ Բիլբոն, վայրկյան իսկ չկորցնելով, նոր հարց տվեց, այնպես որ Գոլլումը ուզած-չուզած ստիպված էր ետ դառնալ նավակ և մտածել:

Երկու ոտք՝
Երեք ոտքի վրա,
Իսկ անտոը բերանում,
Չորս ոտք վազքով գալիս են
Անտի հետ հեռանում:

Նա այնքան էլ հաջող ժամանակ չընտրեց այդ հանելուկի համար, բայց շատ էր շտապում: Մի այլ դեպքում Գոլլումը հարկադրված կլիներ գլուխ ջարդել այդ հանելուկի վրա, բայց հիմա, երբ հենց նոր խոսք բացվեց ձկան մասին, «անտոքը» բավական հեշտ հասկացվեց, իսկ մնացածը գնաց հալած յուղի պես. «Մարդը նստած է աթոռակի վրա և ձուկ է ուտում: Մոտ է վազում կատուն, ձուկը փախցնում»: Գոլլումը որոշեց, որ հասել է իսկապես ուժերից վեր ու զարգանդեցնող որևէ բան հարցնելու ժամանակը: Եվ ահա թե ինչ հարցրեց նա.

Ոչնչացնում է շուրջը ամեն ինչ՝
Ծաղիկ ու գազան, շենքեր ու ծառեր,
Երկաթը ծամում, պողպատ լափում,
Փոշի է դարձնում ժայռեր ու սարեր.

Եվ ոչ մի քաղաք, և ոչ մի արքա
Հզորություն և ուժ չունի այդքան:

Խեղճ Բիլբոն նստել ու մտքում վերհիշում էր բոլոր հրեշների ու ճիվաղների անունները, որոնց մասին լսել էր, բայց դրանցից ոչ մեկն այդքան ավերածություն միանգամից պատճառել չէր կարող: Նա այնպիսի զգացում ուներ, որ իրբ թե պատասխանը բոլորովին էլ հրեշի հետ կապված չէ, որ ինքը գիտե այն, բայց գլուխն այլևս հրաժարվում է աշխատելուց: Նա խուճապի մեջ ընկավ, իսկ դա միշտ խանգարում է մտածելուն: Գոլլումը նորից թաթերը նավակողից դուրս գցեց, թռավ ջուրը և ճլմփացրեց դեպի ասի: Նրա աչքերը գնալով մոտենում էին Բիլբոյին... Բիլբոյի լեզուն կապ ընկավ. նա ուզում էր ճչալ. «Մի քիչ էլ ժամանակ տուր... ժամանակ տուր...»: Բայց կոկորդից միայն ծվոց դուրս եկավ. «Ժամանակ... ժամանակ»:

Պատահականությունը փրկեց Բիլբոյին: Պատասխանն էլ հենց դա էր:

Գոլլումի հույսերը նորից ի դերև ելան: Նա սկսում էր բարկանալ, խաղը նրան ձանձրացրել էր, նա սովածացել էր: Այս անգամ նա չվերադարձավ նավակ, այլ նստեց մթության մեջ, Բիլբոյի կողքը: Դա Բիլբոյին վերջնականապես հավասարակշռությունից հանեց և զրկեց մտածելու ընդունակությունից:

— Թ-թ-թող մեկ անգամ էլ հարցնի, թ-թ-թող, թ-թ-թող,— ասաց Գոլլումը:

Բայց Բիլբոն ուղղակի ի վիճակի չէր մտածելու, երբ կողքին նստած էր այդպիսի նողկալի, թաց ու սառը արարած և անընդհատ ձեռք էր տալիս ու շոշափում: Բիլբոն քորում էր ինքն իրեն, Բիլբոն կսմթում էր ինքն իրեն, ոչինչ չէր ստացվում:

— Թ-թ-թող հարցնի մեզ-զ-զ, հարցնի մեզ-զ-զ,— սուլում էր Գոլլումը: Բիլբոն մեկ անգամ էլ կսմթեց ինքն իրեն, թփթփացնելով շոշափեց իրեն բոլոր կողմերից, սեղմեց դաշույնի կոթը և նույնիսկ մյուս ձեռքով գրպանը փորփրեց: Այնտեղ նա շոշափեց մատանին, որ գտել էր թունելում և որի մասին մոռացել էր:

— Ի՞նչ կա իմ գրպանում,— հարցրեց նա բարձրաձայն:

Նա հարցն այնպես տվեց, ինքն իրեն, բայց Գոլլումը կարծեց, թե հարցն իրեն է վերաբերում, և սարսափելի հուզվեց:

— Անաս-ս-սնիվ է, անաս-ս-սնիվ է... — Սուլեց նա:— Ճիշտ չէ՞, իմ ս-ս-սքանչելի, անաս-ս-սնիվ է, չէ՞, հարցնել մեզ-զ-զ՝ ինչ կա նրա գարշ-շ-շելի գրպանիկում:

Բիլբոն հասկանալով, թե ինչ տեղի ունեցավ, ավելի լավ բան չգտավ, քան մեկ անգամ էլ կրկնել բարձր ձայնով.

— Ի՞նչ կա իմ գրպանում:

— Ս-ս-ս,— սուլեց Գոլլումը: — Թող մեզ-զ-զ թողնի երեք անգամից պատաս-ս-սխանել:

— Լավ, մտածիր,— ասաց Բիլբոն:

— Ձե՞ռքը,— հարցրեց Գոլլումը:

— Ճիշտ չէ,— պատասխանեց Բիլբոն՝ ժամանակին ձեռքը գրնապից հանելով: — Նորից...

— Ս-ս-ս,— սուլեց Գոլլումը: Նա ավելի հուզվեց և սկսեց հիշել բոլոր առարկաները, որ պահում էր իր գրպաններում՝ ձկան փուշ, գորիկների ատամներ, թաց խիտունջներ, չղջիկի թևի կտոր, ժանիքներ սրելու քար և այլ անպետքություններ:

— Դանակ,— վերջապես դժվարությամբ պատասխանեց նա:

— Չիմացար,— ուրախացավ Բիլբոն, որ վաղուց կորցրել էր դանակը:— Մնաց վերջինը:

Գոլլումը հիմա առավել ծանր վիճակում էր, քան ձվի մասին հանելուկից հետո: Նա Ֆշշում էր ու թքում, ետ ու առաջ օրորվում և թաթերով շրմփացնում գետնին, կուչունձիգ անում, բայց ոչ մի կերպ չէր կարողանում վճռել և վերջին անգամ պատասխանել:

— Դե, շուտ արա,— շտապեցրեց Բիլբոն: — Ես սպասում եմ:

Նա խրոխտացավ և իրեն վստահ ու առույգ ձևացրեց, իսկ իրականում վախենում էր մտածել, թե ինչով կվերջանա խաղը, անկախ այն բանից՝ Գոլլումը կպատասխանի, թե ոչ:

— Ժամանակը լրացավ,— հայտարարեց նա:

— Առաս-ս-ս-սան կամ ոչինչ,— ծղրտաց Գոլլումը: Նա այնքան էլ ազնիվ չվարվեց. երկու պատասխան միանգամից ասելն էլ մի բան չէ:

— Ոչ մեկը, ոչ էլ մյուսը,— թեթևացած գոռաց Բիլբոն:

Նույն րոպեին նա ոտքի թռավ, մեջքով հենվեց ժայռին և դաշույնն առաջ մեկնեց: Նա, իհարկե, գիտեր, որ հանելուկների խաղը շատ հին է և սուրբ է համարվում, նույնիսկ չար էակները չեն համարձակվում այդ խաղի մեջ խարդախություն անել: Բայց Բիլբոն այդ լպրծուն արարածին չէր վստահում. հուսահատությունից նա կարող էր ինչ ասես անել: Ցանկացած պատրվակով կարող էր պայմանը խախտել: Դե, վերջին հանելուկն էլ, տեղն եկավ, ասենք, ըստ խաղի հին կանոնների, չէր կարող իսկական համարվել:

Բայց Գոլլումը առայժմ Բիլբոնի վրա չէր հարձակվում: Նա տեսնում էր Բիլբոնի ձեռքի գեղքը և հանգիստ նստած էր՝ դողալով ու ինչ-որ բաներ շշնջալով: Վերջապես Բիլբոն չդիմացավ.

— Դե,— ասաց նա,— ո՞ր մնաց խոստումդ: Իմ գնալու ժամանակն է: Խոստացել ես ճանապարհը ցույց տալ՝ ցույց տուր:

— Մենք խոս-ս-ստացե՞լ ենք, իմ ս-ս-սքանչելի, գարշ-շ-շելի միս-ս-ստր Բեգինս-սին ճանապարհ դուրս-ս-ս բերել: Հնարավոր է: Բայց ինչ-չ-չ կա

Նրա գրպանիկում: Առաս-ս-սան չէ, իմ ս-ս-սքանչելի, բայց և դատարկ էլ չէ, դատարկ էլ չէ: Գոլլմ...

— Դա քեզ չի վերաբերում,— պատասխանեց Բիլբոն:— Խոստումը պետք է կատարել:

— Նա շ-շ-շատ ջղային է, իմ ս-ս-սքանչելի, ինչ էլ շ-շ-շտապում է,— սուլեց ու ֆշշացրեց Գոլլումը:— Թող ս-ս-սպաս-ս-սի, ս-ս-սպաս-ս-ս-ի: Մենք չենք կարող այդպես հապճեպ գնալ թունելներով: Մենք պետք է ն-ն-նախ որոշ-շ-շ կարևոր բան վերցնենք:

— Այդ դեպքում՝ արագ,— հրամայեց Բիլբոն, ուրախանալով, որ Գոլլումն ուղղակի պատրվակ է փնտրում, որպեսզի ծլկի և չվերադառնա: Ի՞նչ է փնթփնթում: Ի՞նչ մի կարևոր բան է պահել այդ սև լճում: Բիլբոն սխալվում էր: Գոլլումը մտադիր էր վերադառնալ: Նա շատ էր սովածացել ու զայրացել: Այդ չար, թշվառ էակի գլխում մի պլան էր ծնվել:

Կղզյակում, որի մասին Բիլբոն ոչինչ չգիտեր, Գոլլումը պահում էր ամեն տեսակի ոչնչություն, բացի դրանից՝ շատ օգտակար, շատ գեղեցիկ և շատ կախարդական մի բան: Մատանի՝ ոսկե թանկարժեք մատանի:

— Իմ ծննդյան օրվա նվերը,— շշնջաց նա, ինչպես սիրում էր շշնջալ ինքն իրեն անվերջանալի ու անթափանց խավար օրերին:— Ահա հիմա ինչ է մեզ-զ-զ հարկավոր, մեզ-զ-զ հարկավոր...

Բանն այն է, որ այդ մատանին հասարակ մատանի չէր, այլ կախարդական. նա, ով դա դնում էր մատին, անտեսանելի էր դառնում, և միայն արևի պայծառ լույսի տակ կարելի էր ստվեր տեսնել, այն էլ շատ թույլ, անհրակա:

— Նվեր, ս-ս-ստացած ծննդյան օրը, իմ ս-ս-սքանչելի:

Այդպես նա միշտ հավատացրել էր ինքն իրեն, բայց ո՞վ գիտե Գոլլումն ինչ ճանապարհով էր ձեռք բերել դա այն վաղեմի ժամանակներում, երբ այդպիսի մատանիներ աշխարհում շատ կային: Հավանաբար Վարպետն ինքը՝ մատանիների տիրակալն էլ դա չգիտեր: Սկզբում Գոլլումը մատանին կրում էր մատին, հետո ձանձրացավ և սկսեց տոպրակի մեջ դրած կախել վզից, մինչև մատանին տրորտեց մաշկը և վերք բացեց: Այժմ Գոլլումը մատանին սովորաբար պահում էր իր կղզյակում, քարերի տակ, և շարունակ ստուգում էր՝ տեղո՞ւմ է արդյոք: Նա մատանին կրում էր շատ հազվադեպ, երբ արդեն բոլորովին ի վիճակի չէր դիմանալ առանց դրա, կամ երբ շատ սոված էր լինում, իսկ ձկից զզվանք էր զգում: Այդ ժամանակ նա գաղտագողի գնում էր մութ թունելներով դեպի վեր և հետևում գորլիներին: Երբեմն սիրտ էր անում ծիկ անել այնտեղ, որտեղ ջահեր էին վառվում. աչքերը լույսից ցավում էին, կկոցում էր, բայց ինքն անվտանգության մեջ էր: Այո, լիակատար անվատանության մեջ: Ոչ ոք նրան չէր տեսնում, չէր նկատում, և հանկարծ՝ հ-հոպ... Նրա մատները խրվում էին գորլիների կոկորդը: Ընդամենը մի քանի ժամ առաջ նա դրեց մատանին և մի փոքրիկ գորլին բռնեց: Սա ինչպե՞ս էր ծղրտում: Նրանից

մի երկու ոսկոր էր մնացել, բայց հիմա Գոլլումը որևէ ավելի նուրբ բան էր ուզում:

— Լիակատար անվտանգության մեջ-ջ-ջ,— շշուշում էր քթի տակ:— Նա մեզ-զ-զ չի տես-ս-սնի, ճիշտ է, իմ ս-ս-սքանչելի: Ոչ, չի տեսնի և գարշ-շ-շելի թրիկը մեզ-զ-զ համար ս-ս-սարսափի չի լինի, ս-ս-սարսափելի չի լինի:

Ահա ինչպիսի պլաններ էին վխտում նրա չար ուղեղում, երբ հանկարծ նա ճլմփաց դեպի նավակն ու անհետացավ մթության մեջ: Բիլբոն որոշեց, որ նա չքվեց, էլ չի գա: Բայց այնուամենայնիվ մի քիչ սպասեց. միևնույն է, նա չէր պատկերացնում, թե ինչպես պետք է այստեղից դուրս գա:

Հանկարծ մի սուր ճիչ լսեց: Փշաքաղվեց: Ինչ-որ տեղ, ոչ այնքան հեռու, մթության մեջ, Գոլլումը հայիոյում էր ու ողբում: Նա կղզյակում էր, մեկ այստեղ էր քանդում, մեկ այնտեղ, փնտրում էր ու փորփորում, բայց ապարդյուն:

— Ի՞նչ է եղել, ո՞ր է կորել,— լսեց Բիլբոն:— Կորել է, իմ ս-ս-սքանչելի, կորել է...

— Ի՞նչ է պատահել,— ծայն տվեց նրան Բիլբոն:— Ի՞նչն է կորել:

— Թող մեզ-զ չ-չ-չհարցնի,— ծղրտաց Գոլլումը:— Նրան չ-չ-չի վերաբերում: Գոլլմ: Կորել է, գոլլմ, գոլլմ, գոլլմ...

— Ես էլ եմ կորել,— անհամբերությամբ գոռաց Բիլբոն:— Եվ ուզում եմ գտնվել: Ես քեզ հաղթել եմ, ախր դու խոստացար: Հիմա եկ այստեղ: Եկ և ինձ դուրս հանիր, իսկ հետո կշարունակես փնտրել... Ինչպիսի դժբախտության մեջ էլ որ լինեք Գոլլումը, միևնույն է, Բիլբոն չէր կարող նրան կարեկցել: Եվ հետո այդ իրից, որ Գոլլումին այդպես ծայրահեղորեն անհրաժեշտ էր, հաստատ լավ բան չսպասես:

— Եկ այստեղ,— ավելի բարձր գոռաց Բիլբոն:

— Ոչ, ոչ, իմ ս-ս-սքանչելի, թող ս-ս-սպասի,— սուլեց Գոլլումը:— Մենք դեռ կփնտրենք, այն կորել է, գոլլմ:

— Բայց դու այդպես էլ չպատասխանեցիր վերջին հարցին, իսկ խոստումը պետք է կատարել,— պնդեց Բիլբոն:

— Վերջին հարցը,— կրկնեց Գոլլումը: Եվ հանկարծ խավարից սուր ֆշռոց լսվեց.— Ի՞նչ կա նրա գրպանում, թող աս-ս-սի, ն-ն-նախ թող աս-ս-սի:

Ընդհանրապես Բիլբոն Գոլլումին հանելուկի պատասխանը չասելու պատճառ չունեք: Բայց նրան ջղայնացնում էր այդ ամբողջ քաշքշուկը: Վերջ ի վերջո ինքը հաղթել է, համարյա ազնվորեն և ընդ որում կյանքը վտանգի ենթարկելով:

— Հանելուկներին պատասխանում են մտածելով, ոչ թե հուշելով,— առարկեց նա:

— Բայց հանելուկը անաս-ս-սնիվ էր,— պատասխանեց Գոլլումը: Հարց-
ց-ց էր, ոչ թե հանելուկ, իմ ս-ս-սքանչելի, ոչ թե հանելուկ:

— Դե, քանի որ մենք անցանք հասարակ հարցերի, ապա առաջինը ես
հարցրի,— պատասխանեց Բիլբոն:— Ի՞նչ ես կորցրել:

— Ի՞նչ կա նրա գրպանում, իմ ս-ս-սքանչելի:— Սուլոցն ու Ֆշոցը
հանկարծ այնքան բարձր ու սուր հնչեցին, որ Բիլբոն նայեց այն կողմը և,
ի սարսափ իրեն, տեսավ ուղիղ իր վրա հառված երկու վառվող կետեր:
Որքան աճում էր Գոլլումի կասկածը, այնքան նրա աչքերն ավելի ուժեղ
էին վառվում:

— Ի՞նչ ես կորցրել,— համառեց Բիլբոն:

Այժմ Գոլլումի աչքերը վառվում էին կանաչ կրակով, և երկու կրակներն
սկսեցին մոտենալ սպառնալից արագությամբ: Գոլլումը կատաղորեն
թիավարում էր դեպի ասի: Կորուստը և կասկածը կատաղության
այնպիսի ակիք բարձրացրին նրա հոգում, որ հիմա նրա համար ոչ մի
դաշույն սարսափելի չէր: Բիլբոն, իհարկե, չէր կարող կռահել, թե ինչն է
այդպես կատաղեցրել այդ զգվելի էակին, բայց հասկանում էր, որ ամեն
ինչ կորած է, Գոլլումը հիմա իրեն սպանելու է: Նա շրջվեց և սկսեց
փախչել, առանց ճանապահիրը տեսնելու, մուժ թունելով, որը նրան բերել
էր այստեղ: Նա ջանում էր պատին մոտիկ մնալ և ձեռքով շոշափում էր
այն:

— Ի՞նչ կա նրա գր-ր-րպանում,— Բիլբոն բարձր Ֆշոց և ճողփյուն լսեց,
երբ Գոլլումը նավակից թռավ ջուրը:

— Հետաքրքիր է, ի՞նչ կա իմ գրպանում,— ինքն իրեն հարցերց Բիլբոն
ու ոտքերը քարշ տալով գնաց թունելով: Նա ծախ ձեռքը մտցրեց գրպանը:
Սառը մատանին սահեց ձգված մատի վրա:

Ֆշոցը լսվում էր արդեն թիկունքից, շատ մոտիկ: Բիլբոն շրջվեց և
տեսավ կանաչ լապտերներ՝ Գոլլումի աչքերը: Վախից ամբողջապես
զուլխը կորցնելով՝ Բիլբոն նետվեց առաջ, ոտքը կպավ մի արմատի,
սայթաքեց և բերանքսիվայր փռվեց գետնին:

Մի վայրկյանում Գոլլումը հասավ նրան: Բայց նախքան Բիլբոն
կհասցներ գոնե որևէ բան անել՝ շունչ քաշել, ոտքի թռչել կամ դաշույնը
հանել, Գոլլումը վազելով անցավ կողքից, ոչ մի ուշադրություն չդարձնելով
նրա վրա և շշուկով հայհոյելով ու ողբալով:

Դա ի՞նչ էր նշանակում: Գոլլումը մթության մեջ գերազանց էր տեսնում:
Նույնիսկ հիմա, ետ մնալով, Բիլբոն առջևում նշմարում էր Գոլլումի
աչքերի դժգույն լույսը: Բիլբոն Դժվարությամբ վեր կացավ և զգուշորեն
գնաց Գոլլումի ետևից: Նրան ուրիշ ոչինչ չէր մտում անելու: Հո նորից ետ
չէ՞ր սողա դեպի լիճը: Մեկ էլ տեսար, Գոլլումն իրեն դուրս բերեց սորևէ
տեղ, ազատ աշխարհը, ինքն էլ այդ բանը չիմանալով:

— Կրեժ: Կրեժ,— շնչաց Գոլլումը:— Կրեժ: Բեգինս-ս-սից: Այն կորել է: Ի՞նչ կա նրա գրպանում: Մենք կռ-ռ-ռահում ենք, իմ ս-ս-սքանչելի, կռ-ռ-ռահում ենք: Բեգինս-ս-սը գտել է, գտել է ծննդյան օրվա նվերը...

Բիլբոն ականջները սրեց: Վերջապես, ինքն էլ սկսեց գլխի ընկնել: Նա արագացրեց քայլերը, հասավ Գոլլումին և գնաց նրա ետևից, անվտանգ տարածություն թողնելով իր և նրա միջև: Սա առաջվա նման արագ չլմփացնելով գնում էր առաջ, առանց ետ նայելու և գլուխը տարուբերելով:— Բիլբոն դա նկատում էր պատերի վրա ընկնող թույլ շողքից:

— Ծննդյան օրվա նվեր... Չ-չ-չարագործություն... Ինչպես կորցրինք այն, իմ ս-ս-սքանչելի, պարս-սս է, պարս-ս-ս է: Երբ վերջին անգամ այս-ս-ստեղ ոլորեցինք գարշելի ճղղանի վիզը: Այդպե՛ս-ս-ս, այդպե՛ս-ս-ս: Նա լքեց մեզ-զ-զ այս-ս-քան տարիներից հետո: Նա անհետացել է, հափշտակված է, գոլլմ:

Անսպասելիորեն Գոլլումը նստեց և լաց եղավ: Հոգեմաշ ու խղճալի էր լսել, թե ինչիպիսի շվվացնող, բխկխբկացող, ճլմփացող ձայներ էր հանում: Բիլբոն կանգ առավ ու սեղմվեց պատին: Աստիճանաբար Գոլլումը դադարեց լաց լինելուց և նորից սկսեց քրթմնջալ: Ըստ երևույթին նա ինքն իր հետ էր վիճում:

— Փնտրել պետք է-է-է, պետք է-է-է: Մենք չենք կարող հիշ-շ-շել բոլոր տեղերը, որտեղ լինում ենք: Անօգուտ է: Մատանին Բեգինս-ս-սի գրպանում է: Գարշ-շ-շելի ս-ս-ստահակն է գտել, մենք համոզված ենք: Ոչ, մենք միայն կռ-ռ-ռահում ենք, իմ ս-ս-սքանչելի, միայն կռ-ռ-ռահում ենք: Մենք չենք կարող իմանալ, մինչև չբռնենք գարշ-շ-շելի արարածին, մինչև նրա վիզը չոլորենք: Ախր նա չգիտի, թե ինչ կարող է անել նվերը, ճի՞շտ է: Նա այն ուղղակի կպահի գրպանում: Նա չէր կարող հեռու գնալ: Նա կորել է, գարշ-շ-շելի, խորամանկ արարածը: Նա է-է-էգիտի այս-ս-ստեղից գնալու ճանապարհը, է-է-էգիտի, նա ինքն էր ասում: Այո, աս-ս-սում էր, բայց նա խորամանկ է: Նա պատասխանը չի աս-ս-սում, իմ ս-ս-սքանչելի... Չի աս-ս-սում, թե ինչ կա իր գրպանում: Նա կարող-դացել է ներս մտնել, ուրեմն և կկարողանա դուրս-ս-գալ: Նա փախել է դեպի ետևամուտքը: Ուրեմն մենք էլ կգնանք այն կողմը: Այնտեղ նրան գոբլինս-ս-սները կճանկեն: Այնտեղից նա դուրս-ս-ս է-է-է գա, իմ ս-ս-սքանչելի: Գոբլինս-ս-սները... Եթե մեր գանձը նրա մոտ է, ապա գոբլինս-ս-սներին բաժին կընկնի, գոլլմ... Նրանք գլխի կընկնեն, թե ինչ կարող է անել մատանին: Մենք երբեք անվտանգ չենք լինի, երբեք, գոլլմ... Գոբլինս-ս-սը կղնի մատին ու կանհետանա: Գոբլինս-ս-սը այս-ս-ստեղ կլինի, իս-ս-սկ մենք նրան չենք տես-ս-սնի: Նույնիսկ մեր ս-ս-սուր աչքերը նրան չեն նկատի: Եվ այն ժամանակ գոբլինս-ս-սը կձևացնի, գաղտնի կմոտենա և կճանկի մեզ-զ-զ, գոլլմ... Բավական է. շ-շ-շատախոսել, իմ ս-ս-սքանչելի, շ-շ-շտապիր: Եթե Բեգինս-ս-սը գնացել է այն կողմը, պետք է հաս-ս-սնել: Առաջ գնալ... քիչ է մնացել... Ծ-շ-շ-շուտ...

Գոլլումը վեր թռավ, ասես նրան վեր նետեցին, և անհավատալի արագությամբ չլմփացնելով գնաց առաջ: Բիլբոն շատպեց նրա ետևից, առաջվա պես զգուշություն պահպանելով: Այժմ նրա գլխավոր հոգսն էր նորից չըմփալ և աղմուկ չբարձրացնել: Նրա գլխում փոթորիկ էր՝ հույսն ու հուսահատությունը խառնվել էին իրար: Պարզվում է, որ իր գտած մատանին կախարդական է: Այն անտեսանելի է դարձնում: Բիլբոն, իհարկե, հնագույն հեքիաթներից գիտեր այդպիսի բաների մասին, բայց ինչ-որ դժվար էր հավատալ, որ դու ինքդ պատահաբար այդպիսի մատանի ես գտել: Սակայն, հավատաս թե չհավատաս, միևնույն է, Գոլլումն իր լապտեր-աչքերով թռավ անցավ նրա կողքով:

Նրանք անընդհատ առաջ էին վազում. Գոլլումը՝ ճլրմփ, ճլրմփ, առջևից, Ֆշշացնելով ու նախատելով, Բիլբոն ետևից, անշշուկ, որպես իսկական հոբիտ: Շուտով նրանք վազելով հասան այն տեղին, ուր երկու կողմերից, ինչպես Բիլբոն նկատել էր դեռևս դեպի լիճը գնալիս, կողմնային ուղիներ էին բացվում: Գոլլումը իսկույն սկսեց հաշվել դրանք. «Մեկը ձախից, մեկը աջից, այդպես-ս-ս: Երկուս-ս-սը աջից, երկուս-ս-սը ձախից, այդպես-ս-ս, այդպես-ս-ս»: Եվ այլն:

Հաշվելով, նա ավելի ու ավելի դանդաղ էր շարժվում առաջ: Քայլերն ավելի անվստահ էին դառնում, իսկ քրթմնջոցն ավելի լացակումած. ախր նա գնալով ավելի էր հեռանում ջրից, և դա սարսափելի էր նրա համար: Գորբիկներն ամեն րոպե կարող էին հայտնվել բոլոր կողմերից, մատանին էլ կորցրել էր: Վերջապես նա կանգ առավ ձախ կողմից բացվող մի ոչ մեծ անցի առջև: «Յոթերորդը աջից, այդպես-ս-ս... վեցերորդը ձախից, այդպես-ս-ս...— շնջում էր նա:— Այս-ս-ստեղ: Ետնամուտքի ճանապարհը, այդպես-ս-ս: Անցումն այս-ս-ստեղ է...»:

Նա նայեց այնտեղ ու ետ թռավ:

— Մենք չենք համարձակվի առաջ գնալ, իմ ս-ս-սքանչելի, չենք համարձակվի: Այնտեղ գորբիկս-ս-սներ են, շատ գորբիկս-ս-սներ: Մենք նրանց հոտն զգում ենք: Ս-ս-ս... Ինչպե՞ս-ս-ս վարվենք: Ջրի տարածները, գետնի տակն անցնեն դրանք... Հարկավոր է ս-ս-սպաս-ս-սել և նայել:

Այսպիսով ամեն ինչ խափանվեց. Գոլլումը համենայն դեպս Բիլբոյին ճիշտ ճանապարհի հանեց, բայց Բիլբոն չէր կարող անցնել...

Մուտքի մոտ, երկտակված ու գլուխը ծնկներին խոնարհած, նստած էր Գոլլումը, նրա չքերն առկայծում էին սառը լույսով:

Բիլբոն մկից էլ զգույշ հեռացավ պատից: Բայց Գոլլումը իսկույն խշկոտեց, քթով օդ ներս քաշեց, աչքերը վառվեցին կանաչ կրակով: Նա ցածր, բայց սպառնալից Ֆշշացրեց: Գոլլումը հոբիտին տեսնել չէր կարող, բայց խավարը սրել էր նրա լսողությունն ու հոտառությունը: Նա կռացավ՝ թաթերի տափակ ափերով գետնին հենված, և վիզն առաջ մեկնեց, համարյա քթով քարե հատակին քսվելով: Նրա աչքերը թույլ լույս էին արձակում, այդ լույսի մեջ հազիվ նշմարվում էր նրա ուրվագիծը, բայց Բիլբոն զգաց, որ Գոլլումը, լարված աղեղի նման, պատրաստվեց թռիչքի:

Բիւրն ինքն էլ քարացավ տեղում և համարյա դադարեց շնչել: Նա հուսահատված էր: Անհրաժեշտ է դուրս գալ այստեղից, այս սարսափելի խավարից, քանի դեռ իր մեջ ուժ է մնացել: Հարկավոր է պայքարել: Այդ չար արարածին դաշույնով խփել, սպանել, կանխել նրան, քանի դեռ նա չի սպանել Բիւրոյին:Ոչ: Դա անազնվություն կլինի: Բիւրն անտեսանելի է, իսկ Գոլումը դաշույն չունի, ասենք նա Բիւրոյին սպանելու փորձ էլ չի արել: Եվ հետո, Գոլումն այնքան միայնակ է, այնպես դժբախտ ու լքված: Հանկարծակի Բիւրոյի սիրտը լցվեց կարեկցանքով, վախի հետ խառնված խղճահարությամբ, նա պատկերացրեց անվերջանալի անլույս օրերի շարանը, առանց լավ կյանքի որևէ հույսի՝ միայն կոշտ քար, սառը ձուկ, հավերժական վազվռուտը ու քրթմնջոց: Այս բոլորը կայծակի պես անցան Բիւրոյի մտքով, նա ցնցվեց: Եվ հանկարծ բոլորովին անսպասելի մի նոր միտք փայլատակեց նրա գլխում, և նա, ասես լցվելով վճռականությամբ ու եռանդով, թռավ...

Մարդու համար այդպիսի թռիչքը աստված գիտե, թե որքան դժվար կլիներ, բայց չէր որ դա նաև թռիչք էր դեպի անհայտություն... Բիւրն թռավ ուղիղ Գոլումի գլխավերևով՝ մի մետր բարձրությամբ և երկուսուկես մետր երկարությամբ: Նա գլուխ չէր հանում, թե ինչպես եղավ, որ գանգը չփշրեց թունելի ցածր կամարին խփելով:

Գոլումը ետ թեքվեց ու փորձեց որսալ հոբիտին, բայց ուշացավ. նրա թաթերը միայն օդ ճանկեցին, իսկ Բիւրն, վայրէջք կատարելով իր ամուր, փրչոտ ոտքերի վրա, սուրաց կողմնային մուտքով: Նա փախչում էր առանց ետ նայելու: Ֆշոցն ու նախատինքը լսվեցին Բիւրոյի ուղիղ թիկունքում, հետո դադարեցին: Չարությամբ ու հուսահատությամբ լի մի հոգեցունց ճիչ բարձրացավ: Գոլումը պարտվել էր: Առաջ վազել այլևս չհամարձակվեց: Նա տարվեց. բայց թողեց որսը և կորցրեց միակ բանը, որի վրա դրողում էր: Նրա ճիչից Բիւրոյի սիրտը վախից քիչ մնաց դուրս թռչեր, բայց նա շարունակեց փախչել: Հետո նրան հասավ արձագանքի պես թույլ, բայց սպառնալից գոռոցը. «Գո՛ղ, գո՛ղ... Բեգինս-ս-ս-սը գող է... ատելի, գարշ-շ-շ-շելի, ընդմիշ-շ-շտ, ընդմիշ-շ-շտ...»:

Հետո լռություն տիրեց: Բայց լռությունն էլ էր ահաբեկում Բիւրոյին:

«Եթե գոբլիններն այնքան մոտիկ են, որ Գոլումը նրանց հոտն առավ,— մտածեց նա,— ուրեմն լսել են նրա ճղճոցն ու հայիոյանքը: Շատ զգույշ, թե չէ այս ճանապարհի վերջը վատ կլինի»:

Անցուղին ցածր էր ու հատակը շատ վատ մշակված: Հոբիտի համար տեղը բավարար էր, բայց այնուամենայնիվ նա մի քանի անգամ ցավեցրեց ոտքերի մատները՝ ցցված քարերին խփելով: «Գոբլինների համար ցածրիկ է, համենայն դեպս գոնե խոշորների համար»,— մտածեց Բիւրն: Նա չգիտեր, որ նույնիսկ ամենախոշոր գոբլինները կարող են կռացած շարժվել հսկայական արագությամբ, ձեռքերով գետնին հենվելով:

Շուտով թեք վայրէջքը վերջացավ ու նորից վերելք սկսվեց, ավելի ու ավելի զառիվեր դառնալով: Բիլբոն ստիպված եղավ արագությունը նվազեցնել: Թունելը թեքվեց մի կողմ, այնուհետև կտրուկ իջավ ներքև, և այնտեղ, կարճ վայրէջքի վերջում, Բիլբոն լույս տեսավ, որ հաջորդ շրջադարձից էր ընկնում: Ոչ թե կարմիր, խարույկի կամ ջահի, այլ սպիտակ, ցերեկային, որ լինում է միայն բաց երկնքի տակ: Բիլբոն սկսեց վազել: Նա բառացիորեն գլորվեց ներքև, շրջվեց վերջին անկյունից և հայտնվեց մի փոքրիկ հրապարակում, որ ողողված էր արևի լույսով: Այդքան երկար խավարից հետո լույսը նրան կուրացրեց, բայց իրակիանում դա ընդամենը լույսի մի շերջ էր, որ ընկնում էր քարե մեծ բաց դռնից: Բիլբոն աչքերը թարթեց և հանկարծ տեսավ գոբլինների. նրանք, լրիվ զինված, թրերը մերկացրած, նստած էին դռան առջև, աչքերը չկտրելով դեպի դուռը եկող թունելից:

Նրանք զգոն էին, ականջները սրած, կազմ ու պատրաստ:

Գոբլինները Բիլբոյին ավելի շուտ տեսան, քան վերջինս՝ նրանց: Այո, տեսան: Պատահականորեն թե դիտմամբ՝ որոշելով իր նոր տիրոջը ֆոկուս անել, մատանին անհետացել էր: Գոբլինները հիացմունքի վայրենի ոռնոցներով նետվեցին դեպի Բիլբոն:

Կորուստի ցավն ու սարսափը պատեցին Բիլբոյին, ինչպես քիչ առաջ Գոլլումին և, դաշույնը մոռացած, նա վշտից ձեռքերը մտցրեց գրպանները: Ա՛յ քեզ ուրախություն, մատանին այնտեղ էր, ձախ գրպանում, մատը մտավ մատանու մեջ... և գոբլինները տեղներում քարացան, ոնց որ արձան: Նրանք ոչինչ չէին հասկանում. հենց նոր նա այստեղ էր և հանկարծ կորավ: Գոբլինները նորից ոռնացին, բայց այս անգամ ոչ թե հիացմունքից, այլ հիասթափությունից:

— Որտե՞ղ է նա,— ճչում էին ոմանք:

— Ետ գնաց թունել,— գոռում էին մյուսները:

— Այստեղ,— կանչում էին երրորդները:— Այնտեղ:

— Դռան ետևը նայեք,— մռնչաց գոբլինների կապիտանը:

Լսվեցին սուլոցներ, զենքերի շաչյուն, սայրերի զնգոց, գոբլինները մռնչալով ու հայիոյելով ետ ու առաջ էին վազվզում, մեկը մյուսին զարկելով, ընկնելով ու աստիճանաբար կատաղելով: Սարսափելի իրարանցում, խառնաշփոթություն ու աղմուկ-աղաղակ բարձրացավ:

Բիլբոն սաստիկ վախեցավ, բայց նա ողջախոհություն ունեցավ մտնելու մեծ տակառի ետևը, որից պահակները ջուր էին խմում, որպեսզի իրեն ոտքի տակ չտային, չտրորեին և շոշափելով չբռնեին:

— Հարկավոր է հասնել դռանը, ինչ զնով էլ ուզում է լինի հասնել դռանը,— ինքն իրեն կրկնում էր Բիլբոն, բայց միանգամից չվճռեց: Հետագայում ամեն ինչ տեղի ունեցավ ինչպես պահմտոցի խաղի ժամանակ, միայն թե սարսափով: Շուրջը գոբլիններ էին վազվզում, խեղճ

Բիլբոն մի երկու անգամ խույս տվեց, բայց հետո նրան վայր գցեց մի գոբլին, որն այդպես էլ չկարողացավ հասկանալ, թե ինչի վրա ընկավ: Հետո Բիլբոն վեր կացավ չորեքթաթ, սողաց կապիտանի ոտքերի արանքով, ամբողջ հասակով կանգնեց և նետվեց դեպի դուռը:

Դուռը դեռևս փակված չէր, բայց մի ինչ-որ պահակ համարյա ամբողջովին ծածկել էր այն: Բիլբոն փորձեց հրել դուռը, բայց այն նույնիսկ տեղից չշարժվեց: Փորձեց ճեղքի միջով անցնել, բայց լռվեց: Այ քեզ սարսափելի բան: Նրա բաճկոնի կոճակները կառչեցին կողափայտին: Բիլբոն արդեն տեսավ, ինչ կա դռան ետևում, մի քանի աստիճաններ իջնում էին ներքև, դեպի բարձր լեռների միջև գտնվող նեղ կիրճը, արևը ամպերի տակից դուրս եկավ և պայծառ լուսավորեց դռան մյուս կողմում գտնվող բնապատկերը: Բայց Բիլբոն չկարողացավ դուրս պրծնել արքանից:

Հանկարծ գոբլիններից մեկը գոռաց.

— Դռան մոտ ստվեր է երևում... Այնտեղ ինչ-որ մեկը կա...

Բիլբոյի սիրտը կատաղորեն թարտաց, նա ամբողջ ուժով խցկվեց առաջ, կոճակները թռան չորս կողմ, բաճկոնն ու անթև բաճկոնակը պատռելով՝ Բիլբոն դուրս պրծավ ու աստիճաններով այծի պես ցատկոտելով վազեց ներքև, իսկ ապշահար գոբլիններն ստիպված եղան նրա պղնձե գեղեցիկ կոճակները հավաքել:

Հասկանալի է, նրանք իսկույններթ հարայիրոցով ու ճիչերով ընկան Բիլբոյի ետևից: Բայց գոբլիններն արևի լույս չեն սիրում, նրանց ոտքերը թուլանում են, գլուխները պտտվում: Նրանց վիճակված չէր Բիլբոյին բռնել, որը մատանին մատին վազում էր ծառերի շվաքում՝ արագ, անաղմուկ, աշխատելով արևի տակ դուրս չգալ: Շուտով, հայիոյելով և մռթմռթալով, գոբլինները ետ քաշվեցին, գնացին դուռը պահպանելու:

Բիլբոն փրկվեց...

ԱՆՁՐԵՎԻՑ ՓԱԽՉԵԼ, ՋՈՒՐՆ ԸՆԿՆԵԼ

Բիլբոն գոբլիններից փախավ, բայց գաղափար չուներ, թե որտեղ է գտնվում: Նա կորցրել էր կնգուղը, թիկնոցը ուտելեղենը, պոնիին, կոճակները և բարեկամներին: Նա գնում էր հա գնում ուր աչքը կտրեր: Վերջապես արահետի վրա լեռների ստվերներն ընկան Բիլբոյի առջև: Նա ետ նայեց. արևը անցել էր լեռների ետևը: Այդ ժամանակ նա առաջ նայեց և տեսավ ցած իջնող լանջեր: Ներքևում ծառերի արանքից տեղ-տեղ մարգագետիններ էին երևում:

— Ողորմած աստված,— բացականչեց Բիլբոն:— Երևում է ես դուրս եմ եկել Մառախլապատ Լեռների մյուս երեսը: Որտե՞ղ են, ախ, որտե՞ղ են Հենդալֆն ու թզուկները: Միայն թե նրանք մնացած չլինեն գոբլինների իշխանության տակ... Նա քայլում էր հա քայլում, բարձրացավ իջվածքից, անցավ նրա եզրով ու ներից սկսեց իջնել: Բայց ամբողջ ժամանակ նրան

տանջում էր մի չափազանց տհաճ միտք. արդյոք պարտավոր չէ՞ հիմա, երբ մատին կախարդական մատանի ունի, վերադառնալ սարսափելի թունելները և փնտրել իր բարեկամներին: Նոր էր նա հանգել այդ որոշմանը, որ դա իր պարտքն է, և իրեն վերջնակապանես դժբախտ զգացել, երբ հանկարծ ձայներ լսեց:

Նա կանգնեց ու ականջ դրեց. ոնց որ թե գորլիկների նման չեն: Նա կամացուկ մոտ գնաց: Քարքարոտ կածանը, որով նա քայլում էր, թեքվեց ներքև, ձախից մի ժայռ էր բարձրանում, աջից՝ թփուտներով ու կարճիկ ծառերով ծածկված հովիտներով իջնում էր լանջը: Հովիտներից մեկում, թփուտների մեջ ինչ-որ մեկը խոսում էր:

Բիլբոն ավելի մոտիկ սողաց, և հանկարծ երկու քարի արանքում կարմիր կնգուղ տեսավ. այնտեղից դուրս էր նայում Բալին, որ, ինչպես միշտ, պահակ էր կանգնած: Բայց իրեն զսպեց: Նա դեռ մատանին չէր հանել մատից, վախենալով որևէ անսպասելի ու տհաճ հանդիպումից, և հիմա Բալինը նայում էր ուղիղ Բիլբոյի միջով:

«Արի սրանց անակնկալի բերեմ»,— մտածեց Բիլբոն և հովիտի եզրին աճած թփերի միջով առաջ շարժվեց:

Հենդալֆը վիճում էր թզուկների հետ: Նրանք քննարկում էին թունելներում տեղի ունեցած իրադարձությունները և որոշում էին, թե ինչ անեն հետագայում: Հենդալֆը թզուկներին համոզում էր, որ չի կարելի ճանապարհը շարունակել, միտք Բեգինսին թողնելով գորլիկների ձեռքում, նույնիսկ առանց պարզելու՝ կենդանի է նա, թե ոչ, առանց նրան փրկելու փորձ անելու, իսկ թզուկներն անբավականություն էին հայտնում:

— Վերջ ի վերջո նա իմ բարեկամն է,— ասում էր հրաշագործը,— և այնքան էլ վատ չէ: Ես նրա համար պատասխանատու եմ: Այնուամենայնիվ, խայտառակաություն է, որ դուք նրան կորցրել եք:

Թզուկները պնդում էին, որ առհասարակ պետք չէր նրան հետները վերցնել, և վրդովվում էին, թե ինչու նա կորավ ու ոչ թե մնաց իրենց հետ, և ինչու Հենդալֆը չի ընտրել մեկ ուրիշ ավելի խելոքի:

— Առայժմ նա ավելի շատ հոգս է պատճառում, քան օգուտ է տալիս,— ասաց մեկը:— Իսկ ինչ մնում է ետ գնալ և փնտրել նրան մուֆ թունելներում, ապա ես թքել եմ նրա վրա...

— Այո, ես եմ նրան բերել ինձ հետ, իսկ ես անօգտակար ոչինչ չեմ անում: Կամ օգնեք ինձ գտնել նրան, կամ ես կհեռանամ, և ինքներդ տհաճությունների մեջ կընկնեք: Իսկ եթե մենք նրան գտնենք, դեռ շատ անգամ ինձնից շնորհակալ կլինեք: Ինչո՞ւ ինքդ փախար, Դորի, իսկ նրան թողեցիր...

— Դուք էլ լինեիք՝ կթողնեիք,— զայրացած պատասխանեց Դորին,— եթե խավարում ձեր ոտքից քաշեին և դանակով մեջքիդ հասցնեին...

— Իսկ դրանից հետո ինչո՞ւ նրան չվերցրիր...

— Ողորմած տեր... Դուք դեռ հարցնում եք... Գործիչները մթության մեջ կռվում էին, կծում, թափվում մեկը մյուսի վրա, խփում ում պատահի... Քիչ էր մնում դուք Գլեմդրինգով իմ գլուխը թռցնեիք, իսկ Տորինը Օրկրիստով խոցում էր բոլոր կողմերը: Այդտեղ դուք բոլորին կուրացրիք ձեր լույսով, գործիչները վժժոցով նահանջեցին, դուք գոռում էիք. «Բոլորն իմ ետևից», և բոլորը ենթարկվեցին: Այսինքն՝ մենք մտածում էինք, որ վերջ: Դուք շատ լավ էիք հասկանում, որ մենք ժամանակ չունենք մեզ հաշվելու: Մենք ծկեցինք ժամապահների կողքով, դռնից դուրս փախանք և գլորվեցինք այստեղ: Եվ ահա այստեղ ենք, իսկ գողը չկա, այ ոչ ու փուչ լինի նա...

— Իսկ գողն էստեղ է որ կա,— հայտարարեց Բիլբոն՝ առաջ գալով և մատանին մատից հանելով: Աստված իմ, ինչպե՛ս վեր թռան անակնկալից: Ինչպե՛ս գոռգոռացին զարմանքից և ուրախությունից: Հենդալֆը զարմացած էր ուրիշներից ոչ պակաս, բայց իհարկե, ավելի գոհ: Նա Բալինին կանչեց և նկատողություն արեց, ասելով այն ամենը, ինչ մտածում էր պահակների մասին, որոնց պատճառով կողմանկի մեկը կարող է անսպասելիորեն հայտնվել, ասես երկնքից ընկած: Պետք է ասել, որ այդ դեպքից հետո թզուկների աչքում Բիլբոն խիստ բարձրացավ: Եթե առաջ, չնայած Հենդալֆի հավատացումներին, նրանք կասկածում էին, որ Բիլբոն առաջին կարգի գող է, ապա հիմա նրանց կասկածները փարատվեցին: Բալինը մյուսներից ավելի էր շշմել: Եվ բոլոր թզուկները խոստովանեցին, որ Բիլբոն ճարպիկ է: Բիլբոն գովեստներից այնքան շոյված էր, որ, իր մտքում ծիծաղելով, ոչինչ չասաց մատանու մասին, իսկ երբ նրան հարցեր տվեցին, նա պատասխանեց.

— Դե, պարզապես կամացուկ, գաղտագողի ծկեցի, հոբիտական ձևով:

— Նույնիսկ մուկը չէր կարող ծկել իմ քթի տակից և աննկատ մնալ,— ասաց Բալինը:— Կնգուլս հանում եմ ձեր առջև:— Որը և նա արեց, ավելացնելով.— Բալին, ձեզ ծառա:

— Միսոր Բեգինս, ձեր ծառան,— պատասխանեց Բիլբոն:

Հետո նրանք հաշիվ պահանջեցին Բիլբոյի արկածների մասին, սկսած այն պահից, ինչ նա կորել էր: Եվ Բիլբոն պատմեց ամեն ինչ... Բացի նրանից, որ գտել էր մատանին: («Առայժմ կսպասեմ»,— վճռեց նա): Առանձնապես նրանց հետաքրքրեց հանելուկներով մրցությունը, իսկ երբ նա նկարագրեց Գոլլումին, թզուկները, կարեկցելով հանդերձ, սարսափեցին:

— Եվ այստեղ, երբ նա նստեց իմ կողքը, էլ ոչինչ հնարել չկարողացա,— եզրափակեց Բիլբոն,— պարզապես հարցրի. «Ի՞նչ կա իմ գրպանում»: Եվ երեք անգամ էլ չպատասխանեց: Այն ժամանակ ես ասացի. «Դու խոստացար: Դե հիմա դուրս բեր ինձ»: Բայց նա հարձակվեց ինձ վրա և ուզում էր սպանել, ես փախա ու վայր ընկա, իսկ նա մթության մեջ ինձ չնկատեց: Այն ժամանակ ես նրա ետևից գնացի ու լսեցի, որ քթի տակ ինչ-որ բան է քրթմնջում: Նա կարծում էր, թե ես գիտեմ ինչպես դուրս գալ

լեռան խորքից, ու վազեց դեպի ետնամուտքը: Իսկ հետո հանկարծ վերցրեց ու նստեց թունելի ելքի մոտ, այնպես որ անցնել չէի կարող: Ես էլ թռա վրայով ու ծկեցի:

— Իսկ պահակներն ինչպե՞ս թողեցին,— հարցրին թզուկները:— Մի՞թե պահակներ չկային:

— Կային... Այն էլ ինչքա՞ն... Բայց ես նրանցից խույս տվեցի և փախա: Դուռը շատ քիչ էր բացված, և ես լռվեցի դռան արանքում ու ահագին կոճակ կորցրի... — Նա ափսոսանքով նայեց պատառոտված հագուստին:— Բայց միևնույն է, դուս պրծա, և ահա այստեղ եմ:

Թզուկները նրան նայեցին նոր ձևով, հարգանքով. նա այնպես անբռնազբոսիկ էր պատմում, թե ինչպես է խույս տվել պահակներից, ինչպես է թռել Գոլլումի վրայից և խցկվել դռան արանքը, որ ասես այդ բոլորը նրա համար ոչինչ չարժեր և ոչ մի հուզմունք չէր պատճառել:

— Ինչ էի ասում ձեզ,— ծիծաղեց Հենդալֆը:— Միստր Բեգինսը բոլորովին էլ այդքան հասարակ չէ, որքան դուք եք կարծում:

Այդ ասելիս Հենդալֆը իր թավ հոնքերի տակից մի տարօրինակ հայացք գցեց Բիլբոյի վրա, և հոբիտի մեջ աղոտ կասկած առաջացավ, թե չլինի կախարդը կռահում է պատմության այն մասը, որ ինքը բաց թողեց:

Նրա մոտ էլ շատ հարցեր էին կուտակվել: Գուցե Հենդալֆն ամեն ինչ թզուկներին արդեն բացատրել է, բայց Բիլբոն ինքը չի լսել: Նա ուզում էր իմանալ, թե կախարդն ի՞նչ ձևով է թզուկներին դուրս բերել, և սա ի՞նչ հովիտ է:

Հրաշագործը, չթաքցնենք, միշտ էլ դեմ չէր մի ավելորդ անգամ իր իմաստությանը պարծենալ: Դրա համար էլ նա հաճույքով պատմեց Բիլբոյին, որ ինքը և Էլրոնդը շատ լավ էլ գիտեին լեռների այդ մասում ապրող չար գոբլինների մասին: Բայց առաջ գլխավոր դարպասը բացվում էր այլ արահետի վրա, ավելի դյուրին ու մատչելի, որտեղ գոբլինները հաճախ էին որսում ճանապարհորդներին, որոնց վրա մութը վրա էր հասնում հենց այդ դարպասի մոտ: Ըստ երևույթին մարդիկ լքել էին այդ ճանապարհը, և գոբլինները նոր դարպաս էին բացել այն արահետի վրա, որով գնում էին թզուկները: Ինչպես երևում է, դա տեղի էր ունեցել բոլորովին վերջերս, քանի որ մինչև հիմա այդ ճանապարհն անվտանգ էր համարվում:

Ուրեմն Հենդալֆը հենց որ լսել էր Բիլբոյի գոռոցը, վայրկենապես հասկացել էր, թե ինչ է տեղի ունեցել: Նա բոցի բռնկումներով սպանել էր իր վրա հարձակված գոբլիններին և հասրցել մտնել ճեղքը ճիշտ այն բողբոջի, երբ այն փակվում էր: Նա գնացել էր հետապնդողների ու գերիների ետևից, հասել մինչև գահասրահը, այնտեղ անկյունում նստել և արարել էր իր կախարդական միջոցներից ամենահաջողակը:

— Շատ նուրբ հարց էր,— ասաց նա,— ամեն ինչ մազից էր կախված:

Բայց Հենդալֆը իզուր չէր այդքան հմտացել կրակի և լույսի միջոցով կախարդական գործողություններ կատարելու մեջ (նույնիսկ հոբիտը, եթե հիշում եք, ամբողջ կյանքում չէր մոռանում ծեր Տուկի տոնակատարությունների ժամանակվա հրաշագեղ հրավառությունները): Թե հետո ինչ եղավ, մենք գիտենք: Հենդալֆին հայտնի էր ետնամուտքը, ինչպես գորլիններն էին անվանում ստորին դարպասը, որտեղ Բիբլոն կորցրեց իր կոճակները:

— Գորլիններն այնտեղ վաղու՛ց-վաղուց են կառուցել այդ դարպասը,— ասաց Հենդալֆը,— մասամբ որպես սողանք, հարկ եղած դեպքում փախչելու համար, մասամբ որպես լեռների մյուս երեսը դուրս գալու ելք. գիշերները նրանք այդտեղ հարձակումներ ու ասպատակություններ են կազմակերպում և ամեն տեսակ ավազակություններ անում: Նրանք խստորեն պահպանում են այդ դուռը, և մինչև այժմ ոչ ոքի չի հաջողվել թափանցել այնտեղ: Սրանից հետո ավելի խիստ կպահպանեն:

Հենդալֆը ծիծաղեց, մնացածը՝ նույնպես: Ինչ ասել կուզի, նրանց կրած վնասները մեծ էին, բայց փոխարենը նրանք սպանել էին Գերագույն Գորլինին ու բազմաթիվ սովորական գորլիններին էլ գումարած և իրենք էլ փրկվել էին: Այնպես որ առայժմ, կարելի է ասել, նպաստավոր վիճակում էին գտնվում: Բայց կախարդը նրանց արագ իջեցրեց իրական հողի վրա:

— Մենք արդեն հանգստացել ենք,— ասաց նա,— շարժվելու ժամանակն է: Գիշերը հարյուրավոր գորլիններ կհետապնդեն մեզ, իսկ տեսեք, ստվերներն արդեն երկարել են: Մինչև մթնշաղը մեզ հարկավոր է մի քանի մղոն առաջ շարժվել: Եթե լավ եղանակը պահպանվի, ապա լուսինը դուրս կգա, և դա ձեզ ձեռնտու է: Ճիշտ է, գորլինները լուսնից շատ էլ չեն վախենում, բայց գոնե կտեսնենք, թե ուր ենք գնում: Այո, այո,— պատասխանեց նա հոբիտի նոր հարցին:— Դու ժամանակի հաշիվը կորցրել ես թունելներում թափառելիս: Այսօր հինգշաբթի է, գորլինները մեզ բռնել են երկուշաբթի գիշերը, ավելի ճիշտ, երեքշաբթի առավոտյան: Մենք շատ մղոններ ենք կտրել, անցել ենք լեռների բուն սրտով և հիմա հայտնվել ենք մյուս կողմում: Մի խոսքով կարգին կարճել ենք ճամփան, բայց դուրս ենք եկել ոչ այնտեղ, որտեղ մեզ դուրս կբերեր սկզբնական արահետը: Մենք բավական շեղվել ենք դեպի հյուսիս, առջևում մեզ տիաճ տեղանք է սպասում: Այժմ չափազանց բարձր տեղում ենք: Եվ այսպես, ճամփա ընկանք:

— Ես սարսափելի ուտել եմ ուզում,— տնքաց Բիբլոն, միայն այժմ գիտակցելով, որ նախանցյալ օրվանից բերանը ոչինչ չի դրել: Թե դա ինչ բան է հոբիտի համար, միայն պատկերացնել է պետք: Այժմ, երբ հուզմունքն անցել էր, նա զգաց, որ դատարկ փորիկը վեց-վեց է անում և ոտքերն էլ դողում են:

— Ոչնչով օգնել չեմ կարող,— պատասխանեց Հենդալֆը:— Գուցե վերադառնաս և քաղաքավարությամբ խնրդես գորլիններին՝ ետ տան քո պոնին ու բեռը:

— Խորին շնորհակալություն, այդ մեկը չէ,— բացականչեց Բիլբոն:

— Այդ դեպքում գոտիներս ավելի պինդ ձգենք և քայլենք առաջ: Ավելի լավ է առանց ընթրիքի մասնք, քան ինքներս ընթրիք դառնանք:

Ճանապարհին Բիլբոն շուրջն էր նայում, թե ինչ ուտելու բան կարելի է ճարել. սև հաղարջը նոր էր ծաղկել, կաղինը դեռ չէր հասել, ալոճենու հատապտուղները չէին կարմրել: Բիլբոն թրթնջուկ ծամեց, արահետը հատող լեռնային առվակից բռով ջուր խմեց և նույնիսկ մորու երեք հատապտուղ կուլ տվեց, բայց քաղցը չհագեցավ:

Նրանք գնում էին հա գնում: Քարքարոտ անհարթ արահետը կորավ: Անհետացան թփուտները, քարերի միջև բուսած բարձր խոտը, ճագարների կրծած ճիմերի հատվածները, անհետացան ուրցն ու եղեսպակը, անանուխն ու լեռնային դեղին վարդերը: Ճամփորդները հայտնվեցին քարերով ծածկված մի լայն դիք լանջի վրա: Երբ նրանք սկսեցին իջնել, քարն ու խիճը թափվում էին նրանց ոտքերի տակից: Հետո քարերի ավելի մեծ կտորներ թռան՝ շարժման մեջ դնելով փլվածքը, հետո մեծ բեկորներ սկսեցին պոկվել: Շուտով ամբողջ լանջը, նրանցից վերև ու ներքև, տեղից շարժվեց, և նրանք սահեցին ցած՝ փոշու մեջ կորած, թափվող քարերի դղրդոցի ու թնդյունի ուղեկցությամբ:

Ծառերը փրկեցին նրանց: Ճամփորդները գլորվեցին մինչև սոճուտը, որը հովտում վերածվում էր մութ անտառի: Ոմանք կանգ առան ծառերի ստորին ճյուղերից բռնելով, իսկ մյուսները (այդ թվում փոքրիկ հոբիտը) քարաբեկորների սպառնալից գրոհից փրկվելու համար թաքնվեցին ծառաբների ետևում: Շուտով վտանգն անցավ, փլվածքը կանգ առավ, միայն հեռու ներքևում, պտերիների ու ծառերի արմատների միջև, դեռևս լսվում էր քարերի հեռավոր դղրդոլ:

— Այդպե՛ս: Սա մեզ շատ առաջ մղեց,— նկատեց Հենդալֆը:— Եթե գոբլինները քթերն այստեղ խոթեն, ապա նրանց համար դժվար կլինի առանց աղմուկի յուրա գնալ:

— Մի՞թե,— ծաղրանքով քրթմնջաց Բոմբուրը:— Փոխարենը նրանց համար հեշտ կլինի քարերը մեր գլխին թափել:

Թզուկներն ու Բիլբոն իրենց վատ էին զգում և, դեմքերը կնճռոտելով, շփում էին ճակոճած ու վնասված տեղերը:

— Դատարկ բաներ են: Հիմա մենք կթեքվենք մի կողմ և կհեռանանք փլվածքից: Հարկավոր է շտապել: Ուշադիր ձեր շուրջը նայեք:

Արևը վաղուց մտել էր լեռների ետևը, մթնշաղը թանձրանում էր, ճամփորդները, ոտքերը դժվարությամբ քարշ տալով, արագ-արագ գնում էին նեղ ճանապարհով, որը թեքությամբ իջնում էր ուղիղ դեպի հարավ: Անտառային խավարն ու լռությունը գնալով ավելի ու ավելի էին թանձրանում: Քամին լրիվ դադարեց, և նույնիսկ ճյուղերի սոսափն անտառում չէր լսվում:

— Մի՞թե էլի ենք առաջ գնալու,— հարցրեց Բիլբոն, երբ այնքան մթնեց, որ նա աղոտ տեսնում էր միայն Տորինի մորուքի տմբտմբոցն իր կողքին, և այնպիսի լռություն էր, որ թզուկների շնչառությունը մեծ աղմուկ էր թվում:— Իմ ոտքերի մատները կոտրված են, ոտքերս նվում են, փորս դատարկ պարկի պես կախվել է:

— Էլի մի քիչ,— ասաց Հենդալֆը:

Ինչպես նրանց թվաց, մի ամբողջ հավիտենություն անցավ, և հանկարծ նրանք դուրս եկան լուսնի լույսով վառ լուսավորված մի բացատ: Այդ տեղը ոչ մեկին դուր չեկավ, թեպետ որոշակի ոչ մի վատ բան չէին կարող ասել:

Հանկարծ սարի ստորոտում ոռնոց լսվեց՝ սարսափազդու, հուսահատ: Ոռնոցը լսվում էր աջից ու ձախից և գնալով հետզհետե մոտենում էր: Դրանք գայլերն էին, որ լուսնի վրա էին ոռնում, գայլեր, որ հավաքվելով ոհմակ էին դառնում:

Չնայած միստր Բեգինսի հարագատ բնի մոտակայքում գայլեր չկային, բայց նա ոռնոցն իսկույն ճանաչեց: Այն բավական հաճախ նկարագրում էին հեքիաթներում, իսկ Բիլբոյի մորաքրոջ ավագ որդին ճանապարհորդության մեծ սիրահար էր և շատ անգամ էր գայլի պես ոռնացել, որպեսզի Բիլբոյին վախեցնի: Բայց գայլերին լսել ահա այսպես, անտառում, գիշերով, լուսնի լույսով, դա չափազանց է... Նույնիսկ կախարդական մատանիները թույլ միջոց են գայլերի դեմ, հատկապես սարսափելի ոհմակի դեմ, որ ապրում էր գոբլինյան սարի հովանու տակ, Վայրի Երկրում: Այդպիսի գայլերն ավելի նուրբ հոտառություն ունեն, քան գոբլինները, նրանց համար իրենց զոհին տեսնելը պարտադիր չէ:

— Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել,— գոռաց Բիլբոն:— Գոբլիններից փրկվեցինք, գայլերի երախն ընկանք:

Նրա խոսքերը առած դարձան, չնայած այժմ, այդպիսի տհաճ իրադրության մեջ մենք ասում ենք. «Անձրևից փախանք, ջուրն ընկանք»:

— Բարձրացեք ծառերը, արագ...— հրամայեց Հենդալֆը: Նրանք նետվեցին դեպի բացատը շրջապատող ծառերը և ակնթարթորեն մագլցեցին ամենավերին ճյուղերը, որոնք որ կարող էին նրանց պահել: Ծիծաղից փորներդ կպատռվեին, եթե տեսնեիք (բնական է, անվտանգ տարածությունից), թե ինչպես էին թզուկները նստել ճյուղերին, իսկ նրանց մորուքները կախվել էին ներքև. իսկը ասես խելքները թոցրած ծերուկները որոշել են տղա-տղա խաղալ: Ֆիլին ու Կիլին տեղավորվել էին սաղարթի գագաթին, որը հիմա Նոր տարվա տոնածառի էր նման: Դորին, Նորին, Օրին, Օյնը և Գլոյնը շատ հարմար նստել էին պատկառելի ճյուղերով մի բարձր սոճու վրա: Բիֆուրը, Բոֆուրը, Բոմուրը և Տորինը նստել էին մյուս սոճու վրա: Դվալինն ու Բալինը մագլցեցին բարձրուղեշ, նոսր ճյուղերով եղևնու վրա և փորձում էին գագաթի խիտ մասում տեղավորվել: Հենդալֆը, որ մնացածներից զգալիորեն բարձրահասակ էր, իր համար այնպիսի բարձր սոճի էր ընտրել, որ մյուսներն այնտեղ չէին

կարող հասնել: Ճյուղերը Հենդալֆին այնպես էին ծածկել, որ միայն նրա աչքերն էին փայլում լուսնի լույսից:

Իսկ Բիլբոն՝ Բիլբոն ոչ մի տեղ չկարողացավ բարձրանալ և վազում էր մի ծառաբնից մյուսը, բույնը կորցրած ճագարի պես, որի ետևից շուն է ընկել:

— Էլի դու գողին թողեցիր...— նկատեց Նորին՝ ներքև նայելով:

— Հո ես չեմ կարող հավիտյան նրան մեջքիս քարշ տալ,— առարկեք Դորին,— մեկ թունելներում, մեկ ծառերի վրա:— Քո կարծիքով ես ի՞նչ եմ: Բեռնակի՞ր:

— Նրան կուտեն, եթե մենք որևէ միջոց ձեռք չառնենք,— ասաց Տորինը: Ոռնոնցն ավելի ու ավելի մոտիկից էր լսվում, նրանց օղակելով:— Դորի,— ձայն տվեց նա, քանի որ Դորին բոլորից ներքև էր նստած, ամենահարմար ծառին:— Շուտ ձեռքդ տուր միստր Բեգինսին:

Դորին, չնայած իր փնփնթոցներին, շատ օրինավոր թզուկ էր. իջավ ավելի ներքև և ձեռքը մեկնեց, բայց այստեղ էլ խեղճ Բիլբոն չկարողացավ հասնել նրան: Դորին ստիպված եղավ իջնել գետնին և կռանալ, որպեսզի Բիլբոն բարձրանա իր մեջքին: Այդ պահին գայլերը ոռնոցով մտան բացատ: Հարյուրավոր գայլային աչքեր հառվեցին Բիլբոյի և Դորիի վրա: Այնուամենայնիվ Դորին հոբիտին չլքեց փորձանքի պահին, նա սպասեց, մինչև վերջինս նրա մեջքից անցավ ծառի վրա և միայն այդ ժամանակ թռավ ու բռնեց ներքևի ճյուղից: Ճիշտ ժամանակին: Գայլը ատամները կրճտացրեց ու քիչ էր մնում բռներ Դորիի վերարկուկի փեշից: Մի վայրկյանում ամբողջ ումակը խռնվեց ծառի շուրջը, գայլերը ոռնոցով թռչկոտում էին բնի մոտ, նրանց աչքերը վառվում էին, լեզուները դուրս էին ընկել:

Բայց նույնիսկ վայրենի-գազան վարգերը (այդպես էին կոչվում չար գայլերը Մառախլապատ Լեռների մյուս կողմում) ծառ բարձրանալ չեն կարողանում: Որոշ ժամանակ ճանապարհորդներին վտանգ չէր սպառնում: Նրանց բախտից գիշերը տաք էր ու քամի չկար: Ծառերի վրա ընդհանրապես էլ երկար նստել չես կարող, էլ ուր մնաց, երբ արդեն ցուրտ է ու քամի, իսկ ներքևում էլ գայլերն են հսկում:

Ծառերի օղակով շրջապատված այդ բացատը, ըստ երևույթին, գայլերի հավաքատեղին էր: Նրանք հա գալիս էին ու գալիս: Գայլերը հոտոտելով պտտվեցին բացատի շուրջը և շուտով որոշեցին յուրաքանչյուր ծառը, որի վրա որևէ մեկը թաքնված էր: Ամեն տեղ պահակներ դրեցին, մնացածները (ենթադրվում է՝ մի քանի հարյուրակ) նստեցին շրջան կազմած: Կենտրոնում նստել էր հսկայական գորշ գայլը և խոսում էր վարգերի սարսափելի լեզվով: Հենդալֆը հասկանում էր վարգերի լեզուն, Բիլբոն՝ ոչ, բայց առանց դրա էլ կարելի էր գլխի ընկնել, որ խոսքը միայն դաժան ու չար գործերի մասին է: Ժամանակ առ ժամանակ վարգերը խմբով պատասխանում էին գորշ առաջնորդին, և ամեն անգամ, լսելով

Նրանց սարսափազդու ճղավոցները, հոբիտը վախից քիչ էր մնում սոճու վրայից ցած ընկներ:

Հիմա ես ձեզ կպատմեմ, թե ինչ լսեց Հենդալֆը և ինչ չհասկացավ Բիլբոն: Հաճախ էր պատահում, որ վարդերը և գորբիկները համագործակցում էին իրենց սև գործերում: Այն հին օրերին գորբիկները հաճախ էին հարձակումներ կազմակերպում, որպեսզի սնունդ կամ ստրուկներ ձեռք բերեն: Այդպիսի դեպքերում նրանք օգնության էին կանչում վարդերին և հետո ավարը կիսում նրանց հետ: Երբեմն գորբիկները գնում էին վարդերին հեծած, ինչպես ձիերին: Հենց այդ գիշերը հակառակի պես մեծ հարձակում էր նախատեսված: Վարդերն այստեղ էին եկել գորբիկների հետ հանդիպման, իսկ սրանք ուշանում էին: Պատճառը, ինչպես մենք գիտենք, Գերագույն Գորբիկի մահն էր, առհասարակ այն խառնաշփոթությունը, որ առաջացրել էին թզուկները, Բիլբոն և կախարդը, որոնց, հավանաբար, մինչև օրս էլ փնտրում էին թունելներում:

Չնայած բոլոր վտանգներին, որ սպասում էին մարդկանց այս հեռավոր երկրորում, որոշ խիզախներ վերջին ժամանակներս սկսել էին այստեղ վերադառնալ հարավից, կտրել ծառերը և իրենց համար տներ կառուցել առավել լուսավոր անտառներում՝ հովիտներում ու գետերի ափերին: Աստիճանաբար նրանք շատացան, բոլորն էլ լավ գինված մարդիկ էին, նույնիսկ վարդերը չէին համարձակվում ցերեկվա պայծառ լույսով հարձակվել նրանց վրա: Ահա և վարդերը պայմանավորվել էին գորբիկների հետ գիշերով հարձակվել սարերին մոտիկ գտնվող գյուղի վրա: Եթե նրանց պլանը հաջողվեր, հաջորդ օրը գյուղում ոչ մի կենդանի շունչ չէր լինելու, ոչ մի, բացի նրանցից, ում գորբիկները գերի կվերցնեին:

Չարհուրելի խոսքեր էին դրանք. վտանգը սպառնում էր ոչ միայն խիզախ փայտահատներին, նրանց կանանց ու երեխաներին, այլև Հենդալֆին ու նրա բարեկամներին: Վարդերը կատաղեցին ու զարմացան՝ նրանց իրենց հավաքատեղիում հայտնաբերելով: Նրանք կասկածեցին, որ փայտահատների բարեկամները եկել են իրենց լրտեսելու և նորությունները գյուղ կհասցնեն: Այդ դեպքում գայլերն ու գորբիկները ստիպված կլինեն կյանքի ու մահու կռիվ մղել, փոխանակ հեշտությամբ քնածների հետ հաշիվները մքարելու կամ իրենց մոտ քարշ տալու: Դրա համար էլ վարդերը որոշեցին հսկել գերիներին համենայն դեպս մինչև առավոտ, որպեսզի այդ արարածները չփախչեն: Այդ ժամանակ լեռներից կիջնեն գորբիկները, իսկ գորբիկները կարողանում են ծառ բարձրանալ կամ տապալել դրանք:

Այժմ ձեզ համար պարզ է, թե ինչու Հենդալֆը ականջ դնելով վարդերի գոմոռոցին ու կլանչոցին, սաստիկ վախեցավ, շատ էլ որ ինքը կախարդ էր: Նա հասկացավ, որ իրենք ծուղակն են ընկել ու դեռ հայտնի չէ՝ կհաջողվի՞ արդյոք փրկվել: Բայց նա որոշեց, որ այդպես հեշտ ու հանգիստ չի հանձնվի, չնայած, գայլերով շրջապատված ծառի կատարին նստած, շատ բան անել չէր կարող: Սկզբում նա իր սոճուց քաղեց խոշոր կոները, հետո

դրանիցից մեկը վառեց իր գավազանով և շարտեց գայլերի վրա: Կոնը \$22ալով ընկավ գայլի մեջքին: Գայլի փոչոտ մորթին իսկույն բռնկվեց, և նա զզվելի ոռնոցով դեսուղեն ընկավ բացատում: Առաջինի ետևից թռան երկրորդը, երրորդը. մեկը երկնագույն բոցով էր վառվում, մյուսը՝ կարմիր, երրորդը՝ կանաչ: Դրանք գետին ընկնելով պայթում էին ու ցրվում գույնզգույն կայծերով, թանձր ծուխ արձակելով: Ամենամեծ կոնը կապված առաջնորդի քթին, նա երեք մետր թռավ օդ, իսկ հետո սկսեց շրջանաձև պտտվել՝ վախից ու չարութունից իր հպատակներին կծոտելով:

Թզուկներն ու Բիլբոն ցնծում էին ու գոռում ուրախությունից: Սարսափելի էր նայել, թե ինչպես էին կատաղել գայլերը: Նրանք ոտքի կանգնեցրին ողջ անտառը: Գայլերն առհասարակ վախենում են կրակից, իսկ այդ կրակը հատուկ էր, գերբնական: Կայծը մորթու վրա ընկնելով թաղվում էր մեջը, այրում գայլին, և եթե նա չէր թավալվում գետնին, ապա բոցն արագորեն պատում էր նրան: Շուտով ամբողջ բացատով մեկ գայլեր էին թավալվում՝ փորձելով հանգսնել կայծերը. նրանք, որ արդեն բոցավառվում էին, բարձր ոռնոցով դեսուղեն էին վազվզում և մյուսներին էլ վառում:

— Ի՞նչ աղում էր այսօր գիշերն անտառում,— զարմացավ արծիվների Տիրակալը: Նա նստած էր ժայռի կատարին, և լուսնի լույսի տակ նշմարվում էր նրա սև ուրվագիծը:— Ես գայլերի ծայնն եմ լսում: Զլինի՞ թե գոբլիններն են անկարգություն անում այնտեղ:

Թևերի մի քանի բախյունով նա օդ բարձրացավ, և անհապաղ երկու արծիվ պոկվեցին ժայռերից ու հետևեցին նրան: Շրջաններ գծելով՝ նրանք ուշադիր նայում էին ներքև և, վերջապես, նկատեցին վարգերի օղակը, փոքրիկ մի կետ իրենց ներքևում, հեռո՛ւ-հեռու: Արծիվները սուր տեսողություն ունեն, նրանք մեծ հեռավորություններից տեսնում են ամենափոքր առարակաները: Մառախլապատ Լեռների արծիվների Տիրակալի աչքերը կարող էին նայել ուղիղ արևին, առանց թարթելու, կամ մեկ մղոն բարձրությունից տեսնել գիշերը խոտի մեջ վազվզող ճագարներին: Նա չէր կարող պարզ տեսնել ճյուղերին նստածներին, բայց տեսնում էր վազվզող գայլերին ու կրակի բռնկումները, լսում էր նրանց ոռնոցը և կլանչոցը: Նա տեսավ նաև լուսնի լույսի փայլատակումը գոբլինների նիզակների ու սաղավարտների վրա. այդ չար արարածների երկար շղթաները դարպասից գալարվելով սարի լանջով շարժվում էին դեպի անտառ:

Արծիվներին բարի չես ասի: Նրանք էլ լինում են վախկոտ ու դաժան: Բայց հյուսիսային լեռների հնագույն ցեղի արծիվները հպարտ էին, հզոր ու ազնվածին՝ թռչուններից ամենաերևելիները: Նրանք գոբլիններին չէին սիրում և չէին վախենում նրանցից: Որ արծիվները գոբլիններին իրենց ուշադրությանն էին արժանացնում (դա շատ հազվադեպ էր լինում, քանի որ արծիվները նրանց չէին ուտում), ապա վերևից վրա էին տալիս գոբլիններին և քշում քարայրները, թույլ չտալով նրանց թալան

ավարտել: Գործիչներն ուտում էին արծիվներին և վախենում նրանցից, բայց չէին կարող հասնել մինչև ժայռերի կատարներին գտնվող նրանց բները և վռնդել լեռներից:

Այդ գիշեր արծիվների Տիրակալին համակել էր հետաքրքրասիրությունը. նա ցանկացավ իմանալ, թե ինչ է կատարվում անտառում: Նրա հրամանով բազմաթիվ արծիվներ լքեցին բարձունքները և անտառի վրա դանդաղ պտտվելով սկսեցին կամաց-կամաց իջնել այնտեղ, ուր շրջանաձև նստած էին գայլերն ու գործիչներին էին սպասում:

Նրանք լավ արեցին, որ իջան... Այնտեղ, ներքևում, ինչ-որ սարսափելի և աներևակայելի բան էր կատարվում: Վառվող գայլերը, դեսուդեն փախչելով, մի քանի տեղ հրդեհեցին անտառը: Ամառ էր, արևելյան լանջերին վաղուց անձրև չէր եկել: Դեղնած ձարխոտը, ջախը, սոճիների փշատերևներից գոյացած խիտ գորգը, տեղ-տեղ նաև չոր ծառերը բռնկվել էին: Կրակը մոլեգնում էր բացատի շուրջը: Բայց պահակ գայլերը չէին հեռանում ծառերից, որոնց վրա թաքնվել էին թզուկները: Նրանք դիվոտում էին և ոռնոցով թռչկոտում ծառաբների վրա, իրենց սարսափելի բարբառով հայիոյում էին թզուկներին, լեզուները երախներից կախվել էին, աչքերը վառվում էին կատաղի կարմիր կրակով:

Հանկարծ ճիչերով բացատ խուժեցին գործիչները: Նրանք կարծում էին, թե կռիվը այստեղ փայտահատների հետ է: Բայց իմանալով բանն ինչ է, ոմանք ծիծաղից փլվեցին գետնին, իսկ մյուսները ճոճում էին նիզակները և կոթերով խփում վահաններին: Գործիչները կրակից չէին վախենում: Շուտով նրանք մի պլան կազմեցին, որն իրենց բավական սրամիտ թվաց:

Նրանք գայլերին հավաքելով ոմակ կազմեցին և ծառերի շուրջը ձարախոտ ու խռիվ փռեցին: Այնքան ժամանակ նրանք շուրջանակի վազեցին դոփելով ու ծափ տալով, ծափ տալով ու դոփելով, մինչև հրդեհը հանգրեցին, բայց այն ծառերի մոտ, որոնց վրա նստած էին թզուկները, կրակը չմարեցին: Ընդհակառակն, այնտեղ դեռ տերևներ, չոր ճյուղեր, ձարխոտ ավելացրին: Թզուկների շուրջը ծխի ու կրակի օղակ առաջացավ: Գործիչները թույլ չէին տալիս, որ այն դեպի դուրս տարածվի, դրա փոխարեն կրակը գնալով խտանում էր ու նեղ օղակով վեր ձգվում: Շուտով սողացող կրակը փոխադրվեց խռիվի ու տերևների վրա, որ կուտակված էին թզուկների ծառերի տակ: Ծուխն արդեն կսկծացնում էր Բիլթոյի աչքերը, նա արդեն զգում էր խարոյկի ջերմությունը, ծխի վարագույրի միջից տեսնում էր, ինչպես են գործիչները պարում իրենց ծառերի շուրջը: Նիզակներով ու տապարներով պարող ռազմիկների օղակի ետևում, պատկառելի հեռավորության վրա կանգնել էին գայլերը, դիտում էին և սպասում:

Եվ այստեղ գործիչները մի սարսափելի երգ ձգեցին.

Տասնհինգ թռչուն ճյուղերից կախվել,
Ճոճվում են քամու խենթ սուլոցի տակ,

Ավա՛ղ, անթև են խեղճերը, ավա՛ղ,
Էլ չեն տեսնելու երկինք կապուտակ:
Ուրեմն ինչպե՞ս նրանց հետ վարվել՝
Եփե՛լ: Հո՞ւմ ուտել, թե՞ լավ խորովել:

Հետո նրանք դադարեցին պարելուց և գոռացին.

— Թռեք, թռչնակներ... Թռեք, թե կարող եք... Իջեք այդտեղից, թռչնակներ, թե չէ հենց բների մեջ կխորովվեք... Երգեք, թռչնակներ, երգեք... Ի՞նչ եք լռել...

— Կորեք էստեղից, կռվարարներ,— ի պատասխան գոռաց Հենդալֆը:— Դեռ բների ժամանակը չէ: Երբ չարաճճիները խաղում են կրակի հետ, նրանց պատժում են:

Հենդալֆն ուզում էր նրանց ծաղրել և ցույց տալ, որ չի վախենում: Իսկ իրականում վախենում էր, բայց չէ՞ որ նա կախարդ էր... Իբրև թե նրան չլսելով, գոբլինները շարունակեցին երգել.

Վառեք անտառը, թող բոցը հառնի,
Շուրջը ամեն ինչ թող իրար խառնի,
Հեյ-հեյ՛յ:

Սոխով, այլուրով տապակենք համեղ,
Դեռ շատ աղ բերեք, բիբար ու համեմ:

Վառեք ջահերը ու բարձր պահեք,
Հեյ-հեյ՛յ,
Հեյ-հեյ՛յ,
Հեյ-հեյ՛յ:

«Հեյ՛յ» բացականչության ժամանակ կրակը լիզեց Հենդալֆի ծառի բունը, հետո թռավ հարևան ծառերի վրա: Կեղևը վառվեց, ստորին ճյուղերը ճոճտացին:

Այդ ժամանակ Հենդալֆը բարձրացավ ծառի կատարը: Նրա գավազանից կուրացուցիչ լույս փայլեց: Կախարդը պատրաստվեց վերևից թռչել ուղիղ գոբլինների սիզակի վրա: Թեև դա նրա էլ վերջը կլիներ, բայց դրա փոխարեն, հավանաբար, նա կսպաներ ոչ քիչ թշնամիների, որ կթափվեին նրա գլխին: Բայց չհասցրեց թռչել:

Այդ վայրկյանին երկնքից նրա վրա ընկավ արծիվների Տիրակալը, ճանկերի մեջ առավ և սուրաց վերև:

Կատաղության ու զարմանքի ոռնոց թռավ գոբլինների կոկորդներից: Հենդալֆը ինչ-որ բան ասաց արծիվների Տիրակալին, սա ուժեղ ճչաց, և իսկույն նրան ուղեկցող սև թռչունները վիթխարի սև ստվերների պես խոյացան ներքև: Գայլերը ոռնացին և ատամները կրճտացրին: Գոբլինները ոռնացին ու դոփեցին, կատաղությանից իզուր օդ նետելով իրենց ծանր սիզակները: Արծիվները նետվում էին նրանց վրա, սև թևերի ուժեղ բախյուններով գետին տապալում կամ քշում հեռու, դեպի անտառ: Արծվային ճանկերը ճանկռում էին նրանց: Մյուս արծիվները ճանկեցին

թզուկներին, որոնք բարձրացել էին ծառերի կատարներին և, սարսափից, նվաղած, ճոճվում էին այնտեղ:

Քիչ էր մնում խեղճ Բիլբոյին նորից մենակ թողնելին... Նա հազիվ հասցրեց կախվել Դորիի ոտքերից, երբ արծիվը վերջինը նրան բարձրացրեց: Նրանք խոյացան խառնաշփոթությունից ու հրդեհից վեր: Բիլբոն կախված էր օդում, նրա թևերը տառաջհորեն տեղից դուրս էին գալիս:

Գորիլանեն ու գայլերն այժմ ցրվեցին անտառով մեկ: Մի քանի արծիվ դեռ պտտվում էին մարտադաշտի վերևում: Հանկարծ կրակը բարձրացավ մինչև ծառերի գագաթները: Ծառերը ճտճտալով բոցավառվեցին: Ամբողջ բացատը ծխի ու կայծերի փոթորիկ էր դարձել: Բիլբոն ժամանակին հայտնվեց օդում. ևս մի րոպե, և նա կործանված էր:

Շուտով հրդեհի հրացույքը մնաց հեռու ներքևում, որպես կարմիր ցուլ սև հենքի վրա: Արծիվները լայն, սահուն պտույտներով շարունակ բարձրանում էին: Բիլբոն երբեք չի մոռանա այդ թռիչքը: Նա պինդ բռնել էր Դորիի կոճերից ու տևքում էր. «Ձեռքերս, ձեռքերս...», իսկ Դորին ճչում էր. «Ոտքերս, ոտքերս»:

Բիլբոյի գլուխը միշտ բարձրությունից պտտվում էր: Նա վատ էր զգում, եթե մի փոքրիկ ձորափից ներքև էր նայում. նա չէր սիրում դնովի աստիճաններ, էլ ուր մնաց ծառերը (մինչև հիմա նա ստիպված չէր եղել գայլերից փրկվել): Կարող էր պատկերացնել, ինչպես էր պտտվում նրա գլուխը հիմա, երբ ներքև էր նայում և տեսնում խավարը, տեղ-տեղ էլ լուսնալույսի փայլը լեռնապարերի կամ հարթավայրը հատող ամպի մակերեսին:

Լեռների գագաթները շարունակ մոտենում էին՝ ասես խավարի միջից վեր ցցված քարե սայրեր: Գուցեն ներքևում ամառ էր, բայց այստեղ շատ ցուրտ էր: Բիլբոն աչքերը փակեց և մտածեց, թե դեռ ինչքան կարող է դիմանալ: Նա պատկերացրեց, թե ինչ տեղի կունենա, եթե ձեռքերը բաց թողնի: Նրա սիրտը խառնեց: Երբ ուժերը նրան լքեցին, հենց այդ ժամանակ էլ թռիչքը վերջացավ: Բիլբոն մատները բաց արեց և տնքալով ընկավ կոշտ հարթակին: Նա պառկել և ուրախանում էր, որ չի այրվել հրդեհից, ու վախենում էր նեղ ելուստից ընկնի սև անդունդը: Նրա գլխում ամեն ինչ խառնվել էր վերջին երեք օրվա սարսափելի իրադարձություններից, ինչպես նաև սովից: Անսպասելիորեն նա լսեց իր սեփական ձայնը.

— Այժմ ես գիտեմ, թե ինչ է զգում խոզի ճարպը, երբ պատառաքաղը վերցնում է նրան թավայի միջից և նորից դնում թարեքի վրա:

— Ո՛հ, չգիտե՛ս,— առարկեց նրան Դորիի ձայնը:— Ճարպը, միևնույն է, վաղ թե ուշ նորից կընկնի թավայի մեջ, և դա հայտնի է: Իսկ մենք, համարձակվում են հուսալ, չենք ընկնի: Եվ հետո, արծիվները պատառաքաղ չեն:

— Ժայռերն էլ թեփ չեն... Օ՛յ...— արտաբերեց Բիլբոն, նստելով ու անհամբերությամբ նայելով արծվին, որ տեղավորվել էր իրենից քիչ հեռու: Հետաքրքիր է, էլի ինչ հիմարություններ է դուրս տվել, և արդյոք արծիվը չի՞ նեղացել: Հարկավոր չէ նեղացնել արծիվներին, երբ դու ընդամենը մի փոքրիկ հոբիտ ես և գիշերը պարկած ես լեռնային արծվի բնում:

Բայց արծիվը կտուցն էր սրում քարի վրա, փետուրները թափ տալիս և նրա խոսքերին ոչ մի ուշադրություն չէր դարձնում: Շուտով երկավ մյուս արծիվը:

— Տիրակալաը քեզ հրամայեց գերիներին բերել Մեծ Խորշը,— գոռաց նա և թռավ:

Առաջին արծիվը Դորիին վերցրեց ճանկերի մեջ և անհետացավ գիշերվա խավարում, Բիլբոյին թողնելով մենակ: Բիլբոն այն է սկսել էր խորհել՝ ինչ է նշանակում «գերիներ» բառը և արդյոք շուտո՞վ ճագարի փոխարեն ինքը կդառնա արծիվների ընթրիք, երբ արծիվը եկավ իր ետևից, բռնեց բաճկոնից ու վեր խոյացավ: Այս անգամ ստիպված չեղան հեռու թռչել: Բիլբոն հայնստվեց լայն խորշում: Նա պառկել էր ու վախից շունչը պահել: Այս կողմը ոչ մի արահետ չէր գալիս, այստեղ կարելի էր գալ միայն թռչելով, իսկ այստեղից՝ թռչել ետ կամ թռչել անդունդը: Մնացած ճամփորդներն արդեն մեջքները ժայռերին հենած նստած էին այնտեղ:

Արծիվների Տիրակալը նույնպես այնտեղ էր և զրուցում էր Հենդալֆի հետ: Դուրս է գալիս, որ ոչ ոք մտադիր չէր Բիլբոյին ուտել: Կախարդը և գլխավոր արծիվը, ամեն ինչից դատելով, ծանոթ էին և նույնիսկ բարեկամական հարաբերությունների մեջ էին: Բանն այն է, որ Հենդալֆը, իր զբաղմունքի բերումով հաճախակի լինելով սարերում, մի անգամ արծիվներին ծառայություն էր մատուցել՝ բուժելով նրանց տիրակալի վերքը: Այնպես որ «գերիներ» նշանակում էր միայն «գորբիների գերիներ» և ուրիշ ոչինչ: Նրանց զրույցին ականջ դնելով՝ Բիլբոն հասկացավ, որ հիմա արդեն իրենց վերջնականապես կհեռանան այս զարհուրելի լեռներից: Հենդալֆը խնդրեց Մեծ արծիվին, որ արծիվները իրեն, թզուկներին ու Բիլբոյին տեղափոխեն որքան կարելի է հեռու. դա կկրճատեր նրանց ճանապարհը հովիտի միջով: Սակայն արծիվների Տիրակալը չհամաձայնեց նրանց տանել այնտեղ, ուր մոտակայքում մարդիկ են ապրում:

— Նրանք մեզ վրա մեծ պրկաղեղներից նետեր կարձակեն,— բացատրեց նա,— կկարծեն, թե մենք իրենց ոչխարների համար ենք թռել այնտեղ: Եվ դրա համար հիմքեր ունեն: Ոչ... Մենք ուրախ ենք գորբիների ձեռքից խաղալիքը խլելու և անձամբ ձեզ երախտահայտույց լինելու համար, բայց հանուն թզուկների կյանքներս վտանգի ենթարկել՝ համաձայն չենք:

— Լավ,— ասաց Հենդալֆը,— այդ դեպքում մեզ տարեք դեպի հարավ, որքան կարելի է հեռու, ձեր հայեցողությամբ: Մենք ձեզ առանց այդ էլ շատ ենք պարտական: Իսկ հիմա սովից մեռնում ենք:

— Ես արդեն մեռած եմ,— ծվաց Բիլբոն թույլ ձայնով, բայց ոչ ոք չլսեց նրան:

— Այդ ցավին ճար անելը դժվար չէ,— ասաց արծիների Տիրակալը:

Քիչ անց դուք կարող էիք տեսնել խարույկի պայծառ, թեժ կրակը ժայռի խորշում և շուրջը գորշ կերպարանքներ. այդ թզուկներն էին ընթրիք պատրաստում: Խարույկից խորովածի անուշ բույր էր տարածվում: Արծիները ժայռի մոտ ցախ բերեցին, ճագար, նապաստակ և ոչխար: Թզուկները հմտորեն բոլոր պատրաստությունները տեսան: Բիլբոն այնպես էր թուլացել, որ օգնել չէր կարող, ասենք ընդհանրապես նրանից օգուտ չկար. նա ճագարներ մորթագերծել, փորոտիքը թափել, միսը կտրատել չգիտեր, որովհետև մսագործը միսը միշտ կտրտած էր բերում նրան՝ միայն խորովիր: Հենդալֆն էլ պառկեց հանգստանալու:

Այսպես ավարտվեցին արկածները Մառախլապատ Լեռներում: Շուտով Բիլբոնի ստամոքսը հաճելիորեն ծանրացավ, չնայած սրտի խորքում նա կգերադասեր հաց ու կարագ և ոչ թե փայտիկների վրա խորոված մսի կտորներ: Նա զգաց, որ քունը տանում է: Կուչ գալով կոշտ քարերի վրա՝ նա ննջեց և քնեց ավելի պինդ, քան երբևէ իր տանը, փետրե անկողնում:

ՉՏԵՍՆՎԱԾ ԱՊԱՍՏԱՐԱՆ

Մյուս առավոտյան Հոբիտին արթնացրեց ծագող արևը: Նա վեր թռավ ժամացույցին նայելու և թեյնիկը դնելու մտադրությամբ... Բայց իսկույն էլ հասկացավ, որ ինքը ամենեւին էլ տանը չէ: Նստեց և անձկությամբ սկսեց մտածել այն մասին, թե ինչ հաճելի կլիներ հիմա լվացվել և ատամները մաքրել... Ո՛չ լվացվել, ո՛չ ատամները մաքրել, ո՛չ նախաճաշին թեյ, բոված հաց ու ապխտած խոզի միս ստանալ նրան չհաջողվեց: Ստիպված եղավ բավարարվել ոչխարի ու ճագարի սառը մսով, որից հետո պատրաստվեցին ճանապարհի ընկնելու:

Այս անգամ նրան թույլ տվեցին բարձրանալ արծվի մեջքին և բռնել փետուրներից: Թզուկները հրաժեշտի խոսքեր ասացին, խոստանալով երբևէ երախտահատույց լինել արծիների Տիրակալին, և տասնհինգ վիթխարի թռչուն խոյացան երկինք: Արևը դեռ չէր բարձրացել, օդը թարմ էր, մառախուղը փռված էր հովիտներում և թևածում էր լեռնագագաթների շուրջը: Բիլբոն աչքերը բացեց ու տեսավ, որ գետինը հեռու ներքևում է, իսկ լեռները մնացել են ետևում ու քանի գնում փոքրանում են: Բիլբոն նորից աչքերը կկոցեց ու ավելի ամուր կառչեց փետուրներից:

— Փետուրներս մի՛ պոկիր,— դժգոհ ասաց արծիվը:— Ի՞նչ ես ճագարի պես վախենում: Ասենք դու իսկապես էլ ճագարի շատ ես նմանվում: Հրաշալի առավոտ է, հաճելի գեփյուռ: Թռիչքից էլ լավ բա՛ն:

Բիլբոն ուզում էր պատասխանել. «Տաք լոգանքը և նախաճաշը տան առջև գտնվող մարգագետնում»: Բայց չհամարձակվեց և միայն ամենափոքր չափով մատները թուլացրեց:

Որոշ ժամանակ անց արծիվները հավանաբար տեսան այն նպատակակետը, դեպի ուր ուղևորվում էին, և սկսեցին իջնել: Նրանք իջնում էին պարուրած և մեծ շրջաններով, բավական երկար, այնպես որ հոբիտը չհամբերեց և նորից աչքերը բաց արեց: Գետինն այժմ առավել մոտիկ էր, ներքևում ծառեր էին երևում, կարծես թե կաղնի և ծփի, ընդարձակ մարգագետիններ ու գետակ: Եվ ուղիղ գետափով անցնող ճանապարհին, որը գետի պատճառով ստիպված էր կեռման տալ, վեր էր ցցվել քարե մի բլուր, ժայռ, որն ասես հեռավոր լեռների առաջավոր դիրք լինելու կամ տիտանական բեկոր, որ այստեղ, հարթավայր էր գցված աներևակայելի հսկայի կողմից:

Հենց այստեղ էլ, ժայռի կատարին, մեկը մյուսի ետևից իջան արծիվները և իջեցրին իրենց ուղևորներին:

— Բարի ճանապարհ,— գոռացին նրանք,— դեպի ուր էլ որ այն գնա... Եվ թող ընդունի ձեզ վերջ ի վերջո հարազատ բույնը:

Արծիվների մոտ ընդունված է այդպես ասել, երբ նրանք ուզում են սիրալիր լինել:

— Ուղեկից քամին թող ձեզ տանի այնտեղ, որտեղ լողում է արևը և զբոսնում է լուսինը,— պատասխանեց Հենդալֆը: Նա գիտեր, թե ինչպես պետք է քաղաքավարի պատասխանել:

Ժայռի կատարը իրենից ներկայացնում էր մի հարթակ, որտեղից ներքև, դեպի գետը աստիճաններ էին իջնում և տրորված մի արահետ: Գետը այդ մասում կարելի էր անցնել ծանծաղուտով՝ մեծ, տափակ քարերի վրայով: Խումբը այստեղ մի պահ կանգ առավ, որպեսզի քննարկի իր պլանները:

— Ես հենց սկզբից մտադրվել էի հնարավորության սահմաններում ձեզ բարեհաջող անցկացնել լեռները, — սկսեց կախարդը: — Իմ հմուտ ղեկավարության և, որ այնքան էլ կարևոր չէ, բարեհաջող հանգամանքների շնորհիվ այդ խնդիրը ես լուծեցի: Վերջ ի վերջո սա իմ արկածը չէ: Ես, կարող է պատահել, մի անգամ էլ մասնակցեմ դրան, բայց հիմա ինձ ուրիշ անհետաձգելի գործեր են սպասում:

Թզուկները սարսափելի վշտացան և տնքացին: Բիլբոն չկարողացավ արցունքները պահել: Նրանք, ախր, արդեն վարժվել էին, մտածելով, որ Հենդալֆն իրենց հետ կմսա մինչև վրեջ և միշտ ծանր վիճակներից կհանի:

— Ես հո չեմ պատրաստվում այս րոպեիս անհետանալու,— ասաց Հենդալֆը:— Կսպասեմ ևս մեկ-երկու օր: Հնարավոր է, ես ձեզ կօգնեմ այս վիճակից դուրս գալու, դեռ ինքս էլ եմ որոշ օգնության կարիք զգում: Մենք ուտելիք չունենք, իրեր չունենք, ձիեր չունենք, և ձեզ հայտնի չէ, թե որտեղ ենք գտնվում: Դա ես ձեզ կբացատրեմ: Հիմա դուք գտնվում եք մի քանի մղոն հյուսիս այն արահետից, որով պետք է գնայիք, եթե շտապով չհեռանայիք լեռնային անցումից: Այս կողմերում մարդիկ քիչ են, բայց այստեղից ոչ հեռու ապրում է Ոմնը: Հենց նա էլ փորել է այս

աստիճանները ժայռի մեջ, որը եթե չեմ սխալվում, անվանվում է Կարրոկ: Այստեղ նա հազվադեպ է գալիս և համենայն դեպս ոչ ցերեկը, այստեղ նրան սպասելը միտք չունի: Եվ նույնիսկ վտանգավոր է: Մենք ինքներս պետք է նրան գտնենք: Եթե հանդիպումը խաղաղ ընթացք ունենա, ես ձեզ մնաք բարով կասեմ և արծինվերի նման բարի ճանապարհ կմաղթեմ, դեպի ուր էլ որ ուղղված լինի այն:

Թզուկներն աղաչեցին-պաղատեցին նրան, որ իրենց չլքի, խոստացան վիշապի ոսկիները, արծաթն ու թանկարժեք իրերը, բայց նա անդրդվելի մնաց:

— Հետո կտեսնենք,— պատասխանեց հրաշագործը բոլոր թախանձնանքներին:— Կարծում եմ, որ ես առանց այդ էլ արդեն վաստակել եմ ձեր ոսկու մի մասը: Այսինքն՝ այն ձերը կլինի, երբ դուք կկարողանաք ձեռք բերել:

Վերջապես թզուկները ձեռք առանքին նրանից: Գետում լողացան, որը ծանծաղուտում խոր չէր, ջուրը վճիտ էր, քարքարոտ հատակով, և, արևի տակ չորանալով, իրենց թարմացած զգացին, չնայած վնասվածքներն ու ճանկոճածքները դեռ ցավում էին, և, իհարկե, սովածացել էին: Ծանծաղուտով մյուս ափն անցնելով (հոբիտին որևէ մեկը միշտ շալակած էր տանում), ճանապարհորդները քայլեցին սաղարթախիտ կաղնիների և բարձր ծփիների երկայնքով տարածված փարթամ կանաչ խոտի միեջով:

— Իսկ ժայռն ինչո՞ւ է կոչվում Կարրոկ,— հարցրեց Բիլբոն, որ հիմա քայլում էր կախարդի կողքից:

— Նա Կարրոկ է անվանում, որովհետև այդպես է ցանկանում ինքը:

— Ո՞վ:

— Ոմնը, ում մասին որ խոսում էին: Շատ կարևոր դեմք է: Խնդրում եմ նրա հետ քաղաքավարի լինեք: Ավելի լավ է ես ձեզ աստիճանաբար կներկայացնեմ, երկու-երկու: Եվ մտքներովդ չանցնի նրան գրգռել, թե չէ աստված գիտի, ինչ կարող է պատահել: Չզուշացնում եմ ձեզ՝ նա շատ տաքարյուն է և ուղղակի սարսափելի, երբ զայրանում է, իսկ լավ տրամարդության դեպքում շատ սիրալիր է:

Թզուկները, լսելով, թե ինչի մասին է խոսում կախարդը Բիլբոյի հետ, հավաքվեցին նրանց շուրջը:

— Եվ դուք մեզ տանում եք այդպիսի մեկի մոտ: Մի՞թե չէիք կարող ավելի բարի մեկին գտնել: Եվ չի՞ կարելի արդյոք ավելի հասկանալի բացատրել,— հարցրի տարափ տեղացին նրանք:

— Հենց այդպիսի մեկի: Ոչ, չէի կարող: Ես առանց այն էլ բավական հասկանալի բացատրեցի,— զայրացկոտ պատասխանեց կախարդը:— Եթե անպայման ուզում եք իմանալ, նրա անունը Բեորն է: Նա փոխում է մորթին:

— Ինչպե՞ս: Մորթեգո՞րծ է: Նա, որ ճագարից ծովաշուն է սարքում, երբ չի կարողանում այն սկյուռիկ դարձնել,— հարցրեց Բիլբոն:

— Ողորմած աստված, դե, իհարկե, բնական է, ինքնըստինքյան հասկանալի է՝ ոչ,— գոռաց Հենդալֆը:— Բարի եղեք, միստր Բեգինս, հիմարություններ դուրս մի՛ տվեք: Եվ հետո երդվեցնում եմ քեզ աշխարհի բոլոր հրաշքներով, Բիլբո, այլևս չհիշատակես «մորթագործ» բառը, քանի գտնվում ես նրա տնից հարյուր մղոն շառավղով տարածության վրա... Նա ներկայանում է մերթ վիթխարի սև արջի կերպարանքով, մերթ վիթխարի, հզոր, սևահեր, մեծ-մեծ ձեռքերով և երկար մորուքով մարդու կերպարանքով: Ոմանք ասում են, իբրև թե նա արջ է՝ սև արջերի հնագույն ու նշանավոր ցեղից, որ ապրել են լեռներում մինչև հսկաների գալը: Մյուսներն ասում են, իբրև թե այն մարդկանց հետևորդն է, որ ապրել են լեռներում, քանի դեռ այնտեղ չէին բնակվել Սմոգը և ուրիշ վիշապներ, քանի դեռ հյուսիսից չէին բարեհաճել գոբլինները: Չգիտեմ, իհարկե, բայց ինձ թվում է, ճշմարիտ է երկրորդ ենթադրությունը: Բոլոր դեպքերում նրա վրա ուրիշ ոչ մեկի հմայանքը չկա, բացի իր սեփականից: Նա ապրում է կաղնուտում, փայտե ընդարձակ տան մեջ, անասուն և ձիեր է պահում, որոնք պակաս հրաշք չեն, քան ինքը: Սրանք նրա համար աշխատում են և նրա հետ խոսում: Ինքը նրանց չի ուտում և վայրի կենդանիներ էլ չի որսում: Նա փեթակներ է պահում, անհամար փեթակներ՝ խոշոր չար մեղուններով, և հիմնականում սնվում է սերուցքով ու մեղրով: Արջի կերպարանքով նա թափառում է տնից հեռու: Մի անգամ ես նրան հանդիպեցի գիշերը, մենակ, Կարրոկի կատարին նստած. նայում էր, թե ինչպես է լուսինը անցնում Մառախլապատ Լեռների ետևը և փնթփնթում էր արջի լեզվով. «Կգա օրը, դրանք բոլորը կջքվեն, և այն ժամանակ ես կվերադառնամ»: Դրա համար էլ կարծում եմ, որ նա ինչ-որ ժամանակ եկել է սարերից:

Բիլբոյի և թզուկների համար այժմ բավական խորհելու բան գտնվեց, այնպես որ նրանք լռեցին ու դադարեցին Հենդալֆին հարցեր տալուց: Նրանք գնացին, գնացին, մեկ վեր, մեկ վար: Տապ էր: Բիլբոն այնքան էր սովածացել, որ հաճույքով կաղին կուտեր, եթե դրանք արդեն հասած ու գետնին թափված լինեին:

Վերջապես կեսօրից հետո նրանք նկատեցին, որ ծաղիկներն սկսեցին աճել այնպես, կարծես թե դիտմամբ էին ցանել, ամեն տեսակն առանձին: Հատկապես շատ էր առվույտը. կարմիր առվույտի ամբողջ ծովեր կային, կարճ սպիտակներ՝ մեղրի անուշ հոտով, վարդագույն: Ամբողջ օրը լցված էր բզզոցով ու գվվոցով: Չորս կողմը աշխատում էին մեղունները: Այն էլ ինչպիսի՜... Ձիաբռռերից խոշոր: Բիլբոն նման բան չէր տեսել:

«Սրանցից մեկը որ ինձ կծի,— մտածեց նա,— համա թե կուռեմ, հա՛»:

— Արդեն մոտ է,— ասաց Հենդալֆը:— Սկսվեցին մեղվի հանդակները:

Շուտով երևաց հինավուրց կաղնիների շարքը, իսկ դրանց ետևում բարձր կանաչ փշե մի ցանկապատ, որի միջով ոչ կանցնես, ոչ էլ կտեսնես, թե ինչ կա այն կողմում:

— Ավելի լավ է դուք այստեղ սպասեք,— ասաց կախարդը:— Երբ կկանչեմ կամ կսուլեմ, հետևեցեք ինձ: Բայց միայն հիշեք՝ զույգերով, հինգ թույն ընդմիջումով: Բոմբուրը մեր մեջ ամենից գիրուկն է, նա երկուսի տեղ կանցնի և վերջինը կլինի: Գնանք, միստր Բեգինս... Այստեղ մոտակայքում դարպաս պետք է լինի:

Այդ խոսքերով կախարդը շարժվեց ցանկապատի երկայնքով, իր հետ տանելով վախեցած Բիլբոյին:

Շուտով նրանք տեսան բարձր և լայն դարպասը, իսկ դրանից այն կողմ այգի և մի քանի ցածր, փայտե շինություններ. գերանակապ ծղոտե տանիքով շտեմարաններ, ձիանոց, մարագ և երկարավուն, ցածրիկ մի բնակելի տուն: Բարձր ցանկապատի ներսում, հարավային կողմից, շարքերով դրված էին սրագագաթ, ծղոտով ծածկված անհամար փեթակներ: Օդում լսվում էր հսկա մեղուների անլռելի գզվոցը, որոնք անդադար ներս ու դուրս էին թռչում փեթակներից:

Կախարդն ու հոբիտը հրեցին ծանր, ճռճացող դարպասը և լայն շավիղով գնացին դեպի տուն: Հենց խոտի միջով վարձով նրանց մոտեցան ինամված, հարթ մաշկով, շատ խելացի մոուլներով երկու ձիուկ, ուշադրությամբ նայեցին եկվորներին և սլացան դեպի տնակները:

— Նրանք տիրոջը կգեկուցեն օտարների գալու մասին,— խոսեց Հենդալֆը:

Վերջպես նրանց ուղին փակեց մի տուն, որը երկու կից շինությունների հետ միասին բակ էր առաջացնում: Բակի կենտրոնում, որի շուրջը մի մեծ կաղնու բուն էր ընկած, կտրտված ճյուղեր էին թափված: Այստեղ կանգնած էր մի հսկա մարդ խիտ սև մորքուով ու սև մազերով, հզոր ձեռքերով ու ոտքերով: Հագել էր մինչև ծնկները հասնող բրդե պարեգոտ և հենվել մեծ կացնին: Ձիուկները, մոուլները նրա ուսերին դրած, կանգնել էին կողքերին:

— Օհո՛, ահա նրանք,— ասաց մարդը ձիերին:— Նրանց տեսքը սարսափելի չէ, գնացեք...— Նա բարձր ծիծաղոց:— Ովքե՞ր եք և ինչ է պետք ձոգ,— կոպիտ հարցրեց նա՝ կռանալով Հենդալֆի վրա: Ինչ վերաբերում է Բիլբոյին, ապա նա ազատ կանցներ մարդու ոտքերի արանքից, նույնիսկ գլուխը նրա մոխրագույն պարետոզին չկպցնելով:

— Ես Հենդալֆն եմ,— ասաց կախարդը:

— Առաջին անգամ եմ լսում,— մռթմռթաց մարդը:— Իսկ սա ի՞նչ է,— կռանալով որպեսզի տեսնի հոբիտին, և սև հոնքերը կիտելով հարցրեց նա:

— Սա միսոր Բեգինսն է, անբասիր վարքի տեր հոբիտ, շատ օրինավոր ընտանիքից,— պատասխանեց Հենդալֆը:

Բիլբոն ողջունեց: Գլխարկը հանել չէր կարող, որովհետև չունեիր:

— Ես հրաշագործ եմ,— շարունակեց Հենդալֆը:— հասկանալի է, ձեր մասին լսել եմ: Դուք ինչ չգիտեք, բայց գուցե գիտեք իմ ազգական Ռադագաստի՞ն: Նա ապրում է Սև Անտառի հարավային սահմանի մոտ:

— Ինչպես չէ, փառահեղ մարդ է, չնայած կախարդ է: Մի ժամանակ մենք հաճախ էինք հանդիպում: Լավ, հիմա ես գիտեմ, դուք ով եք կամ ում տեղն եք ներկայանում: Ձեզ ի՞նչ է հարկավոր:

— Ճիշտն ասած, կորցրել ենք մեր ունեցած-չունեցածը, մոլորվել ենք և քո օգնության կամ գոնե բարի խորհրդի կարիքն ենք զգում: Բանն այն է, որ լեռներում գոբլինները մեզ լավ դաս տվին:

— Գո-ոբլիններ՞ըրը,— հարցրեց մարդը արդեն ոչ այնքան կոպիտ տոնով:— Օհո՛, ուրեմն, դուք նրանց ճա՞նկն եք ընկել: Իսկ, հարց է ծագում. ի՞նչ գործ ունեիք այդ կողմերում:

— Դա պատահաբար ստացվեց: Նրանք մեզ հանկարծակիի բերեցին լեռներում գիշերելու ժամանակ: Մենք արևմուտքի կողմերից անցնում էինք այստեղ: Բայց դա երկար պատմություն է:

— Այդ դեպքում տուն մտեք և պատմեք գոնե մի մասը, եթե դրա վրա ամբողջ օրը չի գնա,— ասաց մարդը՝ տան դուռը դեպի ներս բանալով:

Նրան հետևելով՝ Հենդալֆն ու Բիլբոն հայտնվեցին մի ընդարձակ նախասենյակում, որի կենտրոնում օջախ կար: Չնայած ամառ էր, փայտերը վառվում էին, և ծուխը բարձրանում էր վերև, դեպի մրոտ գերանները, տանիքում ելք որոնելով: Նրանք անցան այդ մուկ դահլիճը, որ լուսավորված էր միայն օջախի կրակով ու երդիկից ընկնող լույսով, և մի փոքրիկ դռնով դուրս եկան պատշգամբ, որ փայտե հենասյուների վրա էր պահվում: Հարավահայց լինելով, այն դեռ պահպանում էր ցերեկվա ջերմությունը, արևի ճառագայթները շեղակի ընկնում էին ներս ու ոսկե անձրևի պես թափվում մինչև պատշգամբի աստիճանները ծաղիկներով ծածկված այգու վրա:

Նրանք նստեցին փայտե նստարաններին: Հենդալֆը սկսեց պատմել, իսկ Բիլբոն հատակին չհասնող կարճ ոտքերն էր թափահարում, նայում էր այգու ծաղիկներին և գուշակում, թե ինչպես են կոչվում դրանք. մինչ այդ դրանցից շատերը նա երբեք չէր տեսել:

— Ես սարերում մի երկու ընկերոջ հետ էի...— սկսեց կախարդը:

— Մի երկո՞ւ: Ես միայն մեկին եմ տեսնում, այն էլ հազիվ եմ կարողանում նշմարել,— ընդհատեց Բեորնը:

— Ճիշտն ասած, ես չէի ուզում ձեզ խանգարել, վախենում էի, որ զբաղված կլինեք: Եթե թույլ տաք, ես ազդանշան կտամ:

— Տվեք, թող ձեր ասածը լինի:

Հենդալֆը բարձր սուլեց, և իսկույն Տորին ու դորին տան ետևից դուս եկան արահետ, իսկ մեկ րոպե անց կանգնեցին նրանց առջև և խոնարհ գլուխ տվեցին:

— Դուք ուզում եք ասել՝ մի երեք,— նկատեց Բերոնը:— Սրանք արդեն ոչ թե հորիտներ են, այլ թզուկներ...

— Տորին Օուքենշիլդ, ձեր ծառա... Դորի, ձեզ ծառա...— ասացին երկու թզուկները և նորից գլուխ տվեցին:

— Շնորհակալ եմ, ես ձեր ծառայության կարիքը չունեմ,— պատասխանեց Բերոնը:— Դրա փոխարեն դուք, երևում է, իմ կարիքը ունեք: Ես այնքան էլ շատ չեմ սիրում թզուկներին: Բայց քանի որ դու իսկականից Տորինն ես, Տրեյնի որդին, Տրորի թոռը, իսկ ձեր ուղեկիցը միանգամայն օրինավոր թզուկ է, դուք թշնամի եք գորլիներին և ոչ մի մտարդություն չունեք որևէ խարդախություն անել իմ տերությունում... Ի դեպ, ինչպե՞ս հայտնվեցիք այստեղ:

— Նրանք գնում էին իրենց հայրերի երկիրը, որ գտնվում է Սև Անտառի ետևում, դեպի արևելք,— մեջ մտավ Հենդալֆը:— Մենք զուտ պատահականորեն ենք հայտնվել ձեր տիրապտությունում: Մենք կտրում էինք Վերին Լեռնանցքը և մտածում էինք դուրս գալ այն ճանապարհը, որ ընկած է ձեր երկրից հարավ: Եվ այստեղ մեզ վրա տվին չար գորլիները: Դրա մասին էլ ուզում էի պատմել ձեզ:

— Դե պատմեք, էլի,— անհամբեր ասաց Բերոնը, որ քաղաքավարությամբ աչքի չէր ընկնում:

— Սարսափելի ամպրոպ սկսվեց: Քարե հսկաները ժայռաբեկորներ էին նետում միմյանց, դրա համար էլ մենք թաքնվեցինք քարայրում ես, հորիտը և մի քանի թզուկներ...

— Ձեր կարծիքով երկուսը մի քանի՞ս է...

— Իհարկե ոչ: Բայց մենք շատվոր ենք...

— Ո՞ր ես կորել նրանք: Սպանվա՞ծ ես, խժռվա՞ծ ես, տո՞նն ես վերադարձել:

— Ո-ո՛չ: Նրանք, երևում է, ամաչեցին բոլորը միանգամից գալ, երբ ես սուլեցի: Գիտեք ինչ կա, մենք պարզապես վախենում ենք նեղություն տալ ձեզ:

— Եկեք շվկացրեք... Քանի որ, միևնույն է, անկոչ հյուր եք, մեկ-երկուսով ավել կամ պակաս ոչինչ չի փոխվում,— փնթփնթաց Բերոնը:

Հենդալֆը նորից սուլեց, և նույն վայրկյանին նրանց առջև կանգնեցին Նորին ու Օրին:

— Այ քեզ բա՛ն,— ասաց Բերոնը:— Արագաշարժ եք, ինչ ասեմ: Որտե՞ղ էիք թաքնվել, Հենդալֆի ծխախոտատուփի մե՞ջ: Համեցեք այստեղ:

— Նորի՝ պատրաստ ձեզ ծառայելու, Օրի՝ պատ...— սկսեցին նրանք, բայց Բեորնը ընդհատեց.

— Շատ շնորհակալ եմ: Երբ ձեր ծառայությունը պետք լինի, ես ինքս կխնդրեմ, նստեք, և եկեք շարունակենք, թե չէ մինչև ըթրիք պատմությունը լսել չենք հասցնի:

— Հենց որ քնեցինք,— շարունակեց Հենդալֆը,— ետին պատի վրա ճեղքը մեծացավ, այնտեղից դուրս թռան գորբիկները, բռնեցին հոբիտին, թզուկներին և մեր պոնիների երմակը...

— Երամա՞կը: Դուք, ինչ է, թափառաշրջիկ կրկե՞ս եք, թե բռնների սարեր էիք տեղափոխում: Թե՞ ձեզ համար վեց պոնին երամակ է նշանակում:

— Ոչ, ոչ: Ճիշտն ասած վեցից ավելի պոնի ունեինք, որովհետև մենք էլ շատ էինք... Ըհր՛, էլի երկուսը:

Այդ րոպեին հայնստվեցին Բալինն ու Դվալինը և այնքան ցածր խոնարհվեցին, որ մորուքներով քարե հատակն ավլեցին: Վիթխարի մարդը մռայլվեց, բայց թզուկներն այնպես էին ջանում քաղաքավարի լինել, այնպես էին գլխով անում, խոնարհվում, երկատվում ու կնգուղները թափահարում նրա ծնկների առջև իսկական թզուկային քաղաքավարությամբ, որ Բեորնը դադարեց մռայլվելուց և բեկ-բեկ ծիծաղեց: Ախր նրանք շատ ծիծաղելի էին...

— Իսկապես որ կրկես է,— Ներս եկեք, պարոն գվարճասերներ, ներս եկեք: Ի՞նչ են ձեր անունները: Ծառայություններն առայժմ պետք չեն, միայն անունները: Նստեք և իրարանցմանը վերջ տվեք:

— Բալին ու Դվալին,— պատասխանեցին թզուկները, չհամարձակվելով վիրավորվել, և ապշած նստեցին ուղիղ հատակին:

— Շարունակի՛ր,— հրամայեց Բեորնը կախարդին:

— Որտե՞ղ կանգ առա... Ա՛խ, այո: Ինձ չբռնեցին: Ես գավազանիս կրակով երկու գորբին սպանեցի...

— Հրաշալի է,— միջամտեց Բեորնը:— Ուրեմն կախարդն էլ կարող է երբեմն որևէ բանի պետք գալ»

— ... և ճեղքից ներս սողոսկեցի, երբ այն փակվում էր: Ես նրանց ետևից գնացի մինչև գլխավոր դահլիճը, որտեղ հավաքված էին գորբիկները՝ Գերագույն Գորբիկը երեսուն կամ քառասուն զինված պահապաններով: Ես մտածեցի. «Եթե նույնիսկ թզուկները կապված չլինեին իրար, ի՞նչ կարող էր անել մեկ դյուժինը այսպիսի բազմության դեմ»:

— Դյուժի՞ն: Առաջին անգամ եմ լսում, որպեսզի ութը դյուժին կոչվի: Թե՞ ձեր ծխախոտատուփում էլի ինչ-որ պահեստայիններ կան:

— Այո, ահա մեկ գույգ էլ՝ Ֆիլին և Կիլին,— ասաց Հենդալֆը, երբ նրանց առջև ծլեցին այդ երկուսը և սկսեցին ժպտալ ու գլուխ տալ.

— Բավական է, բավական է,— կտրուկ ասաց Բեորնը:— Նստեք և լռեք: Շարունակե՛ք, Հենդալֆ...

Եվ Հենդալֆը շարունակեց, մինչև հասավ ստորին դարպասի մոտ խավարում տեղի ունեցած կռվին և այն սարսափելի պահին, եր հայտնի դրածավ, որ կորել է միստր Բեգինսը. «Մենք մեկս մյուսիս հաշվեցինք, և պարզվեց, որ հոբիտը չկա: Ընդամենը տասնչորսն էինք մնացել»:

— Տասնչորսը: ուրեմն տասից հանած մեկ կմնա տասնչորս: Սա ինչ-որ նորություն է: Դուք ուզում եք ասել «ինը» կամ թե չէ ինձ ներկայացրել եք ջոկատի ո՞չ բոլոր անդամներին:

— Այո, հասկանալի է, դուք դեռ չեք տեսել Օյնին և Գլոյնին: Ա-ա-ա՛, ահա և Նրանք: Դուք Նրանց կներե՞ք ավելորդ անհանգստություն պատճառելու համար:

— Լավ, թող գան,, Արագ ներս եկեք և նստեք: Լսեցեք... Հենդալֆ, միևնույն է, ստացվում է այսպես. դուք, տասը թզուկը և հոբիտը, որ կորել էր: Ընդամենը տասներկու և ոչ թե տասնչորս: Գուցե կախարդները այնպես չե՞ն հաշվում, ինչպես մարդիկ: Բայց դե հիմա շարունակեք, ինդրեմ:

Բեորնը աշխատում էր ցույց չտալ, թե այդ պատմությունն ինչպես է շարժել իր հետաքրքրասիրությունը: Առաջներում նա գիտեր լեռների հենց այն մասը, որի մասին գնում էր խոսքը... Նա գլխով էր անում և փնթփնթում, լսելով, թե ինչպես է գտնվել հոբիտը, ինչպես են Նրանք գլորվել քարե գահավանդակով և գայլերի ոհմակի մասին: Երբ Հենդալֆը հասավ այն տեղին, երբ Նրանք բարձրացել էին ծառերը, իսկ գայլերը նստոտել էին ծառերի տակ, Բեորնը վեր կացավ, մռթմռթալով սկսեց ետ ու առաջ քայլել.

— Ես պետք է այնտեղ լինեի, իմ գլուխն էին կորցրել: Նրանք իմ ձեռքից հրավառությամբ չէին պրծնի:

— Դե ինչ,— ասաց Հենդալֆը, շատ գոհ այն բանից, որ պատմվածքը տպավորություն էր թողնում,— ինչ կարող էի՝ արեցի: Եվ ահա մենք նստել ենք ծառերին, գայլերը ներքևում կատաղել են, և այստեղ լեռներից իջան գորլիկներն ու մեզ տեսան: Նրանք հրճվանքից ոռնացին ու ծաղրական երգեր երգեցին. «Տասնհինգ թռչուն...»:

— Ողորմա՛ծ աստված,— տնքաց Բեորնը:— Չսկսեք ինձ հավատացնել, թե գորլիկները հաշվել չգիտեն: Գիտեն, տասներկուսը տասնհինգ չէ, իսկ Նրանք դա հաստատ գիտեն:

— Ես՝ նույնպես: Բիֆուրն ու Բոֆուրն էլ այնտեղ էին: Ուղղակի ես չէի համարձակվում Նրանց ներկայացնել: Ահա Նրանք:

Այս խոսքերի հետ հայտնվեցին Բիֆուրն ու Բոֆուրը:

— Ես էլ,— վրա տվեց Բոմբուրը, փնչացնելով հասնելով նախորդ զույգին: Նա շատ գեր էր, ընդ որում և բարկացել էր, որ իրեն վերջում են թողել,

դրա համար էլ շունչը կտրվում էր: Նա հրաժարվեց հինգ րոպե սպասելու և իսկույն նրես ընկավ:

— Դե ահա և դուք իսկապես տասնհինգն եք, իսկ քանի որ գործիները հաշվել գիտես, ապա նշանակում է այդքան էլ նստած եք եղել ծառերին: Վերջապես կարող եք ավարտել ձեր պատմությունն առանց ընդհատելու:

Միայն այստեղ Բեգինսը հասկացավ, թե որքան խելացի վարվեց Հենդալֆը: Ընդմիջումները գրգռում էին Բեորնի հետաքրքրասիրությունը, իսկ Հենդալֆի հերթականորեն պատմելը թույլ չտվեց, որ Բեորնը թզուկներին իսկույն վռնդի որպես կասկածելի մուրացկանների: Բեորնը խուսափում էր իր տունը հյուրեր հրավիրել: Նա բարեկամներ քիչ ուներ, նրանք էլ բավական հեռու էին ապրում, և երբեք միաժամանակ երկու բարեկամից ավելի չէր ընդունում, իսկ այստեղ, նրա պատշգամբում հավաքվել էին տասնհինգ անձանոթներ:

Երբ կախարդը ավարտեց պատմությունն այն մասին, թե ինչպես արծիվները փրկեցին իրենց ու տեղափոխեցին Կարրոկ ժայռի վրա, արևը մտավ Մառախլապատ Լեռների ետևը, և այգում երկա՛ր-երկար ստվերներ փռվեցին:

— Հրաշալի պատմություն էր,— ասաց Բեորնը:— Վաղուց այդպիսի բան չէի լսել: Գուցե դուք բոլորն էլ հնարում եք, բայց պատմությունը ընթրիքի արժանի է: Ուտել ուզո՞ւմ եք:

— Այո, շատ,— խմբով պատասխանեցին հյուրերը:— Խորին շնորհակալություն:

Նախասենյակում այժմ բոլորովին մթնեց: Բեորնը ծափ զարկեց, և ներս վազեցին չորս գեղեցկագույն սպիտակ պոնիներ, ու մի քանի խոշորամարմին մոխրագույն շներ: Բեորնը ինչ-որ բան ասաց անհասկանալի մի լեզվով, որ բաղկացած էր գազանների արձակած հնչյուններից: Խոնարհ կենդանիները դուրս եկան և նորից վերադարձան՝ երախներում մեկ-մեկ ջահ բերելով: Նրանք օջախի կրակից վառեցին ջահերը, մտցրին օջախի շուրջը գտնվող սյուների ամրացված ջահակալների մեջ: Շները, երբ ուզում էին, կանգնում էին ետին թաթերի վրա և առջևի թաթերով պահում այն ամենը, ինչ որ իրենց հարկավոր էր: Նրանք ճարպկորեն բերեցին պատերին հենված տախտակներն ու իշոտնուկները և շարեցին օջախի առջև:

Հետո լսվեց «բա՛-բա՛-բա՛», և ներս ընկան մի քանի սպիտակաթույր մաքիներ՝ խոշոր, ածուխի պես սև խոյի առաջնորդությամբ: Մաքիներից մեկը բերանով պահել էր անկյուններում կենդանիների պատկերներ գործած սպիտակ մի սփռոց, մյուսներն իրենց լայն մեջքներին բերում էին սկուտեղներ, որոնց վրա դրված էին թասեր ու փայտե ափսեներ, դանակներ ու փայտե գդալներ: Շներն արագ-արագ այդ բոլորը դասավորեցին սեղաններին: Սեղաններն այնքան ցածիկ էին, որ նույնիսկ Բիլբոյի համար շատ հարմար էր նստելը: Պոնին սեղանի մի ծայրին դրեց հյուսած լայն նստատեղերով, կարճ ոտքերով երկու աթոռ՝ Հենդալֆի և

Տորինի համար, իսկ սեղանի մյուս ծայրին դրեց մեծ, սև, նույնպես ցածր և նույնպես հյուսկեն նստատեղով մի աթոռ Բեորնի համար: Բեորնը նստեց և իր հաստ ոտքերը երկարեց սեղանի տակ: Հավանաբար, նստարանները, ինչպես նաև սեղանները դիտավորյալ ցածր էին արել, որպեսզի Բեորնին ծառայող հրաշալի կենդանիների համար հեշտ լիներ նստել: Դե, իսկ ինչի՞ վրա նստեցին մնացածները: Նրանց մասին էլ հոգ տարան: Պոնիները գլորելով թմբուկների պես կլոր, հարթ տաշած ու հղկած և նույնիսկ Բիլբոյին համար կոճղեր բերեցին: Շուտով բոլորը տեղավորվեցին սեղանի շուրջը՝ Բեորնի գլխավորությամբ: Նախասենյակում, երևի, վաղուց այդքան մեծ խումբ չէր հավաքվել:

Եվ այստեղ սկսվեց ընթրիքը կամ ճաշը (ինչպես կուզեք անվանեք), որի նմանը նրանք չէին տեսել այն օրից, ինչ հեռացել էին «Ընտանեկան Վերջին Հանգրվանից»: Շուրջը թրթռում էր ջահերի և օջախի կրակը, իսկ սեղանին վառվում էին երկու երկար կարմիր մոմ: Մինչ հյուրերը կկշտանային, Բեորնը նրանց զբաղեցնում էր՝ իր թավ, որոտալից ձայնով պատմություններ պատմելով վայրի հողերի և հատկապես մութ, վտանգներով լի անտառի մասին, որ տարածվում էր մինչև հեռավոր Հյուսիս ու Հարավ և փակում Արևելք տանող ճանապարհը, ահասարսուռ Սև Անտառի մասին:

Թզուկները լսում էին և գլուխները տարուբերում, գիտենալով, որ շուտով իրենք էլ մտնելու են Սև Անտառի խորքերը, և որ Մառախլապատ Լեռներից հետո այդ անտառը վիշապի միջնաբերդ տանող ճանապարհին նրանց համար պահած արգելքներից ամենավտանգավորն է: Ուտելուց հետո նրանք նույնպես սկսեցին պատմություններ պատմել, բայց Բեորնի քունը տանում էր, և նա անուշադիր էր լսում: Թզուկները բլբլացնում էին ոսկու, արծաթի և թանկարժեք իրերի մասին, դարբինների արհեստի մասին, իսկ Բեորնին այդպիսի բաները քիչ էին հետաքրքրում. նրա նախասենյակում ոչ մի ոսկե կամ արծաթե իր չկար և ոչ մի մետաղյա իր, բացի դանակներից:

Թզուկները սեղանի շուրջը դեռ երկար նստեցին և փայտե թասերով մեղր էին խմում: Դրսում բոլորովին մթնել էր: Օջախը փայտ զցեցին, ջահերը հանգրիհ, կրակի լեզուները պարում էին նրանց առջև, իսկ շուրջը բարձրանում էին սյուները, և դրանց գագաթները սրվում էին մթության մեջ, ինչպես ծառերի կատարները անտառում: Կարող է պատահել որևէ կախարդական բան կար այստեղ, բայց Բիլբոն տանիքի փայտամածի մեջ տերևների շրշյուն էր լսում ու բվի կռնչոց: Հետո նա դանթել, ձայներն սկսեցին մարել, հեռանալ... և հանկարծ նա ցնցվեց ու արթնացավ:

Արթնացավ նրանից, որ մուտքի դուռը ճռռաց ու փակվեց: Բեորնը անհետացավ: Թզուկները նստել էին հատակին, օջախի առջև, ոտքերը խաչել ու երգ էին երգում: Ահա մի քանի քառյակ, բայց ոչ բոլորը, դրանք առավել շատ էին, և թզուկները երկար ժամանակ երգում էին ու երգում.

Մռայլ ու խոնավ քամի է փչում,
Սարալանջի խեղճ ծառերին տանջում,
Կարծես խառնվել են ցերեկ ու գիշեր
Ու երկարում է սև ամպերի չուն:

Քամին փչում է լեռներից սառած,
Սոճու անտառը ցրտից սարսռաց,
Ու տազնապահար, թանձր խավարում
Տերևներն իրար շրշացին կամաց:

Քամին փչում է դեպի արևելք,
Թրջված անտառը մրսում է, դողում,
Թփերը սառել, ու ցուրտ երկնքում
Ամպերն էին դեռ ծանրորեն լողում:

Քամին դեպի այն սև սարն է փչում,
Որտեղ հրեշն է թաքնվել որջում,
Որտեղ լողում է ծուխը թանձրախիտ,
Լուսնի արծաթում հալվում է, կորչում:

Բիլբոն նորից ննջեց: Հանկարծ վեր կացավ Հենդալֆը.

— Քնելու ժամանակն է,— ասաց նա,— մեր քնելու ժամանակն է, ոչ Բեորնի: Այստեղ, նախասենյակում, մենք կարող ենք հանգիստ քնել, ոչնչից չվախենալով, բայց զգուշացնում եմ, հիշեցեք այն, ինչ մեզ խորհուրդ տվեց Բեորնը հրաժեշտի ժամանակ. ոչ մի դեպքում մինչև արևածագը տնից դուրս չգալ, թե չէ ձեզ համար վատ կլինի:

Բիլբոն տեսավ, որ կողքի պատի տակ, պատի և սյունի արանքում արդեն տեղ էին գցել ցածր տախտակամածի վրա: Բիլբոյի համար պատրաստել էին ծղոտե ներքնակ և բրդե վերմակ: Նա գունդուկծիկ եղավ և հաճույքով փաթաթվեց վերմակի մեջ, չնայած ամառ էր: Կրակը մարում էր: Բիլբոն քնեց: Գիշերվա կեսին նա արթնացավ. օջախում կրակը մլմլում էր, թզուկներն ու Հենդալֆը հանդարտ շնչում էին, ըստ երևույթին խոր քնած էին: Լուսինը բարձրացել էր և երդիկից ներս էր նայում: Հատակին լուսնի շողքն էր ընկած: Դրսից փնթփնթոց և ինչ-որ աղմուկ էր լսվում, ասես դռան ետևում մի մեծ գազան էր շուռուճուճ գալիս: Բիլբոն մտածեց. չլինի՞ Բեորնն է այստեղ արջի կերպարանք ստացել, չլինի՞ թե գա իրենց ուտի: Հետո նա փաթաթվեց վերմակի մեջ և, չնայած իր տազնապաներին, նորից քնեց:

Երբ առավոտյան վերջնականապես արթնացավ, արդեն բավական ուշ էր: Թզուկներից մեկը սայթաքեց և, Բիլբոյին կաշելով, փռվեց հատակին: Դա Բոֆուրն էր: Երբ Բիլբոն աչքերը բացեց, նա փնթփնթում էր ու ջղայնանում.

— Վեր կաց, ալարկոտ, թե չա նախաճաշ չի հասնի:

Բիլբոն արագ վեր թռավ տեղից:

— Նախաճաշ,— գոռաց նա,— որտե՞ղ է:

— Մեծ մասը մեր ստամոքսներում է,— արձագանքեցին նախասենյակում ետ ու առաջ քայլող թզուկները:— Իսկ այն, ինչ մնացել է, պատշգամբում է: Մենք արևածագից Բեորնին ենք փնտրում և չենք կարողանում գտնել: Դրա փոխարեն պատշգամբում նախաճաշի համար բացված սեղան գտանք:

— Իսկ Հենդալֆն ո՞ր է,— հարցրեց Բիլբոն՝ պատշգամբ դուրս թռչելով:

— Ինչ-որ տեղ թրև է գալիս,— պատասխանեցին նրան:

Կախարդը մինչև երեկո չվերադարձավ: Միայն մայրամուտին նա մտավ այն սենյակը, որտեղ ընթրում էին հոբիտն ու թզուկները: Նորից մատուցում էին հրաշալի գազանները: Նախորդ երեկոյից ոչ Բեորնի ձայնն էր լսվում, ոչ էլ ինքն էր երևում, իսկ թզուկները տարակուսանքի մեջ էին:

— Ո՞ր է մեր հյուրընկալը: Ո՞ր էիք անհետացել ամբողջ օրը,— Հենդալֆի երևալուն պես գոռացին բոլորը:

— Հարցերին կպատասխանեմ հերթով, այն էլ ընթրիքից հետո: Առավոտից բերանս մի կտոր բան չեմ դրել:

Վերջապես Հենդալֆը ետ հրեց ափսոսն ու սափորը (նա ամբողջ երկու հաց կերավ, դրանց վրա կարագ, մեղր ու կաթնասեր քսելով, խմեց համարյա մեկ լիտր մեղրահյութ) և ծխամորճը հանեց:

— Նախ կպատասխանեմ երկրորդ հարցին,— ասաց նա:— Աստված իմ... Այս շինությունը ստեղծված է ծխի օղակներ բաց թողնելու համար...

Նրանք դեռ երկար ժամանակ ոչինչ չէին կարողանում դուրս քաշել Հենդալֆից, որովհետև նա տարված էր օղակներ բաց թողնելով. նրա օղակները սավառնեցին սյուների շուրջը, փոփոխեցին ձևերն ու գույները, վերջապես մեկը մյուսի հետևից ընկնելով՝ դուրս թռան երդիկից:

— Ես արջերի հետքերն էին տնտղում,— ի վերջո պատասխանեց Հենդալֆը:— Այս գիշեր այստեղ, ինչպես երևում է, արջերի բազմություն է հյուրընկալվել: Ես իսկույն հասկացա, որ Բեորնը մենակ չէր կարող այդքան հետքեր թողնել, ըստ որում ամենատարբեր չափսերի: Նույնիսկ կասեի, որ ամբողջ գիշերը, մինչև լույս այստեղ արջեր են պար եկել՝ փոքր ու խոշոր, միջահասակ ու հսկա: Նրանք հավաքվել են բոլոր կողմերից, բացի մեկից. ոչ ոք չի եկել արևմուտքից, լեռներից: Եվ այդ կողմ գնում են միայն մեկ արջի հետքերը: Ես հետքերով հասա մինչև Կարրոկ ժայռը, որտեղ դրանք իջան գետը, իսկ մյուս ափը չանցա՝ գետն այնտեղ չափազանց խոր է և հոսանքն էլ ուժեղ: Այն կողմում հետքերը մտնում էին ուղիղ սոճիների անտառը՝ Մառախլապատ Լեռների արևելյան լանջերին, որտեղ տեղի ունեցավ մեր սիրագեղ հանդիպումը վարգերի հետ: Այսպիսով, ես, թվում է, պատասխանեցի նաև առաջին հարցին,—

վերջացրեց Հենդալֆը: Բիլբոյին թվաց, որ ինքը հասկանում է, թե խոսքը դեպի ուր է ծռում կախարողը:

— Իսկ ի՞նչ կանենք, եթե նա այստեղ բերի վարդերին ու գոբլիններին,— բացականչեց Բիլբոն:— Բոլորիս կկոտորեն: Չէ՞ որ դուք առաջ ասում էիք, թե Բեորնը նարնց հետ բարեկամություն չի անում:

— Հետո ի՞նչ: Հիմա էլ եմ ասում: Հիմարություններ դուրս մի՛ տուր: Ավելի լավ է գնաս քնես, թե չէ գլուխդ արդեն չի աշխատում:

Հոբիտն իսկապես էլ իրեն ջախջախված էր զգում, և նրան մտում էր միայն պառկել քնել: Նա քնեց թզուկների երգի տակ: Ննջելով՝ Բիլբոն դարձյալ մտածում էր Բեորնի մասին. նա երագում տեսավ, որ հարյուրավոր սև արջեր, շուրջպար բռնած, դանդաղ ու ծանրորեն պտտվում են լուսնի լույսի տակ: Նա արթնացավ կեսգիշերին, երբ բոլորը քնած էին, դռան ետևից լսեց նույն շրշոցը, ֆսֆսոցն ու մռթմռթոցը, ինչ և նախորդ գիշերը:

Առավոտյան նրանց արթնացրեց Բեորնը:

— Ա՛, ուրեմն դուք դեռ այստեղ եք,— ասաց նա՝ հոբիտի օձիքից բռնած բարձրացնելով ու ծիծաղելով:— Տեսնում եմ, վարդերը, գոբլինները ու չար արջերը քեզ դեռ չեն կերել:— Եվ ամենաանհարգալի ձևով մատով բզեց միստր Բեգինսի փորը.— Մեր գնդիկը լավ էլ տոզել է կաթնահացով ու մեղրով: Գնանք էլի ավելացնենք:

Եվ բոլորը նրա հետ գնացին նախաճաշելու: Այս անգամ Բեորնը հիանալի տրամադրության մեջ էր և շատ ծիծաղեցրեց նրանց զանազան զվարճալի պատմություններով: Հյուրերը ստիպված չեղան երկար գլուխ ջարդել, թե ուր էր նա անհետացել և ինչու է այդպես սիրալիր. շուտով նա ինքը պատմեց ամեն ինչ: Բեորնը արշավ էր կատարել գետից այն կողմ, դեպի լեռները, և հարկ է նկատել, որ շատ արագ էր գործը գլուխ բերել: Լինելով գայելի այրված բացատում՝ նա համոզվել էր, որ համենայն դեպս թզուկների պատմածի մի մասը ճշմարտություն է: Նա անտառում մի վարդ ու գոբլին էր բռնել և նրանցից իմացել, որ գոբլինների պարեկները վարդերի հետ միասին դեռ թզուկներին են փնտրում: Նրանց խիստ կատաղեցրել է Գերագույն Գոբլինի մահը և գայլերի առաջնորդի խանձված քիթը, ինչպես նաև շատ գլխավոր վարդերի կործանումը կախարդի սարքած հրդեհից: Նարքն հարձակումներ էին կազմակերպում մառախլապատ Լեռների մոտակա հողերի վրա, որպեսզի բռնեն թզուկներին և վրեժխնդիր լինեն մարդկանցից ու շրջակայքի բոլոր եակներից, ովքեր, ինչպես նրաքն կասկածում էին, պատասպարում են թզուկներին:

— Ձեր պատմությունը հրաշալի էր,— եզրակացրեց Բեորնը,— բայց հիմա, երբ ես համոզվել եմ նրա ճշմարտությանը, այն ավելի քան սրտովս է: Ես ձեզ առաջարկում եմ ցանկացած օգնությունը, որ իմ ուժը կպատի: Դուք էլ որ ինձ նման ապրեիք Սև Անտառի ծայրին, ոչ մեկի խոսքին չէիք հավատա: Այս դեպքից հետո ես լավ կվերաբերվեմ բոլոր թզուկներին: Հո

քիչ բան չէ, սպանել են Գերագույն Գործիւնին, հենց իրեն՝ Գերագույն Գործիւնին:— Եվ նա ծիծաղեց դաժան ծիծաղով:

— Իսկ ի՞նչ արեցիք գործիւնին ու վարգին,— հետաքրքրվեց Բիւրն:

— Եկեք տեսեք,— պատասխանեց Բեորնը, և թզուկները հետևեցին նրան: Դարպասի վրա ցցված էր գործիւնի գլուխը, հենց այդտեղ էլ, դարպասի ետևում, ծառից կախված էր գայլի մորթին: Սարսափելի է Բեորնի պես թշնամի ունենալը: Բայց նա հիմա իրենց բարեկամն էր, և Հենդալֆը մտածեց, որ ավելի լավ է անկեղծորեն նրան պատմել ամբողջ պատմութիւնն ու ճանապարհորդութեան նպատակը:

Ահա թե ինչ օգնություն խոստացավ Բեորնը: Նա յուրաքանչյուր թզուկի պոնի կտարամադրի, իսկ Հենդալֆին՝ ձի, որպեսզի հասնեն մինչև անտառ: Ճանապարհի համար մթերք կտա, որը խելացիորեն տնտեսելու դեպքում մի քանի շաբաթ կբավարարի: Մթերքը թեթև կլինի և տեղափոխման համար հեշտ՝ ընկույզ, այուր, չորացած մրգով լի փակված սափորներ, մեղրով լցված կավե կճուճներ և հատուկ ձևով պատրաստված կեքսեր, որի մեջ սննդարար նյութերը շատ երկար են պահպանվում: Այն պատրաստելու գաղտնիքը միայն Բեորնը գիտեր. դրա բաղադրության մեջ մեղր կար, ինչպես որ նրա ամբողջ սննդի մեջ, և կեքսը համեղ էր, թեպետ ծարավ էր առաջացնում: Նա նախազգուշացրեց, որ հետները ջուր վերցնել հարկավոր չէ, քանի որ մինչև անտառ ամբողջ ճանապարհին առվակներ ու աղբյուրներ կհանդիպեն:

— Բայց ճանապարհը Սև Անտառի միջով դժվար կլինի, վտանգներով լի և անձանոթ,— ասաց Բեորնը:— Ոչ ջուր, ոչ էլ կեր այնտեղ չեք գտնի: Ընկույզն այնտեղ դեռ չի հասել, իսկ ընկույզից բացի ուտելու պիտանի ոչինչ չի աճում: Անտառի բոլոր կենդանի էակները վայրենի են, կատաղած և այլակերպ: Ես ձեզ տկեր կտամ ջի համար, նետեր ու աղեղներ: Բայց չեմ կարծում, թե Սև Անտառում որևէ հարմար որս կամ էլ խմելու բան գտնվեր: Արահետև հատում է արագահոս Սև առուն: Մտքներովդ չանցնի այնտեղ լողանալ կամ ջուր խմել. ես լսել եմ, որ առուն կախարդված է և քուն ու մոռացկոտություն է բերում: Չարժե թռչունների վրա կրակել, թե չէ, որսի ետևից ընկնելով, անտառի աղջամուղջում կարելի է արահետը կորցնել, իսկ դա ոչ մի դպքում չի կարելի անել: Ահա իմ բոլոր խորհուրդները: Անտառում արդեն ոչնչով ձեզ օգնել չեմ կարող, հույսներդ դրեք ձեր հաջողության վրա, սեփական քաջության և այն պաշարների վրա, որ ես դնում եմ ձեզ հետ: Խնդրում եմ անտառի եզրից ետ ուղարկեք պոնիներին և ձիուն: Հաջողություն եմ ցանկանում: Իմ տան դուռը միշտ բաց է ձեզ համար, եթե պատահի այս ճանապարհով ետ դառնաք:

Նրանք, բնական է, շնորհակալություն հայտնեցին Բեորնին, բազմաթիվ խոնարհումներ արեցին, հատակը կնգուղներով ավլելով ու բազմիցս «պատրաստ ենք ձեզ ծառայելու, ով ընդարձակ փայտե դոյակների տեր» ասացին: Բայց թզուկների սիրտը ճմլվում էր նրա չարագուշակ խոսքերից:

Վերջապես նրանց գիտակցությանը հասավ, որ իրենց ճանապարհորդությունն ավելի վտանգավոր է, քան պատկերացրել են և, եթե նույնիսկ բոլոր դժվարությունները հաղթահարեն, ճանապարհի վերջում վիշապն է իրենց սպասում:

Ամբողջ առավոտ ճանապարհի պատրաստություն էին տեսնում: Կեսօրին վերջին անգամ Բեորնի հետ հաց կերան, հեծան ձիերը և, տանտիրոջը հարժեշտ տալով, դարպասից դուրս եկան: Դուրս գալով Բեորնի բարձր ցանկապատով շրջափակված տիրույթից, նրանք ուղղություն վերցրին դեպի հյուսիս, իսկ հետո շրջվեցին հյուսիս-արևմուտք: Բեորնի խորհրդին հետևելով՝ նրանք թողեցին անտառային գլխավոր ճանապարհը, որ անցնում էր նրա տիրապետության հարավային սահմանով: Բեորնը նրանց զգուշացրեց, որ այդ ճանապարհից հիմա ավելի շատ օգտվում են գորբիկները, իսկ ճանապարհը, ինչպես ինքը լսել է, արևելքում խիստ ծածկվել է բուսականությամբ և վերջանում է անանցանելի ճահիճներում: Կարրոկից մի քանի օրվա ձիու ճանապարհ դեպի հյուսիս մի արահետ կա, շատ քչերին հայտնի, որև Սև Անտառի միջով դուրս է գալիս ուղիղ Մենավոր Լեռը:

— Գորբիկները,— եզրափակեց Բեորնը,— Կարրոկից և իմ տնից հարյուր մղոնից պակաս հեռավորության վրա գետը անցնել չեն համարձակվի. գիշերը այն վատ չի պահպանվում: Բայց ձեր տեղը լինեի, կշտապեի. եթե նրանք հարձակումը շուտ սկսեն, ապա կհասցնեն հարավում գետն անցնել և կսանրեն անտառի ամբողջ այդ մասը, որպեսզի ձեր ճանապարհը փակեն: Իսկ վարձերը, պետք է ասել, ավելի արագ են վազում, քան պոնիները: Ուրեմն, արագ ճանապարհ ընկեք:

Նրանք սլանում էին լուռ, ոտքերի տակ ընտրելով փափուկ կամ խոտով ծածկված հողը: Ձախից սևին էին տալիս լեռները, դիմացից մոտենում էին գետը եզերող ծառերը: Արևը մինչև ուշ երեկո ոսկեգոծում էր մարգագետինները: Դժվար էր ամբողջ ժամանակ հիշել գորբիկների ու հետապնդման մասին, և, մի քանի մղոն Բեորնի տնից հեռանալով, նրանք նորից սկսեցին շատախոսել, երգել ու դադարեցին առջևում իրենց սպասող անտառային մութ ճանապարհի մասին մտածել: Երեկոյան, երբ մթնշաղը սկսեց իջնել և մայրամուտի շողերի մեջ փայլփլեցին լեռների գագաթները, ճանապարհորդները կանգ առան գիշերելու և պարեկներ նշանակեցին: Բայց անհանգիտ քնեցին, և երազում գայլերի ոռնոց ու գորբիկների ճիչեր էին լսում:

Առավոտը լավ օր էր խոստանում: Գետնին փռված էր սպիտակ մառախուղը, օդը զով էր, բայց շուտով արևելքում բարձրացավ կարմիր արևը, մշուշը ցրվեց, և ստվերները դեռ չէին հասցրել կարճանալ, երբ ուղևորները նորից ճանապարհ ընկան: Նրանք արդեն երկու օր է գնում էին, բայց ոչինչ ու ոչ ոքի չէին տեսել, բացի խոտից ու ծաղիկներից, թռչուններից ու մենավոր ծառերից, մեկ-մեկ էլ ազնիվ եղջերուներից, որ արածում կամ էլ ննջում էին պուրակների ստվերներում: Երրորդ

երեկոյան նրանք այնպէս էին շտապում շուտով անտառի մուտքին հասնելու, որ մինչև գիշեր կանգ չառան և նույնիսկ որոշ ժամանակ էլ գնացին գիշերը, լուսնի լուսով: Աղջամուղջում Բիլբոյի աչքին մեկ ձախից, մեկ աչից մեծ արջի ուրվագիծ էր երևում, որ թաքնվելով շարժվում էր նույն ուղղությամբ: Բայց երբ այդ մասին ասաց Հենդալֆին, նա միայն պատասխանեց.

— Սը՛ս-ս... Ուշադրություն մի՛ դարձրու...

Հաջորդ օրը նրանք դուրս եկան լուսաբացից առաջ: Հենց որ լուսը բացվեց, նրանք տեսան անտառի սև, մռայլ պատը, որն ասես իրենց ընդառաջ էր գալիս կամ սպասում էր նրանց: Ճանապարհը վեր բարձրացավ. հորիտին թվաց, թե լռությունը շրջապատում է իրենց: Թռչունների ձայներն առավել հազվադեպ էին լսվում: Եղջերուներն անհետացան, նույնիսկ ճագարները կորան: Կեսօրին նրանք հասան Սև Անտառի եզին և ձիերից իջան, որպէսզի հանգստանան առաջին ծառերի կախված ճյուղերի տակ: Բները հաստ էին, կոշտուկավոր, ճյուղերը ծոմոված, տերևները երկար ու մուգ: Բաղեղը փաթաթվել էր ծառերին ու տարածվել գետնին:

— Դե, ահա և Սև Անտառը,— ասաց Հենդալֆը:— Հյուսիսային երկրում ամենամեծ անտառն է: Ձեր կարծիքով ինչպիսի՞ն է: Հիմա պետք է ետ ուղարկենք հրաշալի պոնիներին:

Թզուկներն անբավական քրթմնջացին, բայց Հենդալֆը խորհուրդ տվեց, որ ավելի շրջահայաց պահեն իրենց:

— Բեռնը այնքան էլ հեռու չէ, որքան դուք կարծում եք, և, առհասարակ, հարկավոր է խոստումը կատարել: Բեռնը վտանգավոր թշնամի է: Միտոր Բեգինսի աչքերը ձերից լավն են. նա վկա է, որ ամեն գիշեր մուռն ընկնելուն պէս մեր կողքին հայտնվում էր մեծ արջը կամ նստում էր քիչ հեռվում և լուսնի լույսով հետևում մեր ճամբարին: Նա ոչ միայն պահպանում էր ձեզ և նայում ճի՞շտ ենք գնում արդյոք, թե ոչ, այլև հետևում էր իր պոնիներին: Բեռնը ձեր բարեկամն է, բայց իր կենդանիներին սիրում է հարազատ երեխաների պէս: Դուք նույնիսկ չեք պատկերացնում, թե նա ինչպիսի շնորհ արեց ձեզ, որ թույլատրեց իր պոնիներինով գնալ այդքան հեռու և այդքան արագ:

— Իսկ ձին ի՞նչ եք անելու,— հարցրեց Տորինը:— Դուք, կարծեմ, չհիշատակեցիք, որ նրան ետ եք ուղարկում:

— Ես չեմ էլ ուղարկում:

— Բա ձեր խոստումն ո՞ւր մնաց:

— Դա իմ գործն է: Ես ձին ետ չեմ ուղարկում նրա համար, որ այդ ձիով ինքս եմ վերադառնում:

Այսպես, նրանք իմացան, որ Հենդալֆը մտադիր է իրենց լքել, թողնել Սև Անտառի բացատում, և հուսահատվեցին: Բայց ինչքան համոզեցին, նա իր որոշումը չփոխեց:

— Այդ բոլորի մասին մենք պայմանավորվել ենք Կարրոկի վրա,— առարկեց նա:— Վիճելն անիմաստ է: Ինչպես արդեն ասել եմ, ինձ անհետաձգելի գործեր են սպասում հարավում: Ես առանց այդ էլ ձեր պատճառով ուշանում եմ: Կարող է պատահել մինչև արկածի վերջը դեռ հանդիպենք, կարող է պատահել և չհանդիպենք: Դա կախված է նրանից, թե դուք որքանով հաջողակ, քաջ և հնարամիտ կլինեք: Ես ձեզ հետ ուղարկում եմ միստր Բեգինսին, ախր մեկ անգամ չէ, որ ձեզ ասել եմ, թե նա այնքան էլ հասարակ չէ, ինչպես դուք եք կարծում: Շուտով ինքներդ կհամոզվեք: Այնպես որ մի՛ ընկճվիր, Բիլբո, հոնքերդ մի՛ կհտիր: Մի՛ վհատվեք, Տորին և Ընկ... Արշավը ինքներդ եք նախաձեռնել: Շարունակ մտածեք գանձերի մասին, որ սպասում են ձեզ, և գլխներիցդ հանեք անտառն ու վիշապը: Գոնե մինչև վաղը առավոտ:

Առավոտյան նա նույնը կրկնեց: Նրանք հարկադրված եղան տիկերը ջուր լցնել անտառի ճիշտ մուտքի մոտ գտնվող զուլալ աղբյուրից և պոնիների թամբերն արձակել: Բեռը նրանք հավասար բաժանեցին իրար մեջ, բայց Բիլբոն իր բաժինը անտանելի ծանր համարեց, նրան բոլորովին չէր ժպտում հակը շալակով շատ մղոններ քարշ տալու հեռանկարը:

— Մի՛ հուզվեք,— նրան մխիթարեց Տորինը:— Հակը շուտ է թեթևանում, դեռ շատ կուզենաք, որ պարկերը ծանրանան, երբ մթերքը կսկսի վերջանալ:

Վերջապես նրանք հրաժեշտ տվեցին իրենց պոնիներին և նրանց գլուխները ուղղեցին տան կողմը: Սրանք ուրախ տրտիգ տվին դեպի ետ, բացահայտորեն ուրախանալով, որ ետևում են թողնում Սև Անտառի խավարը: Բիլբոն կարող էր երդվել, որ այն պահին, երբ պոնիները շուռ եկան դեպի տուն, անտառից դուրս եկավ մի մութ կերպարանք, որ նման էր արջի, և գնաց նրանց ետևից:

— Տոտսություն,— ասաց Հենդալֆը Տորինին:— Բոլորիդ, բոլորիդ ցոտսություն... Անտառով ուղիղ գնացեք, արահետից դուրս չգաք, թե չէ հազիվ թե նորից գտնեք և հազիվ թե Սև Անտառից դուրս գաք: Այդ դեպքում ոչ ես, ոչ էլ ուրիշ մեկը ձեզ այլևս չի տեսնի:

— Պարտադիր՞ է, որ անտառով գնանք,— տնքաց հոբիտը:

— Այո, պարտադիր է...— կտրեց կախարդը:— Կամ կգնաք անտառի միջով, կամ կհրաժարվեք գանձերից: Ասենք հիմա չեմ էլ թույլ տա, որ դուք ետ դառնաք, միստր Բեգինս: Ես ձեր փոխարենն ամաչում եմ: Ինչպե՞ս կարող եք այդպիսի բան մտածել: Այժմ դուք իմ առջև պատասխանատու եք բոլոր թզուկների համար:

— Ո՛չ, ո՛չ,— սկսեց արդարանալ Բիլբոն:— Դուք ինձ ճիշտ չհասկացաք: Ես ուզում էի ասել՝ շրջանցող ճանապարհ չկա՞ արդյոք:

— Կա, եթե ցանկություն ունես ավելորդ երկու հարյուր մղոն դեպի Հյուսիս քայլել, իսկ հետո էլ երկու անգամ ավելի՝ դեպի Հարավ: Ոչ, լավն այն է, որ բռնեք անտառի արահետն ու գնաք, տրամադրությունների մի՛ գցեք, ապավինեք անտառին և, եթե ձեր բախտը բերի, գուցե մի գեղեցիկ օր դուրս կգաք անտառից և առջևում կտեսնեք Երկար ճահիճը, իսկ նրանից այն կողմ՝ Արևելքում բարձրացող Մենավոր Լեռը, որտեղ ապրում է ծերուկ Սմոգը: Հույս ունենանք, որ նա ձեզ չի սպասում:

— Միսիթարեցիք, խոսք չկա,— փնթփնթաց Տորինը:— Տոտեսություն... Եթե չեք ուզում մեզ հետ գալ, ուրեմն ավելի լավ է գնացեք: Վերջ խոսակցություններիս...

— Այդ դեպքում ցոտեսություն և թող տեսակցությունը կայանա...— ասաց Հենդալֆը և, ձիու գլուխը շուռ տալով, գնաց դեպի Արևմուտք: Բայց նա չէր կարող համբերել ու չասել ամենավերջին ողջերթի խոսքը: Նա շրջվեց և ձեռքի ափերը դրեց բերանին.

—Ցը-տեսություն: Խնդրում եմ զգույշ ե-դե՛ք: Ա-րա-հե-տից դուրս չգա՛ք,— հազիվ լսեցին նրանք:

Ապա Հենդալֆը ձիուն բաց թողեց վարձով և տեսողությունից անհետացավ:

— Տոտեսություն, ցոտեսություն, գնաս բարո՛վ,— փնթփնթացին թզուկները էլ ավելի ջղայնանալով այն բանից, որ Հենդալֆի մեկնումն իրենց սարսափելի վշտացրեց: Ճանապարհորդության ամենավտանգավոր մասը դեռ առջևում էր: Յուրաքանչյուրը շալակեց իր ծանր հակն ու ջրի տիկը, հետո շրջվեցին մեջքով դեպի արևը և մտան Սև Անտառ:

ՍԱՐԴԵՐ ԵՎ ՃԱՆՃԵՐ

Նրանք մտան անտառ, ասես մի խավար թունել, իծաշարուկի անցնելով կամարի տակով, որ առաջացնում էին երկու բարձր, դեպի իրար թեքված ծառերը՝ այնքան ծեր և բաղեղով այնքան խեղդված, որ ճյուղերի վրա միայն տեղ-տեղ էին երևում սևացած տերևները: Շուտով ցերեկվա լույսը մնաց անտառի մուտքի մոտ, հեռվում, ասես պայծառ լուսատու անցք լիներ: Նեղ արահետը գալարվում էր ծառաբների միջոց: Լռությունն այնքան խոր էր դառնում, որ քայլերի ձայնը խուլ արձագանքում էր անտառում և թվում էր ծառերը խոնարհվում են ու ականջ դնում:

Երբ նրանց աչքերը վարժվեցին մթությանը, մուգ կանաչ կիսախավարի մեջ սկսեցին որոշ բաներ զանազանել շուրջը: Երբեմն արևի մի բարալիկ շողի հաջողվում էր թափանցել սաղարթի խճճված ճյուղերի միջով: Բայց դա հազվադեպ էր պատահում, իսկ հետո բոլորովին վերացավ:

Անտառում ցատկոտում էին սկյուռիկները: Բիլբոյի սրատես ու հետարքրքրասեր աչքերը մթությանը վարժվելով նկատում էին, թե ինչպես, փամփոփ կոչերը խաղացնելով, սկյուռիկները փախչում էին արահետից

ու թաքնվում ծառերի ետևում: Գետնամած թփուտներում ու չորացած տերևների հաստ շերտում խշխշոց, վազվռտուք ու փնչոց էր լսվում: Բայց թե ով էր այդ բոլոր ձայները հանում, Բիլբոն չէր կարողանում տեսնել: Մի բան շատ զգվելի էր՝ սարդոստայնը, խիտ, արտասովոր հաստ սարդոստայնը ծառից ծառ էր ձգվում և պարուրում արահետի երկու կողմերի ստորին ճյուղերը: Սարդոստայնը ոչ մի տեղ արահետն չէր հատում կախարդանքով, թե մեկ ուրիշ պատճառով, հայտնի չէր:

Շատ ժամանակ չէր անցել, բայց նրանք ասեցին անտառն այնպես ուժգին, ինչպես ատում էին գոբլինյան թունելները. նրանց թվում էր, թե այստեղից այլևս երբեք դուրս չեն գա:

Անտառի ծածկույթի տակ մաքուր օդի սյուրք անգամ չէր թափանցում, այնտեղ մշտապես բուն էին դրել տոթը, խավարը և լռությունը: Նույնիսկ թզուկներին դա ճնշում էր, չնայած նրանք սովոր էին հանքահորերում աշխատելու և երկար ժամանակ ապրել էին գետնի տակ: Իսկ հոբիտը, շատ էլ թե բնում էր ապրում, սիրում էր ամառային օրերը դրսում անցկացնել և այժմ բոլորովին շնչահեղձ էր լինում:

Ամենից վատը գիշերն էր: Մուլքը անթափանց էր դառնում, և դա չափազանցությունն է: Նրանք իսկապես ոչինչ չէին տեսնում: Ոչ, ասենք դա ճիշտ չէ: Նրանք տեսնում էին ինչ-որ մեկի աչքերը: Գիշերը շրջապատող մթության մեջ կրակներ էին բռնկվում, ճամփորդների վրա էին հառվում զույգ աչքեր՝ դեղին, կարմիր, կանաչ. հետո կորչում էին և հառնում արդեն ուրիշ տեղում: Ժամանակ առ ժամանակ կրակները փայլում էին ինչ-որ տեղ, վերևում, ճյուղերից, և դա շատ սարսափելի էր: Բայց ամենից ավելի Բիլբոյին դուր չէին գալիս զգվելի, գունատ, դուրս ընկած աչքերը: «Ոնց որ միջատներինը,— մտածեց նա,— միայն թե չափազանց խոշոր են»:

Գիշերները նրանք չէին մրսում, բայց, այնուամենայնիվ, սկզբում փորձեցին պարեկային խարույկ վառել: Շուտով սակայն, ստիպված եղան խարույկից հրաժարվել, քանի որ բավական էր կրակ վառեին, և խավարի միջից բոլոր կողմերից ճամփորդների վրա էին չռվում հարյուրավոր ու հարյուրավոր աչքեր, թեպետ աչքերի տերերն անտեսանելի էին մնում: Ավելի վատն այն էր, որ կրակը գրավում էր հազարավոր մոխրագույն ու սև թիթեռնիկների, երբեմն ձեռքի ակի մեծության. սրանք ֆռֆռում ու թայրտում էին ուղիղ երեսիդ: Թիթեռներն անտանելի ձանձրացնում էին, ճիշտ այնպես, ինչպես հսկայական, վաքսի պես սև չղջիկները: Ճամփորդները գիշերները ննջում էին համատարած, սահմուկեցուցիչ մթության մեջ:

Այդ բոլորը, ինչպես հոբիտին էր թվում, մի ամբողջ հավիտենականություն շարունակվեց: Բիլբոն միշտ ուտել էր ուզում, որովհետև այժմ ստիպված էին մթերքը տնտեսել: Օրերն անցնում էին, իսկ անտառը բոլորովին չէր փոխվում, և ճամփորդները տազնապեցին: Մթերքի պաշարները սպառվում էին: Թզուկները փորձում էին

սկյուռիկներ նետահարել և բազում նետեր ծախսեցին, բայց միայն մեկին խփեցին: Երբ այն խորովեցին, պարզվեց որ ուտելու բան չէ, և սկյուռներից ձեռքառեցին:

Նրանց տանջում էր ծարավը, որովհետև ջրի պաշարները պակասում էին, իսկ առայժմ ոչ մի աղբյուր կամ առվակ չէր հանդիպել: Այդպես էլ շարունակեցին առաջ գնալ, մինչև որ մի անգամ նրանց ճանապարհը կտրեց մի վտակ՝ ոչ լայն, բայց արագահոս, և նույնպես սև էր թվում: Լավ էր, որ Բեռնը նախազգուշացրել էր նարնգ, թե չէ անպայման կուշտ կիսմեխ և դատարկ տկերը կլցնեին: Իսկ հիմա նրանք մտածեցին, թե ինչպես անցնեն վտակը առանց ջուրը մտնելու: Ինչ-որ ժամանակ, երևում է, փայտե կամրջակներ են գցած եղել, բայց հիմա դրանցից կոտրտված սյուներ էին մնացել ափին կպած:

Բիլբոն ծնկի իջավ և, մթուռայան մեջ նայելով, հանկարծ բացականչեց,

— Այն ափին նավակ կա... Երևանի թե մեր կողմում լինեք...

— Ինչ եք կարծում, հեռո՞ւ է,— հարցրեց Տորինը: Թզուկներն արդեն համոզվել էին, որ Բիլբոյի աչքերը ամենից սրատեսն են:

— Իսկի էլ հեռու չէ: Մի տասը մետր, ոչ ավելի:

— Ընդամենը տասը մետր... Կարծում էի, ամենաքիչը քսանհինգ կլինի... Ինչ արած, ես հիմա այնքան էլ լավ չեմ տեսնում, ինչպես հարյուր տարի սրանից առաջ: Ի միջիայլոց, տասը թե քսանհինգ՝ ի՞նչ տարբերություն: Միևնույն է, առվակը թռչելով չես կարող անցնել, իսկ լողալով կամ ծանծաղուտով անցնելը վտանգավոր է:

— Որևէ մեկը պարան նետել կարողանո՞ւմ է:

— Դրանից ի՞նչ օգուտ: Նույնիսկ եթե հաջողվի նավակը կեռով բռնել, այն հաստատ կապած կլինի:

— Ինձ թվում է, ոչ,— ասաց Բիլբոն,— բայց այսպիսի մթուռայան մեջ չես տեսնի:

— Դորին ամենաուժեղն է, բայց Ֆիլին ամենաերիտասարդն է, և նրա աչքերը լավ են տեսնում,— ասաց Տորինը:— Ֆիլի, արի այստեղ, դու տեսնո՞ւմ ես նավակը, որի մասին ասում է միստր Բեգինսը:

Ֆիլին երկար նայելուց և, վերջապես, նավակը զանազանելուց հետո մի կերպ որոշեց հեռավորությունը: Նրան պարան տվեցին, իրենց հետ վերցրածներից ամենաերկարը, և ծայրին մի մեծ երկաթե կեռ կապեցին, նրանցից, որով հակերը ամրացնում էին կաշեփոկերին, երբ շալակած էին տանում: Ֆիլին կեռիկը ձեռքն առավ, ափի մեջ տարուբերեց ու շարտեց վտակի այն ափը:

— Կեռիկը չլմփաց ջուրը:

— Չհասավ,— նկատեց Բիլբոն, որ հեռուում էր ընթացքին:— Եվս կես մետր, և այն կկառչի նավակից: Նորից փորձիր: Կարծում եմ, եթե ձեռք տաս թաց պարանին, չարքերը քեզ չեն վնասի:

Ֆիլին պարանը քաշեց և բռնեց կեռիկը, բայց դա արեց մեծ զգուշությամբ: Երկրորդ անգամ նա պարանը ավելի հեռու նետեց:

— Հանգիստ,— ասաց Բիլբոն:— Կեռիկը մյուս կողին ես գցել: Կամացուկ ձգիր:

Ֆիլին սկսեց կամացուկ ձգել, իսկ Բիլբոն ասաց.

— Չգուշ: Կեռիկը կողին է ընկած, այնպես արա, որ չպոկվի:

Կեռիկը կառչեց կողին, պարանը պրկվեց, Ֆիլին քաշեց հա քաշեց, բայց ապարդյուն: Նրան օգնության եկավ Կիլին, հետո՝ Օյնը և Գլոյնը: Նրանք քաշում էին ամբողջ ուժով, և հանկարծ բոլորը միասին բերանքսիվայր փռվեցին: Բայց Բիլբոն զգաստ հետևում էր. նա պարանը իսկ նրանց ձեռքից ու փայտով պահեց սև նավակը, որին ջրի հոքսանքն արագ տանում էր:

— Օգնեցե՛ք,— գոռաց Բիլբոն, և վրա հասած Բալինը բռնեց նավախելից:

— Ուրեմն, այնուամենայնիվ, նավակը կապած էր,— ասաց Բիլբոն, նայելով նավակին ամրացված ճոպանի կտորին:— Լավ ձգեցիք, բարեկամներ, և լավ էր, որ մեր պարանն ավելի ամուր դուրս եկավ:

— Առաջինը ո՞վ է անցնելու,— հարցրեց Բիլբոն:

— Ես,— պատասխանեց Տորինը,— և ինձ հետ՝ դուք, Ֆիլին ու Բալինը: Նավակում այլևս ոչ ոք չի տեղավորվի: Հետո Կիլին, Օյնը, Գլոյնը և Դորին, հետո Օրին, Նորին, Բիֆուրն ու Բոֆուրը: Եվ վերջում՝ Դվալին ու Բոմբուրը:

— Միշտ ես եմ վերջինը, ձանձրացել եմ,— բողոքեց Բոմբուրը:— Թող այսօր ուրիշ որևէ մեկը լինի վերջինը:

— Իսկ ինչո՞ւ ես այդքան չաղ: Դրա համար էլ կգնաս, երբ նավակում քիչ բեռ կլինի: Եվ մտքովդ էլ թող չանցնի փնթփնթալ ու վիճարկել հրամանները, թե չէ վերջդ վատ կլինի:

— Այստեղ թիակներ չկան: Ինչպե՞ս ենք մյուս ափ հասնելու,— հետաքրքրվեց հոբիտը:

— Ինձ մի պարան և մի կեռիկ էլ տվեք,— խնդրեց Ֆիլին: Կեռիկը պարանին կապելով՝ նա նետեց մթության մեջ, որքան կարելի է հեռու և բարձր: Կեռիկը ներքև չընկավ, հետևաբար լռվեց ճյուղերի մեջ:

— Նստեք,— հրամայեց Ֆիլին, մեկնումեկը թող ձգի ճյուղերից կախված պարանը, իսկ մեկ ուրիշը թող բռնի առաջին պարանը: Երբ մենք կհասնենք մյուս ափը, նավակը ետ կքաշեք:

Այս ձևով բոլորը բարեհաջող անցան կախարդված վտակը: Նոր էր Դվալինը նավակից ափ իջել, պարանի կծիկը ձեռքին, իսկ Բոմբուրը (ի միջի այլոց շարունակելով փնթփնթալ) պատրաստվում էր հետևել նրան, երբ հանկարծ իսկապես մի վատ բան տեղի ունեցավ: Առջևում արահետի վրա սմբակների կատաղի դոփյուն լսվեց, խավրի միջից ծառացավ սուրացող եղջերուի ուրվագիծը: Նա մխրճվեց թզուկների ջոկատի մեջ, սրանց զանազան կողմեր շարտեց և օդ խոյացավ: Նա մի ոստյունով թափ առավ վտակն անցնելու, բայց... չհաջողվեց անվնաս մյուս ափ հասնել: Տորինը, առաջինը դիմացի ափ իջնելով, աղեղը լարեց ու նետը դրեց, մտածելով, որ նավակի տերը կարող է թաքնված լինել մոտակայքում: Տորինը միակն էր, որ ոտքի վրա էր մնացել և պահպանել էր արիությունը. այժմ նա վստահ ու դիպուկ նետն արձակեց եղջերուի վրա: Վայելք կատարելով՝ կենդանին ճոճվեց, նրան կույ տվեց անտառի խավարը, լսվեց սայթաքող սմբակների ձայն, հետո ամեն ինչ լռեց:

Հենց այն է բոլորն ուզում էին դիպուկ կրակողին գովաբանել, երբ լսվեց Բիլբոյի հուսահատ ճիչը.

— Բոմբուրը ջուրն ընկավ,— Բոմբուրը խեղդվում է...

Եղջերվամսի երազանքները նրանց գլխից դուրս մղվեցին: Ավա՛ղ, դա ճշմարտություն էր: Երբ եղջերուն դուրս է թռել անտառից ու Բոմբուրին տապալել, գիրուկը ցամաքին կանգնած է եղել միայն մեկ ոտքով: Ընկնելով՝ Բոմբուրը ակամա նավակը հեռացրել է ափից, փորձել է բռնել լարձուն արմատներից, բայց ձեռքերը պոկվել են և նա շրմփացել է ջուրը, իսկ մակույկը հոսանքը քշել տարել է:

Բոլորը նետվեցին դեպի առուն ու ջրի երեսին տեսան Բոմբուրի կնգուղը: Իսկույն նետեցին կեռիկով պարանը և նրան ցամաք հանեցին: Բոմբուրը, բնական է, թրջվել էր մինչև վերջին թելը, բայց դա դեռ ոչինչ, այ թե որն էր դժբախտությունը. նա քնած էր, պարանը ձեռքում սեղմած, ու այնպես էլ պինդ, որ ձեռքը բացել չէին կարողանում: Չնայած արթնացնելու բոլոր փորձերին՝ նա շարունակում էր քնած մնալ:

Բոլոր թզուկները դեռ կանգնած էին նրա շուրջը, անիծելով նրա դանդալոշուկությունն ու իրենց անհաջողակությունը և ողբալով նավակի կորուստը, որ իրենց զրկեց այժմ սպանված եղջերուն ձեռք գցելու հնարավորությունից, երբ հանկարծ հեռվում փողի ձայն և շների հաչոց լսվեց: Անսպասելիորեն արահետի վրա մի սպիտակ եղնիկ հայտնվեց, նույնքան կուրացուցիչ ձյունասպիտակ, որքան որ սև էր եղջերուն: Մինչև Տորինը կհասցներ նախազգուշացնելու համար գոռալ, թզուկները վեր թռան ու նետեր արձակեցին: Ոչ մի նետ նպատակին չհասավ: Եղնիկը շրջվեց ու անհետացավ ծառերի մեջ այնպես անաղմուկ, ինչպես հայտնվել էր, և թզուկներն իզուր շարունակում էին նետեր արձակել նրա ետևից:

— Սպասեցեք, դադարեցեք...— գոռաց Տորինը, բայց ուշ էր. թզուկները գրգռված վերջին նետերն էին արձակում: Եվ այժմ Բեորնի նվիրած աղեղներն անօգտակար դարձան:

Ընկճվածությունը տիրեց ողջ խմբին, և հետևյալ օրերին այն ավելի ուժեղացավ: Կախարդված առվից հետո արահետը գալարվում էր ճիշտ նույն ձևով, անտառն էլ ճիշտ ույնն էր: Եթե նրանք անտառն ավելի լավ ճանաչեին, ապա գլխի կընկնեին, որ մոտենում են անտառի արևելյան բացատին, ևս մի քիչ համբերություն և խիզախություն, և նրանք դուրս կգային ավելի նոսր անտառ, որտեղ արև էր թափանցում: Բայց գլխի չէին ընկնում: Ընդ որում, նրանք հերթով տանում էին ծանրամարմին Բոմբուրին, չորսը նրան էին տանում, իսկ մնացածը տանում էին այդ չորսի բեռը: Թե որ վերջին օրերին չթեթևանային հակերը, նրանք իսկի չէին էլ կարողանա տակից դուրս գալ: Բայց նույնիսկ ամենածանր հակերն ավելի լավ էին, քան ծանր Բոմբուրը: Գիրուկը, ցավոք սրտի, ուտելիքով լի պարկերին չէր փոխարինում: Հասավ օրը, երբ նրանց մոտ համարյա ոչ ուտելիք էր մնացել, ոչ խմելիք: Անտառում ոչինչ չէր աճում, միայն սպունգ՝ ծառերի վրա, մեկ էլ դժգույն տերևներ ու անդուր հոտ ունեցող բույսեր:

Վտակն անցնելուց չորս օր հետո համատարած հաճարենու անտառ սկսվեց: Ճամփորդներն սկզբում ուրախացան այդ փոփոխության համար. ցածր թփուտներն անհետացան, խավարը նոսրացավ, լուսավորությունը կանաչավուն դարձավ: Սակայն լուսավորվեցին միայն մոխրագույն բների ուղիղ շարքերը, որ ասես կիսախավար հսկայական դահլիճում վեր խոյացող սյունաշարեր լինեին: Չեփյուռ հայտնվեց, տերևները շրշացին, բայց այդ շրշումն էլ ասես թախծոտ էր: Վերևից տերևներ էին թափվում, հիշեցնելով այն մասին, որ աշունը մոտենում է: Ոտքերի տակ խշխշում էր նախորդ աշուններից կուտակված չոր գորգը:

Երկու օր անց նրանք նկատեցին, որ արահետը թեքվեց ներքև, և շուտով հայտնվեցին հզոր կաղինիներով ծածկված մի ձորակում:

— Այս անիծված անտառը պետք է վերջանա՞, թե ոչ,— խոսեց Տորինը:— Ինչ-որ մեկը պետք է բարձրանա ծառը և տերևների արանքից նայի: Հարկավոր է ընտրել արահետին մոտ ամենաբարձր ծառը:

Իհարկե, «ինչ-որ մեկը» ասելով նկատի ուներ Բիլբոյին: Ընտրությունը նրա վրա էր ընկնում այն պատճառով, որ պետք էր բարձրանալ ծառի գագաթը, իսկ դրա համար հարկավոր է շատ թեթև լինել, որպեսզի բարակ ճյուղերը դիմանան: Խեղճ միսոր Բեգինսը ծառեր մագլցելու մեծ վարպետ չէր, բայց ինչ կարող ես անել. նրան նստեցրին արահետի եզրին աճած վիթխարի կաղնու ստորին ճյուղերին, և ուզած-չուզած պետք է բարձրանաս վերև: Բիլբոն դարավոր կեղևից կանաչ ու սև ներկվեց, շատ անգամ քիչ էր մնում վայր ընկներ և, վերջապես, հաղթահարելով ամենադժվար տեղամասը, որտեղ մի բան չկար, որից բռներ, հասավ գագաթը: Իսկ քանի դեռ բարձրանում էր, միայն մի բան էր մտածում. ծառի վրա սարդեր կա՞ն արդյոք, կհաջողվի՞ արդյոք ցած իջնել, չընկնել:

Վերջապես նրա գլուխը բարձրացավ սաղարթե տանիքի վրա: Բիլբոն լույսից կուրացավ: Ներքևից նրան ձայն էին տալիս թզուկները, բայց նա չէր պատասխանում և աչքերը կկոցելով միայն ավելի ամուր էր կառչում ճյուղերին: Արևն այնպես պայծառ էր փայլում, որ նա երկար ժամանակ չէր կարողանում աչքերը բաց անել, իսկ երբ բացեց, քամուց օրորվող մուգ կանաչի ծով տեսավ: Բիլբոն երկար ըմբռնվեց և քամին, որ շոյում էր նրա դեմքն ու մազերը: Վերջապես թզուկների ճիչերը, որոնք ներքևում տառացիորեն պայթում էին անհամբերությունից, հիշեցրին նրան գործի մասին: Շուրջը նայեց, բայց ինչքան ուզում էս նայիր՝ չորս կողմը կանաչի համատարած ծով էր:

Իսկապես էլ, ինչպես արդեն ասել եմ, մինչև անտառի եզրը քիչ էր մնում: Բիլբոն մի քիչ խելացի լինելով, կհասկանար, որ բարձր ծառը, որի վրա ինքը նստած էր, աճել էր մի լայն իջվածքի հատակում, և նրա գագաթից հնարավոր չէր տեսնել այդ մեծ թավուտի եզրը և թե որքան հեռու է տարածվում անտառը: Բայց Բիլբոն դա չհասկացավ, դրա համար էլ, կատարելապես հուսահատված, ճանկոռտված, քրտնած, նա իջավ անտառի մթության մեջ և երկար ժամանակ շուրջը ոչինչ չէր զանազանում: Նրա հաշվետվությունը մյուսներին էլ հուսահատության գիրկը գցեց:

— Անտառը ոչ մի տեղ, ոչ մի տեղ չի վերջանում: Ի՞նչ ենք անելու, ի՞նչ օգուտ ունեն հոբիտին ուղարկելը,— բացականչում էին նրանք, կարծես թե ամեն ինչի մեղավորը Բիլբոն էր:

Այդ երեկո նրանք կերան վերջին փշրանքները, իսկ առավոտյան արթնանալով՝ նորից ստամոքսը կրծող քաղց գագաթին: Անձրև էր մաղում և արդեն տեղ-տեղ ներծծվում էր անտառի խիտ ծածկույթից ներս: Ծարավից նրանց բերանները չորացել էին, բայց անձրևը նրանց վիճակը չթեթևացրեց. հո լեզուդ հանած չէ՞ս կանգնելու և սպասելու, թե երբ կաթիլը կընկնի լեզվիդ վրա: Միակ մխիթարությունը, բոլորովին անսպասելի, Բոմբուրը պարզեց նրանց:

Նա հանկարծ արթնացավ, նստեց, մտածկոտ քորեց ծոծրակը: Բոմբուրը ոչ մի կերպ չէր կարողնալում հասկանալ որտեղ է ինքը և ինչու է այդպես սոված: Նա մոռացել էր ամեն ինչ, որ տեղի էր ունեցել մայիսյան այն առավոտ, հոբիտի տան խնջույքից հետո: Ահագին ջանքեր պետք եղան նրան համոզելու համար, որ ամեն ինչ եղել է այնպես, ինչպես իրենք են պատմում:

Լսելով, որ ուտելու բան չկա, նա դառն լաց եղավ:

— Ախր ինչու արթնացա,— բացականչեց նա:— Ես այնպիսի հրաշալի երագներ էի տեսնում: Երագումս տեսա, իբր թափառում էի անտառում, սրա նման մի անտառ էր, ծառերի վրա ջահեր էին վառվում, ճյուղերից լապտերներ էին կախված, գետնին հուրհրում էին խարույկները: Անտառում քեֆ էր, ուրախություն, որ ոչ սկիզբ ուներ, ոչ վերջ: Անտառի արքան նստած էր տերևներից թագը գլխին, բոլորն ուրախ երգեր էին

երգում, իսկ թե ինչ խորտիկներ էին ու խմիչքներ... ուղղակի նկարագրել չեմ կարող:

— Ավելի լավ,— ասաց Տորինը:— Քանի որ դու ուրիշ ոչնչի մասին խոսելու ընդունակ չես, բացի ուտելիքներից, ապա լավ կանես լռես: Առանց այդ էլ քեզանից միայն անախորժություններ են գալիս: Եթե հիմա չարթնանայիր, մենք քեզ կթողնեինք անտառում, և թող էն ժամանակ տեսնեիր քո հիմար երազները: Կարծում ես այսքան երկար պաս պահելուց հետո հե՞շտ է քեզ քարշ տալը:

Նրանց ի՞նչ էր մտում անել: Ավելի պինդ ձգեցին գոտիները դատարկ փորերի վրա, հակերը գցեցին մեջքներին և կամաց-կամաց արահետով շարժվեցին առաջ, անտառից նույնիսկ կենդանի դուրս գալու հույս չունենալով: Նրանք ամբողջ օրը ուժասպառ քարշ եկան, և դեռ Բոմբուրն էլ անընդհատ տնքտնքում էր ու գանգատվում, թե ոտքերը դողում են, և որ ինքը հիմա կպառկի ու կքնի:

Հանկարծ Բալինը, որ առջևից էր գնում, բացականչեց.

— Էն ի՞նչ է, ծառերի արանքից կրակ է երևում...

Նրանք կանգնեցին և սկսեցին ուշադիր նայել: Իսկապես, հեռվում կարմիր կրակ առկայծեց, հետո նորից, էլի նորից: Ճամփորդներն շտապեցին առաջ, դույզն իսկ չմտածելով՝ հանկարծ ու դրանք գոբլիններն են կամ տրոլներ: Շուտով նրանք գլխի ընկան, որ դա բազմաթիվ ջահերի և խարույկների լույս է:

— Իմ երազները կատարվում են,— փնչաց ետևներից հագիվ հասնող Բոմբուրը: Նա ուզում էր վազել ուղիղ այնտեղ, բայց մյուսները չէին մոռացել հրաշագործի և Բեորնի նախազգուշացումները:

Նրանք երկար վիճեցին, և վերջապես, որոշեցին երկու հետախույզ ուղարկել՝ թող մոտ սողան կրակին և աշխատեն որևէ բան պարզել: Բայց այստեղ նորից խանգարող հանգամանք ծագեց. ոչ ոքի չէր հրապուրում մոլորվելու և ընկերներին ընդմիշտ կորցնելու հեռանկարը: Վերջապես սովը հաղթեց ողջամտությանը. այլևս անկարող լինելով լսել, թե ինչպես է Բոմբուրը նկարագրում անտառի ինչույքի համադամ խորտիկները, նրանք բոլորը մասին դուրս եկան արահետից և խորացան անտառի մեջ: Որոշ ժամանակ շոշափելով ծառից ծառ անցնելուց, բների արանքում թափառելուց հետո նրանք, վերջապես, տեսան պայծառ լուսավորված, մաքրած ու հարթեցրած մի բացատ: Այնտեղ լիքը ժողովուրդ էր, ոչ ավել, ոչ պակաս, էլֆեր: Կանաչ ու շագանակագույն շորեր հագած՝ նրանք նստած էին կոճղերի վրա, խարույկի շուրջը: Նրանց ետևում, ծառերի վրա ջահեր էին կախված, բայց ամենահետաքրքիրն այն էր, որ նրանք ուտում, խմում և ուրախանում էին:

Խորոված մսի բույրն այնքան ձգող էր, որ ճամփորդները, առանց իրար հետ պայմանավորվելու, ողջ հասակով մեկ ձգվեցին, ուղղվեցին և թփուտների միջով քայլեցին դեպի բացատ, համակված մեն մի

ցանկությամբ՝ ուտելիք խնդրել: Բայց հազիվ էին նրանք շրջան մտել, որ բոլոր կրակները, ասես կախարդական փայտիկի շարժումով, հանգան, էլֆերից մեկը ոտքով հասցրեց վառվող փայտերին, փայլփլուն կայծերի խրձերը վեր խոյացան, ու խարույկը հանգավ: Ճամփորդները մնացին անթափանցելի խավարի մեջ և երկար ժամանակ մեկը մյուսին գտնել չէին կարողանում: Մթության մեջ խարխափելով, ծառերին դեմ առնելով, բներից կառչելով, կոճղերին խփվելով ու սայթաքելով, ամբողջ ձայնով հեյ-հեյ գոռալով և անտարակույս շատ-շատ կիլոմետր տարածությամբ շրջակա անտառի բոլոր բնակիչներին արթնացնելով, նրանք վերջապես հաջողացրին իրար գլխի հավաքվել և ափիփելով հաշվել մեկը մյուսին: Այդ ընթացքում նրանք վերջնականապես շշկոկեցին, թե որտեղ է արահետը, և անդամնալիորեն մոլորվեցին, համենայն դեպս՝ մինչև առավոտ:

Մտում էր միայն առանց տեղից շարժվելու պառկել և քնել: Նրանք երկար չպառկեցին: Բիւրոն նոր-նոր էր ննջում, երբ հանկարծ Դորին, որ ժամապահ էր կանգնած, բարձր փսփսաց.

— Էլի կրակներ: Ավելի շատ, քան առաջ:

Նրանք նորից վեր թռան ու նետվեցին այն կողմը, որտեղից պարզ լսվում էին ձայներ ու ծիծաղ: Բայց հենց մոտեցան խարույկներին՝ նույնը կրկնվեց, ինչ և նախորդ անգամ:

Ստիպված նորից պառկեցին քնելու:

Բայց կրակների պատմությունը դրանով չվերջացավ: Կեսգիշերին նրանց արթնացրեց Կիլին:

— Այ այնտեղ մի ամբողջ հրդեհ է՝ խարույկներ, ջահեր. լսո՞ւմ եք, երգում են, տավիղ նվագում...

Նրանք երկար ականջ դրեցին և, ի վիճակի չլինելով գայթակղությանը դիմանալ, նորից վեր կացան ու գնացին: Արդյունքն ավելի քան տխուր եղավ: Իսկ խնջույքը նախորդներից ավելի ճոխ էր, ավելի շքեղ, նրանց գլխավորում էր անտառի արքան, որ նստած էր տերևներից թագը ոսկեմազ գլխին դրած, ճիշտ-ճիշտ Բոմբուրի երազի թագավորի պես: Էլֆերը թասերը փոխանցում էին մեկը մյուսին, ոմանք տավիղ էին նվագում, մյուսները երգում էին: Նրանց փայլուն մազերին ծաղիկներ էին հյուսած, օձիքների և գոտիների վրա շողշողում էին թանկարժեք քարեր, դեմքերն ու ձայները ուրախություն էին ճառագում: Երգերն այնքան զրնգուն ու սքանչելի էին, որ Տորինը մտավ շրջանի կենտրոնը...

Երգողները խոսքի կեսին լռեցին, մեռելային լռություն տրիեց... բոլոր կրակները հանգան, խարույկների տեղում սև ծխի սյուներ բարձրացան, մրի-մոխրի փոշին փակեց թզուկների աչքերը: Անտառը նորից լցվեց սրանց ողբ ու կականով:

Բիւրոն վազվզում էր չորս կողմը և կանչում էր հա կանչում.

— Դորի, Նորի, Օրի, Օյն, Ֆիլի, Կիլի, Բոմբուր, Բիֆուր, Դվալին, Բալին, Տորին Օուլբենշի՛ր...

Նրանք, մթության մեջ անտեսանելի, նույնն էին անում, դեռ «Բիլբոն» էլ ավելացնելով: Բայց աստիճանաբար թզուկների ձայները մարեցին, հեռացան, հետո, ինչպես հոբիտին թվաց, օգնություն հայցող վայնասունի վերածվեցին, ապա ամեն ինչ սսկվեց, և Բիլբոն մենակ մնաց լիակատար լռության ու մթության մեջ:

Սա նրա կյանքի ամենածանր պահերից մեկն էր: Բիլբոն բավական արագ որոշեց, որ մինչև առավոտ ոչինչ անել պետք չէ, անիմաստ է մթության մեջ խարխափել և ուժասպառ լինել. ան էլ նախաճաշի ոչ մի հույս չունենալով, որպեսզի ուժերը վերականգնի: Բիլբոն նստեց, մեջքով հենվեց ծառին և, արդեն քանիտորո՞ղ անգամ, հիշեց իր հեռավոր բույնը, լեփլեցուն մառանները: Նա խորասուզվեց խոզապուխտի, ձվերի, բոված հացի մասին իր երազանքների մեջ, երբ հանկարծ զգաց ինչ-որ մեկի հպումը: Նրա ձեռքին ինչ-որ ամուր մածուցիկ պարան սեղմվեց, իսկ երբ նա փորձեց վեր կենալ, տեղունտեղն ընկավ, քանի որ նրա ոտքերը խճճվել էին էլի նույն գարշանքով:

Եվ հանկարծ նրա թիկունքից մի հաղթանդամ սարդ հայտնվեց: Սա էր, որ մինչ ինքը ննջում էր, իրեն փաթաթել էր սարդոստայնով: Բիլբոն տեսնում էր նրա աչքերը, զգում, թե ինչպես են հպվում իրեն փրչոտ թաթերը. սարդը շատ բարեխղճորեն աշխատում էր՝ Բիլբոյին փաթաթում էր զգվելի թելերով: Լավ էր, որ Բիլբոն ժամանակին սթափվեց՝ մեկ րոպե ևս, և նա արդեն շարժվել չէր կարողանա: Եվ այն ժամանակ սարդը թույն կներարկե, ինչպես սովորական սարդերը անում են ճանճերին: Բիլբոն բռունցքներով սկսեց քաջաբար կռվել նողկալի արարածի հետ ու հանկարծ դաշույնը միտն ընկավ: Հենց որ նա դուրս քաշեց դաշույնը, սարդը ետ թռավ, իսկ Բիլբոն այդ ժամանակ կտրատեց իրեն փաթաթված թելերը: Այժմ հարձակվելու հերթը իրենն էր, և գրոհեց սարդի վրա: Եթե սարդն իմանար, թե իրեն ինչ է սպառնում, ապա իսկույն կծկեր, բայց նա հաստատ այդպիսի խայթով «որսի» սովոր չէր, և Բիլբոն հասցրեց դաշույնով հարվածել նրա գլխին: Սարդը թռչկոտեց, պար եկավ, թաթերը ահավոր ցնցեց, այդ ժամանակ Բիլբոն երկրորդ հարվածով նրան տապալեց գետնին: Բայց ինքն էլ տեղնուտեղն ընկավ և երկար ժամակ գիտակցությունը կորցրեց:

Երբ նա ուշքի եկավ, շուրջը սովորական ցերեկային աղոտ կիսամութ էր: Սարդը ընկած էր կողքին, դաշույնի բերանը սև խալերով էր պատված: Սպանել հսկայական սարդին մթության մեջ, միայնակ, առանց կախարդի, առանց թզուկների կամ որևէ մեկի օգնության, դա, պետք է ասեմ, միսոր Բեգինսի կյանքում չլսված իրադարձություն էր: Նա իրեն բլորովին ուրիշ էր զգում, առավել քաջ ու անողոք: Նա դաշույնը խոտերին քսելով մաքրեց և դրեց պատյանը:

— Այսուհետ ես քեզ խայթ եմ անվանելու,— ասաց նա դաշույնին:

Հետո գնաց հետախուզության: Անտառում անդորրն էր թագավորում: Ամենից առաջ հարկ էր բարեկամներին փնտրել. նրանք գնալ չէին կարող, եթե, իհարկե, նրանց գերի չէին վերցրել էլֆերը կամ ավելի վատթար որևէ մեկը: Բիլբոն հասկանում էր, որ գոռալն այնտեղ վտանգից զերծ չէ, դրա համար էլ երկար կանգնել էր տեղում ու մտածում էր, թե որ կողմում է արահետն ու որ կողմ շարժվել թզուկներին փնտրելու համար:

«Ինչո՞ւ մենք չլսեցինք Բեորնի ու Հենդալֆի խորհուրդները,— իրեն կոտորում էր նա:— Իսկ հիմա ամեն ինչ խճճեցինք: «Մենք»: Լավ է, եթե «մենք» լինենք, թե չէ մենակ շատ սարսափելի է»:

Վերջապես նա հիշեց, թե գիշերը որտեղից էին գալիս օգնության կանչող ճիչերը. բարեբախտաբար (իսկ դա նրա հետ գալիս էր ծնված օրվանից) մի քիչ ավելի, մի քիչ պակաս, բայց ճիշտ որոշեց տեղը և իսկույն էլ սկսեց զգուշությամբ շարժվել այդ ուղղությամբ: Ինչպես արդեն շատ անգամ ասել եմ, հոբիտները գիտեն անտառում քայլել, ինչպես ոչ ոք, բացի դրանից Բիլբոն դրել էր մատանին:

Նա զգուշորեն գաղտագողի գնաց այնքան ժամանակ, մինչև առջևում մի սև գունդ նշմարեց. շատ թանձր սև՝ նույնիսկ Սև Անտառի համար, ասես մութ գիշերվա մի կտոր լինել, որ մոռացել էր օրը բացելու հետ ցրվել: Մոտիկ գնալով՝ նա հասկացավ, որ դա սարդոստայն է, մի քանի շերտ իրար վրա փաթաթված: Եվ այստեղ նա իր վերևում սարդեր տեսավ՝ հսկայական, ահավոր, սարսափելի, իրենց համար նստած էին ճյուղերին: Բիլբոն դողաց. մատանին՝ մատանի, բայց հանկարծ ու իր հոտն առնե՞ն... Ծառի ետևում կանգնած, որոշ ժամանակ դիտում էր նրանց անտառի լռության ու անդորրի մեջ և հանկարծ հասկացավ, որ զագրելի արարածները խոսում են իրար հետ: Նրանց ձայները բարակ ճռռոցի ու սուլոցի էին նմանվում. բայց Բիլբոն տարբերեց բառերը: Նրանք թզուկների մասին էին խոսում:

— Թեժ էր կռիվը, բայց թե արժեր,— ասաց մեկը:— Համա թե պինդ է դրանց կաշին: Փոխարենը ներսից հաստատ հյուլթեղ կլինեն:

— Այո, այո, մի քիչ կախված կմնան՝ ավելի կհամովանան,— հաստատեց մյուսը:

— Չափից ավելի չպահեք նրանց,— ձայն տվեց երրորդը,— որ չչորանան, թե չէ ինչ-որ նիհար-միհար են: Երևի վատ են սնվել վերջին ժամանակները:

— Հիմա սպանենք դրանց, ասում եմ ձեզ,— սուլեց չորրորդը,— իսկ հետո թող սատկած մնան կախված:

— Դե նրանք առանց այդ էլ սատկած են: Հավատացեք ինձ,— առարկեց առաջինը:

— Իսկի էլ սատկած չեն: Նոր մեկը շուռումուռ էր գալիս, երևում է ուշքի է եկել: Գնանք, ցույց տամ:

Եվ գեր սարդը արագ վազեց ճյուղի մոտ, որից կողք կողքի կախված էին մի դյուժին մեծ-մեծ փաթեթներ: Նոր միայն Բիլբոն նրանց նկատեց ծառի ստվերում և սարսափեց. փաթեթներից դուրս էին ցցված՝ մեկից թզուկի ոտք, մեկից՝ քիթ, մյուսից մորուքի ծայրը, մեկ ուրիշից՝ կնգուղը:

Սարդը ուղղվեց դեպի ամենամեծ փաթեթը:

«Երևի թե խեղճ Բոմբուրն է»,— մտածեց Բիլբոն:

Սարդը ուժեղ կամթեց Բոմբուրի քթի ծայրը: Անտարակույս Բոմբուրը կենդանի էր: Մի խուլ վայնասուն լսվեց և դուրս ցցված ոտքը դիպուկ քացի տվեց սարդին: Այնպիսի մի ձայն լսվեց, ասես խփեցին փուքսը բաց թողնող ֆուտբոլի գնդակին. կատաղած սարդը ճյուղից ցած ընկավ, բայց ժամանակին կառչեց սեփական ոստայնի թելից:

Մնացածները հռիռացին:

— Դու ճիշտ ես,— ասացին նրանք,— նախաճաշը ողջ-առողջ է և քացի-քացի է անում:

— Հիմա կդադարեցնի,— չարությամբ ֆշշացրեց սարդը և սողաց վերև:

Բիլբոն հասկացավ, որ գործելու ժամանակն է: Մինչև սարդերը հասնել չէր կարող, կրակելու համար ոչինչ չուներ: Ետ նայելով՝ մի փոսորակ տեսավ, ըստ երևույթին չորացած առվի հուն էր, որտեղ շատ քար կար: Բիլբոն քար նետելու վարպետ էր: Երկար չմտածելով՝ նա վերցրեց ձվի նման ողորկ մի քար, որ շատ հարմար տեղավորվեց ափի մեջ: Տղա ժամանակ Բիլբոն շատ էր վարժություններ արել՝ տարբեր առարակների վրա քարեր շարտելով, այնպես որ ճագարները, սկյուռներն ու թռչունները դեռ նրա կռանալը տեսնելուն պես խելակորույս փախչում ու թռչում էին զանազան կողմեր: Մեծանալով՝ նա շատ ժամանակ էր տրամարդում օղեր ու տեգեր նետելու, ձողիկին կրակելու, կեզլի, գնդակ խաղալու և նետելու ու շարտելու բնույթի ուրիշ շատ խաղերին: Առհասարակ Բիլբոն շատ բան գիտեր, բացի նրանից, որ ծիսի օղակներ էր բաց թողնում, հանելուկներ էր լուծում և եփուրթափ անում: Ուղղակի ես առաջ ժամանակ չունեի այդ բոլորի մասին պատմելու: Հիմա էլ ժամանակ չունեմ: Մինչև նա քարեր էր ընտրում, սարդը հասավ Բոմբուրին, և մի րոպե հետո նրա երգը երգվելու էր: Այստեղ Բիլբոն քարը նետեց: Թըրը՛խկ: Քարը կպավ սարդի գագաթին, և նա անզգա, ճանկերը չռած, թրմփաց գետնին:

Երկրորդ քարը սուլոցով պատռեց մեծ սարդոստայնը և տեղնուտեղը սպանեց կենտրոնում նստած սարդին: Խուճապն ընկավ սարդերի գաղուրթ, և միառժամանակ, կարող եմ ձեզ հավատացնել, նարնք թզուկների մասին մտածել անգամ մոռացան: Բիլբոյին տեսնել չէին կարող: Բայց հասկացան, թե որ կողմից են քարերը թռչում: Կայծակի արագությամբ նրանք սլացան ճյուղերի վրայով՝ բոլոր ուղղություններով ոստայն նետելով: Տարածությունը լցվեց մահաբեր ճոճանակներով:

Բայց Բիլբոն արդեն ուրիշ տեղ վազեց: Նա սարդերին գժվեցնելու, գրգռելու, ինչպես հարկն է բարկացնելու ցանկություն ունեցավ: Երբ

այնտեղ, ուր մինչ այդ կանգնած էր նա, մոտ հիսուն սարդ հավաքվեց, Բիլբոն սկսեց նրանց վրա քարեր շարտել, իսկ հետո ծառերի արանքում պարելով երգեց, որպեսզի գրավի սարդերի, ինչպես նաև թզուկների ուշադրությունը

Գեր սարդը ճյուղից
Կախվել է ներքև
Եվ ինձ չի տեսնում
Օրը ցերեկով:
Հեյ, հիմար ծերուկ,
Լսո՞ւմ ես դու ինձ,
Թող ուստայնը քո,
nbsp; Եվ իմ ետևից:

Երևի այնքան էլ հաջողակ երգ չէր գայրացնելու համար, բայց մի՛ մոռացեք, որ ինքն էր հնարել, հանապատրաստից, ամենաանպատեհ պահին: Երգն իր գործը տեսավ. մինչև Բիլբոն երգում էր, քարեր նետում և ոտքերով դոփում, տառացիորեն բոլորը նետվեցին դեպի նա: Ոմանք թռան ներքև ու վազեցին գետնի վրայով, մյուսները սուրում էին ճյուղերով և թափ առնելով թռչում ծառից ծառ, երրորդները նոր թելեր էին գցում մթին տարածության մեջ: Սարդերն առավել ճարպիկ դուրս եկան, քան սպասում էր Բիլբոն: Նրանք ախր շա՛տ էին չարացել: Առաջինը՝ քարերը նրանց դուր չեկան, երկրորդը՝ սարդերը տանել չեն կարողանում, երբ նարցն «գեր սարդ» են անվանում, դե դե իսկ արդեն «ծեր հիմարը» ում էլ ասես դուր չի գա:

Բիլբոն նետվեց նոր տեղ, բայց սարդերը ցրվեցին ամբողջ բացատով մեկ և արագ-արագ սկսեցին ուստայն հյուսել ծառաբների միջև: Ըստ երևույթին նրանց մտահաղացումն այսպիսին էր. շատ շուտով հոբիտը անխուսափելիորեն կհայտնվի ծուղակում և նրա ճանապարհը փակված կլինի: Բայց բոլոր կողմերից իրեն հետապնդող միջատներով շրջապատված Բիլբոն իր մեջ ուժ գտավ ևս մի երգ փգելու.

Ցանց են հյուսում ինձ համար
Եվ իմ շուրջը տարածում,
Սակայն զուր է ամեն ինչ,
Ինձ չեն տեսնի այդ ցանցում:
Ահա և ես: Դե փորձեք
Պոկվել խարդախ ձեր թելից:
Հիմար, ծերուկ սարդուկներ,
Դե վազեք իմ ետևից:

Այստեղ նա շրջվեց և տեսավ, որ երկու բարձր ծառերի միջև գտնվող վերջին ազատ տարածությունը ևս պարուրված է սարդոստայնի թելերով, բայց բարեբախտաբար, ոչ թե իսկական խիտ ցանցով, այլ առանձին հաստ թելերով՝ փուլթկոտ այս ու այն կողմ ձգված: Բիլբոն հանեց դաշույնը, կտրատեց դրանք և երգելով փախավ:

Սարդերը դաշույնը նկատեցին և, չնայած հազիվ թե հասկացած լինեին դրա ինչ լինելը, ամբողջ բազմությամբ ընկան հոբիտի ետևից՝ գետնի երեսով և ճյուղերի վրայով. մազոտ թաթերը երևում-անհետանում էին, ծնոտները շխկ-շխկում էին, աչքերն ակնակապիճներից դուրս էին թռչում, սարդերը կատաղությունից շնչահեղձ էին լինում:

Բիլբոն վազեց անտառի խորքը, հետո անաղմուկ, թաքուն թեքվեց մի կողմ, իսկ սարդերը շարունակեցին նույն ուղղությամբ առաջ սուրալ:

Բիլբոյի ժամանակը շատ սուղ էր. շուտով հուսախաբված սարդերը, նրան կորցնելով, կվերադառնային թզուկների մոտ: Մինչ այդ նա պետք է հասցնի փրկել իր բարեկամներին: Ամենաոճվարը այն երկար ճյուղի վրա բարձրանալն էր, որից կախված՝ ճոճվում էին փաթեթները: Կասկածում եմ, թե նա կարողանար այդ բանն անել, եթե ճյուղից կախված չլիներ սարդերից մեկի անզգուշորեն թողած կաչուն ոստայնաթելը: Բիլբոն ձեռքերի մաշկը պլոկելով, այդ թելով վեր մագլցեց և քիթ-քիթ դեմ առավ գերիներին հսկող մի ծեր, չաղ, զգվելի սարդի: Սրա զբաղմունքն այն էր, որ ժամանակ առ ժամանակ կամթում էր նրանց, որ իմանա, թե որն է ավելի հյուսթեղ: Եվ հենց այն է, մտածում էր մինչև մյուսների վերադարձը համտես անի, երբ հանկարծ միստր Բեգինսը, առանց երկար-բարակ մտածելու, դաշույնը խրեց նրա փորը, և սարդը ցած թրմփաց ծառից:

Հաջորդ խնդիրն էր ազատել մոտակա թզուկին: Բայց ինչպե՞ս: Կտրեր թե՞լը, որից կախված է նա: Խեղճն այդ մեծ բարձրությունից ներքև կընկնի: Բիլբոն սողաց մինչև առաջին փաթեթը, ճյուղը շարժելով, որից թզուկները ցնցվում ու ճոճվում էին: «Ֆիլին է կամ Կիլին,— մտածեց Բիլբոն՝ երկնագույն կնգուղի ծայրը տեսնելով:— Ավելի շուտ՝ Ֆիլին է»,— որոշեց նա, զննելով փաթեթից ցցված երկար սուր քիթը: Կռանալով՝ Բիլբոն հաջողությամբ կտրատեց բոլոր ամուր, կաչուն թելերը, որ պարուրել էին Ֆիլին, և վերջինս քացի-քացի անելով հայտնվեց Բիլբոյի առջև: Ենթադրում եմ, որ Բիլբոն, չկարողանալով իրեն զսպել ծիծաղեց, տեսնելով, թե ինչպես է Ֆիլին թափահարում ընդարմացած ոտքերն ու ձեռքերը և պարում թևատակերից կապած թելի վրա, ճիշտ-ճիշտ պարող խաղալիքի նման:

Վերջապես Ֆիլին Բիլբոյի օգնությամբ բարձրացավ ճյուղին և իրեն լավ դրսևորեց. օգնեց հոբիտին՝ մնացած թզուկներին ազատելու, չնայած որ շատ վատ էր զգում: Նրա սիրտը խառնում էր սարդի թույնից և այն բանից, որ կես օր ու կես գիշեր կախված պտտվել էր իր առանցքի շուրջը և շնչել միայն քթով: Նրան այդպես էլ միանգամից չհաջողվեց կաչուն ոստայնաթելերը մաքրել ունքերի և արտևանունքների վրայից, իսկ մորուքը առավել ևս չէր մաքրվում, հետո ստիպված եղավ տեղ-տեղ կտրել: Եվ այսպես նրանք սկսեցին հերթով ճյուղի վրա քաշել թզուկներին և ազատել բոժոժից: Բոլորը նույնքան վատ էին զգում, որքան Ֆիլին, իսկ ում քիթն ավելի կարճ էր կամ ով թույնի ավելի մեծ բաժին էր ստացել, առավել ևս վատ:

Այս եղանակով նրանք ազատեցին Կիլիին, Բիֆուրին, Բոֆուրին, Դորիին և Նորիին: Խեղճ Բոմբուրն այնքան տանջահար էր (նրան, որպես ամենագիրուկի, բոլորից շատ էին կամթել), որ ճյուղից գլորվեց, թրմփաց գետնին, տերևների կույտի վրա, և մնաց անշարժ պառկած: Բայց հինգ թզուկ դեռ ճոճվում էին ճյուղի ծայրին, երբ սարդերը, էլ ավելի կատաղած, սկսեցին վերադառնալ:

Բիլբոն իսկույն ետ վազեց ճյուղի վրայով ու սկես դաշույնով ետ մղել վեր բարձրացող սարդերին: Բայց Ֆիլիին ազատելիս նա մատանին հանել էր ու մոռացել էր դնել մատին, այնպես որ սարդերն այժմ նրան տեսան և թուր շաղ տալով սուլեցին:

— Մենք քեզ տեսնում ենք, օձի ձագ... Մենք քո արյունն այնպես կծծենք, որ միայն ոսկորներդ ու կաշիդ մնա: Ո՛ւրի: Նա Խայթ ունի: Թող լինի: Միևնույն է, մենք նրան մեր ճանկը կագենք, գլխիվայր կկախենք մեկ-երկու օր...

Այդ միջոցին ազատված թզուկները աշխատում էին. դանակներով կտրում էին մնացած գերիների կապերը: Մի քիչ էլ՝ և բոլորն ազատ կլինեն:

Իսկ հետո՞: Սարդերը նրանց բավական հեշտ որսացին, բայց դա գիշերն էր, մթության մեջ, հանկարծակիի բերելով: Իսկ այս անգամ մահացու կռվի հոտ էր գալիս:

— Ցած, ցած իջեք,— գոռաց Բիլբոն թզուկներին:— Այդ տեղ մի՛ նստեք, հիմա ձեզ ցանցի մեջ կառնեն:

Սարդերը հոծ խմբով մագլցում էին հարևան ծառերը և սողում թզուկների գլխավերևի ճյուղերին:

Թզուկները վայրկենապես թռան կամ ընկան ցած, բոլոր տասնմեկն էլ, մի կույտով: Նրանք հազիվ էին ոտքի վրա կանգնում, այնքան որ թույլ էին: Այժմ բոլորը հայտնվեցին գետնին, հաստիկ Բոմբուրն էլ հետները հաշված, որին կողքերից պահում էին նրա զարմիկները՝ Բիֆուրն ու Բոֆուրը: Բիլբոն թռչկոտում էր նրանց շուրջը, իր Խայթը թափահարելով, իսկ հարյուրավոր մուլեզնած սարդեր աչքերը չռել էին նրանց վրա՝ բոլոր կողմերից. կողքերից, վերևից, ներքևից: Դրությունն անհուսալի էր թվում:

Եվ այստեղ մարտն սկսվեց: Թզուկներից մի քանիսի մոտ դանակներ կային, մյուսների մոտ՝ փայտեր, շուրջը լիքը քար էր թափված, իսկ Բիլբոյի ձեռքին էլֆյան դաշույնն էր: Նրանք մեկը մյուսի հետևից ետ մղեցին սարդերի գրոհները և շատերին ջարդեցին: Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող:

Բիլբոն բոլորովին հալից ընկել էր, թզուկներից միայն չորսն էին ոտքի վրա ամուր կանգնած, սարդերն անհուսափելիորեն հաղթելու էին բոլորին, ինչպես ուժասպառ եղած ճանճերի:

Բիւրոյին, որ գլուխ էր ջարդում շարունակ, թե ինչ պետք է լինի հետո, մտում էր միայն թզուկներին հայտնել իր մատանու գաղտնիքը: Ցավալի էր, բայց ուրիշ ելք չկար:

— Հիմա ես կանհետանամ,— ասաց նա:— Կաշխատեմ սարդերին իմ կողմքը քաշել, իսկ դուք բոլորդ միասին եղեք և ճեղքեք դուրս եկեք հակառակ ուղղությամբ, ձախ, մոտավորապես այնտեղ, ուր մենք տեսանք էլֆերի խարույկները:

Բիւրոն մեծ դժվարությամբ սա մտցրեց նրանց գլուխը, քանի որ նրանք օդում կախվելուց, գոռգոռալուց, քարեր նետելուց ու փայտեր ճոճելուց բթացել էին:

Դանդաղել չէր կարելի. սարդերը նրանց ավելի ու ավելի խիտ էին շրջապատում: Բիւրոն դրեց մատանին, ի մեծ զարմանք թզուկների, վարկենապես անհետացավ:

Նույն պահին ծառերի միջից լսվեց «գեր սարդ», «ծեր հիմար»: Դա սարդերի մեջ խառնաշփոթություն առաջացրեց:

Նրանք կանգ առան: Մի քանիսը վազեցին փայնի կողմը: «Ծեր հիմար» խոսքը նրանց բոլորովին հանեց համբերությունից, նրանք ուղղակի գլուխները կորցրին: Բալինը, մյուսներից շուտ գլխի ընկնելով, թե որն է Բիւրոյի պլանը, թզուկներին գրոհի տարավ: Թզուկները հավաքվեցին հոծ խմբով և, քարերի տարափ տեղալով, սարդերին ետ մղեցին ու ճեղքեցին նրանց պատնեշը:

Հակառակ կողմում երգն ու ճիչերը հանկարծ դադարեցին: Աղոթելով, որպեսզի Բիւրոյին սարդերը չբռնեն, թզուկները շարժվեցին առաջ: Չափազանց դանդաղ... Նրանք ուժասպառ էին եղել և արդեն հագիվահզ էին քարշ գալիս, իսկ սարդերը կրնկակոխ հետևում էին: Թզուկները ստիպված էին մի գլուխ շուռ գալ և վանել թշնամուն: Շատ սարդեր ճյուղերի վրայով վազում էին նրանց գլխավերևում երկար, կաչուն թելեր ցած գցելով:

Դրությունը գնալով ծանրանաում էր, երբ հանկարծ հայտնվեց Բիւրոն և անսպասելի կողքից հարձակվեց սարդերի վրա:

— Վազեք առաջ,— գոռաց նա:— Ես սրանց կպահեմ:

Եվ, պահեց նարնգ: Նա ետ ու առաջ էր նետվում կտրատելով թելերը, կտոր-կտոր անելով ճանկերը, ծակծկելով նրանց գեր մարմինները... Սարդերը կատաղությունից փքվում էին, ֆշշացնում էին ու թքում, սարսափելի անեծքներ էին տեղում, բայց խայթը այնպիսի ահ էր ներշնչում, որ նրանք մոտենալ չէին համարձակվում: Ոչ մի անեծք չօգնեց. որսը դանդաղ, բայց հաստատապես ձեռնքերից դուրս էր գալիս:

Սարսափելի մարտը երկար տևեց, երևի մի քանի ժամ: Վերջապես, երբ Բիւրոն զգաց, որ այլևս չի կարող ո՛չ ձեռքերը բարձրացնել, ո՛չ էլ գոնե մի հարված հասցնել, հետապնդողները հանկարծ նրանց հանգիստ թողեցին

և հուսախաբված, ուղևորվեցին դեպի տուն՝ անտառի իրենց մութ անկյունը:

Եվ այդ ժամանակ թզուկները նկատեցին, որ գտնվում են բացառի եզրին, որտեղ առաջ էլֆերի խարույկներ էին վառվում: Նրանք մտածեցին, որ այստեղ բարի կախարդանք է թաքնված, և դա սարդերի սրտով չէ: Այստեղ ճամփորդները կարող էին հանգստանալ և լիաթոք շնչել:

Նրանք այդպես էլ արեցին: Բայց հանգստանալուց հետո Բիլբոյին նեղեցին հարցերով, ամենակարևորը՝ նա ինչպե՞ս կարողացավ անհետանալ: Մատանու պատմությունը նրանց այնպես էր հետաքրքրել, որ աշխարհում ամեն ինչ մոռացել էին: Բալինը պահանջեց նորից պատմել Գոլլումի դեպքը, հանելուկները, և առհասարակ ամեն ինչ, հենց սկզբից, բայց այնպես, որ մատանին իր պատշաճ տեղը գրավի: Շուտով լույսն սկսեց աղոտանալ, և այդ ժամանակ այլ հարցեր տեղացին. որտե՞ղ են իրենք, որտե՞ղ է արահետը, որտեղի՞ց ուտելիք ճարել, հետ ի՞նչ են անելու: Այս բոլոր հարցերն այժմ նրանց Բիլբոյին էին տալիս և բացաահայտորեն նրանից պատասխան սպասում: Ինչպես տեսնում եք, նրանք խիստ փոխել էին իրենց կարծիքը միստր Բեգինսի մասին և (ինչպես կանխագուշակել էր Հենդալֆը) հարգանքով էին լցված նրա հանդեպ: Այժմ նրանք չէին փնթփնթում Բիլբոյի վրա, այլ սպասում էին, որ նա որևէ ցնցող պլան առաջարկի: Նրանք շատ լավ էին հասկանում, որ եթե հոբիտը չլիներ, իրենք այժմ կենդանի չէին լինի, դրա համար էլ նորից ու նորից շնորհակալություն էին հայտնեցին նրան: Մեկը նույնիսկ խոնարհվեց նրա առաջ, բայց թուլությունից չկարողացավ ոտքերի վրա մնալ և բերանքսիվայր ընկավ գետին:

Մատանու պատմությունը բոլորովին չզգեց Բիլբոյին նրանց աչքում. նրանք հասկացան, որ բացի հաջողությունից ու մատանուց, նա խելք ու հնարամտություն էլ ունի, առանց որոնց ոչինչ չի ստացվի: Նրանք այնքան գովաբանեցին Բիլբոյին, որ նա իսկապես էլ իրեն խիզախ արկած որոնող զգաց, իսկ եթե ուտելու մի բան էլ գտնվեր, նա ավելի խիզախ կլիներ:

Բայց ուտելու ոչինչ չկար: Բիլբոն մտածում էր ու մտածում, թե ինչպես գտնի կորցրած արահետը, սակայն նրա հոգևած գլուխն աշխատելուց հրաժարվում էր: Նա ուղղակի նստել ու անքթիթ նայում էր ծառերի անվերջանալի շարքերին: Բոլորը սկզբել էին, աչքերը փակել, բայց Բալինը դեռ երկար խնդմնդրում էր ու քրթմնջում.

— Գոլլում... Իսկ ես կարծում էի... Ահա, ուրեմն, ինչպես է նա տվել անցել քթի տակով... Հիմա հասկանալի է... Ա՛խ, դուք «ուղղակի թաքնվեցիք, թաքնվեցիք ու թաքուն փախաք» հա, միստր Բեգինս: Դուք «դռների մեջ շատ կոճակներ՞ր եք կորցրել»: Ա՛խ դու, ծեր սատանա, սա... սա...— Այստեղ Բալինն էլ քնեց: Եվ երկար ժամանակ շուրջը լռություն տիրեց:

Հանկարծ Դվալինը բացեց աչքերն ու շուրջը նայեց:

— Իսկ ո՞ւր է Տորինը,— հարցրեց նա:

Այ քեզ փորձա՛նք... Նրանք իսկապես տասներեքն էին, տասներկու թզուկը և հորփտը: Ո՞ւր է կորել Տորինը: Ի՞նչ բախտ է բաժին ընկել նրան: Կախարդե՞լ են նրան, թե՞ կերել են անտառի հրեշները: Սարսափից դողալով թզուկներն ու Բիլբոն պառկել էին, մինչև որ քնեցին անհանգիստ քնով: Նրանց տանջում էր մղձավանջը: Երեկոն գիշերի փոխվեց: Մենք էլ որոշ ժամանակ նրանց թողնենք այստեղ, քանի դեռ քնած են, հոգնած, տանջված, նույնիսկ առանց պահակներ կարգելու:

Տորինի ճակատագիրը մի քիչ ուրիշ էր: Նա առաջ գնաց դեպի խարույկը և հարբածի նման ընկավ: Մոլորված թզուկների ճիչերը, վայնասունը, երբ նրանց բռնեցին ու կապկպեցին սարդերը, հաջորդ օրվա մարտի ծայները Տորինին չէին հասել, նա ոչինչ չէր լսել: Հետո նրան վերցրին Էլֆերը, կապկպեցին ու տարան իրենց հետ:

Այո, հասկանալի է, քեֆ անողները անտառային Էլֆերն էին: Նրանք չար էակներ չէին, բայց անվստահությամբ էին վերաբերվում օտարներին, միշտ ծայրահեղ զգուշությու՛ն պահպանելով: Նրանք այնքան իմաստուն չէին, որքան բարձարգույն Էլֆերը, բայց նույնպես գիտեին հմտորեն կախարդել և ավելի քան խարդախ էին: Ախր նրանց մեծ մասը, այդ թվում լեռներում ու բլուրներում գտնվող նրանց ազգականները սերում էին կախարդական թագավորություն չայցելած հնագույն տոհմերից: Իսկ այ, արեգակնային Էլֆերը, ծովային Էլֆերը և ստորգետնյա Էլֆերը տարիներ շարունակ ապրում ու դաստիարակվում էին այդ թագավորությունում, դառնալով ավելի ու ավելի գեղեցիկ, իմաստուն և ուսյալ ու հետո, Մեծ Աշխարհի վերադառնալով, իրենց կախարդական արվեստն ի սպաս էին դնում ամեն տեսակ գեղեցիկ ու զարմանալի բաներ արարելու համար: Անտառային Էլֆերը երբեմն հայտնվում էին մթնշաղին, երբ արևը մայր էր մտնում և դուրս էր գալիս լուսինը, բայց ավելի շատ գերադասում էին գիշերն ու աստղերը: Նրանք թափառում էին անտառներում, որպիսիք մեր ժամանակներում բոլորովին չեն մնացել: Նրանք բնակվում էին անտառի եզրին, որտեղից հեշտ էր գնալ դաշտերը որսի, ձիով վարգել կամ ուղղակի վազվզել ազատ տարածության մեջ, լուսնի կամ աստղերի լույսի տակ: Մարդկանց գալուց հետո նրանք ավելի շատ սիրեցին մթնշաղն ու խավարը: Բայց, այնուամենայնիվ, նրանք մնում էին Էլֆեր, իսկ Էլֆերը բարի ժողովուրդ են:

Սև Անտառի արևելյան սահմանի մոտ, մեծ քաղաքում ապրում էր անտառային Էլֆերի հզոր արքան: Վիթխարի քարե դռների առջևով մի գետ էր հոսում, որ գալիս էր անտառապատ բլուրներից և թափվում էր լեռների ստորոտում գտնվող ճահիճները: Գետնի տակ գտնվող այդ մեծ քարայրը բաղկացած էր բազմաքանակ սրահներից ու մուտքերից, որոնցից ճյուղավորվում էին բազմաթիվ մանր քարայրներ: Ե՛վ քարայրը, և՛ միջանցքները անհամեմատ լուսավոր և ուրախ էին գոբլինների քարայրներից. բոլորովին էլ ոչ նրանց պես պոր և ոչ էլ այդքան վտանգավոր: Արքայի հպատակները, որ ճիշտն ասենք, ապրում ու որս

Էին անում մեծ մասամբ բաց օդում, անտառներում: Ապրում էին նրանք գետնին ու ծառերի վրա, բոլոր ծառերից ավելի սիրում էին հաճարենին: Դու մի ասա, այդ քարայրը թագավորական պալատն էր, գանձարանը և ամրոցը՝ թշնամիների հարձակման դեպքում: Այդտեղ էին գտնվում նաև գերիներին պահելու զնդանները: Հենց այդտեղ էլ քարշ տվեցին Տորինին, որի հետ այնքան էլ քաղաքավարի չվարվեցին, որովհետև թզուկներին այստեղ չէին սիրում: Հնում նույնիսկ պատահել է, որ էլֆերը կռիվներ են մղել թզուկների դեմ, որոնց մեղադրում էին իրենց գանձերը գողանալու համար: Արդարությանը պահանջում է ասել, որ թզուկները դա այլ կերպ էին բացատրում. նրանք, իբր թե, վերցրել են այն, ինչ իրենց է պատկանելիս եղել: Էլֆերի արքան ինչ-որ ժամանակ թանկագին զարդեր է պատվիրել նրանց, դրա համար ոսկի և արծաթ է տվել, իսկ հետո հրաժարվել է աշխատանքի դիմաց վճարել: Եվ այդ ժամանակ թզուկները, վարձը չստանալով, զարդերը պահել են, չեն տվել: Էլֆերի հզոր արքան իսկապես էլ այդպիսի թուլություն ուներ՝ մի քիչ ժլատ էր: Նրա գանձարանը ոսկուց, արծաթից ու ադամանդից տրաքվում էր, բայց նա էլի ու էլի էր ուզում, որպեսզի հարստությամբ հավասարվի նախկին էլֆ տիրակալներին: Նրա ժողովուրդը հանքահանությամբ չէր զբաղվում, մետաղ ու թանկարժեք քարեր չէր մշակում, առևտուր չէր անում, հող չէր մշակում: Ամեն մի թզուկ գիտեր այդ բանը: Բայց Տորինն ու իր նախնիները ոչ մի կապ չուներին էլֆերի ու թզուկների միջև եղած այդ հին վեճի հետ: Դրա համար էլ, երբ նրանից հանեցին կախարդանքը, և նա արթնացավ, խիստ վրդովվեց նրանց վերաբերմունքից ու որոշեց, որ իրենից ոչ մի խոսք չեն քաշի ոսկու և թանկարժեք քարերի մասին:

Արքան Տորինի վրա հառեց դաժան հայացքը և սկսեց նրան հարցաքննել, բայց Տորինը բոլոր հարցերին միայն մի բան էր պատասխանում. ինքը սովից մեռնում է:

— Ինչո՞ւ դու և քո ուղեկիցները խնջույքի ժամանակ երեք անգամ հարձակվեցիք իմ ժողովրդի վրա:

— Մենք չէինք հարձակվում,— պատասխանեց Տորինը,— մենք ուզում էինք ուտելիք խնդրել, քանի որ սովից մեռնում էինք:

— Որտե՞ղ են հիմա քո ընկերները: Ի՞նչ են անում:

— Չգիտեմ, երևի սովից մեռնում են անտառում:

— Ի՞նչ էիք անում անտառում:

— Սնունդ ու ջուր էինք փնտրում, քանի որ սովից մեռնում էինք:

— Իսկ ի՞նչ էիք կորցրել անտառում,— վերջում զայրանալով հարցրեց արքան:

Բայց Տորինը շրթունքները սեղմեց և չուզեց պատասխանել:

— Շատ լավ,— ասաց թագավորը:— Տարեք և զցեք զնդան, մինչև ճիշտը կասի: Թող նստի թեկուզ հարյուր տարի:

Էլֆերը Տորինին կապկպեցին կաշեփոկերով և փակեցին ամենահեռավոր փայտե ամուր դռնով գնդաններից մեկում: Նրան առատ-առատ ուտելիք ու խմելիք տվեցին, ճիշտ է, ոչ շատ ընտիր, բայց ախր անտառային էլֆերը գոբլիններ չեն, և Նույնիսկ ոխերիմ թշնամիների հետ նրանք միանգամայն տանելի են վերաբերվում: Միայն հսկա սարդերի նկատմամբ են անողոր: Խեղճ Տորինը պառկել էր արքայական գնդանում: հացն ու միսը ուտելով և ջուրը խմելով՝ նա ակամա շնորհակալական զգացում էր ապրում: Հետո հիշեց իր անբախտ ընկերներին: Նա ստիպված չէր երկար գլուխ ջարդելու, թե ինքն ինչ փորձանքի մեջ է ընկել՝ շատ շուտով ամեն ինչ իմացավ: Բայց այդ մասին կպատմենք հաջորդ գլխում, ուր խոսք կգնա Նոր արկածի մասին, որտեղ հոբիտը Նորից ցույց տվեց, թե ինքն ինչի է ընդունակ:

ՏԱԿԱՌՆԵՐԻ ՄԵՋ ԴԵՊԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Սարդերի դեմ մղած ճակատամարտի հաջորդ օրը Բիլբոն և թզուկները անտառից դուրս գալու վերջին հուսահատ փորձն արեցին: Նրանք վեր կացան և օրորվելով քարշ եկան դեպի այն կողմը, որտեղով, տասներեք բարեկամներից ութի կարծիքով, անցնում էր արահետը: Բայց նրանց այդպես էլ չհաջողվեց իմանալ, թե ով էր ճիշտ: Մռայլ օրվան հաջորդեց մութ երեկոն, և հանկարծ չորս կողմում բոցավառվեցին պայծառ ջահեր, ասես հարյուրավոր կարմիր աստղեր: Մթուղայան միջից դուրս թռան անտառային էլֆերը՝ աղեղներով ու նիզակներով, և գոռացին. «Կա՛նգ առ»:

Դիմադրելու մասին իսկի մտածելու հարկ էլ չեղավ: Նույնիսկ եթե թզուկները այդ աստիճան թուլացած չլինեին, միևնույն է, նրանց միակ զենքը՝ դանակը, էլֆերի նետերի հետ չէր համեմատի. էլֆերը թռչունի աչքին էին խփում լիակատար մթուղայան մեջ: Դրա համար էլ ճամփորդները նստեցին ու սկսեցին սպասել: Բոլորը, բացի Բիլբոյից: Նա մատանին դրեց ու շտապ քաշվեց մի կողմ: Դրա համար էլ, երբ էլֆերը թզուկներին կապկպեցին, շարք կանգնեցրին ու հաշվեցին, հոբիտը հաշվից դուրս մնաց:

Նրա քայլերի ձայնը Նույնիսկ էլֆերը չլսեցին, երբ նա մանրիկ քայլերով գնում էր շարանի ետևից: Թզուկների աչքերը կապեցին: Բիլբոն հագիվ էր հասնում նրանց ետևից, որովհետև էլֆերը թզուկներին անխնա էին քշում, ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, որ գերիները հոգնել են, թուլացել: Արքան նրանց հրամայում էր շտապել, նրանք էլ շտապում էին:

Հանկարծ ջահերն առջևում կանգ առան, և հոբիտը հասավ էլֆերին հենց այն ժամանակ, երբ նրանք բարձրացան կամուրջը: Կամրջի տակով սրընթաց վազում էր պղտոր գետը, կամուրջը դեմ էր առնում դարպասին, որը փակում էր անտառապատ գառիվայր բլրի խորքը գնացող հսկայական քարայրի մուտքը: Բարձր հաճարենիները իջնում էին լանջն ի վար մինչև ափը, այնպես որ դրանց արմատները ողողվում էին ջրով:

Այդ կամուրջով էլ հենց քշեցին գերիներին, բայց Բիլբոն մի քիչ հապաղեց: Նրան բուրբոսի դուր չեկավ քարայրի խոր, սևին տվող մուտքը: Վերջին բուրբոսն էր, այնուամենայնիվ, որոշեց բարեկամներին չլքել և հազիվ էր վերջին էլֆի ետևից ներս ընկել, երբ դարպասի դռները ճռինչով փակվեցին:

Ներս մտնելով և քայլելով թնոյունով արծազանքող, ջահերի կարմիր լույսով լուսավորված ծուռումուռ անցումներով, էլֆերը սկսեցին երգել:

Միջանցքներն այնտեղ այնպիսին չէին, ինչպես գորլիկների մոտ, սարի մեջ. կարճ էին, այնքան էլ խոր չէին փորված գետնի տակ, դրա շնորհիվ էլ պակաս խեղդուկ էին: Ուղղակի ժայռի մեջ փորված սյունազարդ ընդարձակ դահլիճում, փայտե քանդակազարդ գահի վրա բազմել էր էլֆերի արքան: Նրա գլխին աչքի էր ընկնում հատապտուղներից ու կարմիր տերևներից թագը, քանի որ արդեն աշուն էր: Գարնանը նա սովորաբար անտառի ծաղիկներից թագ էր կրում: Նա ձեռքում բռնել էր դրվագազարդ կաղնե գավազանը:

Գերիներին բերեցին նրա մոտ: Նա տհաճությամբ նայեց սրանց, բայց հրամայեց արձակել կապերը, որովհետև տեսավ, որ նրանք վիրավոր են ու տանջված:

— Առավել ևս, պարանենն այլևս պետք չեն,— ավելացրեց արքան:— Ով ընկավ այստեղ, նրան այլևս կախարդական դարպասից փախչել չկա:

Նա երկար ու մանրախնդիր հարցաքննեց թզուկներին՝ դեպի ո՞ւր են ուղևորվում, որտեղի՞ց և ինչո՞ւ: Բայց ավելին չիմացավ, քան Տորինից. թզուկները բարկացած էին և իրենց, ուղիղն ասենք, անքաղաքավարի էին պահում:

— Ի՞նչ ենք արել քեզ, ով արքա,— դիմեց Բալինը, որը հիմա հանդես էր գալիս որպես ավագ:— Մի՞թե հանցանք է մոլորվել անտառում, սովածանալ, ընկնել սարդոստայնների ցանցերը: Մի՞թե սարդերը քո ընտանի կենդանիներն են, որ այդպես մոլեգնել են:

Այդ տեսակ հարցերից արքան, բնական է, ավելի շատ զայրացավ և պատասխանեց.

— Այո, առանց հարցնելու թափառել իմ տիրույթներում հանցանք է: Անտառում դուք երեք անգամ հարձակվեցիք իմ հպատակների վրա և անհանգստացրիք սարդերին ձեր ճիչերով ու վայրագությամբ: Այդպիսի իրարանցումից հետո, որ դուք սարքեցիք, ես լիովին իրավունք ունեմ իմանալու, թե ինչն է ձեզ այստեղ բերել: Իսկույն չե՞ք պատասխանի՞ ես ձեզ կպահեմ բանտում այնքան ժամանակ, մինչև խելքի կգաք ու քաղաքավարություն կսովորեք:

Արքան հրամայեց յուրաքանչյուր թզուկներին առանձին խցիկում տեղավորել, բուրբոսն ուտելու բան տալ, սակայն բաց չթողնել, մինչև նրանցից գոնե մեկը չիսոսի: Բայց նա թզուկներից թաքցրեց, որ Տորինը գերի է իր մոտ:

Դա հայտնաբերեց Բիլբոն:

Խեղճ միսոր Բեգինս: Ի՛նչ տաղտկալի էր ձգվում ժամանակը, մինչև նա ապրում էր այստեղ բոլորովին մենակ, թաքնված, չհամարձակվելով մի րոպե անգամ մատից հանել մատանին, համարյա աչք չփակելով, նույնիսկ այն ժամանակ, երբ հաջողվում էր ծվարել ամենահեռավոր, ամենամութ անկյունում, պարապությունից սկսում էր թրև գալ թագավորական պալատում: Դարպասը կախարդանքով էր փակվում, բայց Բիլբոն, այնուամենայնիվ, դուրս պրծնելու ելք գտավ: Անտառային էլֆերը երբեմն ամբողջ խմբով դուրս էին գալիս որսի կամ ուրիշ անտառային գործերի, կամ էլ ուղևորվում էին Արևելքում գտնվող հողերը: Եթե Բիլբոն բավարար ճարակություն էր հանդես բերում, ապա դուրս էր թռչում էլֆերի ետևից: Դա վտանգավոր խաղ էր, մի քանի անգամ քիչ էր մնում ճգմվեր դարպասի դռների արանքում, երբ նրանք դրոյունով փակվում էին էլֆերի ետևից: Բիլբոն վախենում էր խառնվել նրանց, գիտակցելով, որ իր ստվերը երևում է, չնայած ջահերի լույսի տակ այն թույլ էր ու դողդոջ: Վախենում էր նաև այն բանից, որ պատահաբար կարող են իր վրա ընկնել:

Երբ նա, այնուամենայնիվ, դուրս եկավ արտաքին աշխարհ, ապա դա ոչ մի իմաստ չունեցավ. ընկներնեղին լքել նա չէր ուզում, դե, ճիշտն ասած, առանց նրանց չգիտեր էլ, թե ուր գնար: Նա չէր կարող ամբողջ ժամանակ որսորդների կողքին գտնվել և ազատորեն գնալ նրանց ետևից, ուստի այդպես էլ անտառից դուրս տանող ուղիներ չգտավ:

Մոլորվելու վախից ընկճված՝ նա թափառում էր դարպասի մոտակայքում և որևէ պատահական առիթի էր սպասում, որպեսզի վերադառնա գետնի խորքը: Որպես որսորդ նա բանի պետք չէր, դրա համար էլ անտառում միշտ սոված էր մնում, իսկ պալատում պահոցներից կամ սեղաններից ուտելիք էր փախցնում, երբ մոտակայքում ոչ ոք չկար, այնպես որ սոված չէր մնում:

«Իսկական գող, որ ստիպված է ամեն օր թալանել միևնույն տունը,— մտածում էր Բիլբոն:— Ահա թե երբ սկսվեց մեր տանջալից անիրապույր արշավի ամենաձանձրալի, ամենատխուր արկածը: Լավ կլիներ հիմա հայտնվեր իր տանը, տաք օջախի մոտ, և որ լամպն էլ վառվեր»: Որքա՛ն էր ցանկանում կախարդին օգնության կանչել, բայց դրա մասին իսկի երազել չէր կարելի: Վերջապես, նա հասկացավ հետևյալը. եթե այստեղ որևէ մեկը որևէ բան անելու է, ապա դա միայն միսոր Բեգինսն է՝ միայնակ, առանց կողմնակի օգնության:

Իր ընդհատակյա կյանքի մի երկու շաբաթվա ընթացքում, պահապաններին հետևելով ու հետամուտ լինելով, այսինքն՝ ամեն հարմար առիթի դեպքում լրտեսելով նրանց, Բիլբոն իմացավ, թե որտեղ է փակված թզուկներից յուրաքանչյուրը: Նա փնտրեց ու գտավ բոլոր տասներկու խցիկները պալատի տարբեր մասերում և աշխատեց սովորել դրանց ճանապարհը: Ինչպիսին էր նրա զարմանքը, երբ մի անգամ

ականջ դրեց երկու պահակների խոսակցությանը և իմացավ, որ բանտում (հաստուկ գաղտնի տեղում) մի թզուկ էլ է բանտարկված:

Նա իհարկե, իսկույն գլխի ընկավ, որ դա Տորինն է, և շուտով նրա ենթադրությունը հաստատվեց: Բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ նա հնար գտավ խցիկին մոտենալու և, քանի դեռ ոչ ոք չկար մոտակայքում, մի քանի խոսք փոխանակեց թզուկների առաջնորդի հետ:

Տորինն այնքան էր տանջվել մենության մեջ, որ արդեն ուժ չէր գտնում իր դժբախտության վրա զայրանալու, նույնիսկ սկսել էր մտածել, թե չպատմի՞ արդյոք թագավորին գանձերի և իրենց արշավի մասին (տեսնում եք ինչ աստիճանի էր ընկճված նա): Երբ դռան ետևից լսեց հոբիտի բարալիկ ձայնը, ականջներին չհավատաց: Ի դեպ, նա արագ ինքն իրեն համոզեց այն բանում, որ չի սխալվում, մոտեցավ դռանը, և նրանք երկար փսփսում էին բանալու անցքի միջով:

Դրանից հետո Բիլբոն յուրաքանչյուր թզուկի ծածուկ հաղորդեց Տորինի հրամանը, այսինքն՝ որ նրանց առաջնորդ Տորինն այստեղ է, իրենց հետ, և որ ոչ մեկը թագավորին չպետք է մատնի իրենց որոնումների նպատակը, մինչև Տորինն այդպիսի կարգադրություն չանի: Ինչպես տեսնում եք, Տորինը հոգով արիացել էր, լսելով, թե հոբիտն ինչպես է փրկել թզուկներին սարդերից: Նա նորից որոշեց առայժմ փրկագին չառաջարկել թագավորին և գանձերի մասին հայտնել միայն ծայրահեղ դեպքում, երբ այլևս ուրիշ կերպ փրկվելու ոչ մի հույս չի մնա: Այլ կերպ ասած, եթե շատ հարգելի միստր Բեգինս անտեսանելին (իսկ վերջինս շատ էր բարձրացել Տորինի աչքում) չկարողանա ելք գտնել:

Բիլբոն, սակայն, այդքան էլ լավատեսորեն չէր տրամադրված: Նրան բոլորովին էլ դուր չէր գալիս, որ իր հետ այդպիսի հույսեր էին կապում:

Նա գլուխ էր ջարդում այդ նոր խնդրի վրա, այնպես, որ քիչ էր մնում ամբողջովին ջարդեր, բայց փայլուն մտքեր այդպես էլ չծագեցին: Անտեսանելի մատանին, իհարկե, հիանալի բան է, բայց թե այն տասնչորս մատի միանգամից չես հագցնի: Ի դեպ, ինչպես դուք գլխի եք ընկնում, վերջ ի վերջո Բիլբոն փրկեց իր բարեկամներին, և ահա թե ինչ կերպ:

Պալատում ման գալիս, ինչպես միշտ, Բիլբոն քիթը բոլոր անցքերից ներս էր խոթում և մի անգամ արտակարգ հետաքրքիր մի բան հայտնաբերեց: Մեծ դարպասը քարայրի միակ մուտքը չէր... Մի տեղում պալատի տակով գետակ էր հոսում, որ հետո գնում էր դեպի Արևելք ու թափվում Անտառային գետը: Այնտեղ, ուր վտակը դուրս էր գալիս սարի տակից, ջրարգելակ էր դրված: Քարե տանիքն այստեղ համարյա շփվում էր ջրի մակերեսին, տանիքից մինչև խոր հատակը ցանց էր իջեցված, որպեսզի ոչ ոք ներս կամ դուրս չթափանցի այդ ճանապարհով: Բայց ջրարգելակը հաճախակի բարձրացնում էին, քանի որ դրա միջով գետային աշխույժ առևտուր էր տեղի ունենում:

Եթե որևէ մեկը այդ ճանապարհով ներս մտներ, ապա կհայտնվեր անտաշ քարե պատկերով մուժ ջրանցքում, որ տանում էր ճիշտ սարի սիրտը: Այն մասում, որտեղ գետն անցնում էր քարայրների տակով, քարե առաստաղը ծակված էր և անցքը, որը գտնվում էր թագավորական մառաններում, ծածկված էր կաղնե մեծ կափարիչով:

Մառաններում տակառներ էին դրված, անթիվ անհամար տակառներ: Անտառայիան էլֆերը, և հատկապես նրանց թագավորը, պաշտում էին գինին, իսկ խաղող այդ կոմղերում չէր աճում: Գինին և որոշ այլ ապրանքներ բերում էին Հարավի իրենց ազգականներից կամ ավելի հեռավոր տեղերից, որտեղ մարդիկ էին ապրում, որ զբաղվում էին խաղողագործությամբ:

Տակառների ետևում թաքնվելով՝ Բիլբոն հայտնաբերեց անցքի կափարիչը և իմացավ դրա նշանակությունը: Նա սկսեց ավելի հաճախ այցելել մառան, ականջ դնել թագավորի սպասավորների շաղակրատանքներին և շուտով պարզեց, որ գինին ու այլ ապրանքները գետով կամ ցամաքով բերվում էին Երկար լճից: Պարզվում է, որ լճի վրա մինչև հիմա էլ բարեկեցիկ ապրում են մարդիկ, որոնք իրենց քաղաքը կառուցել են ցցագերանների վրա, ուղիղ ջրի մեջ, որպեսզի իրենց պահպանեն ամեն տեսակ թշնամիներից: Լճաշեն քաղաքից տակառները էլֆերի պալատն էին բերվում Անտառային գետով: Դրանք լատի ձևով ամրացնում էին մեկը մյուսին և ձողերի կամ թիերի միջով քշում հոսանքով դեպի վեր: Երբեմն դրանք բարձում էին լաստանավերի վրա: Դատարկ տակառները էլֆերը գցում էին անցքը, բարձրացնում ջրարգելակի վանդակը, և վտակի գիրկն ընկած տակառները դուրս էին լողում գետի լայնարձակ տարածքները. սրանք իրենց համար լողում էին հոսանքն ի վար, մինչև ալիքները տանում հասցնում էին Սև Անտառի արևելյան վերջավորության լեզվակարկառին: Այստեղ դրանք հավաքում էին իրար գլխի, մի կույտ կապում և նորից ջուրը գցում, դեպի Լճաշեն քաղաքը, որ գտնվում էր այնտեղ, ուր Անտառային գետը թափվում էր Երկար լիճը:

Բիլբոն քիչ օր չկորցրեց՝ խորհելով ջրարգելակի մասին և մտածելով, թե չի՞ կարելի արդյոք դա օգտագործել փախուստի համար: Եվ, վերջապես, նրա գլխում սկսեց մի հանդուզն պլան հասունանալ:

Մի անգամ երեկոյան գերիներին ընթրիք էին տանում: Պահապանները, ջահերը ձեռքներին, դոփելով անցան: Բիլբոն մնաց մթության մեջ և լսեց, թե ինչպես գլխավոր ծառայապետը պահակապետին բարի գիշեր էր մաղթում:

— Հապա մի ինձ մոտ անցեք,— ավելացրեց նա,— գինի համտես արեք, հենց նոր բերեցին: Այսօր երեկոյան չարչարվելու ենք, պետք է մառաններից դուրս գցենք դատարկ տակառները, այնպես որ հարկավոր է նախ խմել, որպեսզի հետո գործը գլուխ բերենք:

— Հաճույքով,— ծիծաղելով պատասխանեց պահակապետը:— Կփորձենք, տեսնենք թագավորական սեղանին սագակա՞ն է: Այսօր պալատում քե՛ֆ է, մեզ վայել չէ թթված գինի մատուցել:

Այդ լսելով՝ Բիլբոն հուզմունքից դողաց. հասկացավ, որ առիթ է ներկայացել իր մտահաղացումն իրականացնելու:

Նա կրկնակոխ հետևեց Էլֆերին, մինչև նրանք մտան մի փոքրիկ նկուղային շինություն: Այստեղ նրանք սեղան նստեցին, որի վրա երկու մեծ գավաթ էր դրված, սկսեցին խմել և ուրախ ծիծաղել:

Բիլբոյի բախտը չտեսնված բերեց... Սովորաբար անտառային Էլֆերին այնքան էլ հեշտ չէ հարբեցնելը՝ գինին պետք է շատ թունդ լինի: Բայց այս նոր գինին, ըստ երևույթին, շատ բարձր որակի էր: Այն նախատեսված էր միայն թագավորական խնջույքների համար, որ խմում էին փոքրիկ սկահակներով, ոչ թե այնպիսի մեծ գավաթներով, ինչպիսիք դրված էին գլխավոր ծառայապետի սեղանին:

Շուտով պահակապետն սկսեց դանթել, հետո գլուխը դրեց սեղանին ու խռմփացրեց: Ծառայողապետը, չնկտելով, որ իր բաժակակիցը քնած է, որոշ ժամանակ շարունակեց բլբլալ ու ծիծաղել, հետո նրա գլուխն էլ խոնարհվեց սեղանին, և նա պինդ քնեց: Հենց այդ պահին գաղտագողի սենյակ մտավ հոբիտը: Մեկ րոպե անց պահակապետը մնաց առանց բանալիների, իսկ Բիլբոն միջանցքներով անաղմուկ վազեց դեպի խցիկները: Բանալիների խրձի ծանրությունից Բիլբոյի թևը տեղից դուրս էր գալիս, ժամանակ առ ժամանակ բանալիները զրնգում էին, և չնայած այն բանին, որ մատանին նրա մատին էր, սիրտը կրծքի տակ մարում էր:

Սկզբում նա բացեց Բալինի խցիկը և, հենց որ թզուկը դուրս եկավ, նորից կողպեց: Պատկերացրեք, թե ինչպես ուրախացավ ու զարմացավ Բալինը, ինչպես տեղնուտեղը սկսեց հարցեր տալ այն մասին, թե ինչ է մտադրվել Բիլբոն, և առհասարակ ամեն, ամեն ինչի մասին:

— Ժամանակ չկա, ժամանակ չկա,— պատասխանեց հոբիտը:— Սուսուկփուս արի իմ ետևից: Մենք պետք է բոլորս իրար հետ լինենք և իրար հետ էլ փախչենք, սա մեր վերջին և միակ հնարավորությունն է: Եթե մեզ բռնեն, աստված գիտի, թե թագավորը ձեզ որտեղ կնստեցնի, դեռ հալա ձեռք ու ոտքերդ էլ կշղթայի: Բարի եղիր չվիճել...

Բիլբոն դռնից դուրս վազեց, մինչև նրա շքախումբը ավելանալով հասավ տասներկու հոգու: Թզուկները, ճիշտը որ ասենք, ճարպկությամբ աչքի չէին ընկնում. մուր էր և հետո շատ նստելուց ընդարմացել էին: Բիլբոյի սիրտը ամեն անգամ թրթռում էր, երբ թզուկներից որևէ մեկը մթության մեջ կպչում էր հարևանին կամ քթի տակ մոթմոթում էր. «Անհծված թզուկներ, նորից աղմուկ-աղաղակ են սարքում»,— հուզվում էր Բիլբոն:

Բայց ամեն ինչ լավ անցավ, պահակների չհանդիպեցին: Այդ երեկո անտառներում և պալատի սրահներում աշնանային տոնի առթիվ

ինչույք էր տեղի ունենում: Դրա համար էլ համարյա բոլոր էլֆերն անհոգ ուրախանում էին:

Վերջապես երկար թափառելուց հետո նրանք հասան Տորինի գնդանին, որը գտնվում էր պալատի հեռավոր ծայրում, շատ խոր և, բարեբախտաբար, մառաններից ոչ հեռու:

— Պատվովս եմ երդվում,— ասաց Տորինը, երբ Բիլբոն փսփսոցով նրան հրամայեց դուրս գալ, և նա խավարում զանազանեց իր բարեկամների կերպրանքները,— Հենդալֆն իրավացի էր, ինչպես միշտ: Մենք բոլորս անսահման պարտք ենք ձեզ: Ի՞նչ ենք անելու այսուհետև...

Հասավ պլանը բացատրելու պահը, բայց Բիլբոն բոլորովին էլ համոզված չէր, թե թզուկները դրական վերաբերմունք ցույց կտան: Նրա կասկածները հաստատվեցին: Թզուկները խիստ դժգոհ էին և բարձրաձայն բողոքեցին, չնայած իրենց ծայրահեղ վտանգավոր վիճակին:

— Մենք անպայման կտոր-կտոր կլինենք, ուռուցքներ կվաստակենք և, վերջապես, կխեղդվենք,— մռթմռթացին նրանք:— Մենք կարծում էինք, դու իսկապես արժանավոր պլան ունես: Պետք չէր բանալիները գողանալ և խցիկները բացել: Ոչ, դա ցնորամիտ պլան է:

— Դե ինչ արած,— ասաց Բիլբոն, հուզված և ջղայնացած,— գնացեք ձեր խցերը, եթե ձեզ այդքան դուր է գալիս: Նորից կկողպեմ դռները, նստեք ձեզ համար, ավելի լավ պլան մտածեք: Բայց նախազգուշացնում եմ. հազիվ թե ինձ նորից այսպիսի հարմար առիթ ներկայանա բանալիներիև տիրանալու, եթե նույնիսկ ինձ մոտ այդպիսի ցանկություն առաջանա:

Այստեղ նրանք սթափվեցին ու սսկվեցին: Հասկանալի է, նրանց միայն մնում էր անել այն, ինչ Բիլբոն էր առաջարկում, ուրիշ ելք չկար: Ստիպված եղան գողեգող հոբիտի ետևից իջնել ներքև, ստորին մառանները:

Նրանք անցան բաց դռան մոտով. այստեղ դեռ երանելի ժպիտով պինդ քնած էին պահակության պետն ու ծառայապետը: Թագավորական գինուց հաճելի երազներ էին տեսնում: Բայց ինչպիսի՞ն կլինի պահակապետի դեմքի արտահայտությունը հաջորդ օրը... Բարեհոգի Բիլբոն բանալիներն զգուշությամբ ամրացրեց նրա գոտուն: «Գուցե նրան այդքան էլ չնեղեն,— մտածեց միստր Բեգինսը:— Ըստ էության նա չէր չէ և գերիների հետ էլ բավականին տանելի էր վարվում: Այ թե կգարմանա՞... կմտածի, երևի, որ մենք փակ դռների միջով ենք անցել, կախարդանքի օգնությամբ: Անցե՛լ: Դեռ ո՛չ, դրա համար հարկավոր է գործել, և արագ...»:

Բալինին թողեցին պահակապետին ու ծառայապետին հսկելու և, եթե սրանք ուշքի գան, իմաց տալու: Մնացածներն ուղղվեցին դեպի հարևան՝ հատակին անցք ունեցող մառանը: Չէր կարելու վայրկյան անգամ կորցնել: Տակառիկներն արդեն պատրաստ դրված էին մառանի

կենտրոնում: Գինու տակառները հարմար չէին, քանի որ դրանց հատակը դժվար էր բացել առանց աղմուկ բարձրացնելու, և ավելի դժվար էր փակելը:

Բայց այնտեղ ուրիշ տակառներ էլ կային, որոնցով յուր էին մատակարարում, ինձոր և էլի գանազան մանր բաներ: Շուտով տասներեք տանելի տակառ գտնվեց՝ թզուկների թվին համապատասխան: Ոմանք նույնիսկ շատ ընդարձակ դուրս եկան, և, դրանց մեջ մտնելով, թզուկները տազնապով մտածեցին, թե ինչպես կցնցվեն ու պատերին կգարկվեն: Բիլբոն շատ ջանք թափեց, հարդ և էլի ինչ-որ փափուկ բան գտավ ու թզուկներին հարմարավետ տեղավորեց տակառների մեջ:

Վերջապես, տասներկու թզուկները բարեհաջող փաթեթավորված էին: Բոլորից շատ Տորինը հոգս պատճառեց. նա իր տակառում պտտվում, շուռումուռ էր գալիս ու մռթմռթում՝ իսկը նեղ բնում քնելու պատրաստվող շան նման: Բալինն էլ վերջում աղմուկ բարձրացրեց օդանցքների անբավարարության մասին և պնդում էր, թե խեղդվում է, երբ դեռ իսկի կափարիչն էլ ծածկված չէր: Բիլբոն ողջ մանրակրկիտությամբ փակեց անցքերը, հարմարեցրեց կափարիչները և հիմա, մենակ մնալով, տենդագին վերջացնում էր փաթեթավորումը:

Նրա հուզվելն անտեղի չէր: Հազիվ էր հասցրել կափարիչով ծածկել Բալինին (որը վերջինն էր), երբ ձայներ լսվեցին ու լույս առկայծեց: Մառան խուժեցին էլֆերը, ծիծաղից թուլանալով, խոսելով ու երգերի պատահիկներ երգելով: Նրանք վերևի սրահներից մեկում թողել էին ինչոյքի սեղանները ու ցանկացել որքան կարելի է շուտ վերադառնալ:

— Որտե՞ղ է ծերուկ Գելիոնը, ո՞ր է ծառայապետը,— բացականչեց մեկը:— Կարծես թե ես նրան չտեսա սեղանի շուրջը: Նա էստեղ պետք է լինի:

— Այդ ծեր դանդալոշին ցույց կտամ, թե որ ուշացավ,— վրա բերեց մյուսը:— Ես ոչ մի ցանկություն չունեմ այստեղ ցցվելու, երբ վերևում ուրախություն է:

— Հա՛-հա՛-հա՛,— ծիծաղ լսվեց:— Ծեր խաբեբան քիթը գավաթի մեջ քնած է: Սա էստեղ, իր բարեկամ կապիտանի հետ արդեն իր քեֆն արել է:

— Թափ տուր դրան, արթնացրու...— անհամբեր գոռացին մյուսները:

Գելիոնին բոլորովին դուր չեկավ, որ իրեն ցնցում ու արթնացնում են, առավել ևս, որ ձեռք են առնում:

— Էդ դուք եք ուշացել,— փնթփնթաց նա:— Ես էստեղ եմ սպասում, իսկ դուք էստեղ խմել եք ու մոռացել ձեր պարտականությունները: Չարմանալու ինչ կա, որ ես հոգնածությունից քնել եմ:

— Ոչ ոք չի էլ զարմանում,— խոսեցին բոլորը միասին,— պատճառը կողքիդ է, գավաթի մեջ: Դե տուր մի կում անենք քո քնաբերից, իսկ հետո

գործի կանցները: Բանտապահին չենք արթնացնի: Նա իրենն արդեն ստացել է:

Բոլորը հերթով գինի կոնծեցին ու ավելի գվարթացան: Բայց ամեն ինչ հասկանում էին:

— Բարի եղիր, Գելիոն,— գոչեցին նրանք՝ ձեռք զարկելով տակառիկներին:— Այդքան շուտ ես սկսել քեֆ անել, որ գլխումդ ամեն ինչ խառնվել է իրար: Դատարկների փոխարեն լիքը տակառներ ես պատրաստել մեզ համար:

— Ձեր գործն արեք,— բղավեց ծառայապետը:— Լի՛քն են... Խմածի աչքին ինչ ասես չի երևա: Դրանք հենց էն տակառներն են, ինչ որ պետք է: Գցե՛ք, ասում եմ:

— Լավ, լավ,— համաձայնեցին նրանք՝ տակառները դեպի անցքը գլորելով:— Պատասխանը դու կտաս, երբ որ թագավորական լավագույն յուղով ու գինով լի տակառները լճի մարդկանց բաժին կդառնան:

Տակառները գլորեք
Ամբողջ թափով ու շնչով,
Տակառները գլորեք,
Շըրը՛մփ, շըրը՛մփ, գետ նետեք...

Երգեցին նրանք, տակառները դողոյունով գլորելով և մեկը մյուսի ետևից մուժ անցքը զցելով: Որոշ տակառներ իսկապես դատարկ էին, մյուսների մեջ թզուկներն էին: Սրանք բոլորը ցած էին թռչում ու բարձր ճլմփոցով շրմփում էին ջրի մեջ, երբեմն մեկը մյուսի վրա էին ընկնում, զարկվում թունելի պատերին, կպչում իրար և, պտտվելով, վեր ու վար անելով, քշվում հոսանքով:

Եվ հենց այդ պահին Բիլբոն գիտակցեց, թե ինչ վրիպում է թույլ տվել: Հնարավոր է, որ դուք վաղուց նկատել եք նրա մտահոգացման թույլ տեղը և ծիծաղում եք Բիլբոյի վրա: Ձեզ համար ծիծաղելը հեշտ է, բայց դեռ հայտնի չէ, թե դուք ինչպես կպահե՞իք ձեզ, եթե նրա տեղը լինե՞իք: Այո, նա անձամբ չէր հասցրել մտնել տակառ, իսկ եթե հասցներ էլ, միևնույն է, ո՞վ պետք է նրան փաթաթեր ու կափարիչը փակեր: Թվում էր, այս անգամ նա անդառնալիորեն կորցնում էր ընկներներին ու մինչև կյանքի վերջը պետք է քարշ գար քարայրներում ու գողութուն աներ: Եթե նույնիսկ նրան հաջողվեր փախչել գլխավոր դարպասից, հազիվ թե գտներ թզուկներին: Թե ինչպե՞ս ցամաքով պետք է հասներ այնտեղ, ուր դուրս էին գալու տակառները՝ նա չգիտեր: Եվ ի՞նչ կպատահի իր ընկերներին: Չէ՞ որ չհասցրեց ամեն ինչ հայտնել նրանց, ինչ որ լսել էր, նրանք չգիտեն, թե ինքը ինչ էր մտադիր անել անտառի սահմանները լքելուց հետո:

Վերջապես դեպի անցքը գլորեցին վերջին տակառիկը: Հուսահատությունից իրեն կորցրած՝ խեղճ Բիլբոն ձեռքերով գրկեց տակառիկն ու նրա հետ միասին թռավ ցած: Չըրը՛մփ... Նա ընկավ սառը սև ջրի մեջ, և տակառիկը նրան վերևից ծածկեց:

Նա դուրս լողաց, փնջացնելով ու ջուր թքելով, և կառչեց տակառի եզրին, իսկական մկան նման, բայց ինչքան չարչարվեց՝ չկարողացավ վերև մագլցել. տակառիկը ամեն անգամ շուռ էր գալիս ու տակով անում նրան: Տակառիկը դատարկ էր ու խցանի նման լողում էր, Բիլբոյի ականջները ջուր էր լցվել, բայց նա դեռ լսում էր Էլֆերի երգը.

Հե՛յ, լող տվեք ամբողջ ուժով
Եվ հասեք մայր անտառը ձեր,
Ու երբ ցրվի մուլթը մուժոտ՝
Ճամփա ընկեք այգի հետքով:

Հանկարծ խուլ թրխկոցով անցքի կափարիչը փակվեց, Էլֆերը լռեցին: Բիլբոն հայտնվեց մուլթ թունելում և սառը ջրում լողաց մեն-մենակ՝ ախր տակառիկներում խցկված ընկներները միևնույն է թե չկային: Շուտով առջևում մի գորշ կետ նշմարվեց: Բիլբոն լսեց բարձրացող վանդակի ճռռոցը և տեսավ, որ գտնվում է թռչկոտող, իրար խփվող տակառիկների ու տակառների միջև, որոնք խռնվել էին կամարի տակ, ձգտելով դուրս գալ ազատություն, գետի բաց տարածությունը: Բիլբոն ինչքան կարող էր խուսանալվեց, որ իրեն տակները չզգեն ու չճզմեն: Վերջապես հրմշտոցը դադարեց, տակառներն սկսեցին ցրվել գանազան կողմեր և աստիճանաբար, մեկ-մեկ քարե կամարի տակից դուրս լողալ դեպի լույսի աշխարհ: Եվ այստեղ Բիլբոն ուրախացավ, որ չի կարողացել տակառին հեծնել. ելքի մոտ, տակառի և ցածր կամարի արանքում տեղ չէր մնում նույնիսկ հոբիտի համար:

Նրանք լողացին ավերին աճած ծառերի տակով: «Հետաքրքիր է,— մտածում էր Բիլբոն,— ինչպե՞ս են զգում իրենց թզուկները... Տակառների մեջ շա՞տ ջուր է լցվել ճեղքերից»: Երևի թզուկները հենց այն տակառների մեջ էին, որոնք ավելի խոր էին նստած ջրի մեջ: «Միայն թե կափարիչները պինդ մնան»,— անհանգստանում էր նա: Բայց շուտով թզուկների մասին մտածելն անգամ մոռացավ, նրանցով զբաղվելու ժամանակը չէր: Նա հարմարվել էր գլուխը ջրից դուրս պահելուն, բայց սարսափելի սառել էր և վախենում էր, որ այդպես երկար չի դիմանա՝ կամ լրիվ կսառչի, կամ մատները կբացվեն, ու ինքը կսուզվի:

Բախտը նորից նրան ժպտաց. հորձանքը մի քանի տակառներ քշեց ավի, որոնց թվում և Բիլբոյի տակառիկը: Դրանք լավեցին այնտեղ, ինչ որ անտեսանելի խուլթի դեմ առած: Բիլբոն օգտվեց դրանից և բարձրացավ իր տակառի գլխին, մինչև սա դեմ էր առել հարևան տակառներին: Այստեղ նա փռվեց, ձեռքերն ու ոտքերը մեկնելով, որպեսզի հավասարակշռությունը պահպանի: Քամին կտրում էր, բայց, այնուամենայնիվ, այնքան էլ սառը չէր, ինչքան ջուրը: Քիչ հետո տակառները պոկվեցին, նորից դուրս լողացին գետի մեջտեղը և օրորվելով առաջ սահեցին: Ինչպես և ենթադրում էր Բիլբոն, պարզվեց, որ տակառի վրա մնալը անասելի դժվար էր: Բարեբախտաբար Բիլբոն թեթև էր, իսկ տակառը մեծ էր ու ծանր, ընդ որում ճեղքերից բավականաչափ ջուր էր լցվել: Եվ, այնուամենայնիվ, Բիլբոն իրեն նույնքն հարմարավետ էր

զգում, որքան, եթե հեծած լիներ մի ցմփոր պոնի, առանց սանձի ու ասպանդակների, որի ուշքան ամբողջ ժամանակ խոտերի վրա թավալ տալն է:

Ահա այս կերպ էր, որ միսոր Բեգինսը, վերջապես, հասավ այն տեղին, ուր երկու ափերին էլ ծառերը նոսրացան և դրանց արանքից երևաց պայծառ երկինքը: Գետը միանգամից լայնացավ ու միացավ Անտառայինին, որ արագ-արագ փախչում էր թագավորական պալատից: Ծառերն այլևս չէին ստվերում ջրի փայլատ հայելին, և նրա հարթ մակերեւույթին պարում էին ամպերի ու աստղերի վետվետուն արտացոլումները: Ապա Անտառային արագահոս ջրերը տակառների ու տակառիկների ողջ բազմությունը քշեցին դեպի հյուսիսային ափ, որտեղ ջրի հոսանքը մի ընդարձակ ծովախորշ էր բացել: Այստեղ էլ, թեք, ողորկ գետաքարերով ծածկված ափը դուրս եկավ տակառների մեծ մասը, բայց մի քանիսը նախ զարկվեցին դուրս ցցված քարե թմբերին:

Ափին արդեն մարդիկ էին կանգնած: Նրանք ճարպկությամբ և արագորեն կեռածողերով տակառները մի կույտ արեցին ծանծաղուտում, հաշվեցին, հետո պարաններով կապեցին և թողեցին մինչև առավոտ: Խեղճ թզուկներ... Բիլբոյի բախտն ավելի բերեց: Նա տակառի վրայից սահեց ջուրը, դուրս եկավ ափ և վազեց դեպի գետից ոչ հեռու գտնվող տնակները: Այժմ նա չէր տատանվում, երբ հնարավորություն էր ներկայացել առանց հրավերի ընթել. նա արդեն վարժվել էր ուրիշների հաշվին գլուխ պահել: Իր դառը փորձից գիտեր ինչ է նշանակում իսկականից սոված լինել: Ծառերի միջից առկայծում էր խարույկի կրակը՝ դեպի իրեն ձգելով թրջված, դողացող և զգզված հագուստով Բիլբոյին:

Մանրամասն կանգ չենք առնի այն բանի վրա, թե նա ինչպես անցկարեց գիշերը. մենք ժամանակ չունենք, մոտենում ենք դեպի Արևելք նրանց ճանապարհորդության ավարտին և վերջին, ամենակարևոր արկածին: Բնական է, սկզբում, ինչպես միշտ, կախարդական մատանին օգնում էր, բայց հետո նրան մատնում էին թաց ոտնահետքերը և ջրակույտերը, որ մտում էին, երբ քայլում էր կամ նստում: Բացի դրանից նրա մոտ հարբուխ սկսվեց, և ինչքան էլ որ աշխատում էր զսպել իրեն, ամբողջ ժամանակ բարձրաձայն փռշտում էր: Շուտով գյուղակում իրարանցում սկսվեց: Բիլբոն փախավ անտառ և տարավ հացի մի կտոր, գինու կաշվե տափաշիչն ու կարկանդակ, որ նրան չէին պատկանում: Ստիպված եղավ գիշերվա մնացորդն անցկացնել թաց վիճակում, խարույկից հեռու, դրա փոխարեն տափաշիչն էլ օգնեց նրան տաքանալու և նույնիսկ մի քիչ ննջեց թափված տերևների վրա, թեև աշուն էր ու եղանակը խոնավ:

Արթնացավ այն բանից, որ զարմանալիորեն բարձր փռշտաց: Մոխրագույն այգաբաց էր, գետափին ուրախ աղմուկ էր: Այնտեղ տակառներից լաստ էին սարքում, էլֆ լաստավարները պատրաստվում էին դրանք ներքև առաքել, դեպի Լճաշեն քաղաքը: Բիլբոն նորից փռշտաց: Նրա վրայից այլևս ջուր չէր կաթում, բայց ամբողջովին

սարսռում էր: Փայտացած ոտքերը չէին ենթարկվում նրան, բայց, այնուամենայնիվ, մի կերպ քարշ եկավ մինչև ասի և ընդհանուր իրարանցման մեջ աննկատ բարձրացավ տակառների կույտի վրա: Արևը դեռ դուրս չէր եկել, այնպես որ Բիլբոն սովեր չէր գցում և, բարեբախտաբար, երկար ժամանակ չէր փոշտում: Կարթածողերը գործի անցան: Ծանծաղուտում կանգանած էլֆերն սկսեցին ասիից ետ հրել տակառները, լաստանավը ճռռաց և ճոճվեց:

— Այսօր ոնց որ թե ծանր են,— փնթփնթացին էլֆերը:— Ու շատ էլ խոր են նստած: Սրանց մեջ հաստատ մի բան կա: Թե որ ցերեկով եկած լինեին, բայց կանեինք, կնայեինք:

— Ժամանակ չկա,— ճչաց լաստավարը:— Հրե՛ք:

Եվ տակառները, վերջապես, տեղներից շարժվեցին, սկզբում դանդաղ, հետո քարե հրվանդանի վրա կանգնած էլֆերը դրանք մեկ անգամ էլ հրեցին, և տակառները լողացին արագ, արագ, դուրս թռան գետի մեջտեղը, և հոսանքը քշեց դրափ լիճ:

ՄՐՏԱԲԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Որքան նրանք լողում էին առաջ, այնքան լուսավոր ու տաք էր դառնում: Շուտով գետը շրջադարձ կատարեց՝ շրջանցելով ձախից գառիթափ բարձրացող ելուստը, որի ստորոտում եռում ու փրփրում էր ջուրը, ասիերը դարձան ողորկ, ծառերն աչքից կորան, և Բիլբոյի առջև այսպիսի պատկեր բացվեց. գետը այստեղ բաժանվում էր հարյուրավոր ոլոր-մոլոր առուների. ջուրը կանգնած էր կղզյակներով ծածկված ճահիճներում ու գետախորշերում: Բայց դաշտավայրի մեջտեղով սովորականի պես համառորեն հոսում էր ուժեղ, արագընթաց գետը: Իսկ հեռվում, սև գագաթը պատառոտված ամեպերի մեջ, վեր էր խոյանում Սարը: Այստեղից չէին երևում նրա հարևաններն ու բլրաշատ մատույցները: Սարը կանգանձ էր մեկուսի և ճահիճների վրայով նայում էր անտառին: Ահա նա՝ Մենավոր Լեռը: Երկար ճանապարհ անցավ Բիլբոն, բազմաթիվ վտանգավոր արկածների հանդիպեց Սարը տեսնելու համար: Իսկ այժմ Սարն այնպե՛ս դուր չեկավ Բիլբոյին: Լաստավարների խոսակցություններից Բիլբոն իմացավ, որ արևելքից Սև Անտառ տանող ցամաքային ճանապարհները փակվել են, որ այն ժամանակից ի վեր, ինչ թզուկներն ապրում են լեռներում, երկրաշարժերը փոփոխել են ամբողջ երկիրը, ճահիճներն ու ճմուռները տարածվել, շատացել են: Արահետներն անհետանում էին, ձիավորներն ու հետիոտները՝ նույնպես, եթե փորձում էին ճանապարհ փնտրել ճահճուտների մեջ: Սև Անտառի միջոց անցնող արահետը, որով Բեորնի խորհրդով գնում էին թզուկները, արևելյան ծայրում դարձել էր վայրի: Առայժմ միայն գետն էր միակ հուսալի ճանապարհը Սև Անտառի հյուսիսային եզրից մինչև Սարի հովանու տակ ընկած դաշտավայրը:

Այնպես որ, ինչպես ինքներդ էլ տեսնում եք, Բիլբոն շատ հաջող ընկավ միակ կարգին ճանապարհը: Եթե նա իմանար, որ իրենց փախուստի մասին լուրը հասել էր Հենդալֆի ականջը, որն այդ միջոցին շատ հեռու էր գտնվում, և նա, իրենց ճակատագրի համար անհանգստացած, վերջացնում է մյուս գործերը և պատրաստվում է որոնելու Տորինին և Ընկ., բավականաչափ կմխիթարվեր: Սակայն Բիլբոն, տակառի վրա դողալով, անտեղյակ էր այդ բոլորին: Նա գիտեր միայն, որ գետը ոչ մի կերպ չի վերջանում, որ ինքը սովից մեռնում է, սարսափելի հարբուխ է ընկել, և որ իրեն դուր չի գալիս Սարի չարագուշակ տեսքը, որը որքան մոտենում, այնքան բացահայտորեն ավելի անբարյացկամ ու սպառնալից էր նայում իրեն: Շուտով, սակայն, գետը թեքվեց Հարավ, Սարը մնաց մի կողմ, օրվա վերջում ավերը ժայռոտ դարձան, և գետը, իր բոլոր դեսուդեն փախչող վտակներն ի մի հավաքելով, վերածվեց հզոր, սրընթաց և խոր հոսանքի: Արևն արդեն մայր էր մտել, երբ, ևս մի կտրուկ շրջադարձ անելով, գետը թափվեց Երկար Լիճը: Երկար Լիճ... Բիլբոն կարծում էր, որ միայն ծովում է այդքան ջուր լինում: Լիճը այնքան լայն էր, որ հանդիպակաց ավերը հեռու՛-հեռավոր էին թվում, և այնքան երկար, որ նրա հյուսիսային ծայրը առհաստարակ չէր երևում: Միայն քարտեզից Բիլբոն հիշում էր, որ հեռվում, որտեղ առկայծում են Մեծ Արջի աստղերը, Դեյլից դեպի լիճ է իջնում Արագահոս գետը և Անտառայինի հետ միասին լցնում երբեմնի լեռնային հովիտը: Լճի հարավային ծայրին ջուրը ջրվեժի նման գահավիժում էր ցած, և երկու գետն էլ շտապում էին առաջ, արդեն միասին, դեպի անհայտ երկրներ: Իրիկնային լռության մեջ ջրվեժի շառաչը որոտի հեռավոր ճայթյունի պես էր հնչում:

Անտառային գետաբերանի մոտ այն տարօրինակ քաղաքն էր կանգնած, որի մասին հիշատակել էին Էլֆերի թագավորական անտառում: Այդ քաղաքը կառուցել էին ոչ թե ցամաքում (թեպետ ավին ինչ-որ շինություններ երևում էին), այլ ուղղակի լճի վրա: Այստեղ թափվող գետի ուժգին հոսանքից քաղաքը պաշտպանվում էր ժայռոտ հրվանդանով: Փայտե լայն կամուրջն ավից տանում էր դեպի բարձր ամուր հենասյուները, որոնց վրա փռվել էր փայտե քաղաքը: Աշխույժ, գործարար այդ քաղաքը դեռևս հաջողակ էր առևտրի ասպարեզում, ապրանքները Հարավից այստեղ էին բերում գետով, մինչև ջրվեժները, իսկ այնտեղից քաղաք էին ուղարկվում ցամաքով: Բայց վաղեմի փառավոր ժամանակներում, երբ Հյուսիսում ծաղկում էր Դեյլը, Լճաշեն քաղաքն ավելի հարուստ էր, ավելի հզոր, քան հիմա, նավակների մի ամբողջ նավատորմիղ ուներ՝ ոսկի և զինված ռազմիկներ բարձելու համար: Այն ժամանակներում պատերազմներ էին լինում և գործեր էին արարվում, որոնց մասին հուշը միայն առասպելներում է մնացել: Նախկին մեծ քաղաքի ավերակները երևում էին ջրի մեջ, ավի մոտ, երբ լիճը երաշտներից ծանծաղում էր:

Շատ բան էր արդեն մոռացվել, չնայած մարդիկ հին երգեր էին երգում Սարի տերերի՝ թզուկների մասին, Դյուրին ցեղի թագավորներ Տրորի և Տրեյնի մասին, վիշապի հայտնվելու և Դեյլի տիրակալների կործանման

մասին: Երգում էին նաև այն մասին, որ մի գեղեցիկ օր Տրորն ու Տրեյնը կվերադառնան, և այն ժամանակ ոսկին Սարի դարպասներից գետի պես կհոսի, ամբողջ երկիրը կթնդա նոր երգերով և ուրախ ծիծաղով: Բայց առասպելը՝ առասպել, իսկ գործը՝ գործ, և առօրյա կյանքն ընթանում էր իր սովորական հունով:

Լճի վրա լաստանավը տեսնելուն պես հենասյուներից մակույկներ անջատվեցին, լաստավարներին ձայն տվեցին, սրանք ճոպանները նետեցին, նավակների թիերն աշխուժորեն գործի անցան, լաստանավը դուրս քաշեցին սրընթաց հոսանքից և տարան բարձր հրվանդանի ետևը՝ գետախորշը: Այնտեղ կապեցին կամրջին: Շուտով պետք է Հարավից մարդիկ ժամանեին և տակառների մի մասը տանեին իրենց հետ, իսկ մյուս մասը՝ լցնեին մթերքով, որպեսզի դրանք նորից գետով ուղարկեին վերև՝ անտառային էլֆերի պալատը: Առայժմ տակառները մնացին ջրի վրա ճոճվելու, իսկ լաստավարներն ու մակույկավարները գնացին Լճաշեն քաղաքում քեֆ անելու:

Այ թե կգարմանային նրանք, տեսնելով, թե ինչ էր կատարվում ափին իրենց գնալուց հետո, երբ մուժն ընկավ: Ամենից առաջ Բիլբոն կտրեց պարանները, մի տակառ գլորեց ցամաք և բաց արեց: Տնքոցներ լսվեցին, և այնտեղից ամենախղճալի տեսքով մի թզուկ դուրս եկավ: Գզուկ մորուքի մեջ թաց ծղոտ էր մնացել, ամբողջ մարմինն այտուցվել ու ցավում էր, և նա այնքան ծեծված էր ու շարդված, որ հազիվ էր ոտքի վրա կանգնում: Նա մի քանի քայլ արեց դեպի ափ և իսկույն էլ տնքոցով փլվեց ավազների վրա: Նա սոված շան տեսք ուներ, որին կապել են բնում ու մի շաբաթ մոռացել: Դա Տորինն էր, և նրան ճանաչել կարող էիք միայն ոսկե շղթայից ու մի ժամանակ երկնագույն, իսկ հիմա կեղտոտ ու պատառոտված, խունացած, արծաթե ծոպով կնգուղից: Բավական ուշ նա սկսեց քիչումիչ քաղաքավարի խոսել հոբիտի հետ:

— Դե ինչ, դուք ո՞րք եք, թե ոչ,— հարցրեց վերջապես Բիլբոն բավականին ջղայնացած: Նա, երկևում է, մոռացել էր, որ ախր ինքը հասցրել է մեկ անգամ կուշտ ուտել, ամբողջ ժամանակ ազատ շարժել է ձեռքերն ու ոտքերը ու քեֆն ուզածի պես շնչել:— Ազատության մեջ չե՞ք, ինչ է: Եթե ուզում եք ուտել և մտադիր եք շարունակել ձեր հիմար ձեռնարկությունը (այո՛, այո՛, ձեր, և ոչ թե իմ), ապա ձեռքերով ինքներդ ձեզ թփթփացրեք, ոտքներդ լավ շփեք և աշխատեք օգնել ինձ՝ մնացածներին հանելու, քանի դեռ ժամանակ ունենք...

Տորինն, իհարկե, ենթարկվելով բանականությանը, տնքոցով վեր կացավ և, աստված օգնել համարի, իբրև թե օգնեց Բիլբոյին: Նրանց համար հեշտ չէր մթության մեջ, սառը ջրում տնտնալով գտնել, թե որ տակառներում են նստած թզուկները: Տկտկացնելուն և կանչերին արձագանքեցին միայն վեցը: Նրանց տակառների բերանները բացեցին և օգնեցին ափ դուրս գալ, ու նրանք տեղնուտեղը տնքտնքալով ու ախուվախով փռվեցին ավազներին: Այն աստիճան էին նրանք թրջված, կծկված ու շարդված, որ չէին կարող ինչպես հարկն է գալ իրենց

փրկվածությունը և երախտագիտության զգացում ապրել փրկարարի նկատմամբ:

Դվալինն ու Բալինը բոլորից շատ էին տուժել, և նրանցից օգնություն սպասելն անօգուտ էր: Բիֆուրն ու Բոֆուրը ավելի չոր էին ու ավելի քիչ վնասված, բայց չնայած դրան պառկեցին ավազին և չէին ուզում վեր կենալ: Ֆիլին ու Կիլին, նրանցից երիտասարդ և փոքրիկ տակառներում մեծ քանակությամբ ծղոտի մեջ խնամքով փաթեթավորված լինելով, բավական բարետես դուրս եկան: Նրանք ընդամենը մի քանի կապտուկներով էին սահմանափակվել, իսկ ոտքերի ու ձեռքերի ուռածությունը շուտով իջավ:

— Այնքան եմ խնձորի հոտ քաշել, որ ամբողջ կյանքումս բավական է,— ասաց Ֆիլին:— Տակառում խնձորի այնպիսի բուրմունք էր... Անվերջ խնձորի հոտ շնչել, երբ շարժվել չես կարող, երբ մինչև ոսկորդներդ սառել ես, և սովը տանջում է քեզ՝ խելագարվելու բան է: Ես հիմա կուտեի ու կուտեի ինչ ասես, առանց կանգ առնելու, բայց խնձոր բերանս չեմ դնի:

Ֆիլին ու Կիլին հաճույքով սկսեցին օգնել, և շուտով մնացած թզուկներին ափ հանեցին: Գիրուկ Բոմբուրը ոչ այն է քնած էր, ոչ այն է ուշագնաց էր: Դորին, Նորին, Օրին, Օյնը և Գլոյնը շատ ջուր էին կուլ տվել և համարյա կիսամեռ էին, ստիպված եղան նրանց գրկած տեղափոխել ափ:

— Եվ այսպես, մենք իրար գլխի հավաքվեցինք,— ասաց Տորինը:— Ըստ երևույթին դրա համար պետք է շնորհակալություն հայտնենք ճակատագրին և միստր Բեգինսին: Նա, անտարակույս, վաստակել է մեր երախտագիտությունը, չնայած ցավալի է, որ նա տեղափոխման ավելի հարմար ձև չէր գտել: Այսուամենայնիվ, մեկ անգամ էլ պատրաստ ենք ձեզ ծառայելու, միստր Բեգինս: Երախտագիտությունը մենք իսկականից կզգանք, երբ կուտենք և ուշքի կգանք: Իսկ այժմ՝ ի՞նչ ենք անելու...

— Առաջարկում եմ գնալ Լճաշեն քաղաքը, — պատասխանեց Բիլբոն:— Ուրիշ ի՞նչ:

Ուրիշ ոչինչ չէր մտում, և, մնացածներին թողնելով ափին, Տորինը, Ֆիլին, Կիլին և հոբիտը լճի երկարությամբ ուղղվեցին դեպի կամուրջը: Կամուրջի մոտ պահակներ էին կանգնած, բայց նրանք շատ էլ զգոն չէին հսկում, քանի որ վաղուց արդեն անհանգստանալու առիթ չէր եղել: Եթե չհաշվենք անտառային էլֆերի հետ առանձին վեճերը՝ գետից օգտվելու համար մաքսի կապակցությամբ, նրանք իրար հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ էին: Մերձակայքում այլևս ոչ ոք չէր ապրում: Երիտասարդներից ոմանք ընդհանրապես կասկածում էին վիշապի գոյությանը և ծիծաղում էին իրենց տատիկների ու պապիկների վրա, որոնք պնդում էին, թե իբր ջահել ժամանակ տեսել են քաղաքի վրայով թռչող վիշապին: Չարմանալի է, որ պահակները խմում ու զվարճանում էին պահակատան օջախի մոտ և չէին լսում, թե ինչպես են բացել

տակառները, չէին լսել չորս լրտեսների քայլերի ձայնը: Նրանք ուղղակի շշմեցին, երբ ներս մտավ Տորին Օուքենշիլդը:

— Ո՞վ ես դու, ի՞նչ ես ուզում,— գոռացին նրանք՝ տեղներից վեր թռնելով ու ձեռքերը զենքերին գցելով:

— Ես Տորինն եմ, Տրեյնի որդին, Տորի թոռը, Սարատակի թագավորը,— հպարտությամբ պատասխանեց թզուկը, և այդ պահին նա իսկապես էլ արքայական տեսք ուներ, չնայած պատահողոված հագուստին ու կեղտոտված կնգուղին: Ոսկին փայլում էր նրա օձիքի ու գոտու վրա, աչքերը վառվում էին ներքին, խորհրդավոր կրակով:— Ես վերադարձել եմ: Ուզում եմ տեսնել ձեր քաղաքագլխին:

Պահակներն աննկարագրելի հուզմունքի մեջ ընկան: Նրանք, որ ավելի հիմար էին, պահակատնից դուրս փախան, կարծես թե սպասում էին գետով հոսող ոսկի տեսնել: Կապիտանն առաջ եկավ:

— Իսկ սրա՞նք ովքեր ես,— հարցրեց նա՝ Ֆիլին, Կիլին և Բիբլոյին ցույց տալով:

— Իմ հոր աղջկա որդիները,— պատասխանեց Տորինը,— Ֆիլին և Կիլին՝ Դյուրինի ցեղից: Իսկ սա միստր Բեգինսն է: Արևմուտքից է եկել մեզ հետ:

— Եթե դուք խաղաղությամբ եք եկել, զենքերը ցած դրեց,— պահանջեց կապիտանը:

— Մեզ մոտ զենք չկա,— պատասխանեց Տորինը, և դա համարյա թե ճիշտ էր: Թզուկների դանակները վերցրել էին անտառային էլֆերը, Օրկրիստը՝ նույնպես: Ճիշտ է, Բիբլոյի մոտ մնում էր դաշույնը, բայց, ինչպես միշտ, թաքցրած էր հագուստի տակ, և Բիբլոն լռեց:— Ինչներիս է պետք զենքը, երբ վերադարձել ենք մեր թագավորությունը, ինչպես կանխագուշակված է հնում: Ասենք, մենք չէինք էլ կարող կռվել այս բազում ամբոխի դեմ: Ուղեկցեք մեզ ձեր քաղաքագլխի մոտ:

— Նա խնջույքի է,— առարկեց կապիտանը:

— Առավել ևս, ուղեկցեք,— պայթեց Ֆիլին, որին այս ձևականությունները ձանձրացրին:— Մենք հոգնած ենք, երկար ճանապարհից հետո ուտել ենք ուզում, հիվանդներ ունենք: Արագացրեք, թե չէ տեսեք, որ ձեր քաղաքագլուխը ինչպես պետք է չչափի ձեզ:

— Լավ, հետևեցեք ինձ,— վերջնականապես համաձայնեց կապիտանը և վեց զինվորի ուղեկցությամբ նրանց անցկացրեց կամուրջը, դարպասը և դուրս բերեց գլխավոր հրապարակ: Ասենք, հրապարակ ասվածը նույնպես ջուր էր, և դրա շուրջը, բարձր ցցագերանների վրա, օղակաձև շարված էին ավելի մեծ տներ: Հետո նրանք անցան մինչև փայտե առափը, որից դեպի ջուրն էր իջնում բազմաթիվ աստիճաններով սանդուղի: Մի ամենամեծ տան մեջ (դա քաղաքապետարանն էր) փայլում էին կրակները և ձայների գվվոց էր լսվում: Նրանք ներս մտան և

լույսից կուրացած կանգ առան՝ նայելով երկար սեղաններին ու դրանց շուրջը նստած մարդկանց:

— Ես Տորինն եմ, Տրեյնի որդին, Տրորի թոռը, Սարատակի թագավորը... Ես վերադարձել եմ,— բացականչեց Տորինը հենց շեմից, որպեսզի կանխի կապիտանին:

Բոլորը տեղներից վեր թռան: Քաղաքագլուխը նույնպես ելավ բազկաթոռից: Բայց ոչ ոք այնքան զարմացած չէր, որքան Էլֆ-լաստավարները, որ նստած էին դահլիճի հեռավոր անկյունում: Նրանք խռնվեցին սեղանի շուրջը և գոռացին.

— Դրանք մեր թագավորի գերիներն են, նրանք փախել են բանտից: Այդ շրջմուլիկները չցանկացան բացատրել, թե իրենք ովքեր են և ինչու են չափչփում անտառն ու վախեցնում մեր Էլֆերին:

— Դա ճիշտ է,— հարցրեց քաղաքագլուխը: Անկեղծ ասած, նա այնքան էլ չէր հավատում Սարատակի թագավորի վերադարձին (եթե, իհարկե, այդպիսին առհասարակ գոյություն ուներ):

— Ճիշտն այն է, որ մեզ անօրինաբար բռնեցին ու Էլֆերի թագավորի հրամանով գնդանում փակեցին առանց որևէ առիթի: Մենք ճանապարհորդություն էինք կատարում դեպի մեր երկիրը,— պատասխանեց Տորինը:— Բայց ոչ մի կողպեք և ոչ մի փականք չեն կարող արգելք հանդիսանալ թագավորի վերադարձին, որ հնուց է գուշակված: Որքան ինձ հայտնի է, ձեր քաղաքը անտառային Էլֆերի թագավորության մեջ չի մտնում: Ես խոսում եմ Լճաշենի քաղաքագլխի հետ և ոչ թե Էլֆ թագավորի լաստավարների հետ:

Քաղաքագլուխը տարակուսեց և հարցական նայեց խնջույքավորներին: Էլֆերի թագավորն այս կողմերում հզոր տիրակալ էր համարվում: Քաղաքագլուխը չէր ուզում նրա հետ գժտվել, բացի դրանից մեծ նշանակություն չէր տալիս հին երգերին: Նրան հետաքրքրում էին առևտուրը, մաքսը, բեռները, ոսկին, սրանց օգուտը լավ էր հասկանում, որի շնորհիվ էլ գրավում էր իր այժմյան պաշտոնը: Բայց մյուսներն այլ կարծիքի էին, և հարցը շատ արագ լուծվեց անկախ քաղաքագլխից: Նորությունը տարածվեց հրդեհի արագությամբ: Քաղաքապետարանում և դրսում ողջույնի բացականչություններ էին հնչում, ափից վազող ոտքերի թփթոց էր լսվում: Ինչ-որ մեկը մի հին երգ սկսեց, որտեղ պատմվում էր Սարատակի թագավորի վերադարձի մասին (այն, որ վերադարձել էր ոչ թե Տրորն ինքը, այլ թոռը, նրանց չէր հուզում), ինչ-որ մեկը ձայնարկեց, և երգը թևածեց լճի վրա.

Շրջակա բոլոր սարերի արքան,
Քարանձավների, ժայռերի արքան
Վերջապես նորից տիրացավ գահին,
Ու մենք ուրախ ենք, երջանիկ այնքան:

Արքայի թագը կշողա նորից
Ադամանդներով, քարերով անգին,
Եվ ամենուրեք, և ամենուրեք
Հին ու հարազատ երգեր կերգեն:

Ազատ կխշան ծառերը բուր,
Խոտը կշրշա զարթունքի խոսքեր,
Դեպի դաշտերը, հեռաստանները
Կվազեն նորից գետերը ոսկե:

Հողը կնայի լճակ աչքերով,
Հողը կշնչի, հողը կծաղկի
Եվ այսուհետև ոչ խռովություն,
Ոչ էլ գժտություն ու վեճ կծագի:

Ահա այսպիսի խոսքեր կային այդ երգում, միայն թե այն ավելի երկար էր ու խառնվում էր ճիչերին, տավիղների ու ջութակների հնչյուններին: Իսկականից այդպիսի հուզմունքը քաղաքում չէր հիշում նույնիսկ ծերերից ամենածերը: Անտառային էլֆերը նույնպես զարմացան տեղի ունեցածից և մի քիչ վախեցան: Ախր նրանք չգիտեին, թե ինչպես է փախել Տորինը, և մտածեցին, որ իրենց թագավորը լուրջ սխալ է թույլ տվել: Ինչ վերաբերում է քաղաքագլխին, ապա նա բարվոք համարեց ունկնդրել ժողովրդի ձայնին և, թեկուզ ժամանակավոր, ձևացնել, թե հավատում է Տորինին ու նրա բարբաջանքներին: Նա Տորինին զիջեց իր մեծ բազկաթոռը և Ֆիլին ու Կիլին նստացրեց նրա կողքին, պատվավոր տեղում: Նույնիսկ Բիլբոյին տեղ հատկացրին սեղանի գլխավերևում, և ընդհանուր խժժության մեջ ոչ ոք չխնդրեց նրան բացատրել՝ իսկ ինքը որտեղից է հայտնվել (չէ՞ որ նրա մասին երգերում նույնիսկ ամենահեռավոր ակնարկն անգամ չկար):

Շուտով համընդհանուր ցնծության մեջ քաղաք բերեցին նաև մնացած թզուկներին. վնասվածքներն ու քերծվածքները վիրակապեցին, կերակրեցին, բնակարաններ տրամադրեցին և սիրաշահեցին ամենահրաշալի ու ամենասպառիչ կերպով: Տորինին իր խմբով տեղավորեցին մի մեծ տան մեջ, մակույկներ ու թիավարներ տրամադրեցին, ամբողջ օրերով նրանց տան առաջ ժողովուրդ էր հավաքվում և երգեր երգում. բավական էր թզուկներից որևէ մեկը քիթը դուրս հաներ, նրան ջերմորեն ողջունում էին: Երգում էին գլխավորապես հին երգեր, բայց հանդիպում էին և բուրբուկին նորերը, որտեղ համոզվածությամբ խոսվում էր վիշապի մոտալուտ կործանման և այն մասին, թե ուր որ է գետով դեպի Լճաշեն կլողան թանկարժեք նվերներով բեռնված նավերը: Այդ նոր երգերի ոգեշնչողն ինքը քաղաքագլուխն էր, բայց դա թզուկներին առանձնապես հիացմունք չէր պատճառում: Այդ ընթացքում նրանք ապրում էին լիության մեջ, լավ կերան, գիրացան և ուժ հավաքեցին: Իսկապես, մեկ շաբաթ անց նրանք լրիվ կազդուրվել էին, հրաշալի կտորներից նոր հագուստներ հագել, յուրաքանչյուրն իր սիրած գույնի, մորուքները սանրված էին ու խնամված, թզուկները շատ գոռոզ

Էին պահում իրենց, իսկ Տորինն այնպիսի հպարտությամբ էր քայլում, ասես թե արդեն ետ էր նվաճել իր թագավորությունն ու Սմոգին կտոր-կտոր արել: Այ այստեղ էր, որ, ինչպես և կռահում էր Բիլբոն, թզուկների երախտագիտությունն ու հարգանքը փոքրիկ հոբիտի նկատմամբ սկսեց օրեցօր աճել: Այլևս ոչ ոք չէր փնթփնթում, ոչ ոք չէր տրտնջում: Նրանք խմում էին հոբիտի առողջության կենացը, թփթփացնում մեջքին և առհասարակ ամեն կերպ նրան շրջապատում էին հոգածությամբ: Դա շատ տեղին էր, որովհետև Բիլբոյի տրամարդությունը շատ վատ էր: Նա չէր կարողանում մոռանալ Սարի չարագույժ տեսքը, չէր դադարում մտածել վիշապի մասին և, բացի դրանից, խիստ մրսած էր: Երեք օր շարունակ նա փռշտում ու հագում էր, իսկ երբ սկսեց դուրս գալ, միևնույն է, խնջույքներում նրա ճառերը սահմանափակվում էին «ինձ խիշտ հաշելի է» բառերով:

Այդ ընթացքում անտառի էլֆերը բեռներով լողացին տուն և իրենց լուրերով ցնցեցին ողջ պալատը: Ես այդպես էլ չգիտեմ, թե ինչ պատահեց պահակապետին ու ծառայապետին: Թզուկներից ոչ ոք Լճաշենում գտնվելու ընթացքում, բնական է, մի խոսք անգամ բերանից բաց չթողեց բանալիների և տակառների մասին, և Բիլբոն էլ ոչ մի անգամ չդրեց մատանին: Բայց էլֆերը որոշ բան կռահում էին, թեպետ միստր Բեգինսն առաջվա պես հանելուկ էր նրանց համար: Ինչ էլ որ լիներ, թագավորն այժմ գիտեր, թե ինչու էին բարեհաճել այստեղ թզուկները, և ինքն իրեն ասաց. «Այդպե՛ս, այդպե՛ս... Տեսնենք... Միևնույն է, առանց իմ գիտության Սև Անտառով նրանք ոչ մի գանձ չեն կարողանա անցկացնել: Ավելի շուտ նրանց վերջը վատ կլինի, և տեղն է դրանց»: Թագավորը բոլորովին չէր հավատում, թե թզուկները կուզենան կռվել և կկարողանան հաղթել այնպիսի փորձված վիշապի, ինչպիսին Սմոգն էր, և խիստ կասկածում էր, որ նրանք գողության փորձ կանեն: Սա վկայում էր նրա խորաթափանցության մասին, որը պակասում էր Լճաշեն քաղաքի մարդկանց, չնայած, ինչպես վերջում կտեսնենք, թագավորն այնքան էլ իրավացի չէր: Իր լրտեսներին ուղարկելով լիճ և ավելի հեռու, Սարին այնքան մոտիկ, որքան թույլ էր տալիս վիշապի հանդեպ ունեցած վախը, էլֆերի թագավորն սկսեց սպասել:

Երկրորդ շաբաթվա վերջում Տորինը ճանապարհի պատրաստություն տեսավ: Քանի դեռ բնակիչների ոգևորությունը չէր սառել, հարկավոր էր նրանց օգնությունն ապահովել: Ձգձգելը վտանգավոր էր: Նա դիմեց քաղաքագլխին ու նրա խորհրդականներին և հայտարարեց, թե ժամանակն է, որ շարունակեն իրենց ճանապարհը:

Այստեղ ամբողջ ժամանակվա ընթացքում առաջին անգամ քաղաքագլուխը զարմացավ և մի քիչ էլ վախեցավ: Նա մտածմունքների մեջ ընկավ. հանկարծ Տորինն իսկապես նախկին թագավորների շառավիղներից է: Նրա մտքով էլ չէր անցել, թե թզուկները սիրտ կանեն Սմոգի դեմ գնալ: Նա կարծում էր, թե սրանք խաբեբաներ են, որոնց վաղ թե ուշ կմերկացնեն ու կվռնդեն: Նա սխալվում էր: Ախր Տորինն իսկապես

Սարատակի թագավորի թռռն էր, իսկ ազնվատոհմիկ թզուկն ինչ ասես չէր անի, եթե մտքին դրել էր վրեժխնդիր լինել կամ ետ խլել իր սեփականությունը: Բայց քաղաքագլուխը նաև ուրախացավ, որ թզուկները գնում են: Նրանց պահել էժան չէր նստում, սրանց օրոք կյանքը վերածվել էր մի իսկական անվերջանալի տոնախմբության, իսկ գործերը մնում էին: «Թող գևան իրենց համար, խցկվեն Սմոգի մոտ, տեսնենք նա սրանց ոնց կդիմավորի»,— մտածեց նա: Իսկ բարձրաձայն ասաց.

— Դե, հասկանալի է, ով Տորին, որդի Տրեյնի, թռռ Տրորի... Դու պարզապես պարտավոր ես ետ խլել քո գանձերը: Ծերունիների կանխագուշակած ժամը հասել է: Ինչո՞վ կարող ենք, նրանով էլ կօգնենք, բայց դե դուք էլ մեզ երախտահատույց կլինեք, երբ ետ կնվաճեք թագավորությունը:

Եվ ահա մի աշնանային ցուրտ օր, երբ փչում էր սառը քամին ու ծառերից թափվում էին տերևները, երեք մեծ նավակներ հեռացան Լճաշեն քաղաքից՝ տանելով թիավարներին, թզուկներին, միստր Բեգինսին և մթերքի ահագին պաշարներ: Քաղաքագլուխն ու նրա խորհրդականները դուրս էին եկել քաղաքապետարանի աստիճանների վրա, որպեսզի նրանց բարի ճանապարհ մաղթեն: Քաղաքի բնակիչները նրանց ետևից երգեր երգեցին, ջուրն իջան չներկված թիակները, նավակները շարժվեցին դեպի Հյուսիս: Սկսվեց երկար ճանապարհորդության վերջին փուլը:

Եվ միակը, որ տխուր էր ու դժբախտ, դա Բիլբոն էր:

ՇԵՄՔԻՆ

Երկու օրում նրանք կտրեցին Երկար Լիճը և դուրս եկան Արագահոս գետը: Այժմ Մենավոր Լեռը ուղիղ նրանց առջևում էր: Հոսանքին հակառակ լողալը դժվար էր: Երրորդ օրվա վերջում մի քանի մղոն վեր բարձրանալով, նրանք լողացին ձախ, դեպի արևմտյան ափը, և ցամաք դուրս եկան: Այստեղ նրանց սպասում էին նախօրոք ուղարկված մարդիկ ու մթերքներով և անհրաժեշտ այլ բաներով բեռնված պոնիներ: Թզուկները որքան կարող էին բարձեցին պոնիներին, մնացածները դարսեցին վրանի մեջ: Լճաշեն քաղաքի մարդիկ, որ բերել էին պոնիներին, չհամաձայնվեցին նույնիսկ մեկ գիշեր օթևանել Սարին այդքան մոտիկ:

— Կսպասենք, մինչև որ երգերն իրականանան,— ասացին նրանք:

Այդ վայրի տեղում ավելի հեշտ էր վիշապին հավատալ, քան Տորինին: Վրանում գտնվող մթերքի պաշարներն, ըստ էության, պահպանելու հարկ չկար, քանի որ տեղանքն անմարդաբնակ էր: Դրա համար էլ ուղեկցողների խումբը թողեց դրանք և բռնեց ետդարձի ճանապարհը:

Մեր ճանապարհորդները տազնապալի գիշեր անցկացրին և մի քիչ ընկճված էին: Հաջորդ օրը նրանք հեժան պոնիներն ու շարունակեցին ճանապարհը: Բալինն ու Բիլբոն, որ վերջից էին գնում, սանձին բռնած

տանում էին երկու ծանր բեռնված պոնի, մնացածները առջևում արահետ էին բաց անում, քանի որ ճանապարհի չկար: Նրանք ուղղություն վերցրին Արագահոս գետից դեպի հյուսիս-արևմուտք և քանի գնում, մոտենում էին Մենավոր Լեռան դուրս ցցված թևին: Ճանապարհորդներն ընթանում էին լուռ ու անխոս: Վերջացան ծիծաղը, տավիղի նվագն ու երգեցողությունը, այն գոռոզ հուլյները, որ խլրտում էին նրանց հոգում, մինչև նրանք լճի վրա հնագույն երգեր էին ունկնդրում, մարեցին, դրանց փոխարինեց անթափանց խավարը: Նրանք գիտեին, որ ճանապարհորդությունն իր ավարտին է մոտենում, իսկ այդ ավարտը կարող է սարսափելի լինել: Շրջապատող բնությունն աղքատիկ ու միապաղաղ դարձավ, գույները խամրեցին, այն դեպքում, երբ Տորինի խոսքերով, մի ժամանակ դրանք աչքի էին ընկնում իրենց թարմությամբ ու բազմազանությամբ: Խոտը նոսրացավ, ծառերն ու թփերը անհետացան, նրանց տեղը մնացին սևացած, ծուռումուռ կոճղեր: Ճամփորդները հասան Վիշապի Ամայություն, և հասան, երբ տարին վերջանում էր: Նրանք մոտեցան Սարի ստորոտին, առանց որևէ վտանգավոր բանի հանդիպելու: Սարը խոյանում էր ուղիղ նրանց վերևում, գորշ և զգվելի: Ճամփորդները ճամբարը հիմնեցին մեծ թևի արևմտյան լանջին, որ վերջանում էր Ագռավի Բարձունք կոչվող բլրով: Այստեղ ինչ-որ ժամանակ պահակակետ էր գտնվում, բայց նրանք առայժմ չհամարձակվեցին բարձրանալու այնտեղ. դա մի չափազանց լերկ վայր էր:

Սարի արևմտյան կողմում գաղտնի մուտքը փնտրելուց առաջ Տորինը հետախույզների ջոկատ ուղարկեց հարավային լանջը, որտեղ պետք է գտնվեր Գլխավոր դարպասը: Դրա համար նա ընտրեց Բալիին, Ֆիլիին, Կիլիին և Բիլբոյին: Սրանք գորշ, անկենդան քարափների երկարությամբ գնալով հասան Ագռավի Բարձունքի ստորոտը: Այնտեղ Արագահոս գետը, մի լայն պտույտ գործելով հովտում, որտեղ մի ժամանակ գտնվում էր Դեյլը, Սարից գնում էր լճի կողմը, վարար ու աղմկոտ, ինչպես բոլոր լեռնային գետերը: Նրա լերկ ու ժայռոտ ափերը կտրուկ թեքությամբ իջնում էին դեպի վտակը: Վերևից, նեղ գետի վրայով նայելով, նրանք ընդարձակ հովտում ամրոցի պատերի, աշտարակների և հինավուրց շինությունների սևին տվող ավերակներ տեսան:

— Ահա այն ամենը, ինչ մնացել է Դեյլ քաղաքից,— խոսեց Բալինը:— Լեռան լանջերը մի ժամանակ կանաչին էին տալիս անտառներից, հովիտը լիառատ էր ու աչք շոյող, քաղաքում զանգերի ղողանջն էր հնչում:

Բալինի ձայնը տխուր էր, դեմքը մռայլվել էր. նա ուղեկցում էր Տորինին այն օրը, երբ հայտնվեց Վիշապը:

Նրանք սիրտ չարեցին առաջ գնալ, այլ լեռնաճյուղը շրջանցեցին և, մի մեծ քարի ետևը թաքնվելով, գլուխները դուրս հանեցին: Նրանք մի սև անցք տեսան բարձր պատի մեջ: Դա Գլխավոր դարպասն էր: Այնտեղից դուրս էր վազում Արագահոս գետը և այդ նույն տեղից էլ գոլորշի ու սև ծուխ էր ժայթքում: Շուրջն ամեն ինչ անշարժ էր, շարժվում էին միայն գոլորշին, ջուրը, մեկ-մեկ էլ մռայլ չարագուշակ ագռավն էր թևածում:

Լռութիւնը խախտում էր միայն քարերի միջով վազող գետի աղմուկը և խռպոտ կռկռոցը: Բալինը սարսռեց.

— Ետ դառնանք,— ասաց նա:— Այստեղ անելիք չունենք: Ինձ բնավ դուր չեն գալիս եղ զգվելի թռչունները, դրանք թշնամական լրտեսների են նմանվում:

— Իսկ վիշապը, ուրեմն կենդանի է, նստած է սարի տակ, ինչ-որ տեղ, եթէ ծխից դատելու լինենք,— ավելացրեց հոբիտը:

— Ամենայն հավանականութեամբ դու ճիշտ ես, թեպէտ ծուխը դեռ ոչինչ չի ապացուցում,— առարկեց Բալինը:— Եթէ նույնիսկ վիշապը թռել է կամ թաքնվել լանջերից մեկում, որսի հետևելու համար, ապա ծուխն ու գոլորշին, երևի, կշարունակվեն դուրս գալ: Երևի Սարի ընդերքը լեփլեցուն է դրա գարշահոտ գոլորշիներով:

Ընկճված ջանալով չաղմկել, ագռավների կռկռոցի ուղեկցութեամբ նրանք վերադարձան ճամբար: Դեռ բոլորովին վերջերս, հունիսին, նրանք հյուրընկալվել էին Էլրոնդի գեղատեսիլ տանը. հիմա նոր-նոր աշուն էր սկսվում, բայց թվում էր, թէ մի ամբողջ դար է անցել: Նրանք հայտնվեցին անմարդաբնակ, լքված տեղում՝ օգնության ոչ մի հույս չունենալով: Նրանց ճամփորդությունն ավարտվել էր, բայց արկածների վերջը առաջվա պես հեռու էր, իսկ արիությունն ու տոկունությունը կարող էին բավականացնել շատ կարճ ժամանակով:

Որքան էլ տարօրինակ է, բայց միստր Բեգինսի մոտ դրանցից ավելի շատ էր մնացել, քան մյուսների մոտ: Նա հաճախ էր Տորինից վերցնում քարտեզն ու զննում, խորհրդածելով սեպագրերի ու լուսնատառերի նշանակության մասին: Հենց նա էր, որ թզուկներին ստիպեց սկսել գաղտնի դռան վտանգավոր որոնումներն արևմտյան լանջերին: Նրանք ճամբարը տեղափոխեցին երկար նեղ հովիտը, որ ծածկված էր լեռան ցածր ելուստներով: Այս արևմտյան լանջին վիշապի ավազակային հարձակումների հետքերը քիչ էին, նույնիսկ մի քիչ խոտ էր մնացել նրանից պոնիների համար: Սարի ստվերով մշտապես ծածկված այդ նոր ճամբարից օրը օրին, խմբերի բաժանվելով, նրանք դուրս էին գալիս որոնումների: Եթէ քարտեզին հավատանք, այստեղ, այս լանջի վրա, վերևում թաքնված էր գաղտնի դուռը: Օրը օրին էլ նրանք ձեռնունայն վերադառնում էին ճամբար:

Եվ հանկարծ, բոլորովին անսպասելի, նրանք գտան այն, ինչ փնտրում էին: Մի անգամ Ֆիլին, Կիլին ու հոբիտը դուրս եկան նեղ հովտի վերջավորությունը և քարերի մեջ սկսեցին փորփրել: Կեսօրին մոտ Բիլբոն անտաշ աստիճանների նմանվող ինչ-որ բան տեսավ: Նա երկու թզուկներին կանչեց, և երեքով հուզված սկսեցին բարձրանալ աստիճաններով, որը նրանց դուրս բերեց մի կաճան՝ տեղ-տեղ կորճող, տեղ-տեղ, այնուամենայնիվ, նշմարվող, և այդպես, այդ կաճանով հասան հարավային թևի կատարը, իսկ այնտեղից մի նեղ ելուստ, որ գոտևորում էր Սարը: Ներքը նայելով՝ նրանք տեսան, որ ուղիղ իրենց տակ ճամբարն

Է: Չգուշութեամբ, ժայռի վրայով բարձրանալով, նրանք իծաշարունկի անցան նեղ ելուստը, անկյունից շրջվեցին և հայտնվեցին աչքից հեռու, խոտով ծածկված մի փոքրիկ հարթակում: Սրա մուտքը ճամբարից տեսանելի չէր: Ժայռը, որին դեմ էր առնում հարթակը, կատարելապես հարթ էր և ուղիղ, ասես որմնադիրն էր շարել: Ոչ ճեղք կար, ոչ կցվածք, բարավոր, կողափայտ կամ շեմք հիշեցնող ոչ մի բան, փականքների, սողնակների կամ բանալու անցքի ոչ մի հետք: Եվ, սակայն, նրանք չէին կասկածում, որ իրենց առջև հենց այն դուռն է:

Նրանք թակեցին դուռը, հրեցին, բոթեցին, թափվեցին վրա վրա, աղաչեցին, որ բացվի, դռները բացող հմայախոսություններ ասացին, բայց ժայռը մնաց անշարժ: Վերջապես ուժասպառ փռվեցին խոտերին, իսկ երբ սկսեց մթնել, իջան ներքև:

Այդ գիշեր ճամբարում իրարանցումը չդադարեց: Առավոտյան բոլորը հեռացան ճամբարից՝ Բոֆուրին ու Բոմբուրին թողնելով հսկելու պոնիներին և այն պաշարները, որ հետները վերցրել էին գետից: Մնացածները, հովիտն անցնելով, նախօրեին գտած կածանով բարձրացան նեղ ելուստը: Սակայն հակերն այստեղ տանել չէր լինի՝ կածանը մի կողմից գահավիժում էր ցած, մոտ հիսուն մետր խորությամբ: Բայց թզուկները մեջքներին պարաններ էին փաթաթել: Նրանք բարեհաջող հասան խոտածածկ խորշը, այստեղ նոր ճամբար դրեցին և պարաններով վեր բարձրացրին բոլոր անհրաժեշտ բաները: Այդ եղանակով էլ նրանք հետո իջեցնում էին մեկը մյուսին, որպեսզի պահակներից նորություններ իմանան կամ փոխարինեն Բոֆուրին: Բոմբուրը ոչ մի ձևով վերև բարձրանալ չցանկացավ՝ ոչ պարաններով, ոչ էլ կածանով:

— Ես ճանճ չեմ, որ անդունդի վրա ճախրեմ,— պատասխանեց նա:— Գլուխս կպտտվի, մորուքս կընկնի ոտքերիս տակ, և նորից դուք կմնաք տասներեքով: Իսկ պարաններն իմ ծանրությանը չեն դիմանա:

Ինչպես կտեսնեք հետագայում, պարանները, ի բարեբախտություն Բոմբուրի դիմացան...

Այդ ընթացքում բարեկամները հետազոտեցին ելուստի մնացած մասը և մի արահետ հայտնաբերեցին, որ տանում էր դեպի վեր: Բայց վախեցան հեռուն գնալ, ասենք անհրաժեշտություն էլ չէին տեսնում: Գագաթին լռություն էր տիրում, միայն քամին էր շրշում ճեղքերում: Նրանք ցածր էին խոսում, չէին երգում, իրար ձայն չէին տալիս՝ ամեն տեղ վտանգ էր դարանաձ: Նրանք, որ դռան վրա էին չարչարվում, դեռ արդյունքի չէին հասել: Անհամբերությունից ձեռքները թափ տվին սեպագրերի ու լուսնագրերի վրա և անխոնջ փորձեցին աչքաչափով որոշել, թե ժայռի հարթ մակերևույթի հատկապես ո՞ր մասում է դուռը թաքնված: Նրանք Լճաշեն քաղաքից քլունգներ ու այլ գործիքներ էին բերել և սկզբում փորձեցին օգտագործել դրանք: Բայց հենց առաջին հարվածից կոթերը ջարդուփշուր եղան և քիչ մնաց իրենց թւերն էլ տեղից դուրս գալին:

պողպատե մասերը կոտրվեցին կամ ծռվեցին, ասես արճճից լինեին: Թզուկները հասկացան, որ լեռնային գործում իրենց ունեցած հմտությունն անգոր է այդ հմայությունների դեմ, որոնք փակել են այդ դուռը: Նրանք իրենց իսկ բարձրացրած աղմուկիցել վախեցան. յուրաքանչյուր հարված արձագանքելով՝ ավելի ուժգին էր հնչում: Բիլբոյին սաստիկ ձանձրացրել էր շեմքին նստելը: Այսինքն, ոչ մի շեմք էլ, հասկանալի է, չկար, պարզապես թզուկները կատակով այդպես էին անվանել խոտածածկ փոքրիկ հրապարակը. նրանք Բիլբոյին հիշեցրին իր խոսքերը, որ ասել էր վաղուց, երբ նրա բույնը խուժեցին անկոչ հյուրերը: Նա այն ժամանակ ասաց, թե իրենք կնստեն շեմքին ու մի բան կմտածեն: Եվ հիմա ահա նստում են ու նստում, մտածում են ու մտածում կամ աննպատակ թրևվում են մոտակայքում, ու նրանց դեմքերն էլ սրվում են հա սրվում:

Արահետը գտնելով, նրանք մի փոքր արհացել էին հոգով, իսկ հիմա բոլորովին ընկճված էին: Բայց, այնուամենայնիվ, չէին ուզում պարտվել ու ձեռնուկայն վերադառնալ: Այժմ հոբիտն էլ մյուսներից աշխույժ չէր: Նա ոչինչ չէր անում, միայն ժայռին հենված, նստում էր և ելուստների ու լայնարձակ տարածությունների վրայով նայում էր արևմուտք՝ սև Անտառի սև պատից այն կողմ, որտեղ նրա աչքին շարունակ երևում էին Մառախլապատ Լեռները: Երբ նրան հարցնում էին, թե ինչ է անում, հոբիտը պատասխանում էր.

— Դուք էիք ասում, չէ՞, որ իմ գործն է նստել շեմքին ու մտածել, թե ինչպես ներս մտնենք, ահա ես էլ մտածում եմ:

Բայց ենթադրում եմ, որ նա մտածում էր ոչ այնքան գործի մասին, որքան այն երկրի, որ ընկած էր կապույտ հեռվում, խաղաղ հարազատ երկրի և Բլառտակի իր հոբիտական բնի մասին:

Կանաչի մեջ, հրապարակի մեջտեղում մի գորշ քար էր ընկած: Բիլբոն սովորաբար նստում էր ու վիհատ հայացքը հառում դրա վրա կամ հեռևում էր մեծ խխունջներին: Սրանց, երևում է, դուր էր եկել մեկուսի այդ հարթակը, զով պատերը, և նրանք դանդաղ սողում էին դրանց վրայով, հաճույքով քարին կաչելով:

— Վաղը աշնան վերջին շաբաթը կսկսվի,— մի անգամ ասաց Տորինը:

— Իսկ նրան կհաջորդի ձմեռը,— ավելացրեց Բիֆուրը:

— Եվ կգա հաջորդ տարին,— վերջացրեց Դվալինը,— և մեր մորուքները կաճեն, մինչև կկախվեն ժայռից ու կհասնեն հովիտ, իսկ այստեղ առաջվա նման ոչինչ տեղի չի ունենա: Ինչո՞վ է զբաղված մեր գորդը: Քանի որ նա անտեսանելի մատանի ունի, նշանակում է այժմ պահանջը նրանից ավելի մեծ է, հանգիստ կարող է ներս մտնել Գլխավոր դարպասից և հետախուզել, թե ինչն ինչոց է:

Բիլբոն լսեց նրա խոսքերը (թզուկները վերևում էին գտնվում, ուղիղ խորշի վրա) և մտածեց. «Ողորմած աստված, ուրեմն, ահա թե ինչ են մտածել սրանք... Դժբախտ եմ ես, դժբախտ. շարունակ ես պետք է սրանց

դուրս բերեմ անախորժութուններից, համենայն դեպս՝ հրաշագործի գնալուց հետո: Ի՞նչ անեմ... Այդպես էլ գիտեի, որ վերջում ինձ ինչ-որ սարսափելի բան է սպասվում: Ոչ, ես ուղղակի ի վիճակի չեմ նորից տեսնելու Դեյլի այդ չարաբասխտ հովիտը: Իսկ ինչ արժե ծխացող դարպասը...»:

Նա այնպես հուզվեց, որ գիշերը համարյա աչք չկացրեց: Հաջորդ օրը թզուկները ցրվեցին զանազան կողմեր. ոմանք ներքև իջնելով զբոսնում էին պոնիներով, ոմանք մագլցում լանջն ի վեր: Բիլբոն ամբողջ օրը տրտում նստած էր խորշում՝ քարին կամ նեղ անցումի միջով դեպի հեռուն նայելով: Նա տարօրինակ զգացում ուներ, ասես ինչ-որ բանի էր սպասում: «Գուցե հրաշագործը հանկարծ հայտնվի»,— մտածեց նա: Երբ գլուխը բաժրացրեց, տեսավ հեռավոր անտառի մի կտորը: Ահա արևը թեքվեց դեպի արևմուտք և անտառի վրա դեղին խալ ընկավ, ասես արևը լուսավորում էր աշնան վերջին տերևը: Շուտով մեծ նարնջագույն գունդը գլորվեց դեպի հորիզոն: Բիլբոն հորիզոնի վրա, բավական բարձր, տեսավ նորալուսնի հազիվ նկատելի գունատ նեղ մանգաղը: Այդ նույն պահին իր թիկունքում սուր չրթոց լսեց: Նա շրջվեց. գորշ քարի վրա նստել էր մեծ-մեծ, ածխի պես սև, բաց դեղնավուն, մուգ բծերով ծածկված կրծքով կեռնեխը: Չը՛րթ... Կեռնեխը հափռեց խիսունջն ու խփեց քարին: Չը՛րթ, չը՛րթ...

Հանկարծ Բիլբոնի գլխում մի միտք փայլատակեց... Չզուշուրյան մասին մոռանալով, քիվի ծայրին կանգնած, նա սկսեց բարձրաձայն կանչել թզուկներին և ձեռքերը թափահարել: Թզուկները, քարերի վրա սայթաքելով, վազեցին դեպի նա՝ գլխի չընկնելով, թե ինչ է պատահել:

Բիլբոն արագորեն ամեն ինչ բացատրեց: Բոլորը լռեցին: Հոբիտը կանգնեց գորշ քարի կողքը: Թզուկներն անհամբեր սպասում էին: Արևն ավելի ու ավելի էր իջնում ցած, և նրանց հույսերը հալվում էին: Արևը մտավ բոսոր ամպերի շերտի մեջ ու ծածկվեց: Թզուկները տնքացին, բայց Բիլբոն առաջվա պես անշարժ կանգնած էր: Նեղ մանգաղն իջավ դեպի հորիզոն: Սկսեց մթնել: Եվ հանկարծ, երբ բոլորն արդեն իսպառ հույսները կորցրել էին, ամպերի արանքից կարմիր մի ճառագայթ դուրս պրծավ: Այն նեղ անցումով թափանցեց խորշ և ընկավ ժայռի հարթ մակերեսին: Կեռնեխը, որը, գլուխը մի կողմ թեքած, իր ուլունքանման աչուկները նույնպես հետևում էր ճառագայթին, հանկարծ կչկչաց: Պատից ճայթյունով քարի մի բեկոր թռավ: Գետնից երեք ոտնաչափ բարձրության վրա, այնտեղ, ուր ընկել էր ճառագայթը, ժայռի մեջ հանկարծ մի անցք բացվեց:

Թզուկները, վախենալով, որ պահը բաց կթողնեն, վազեցին ու իրենց զգեցին ժայռի վրա, ժայռը տեղից չշարժվեց:

— Բանալին, բանալին,— գոռաց Բիլբոն:— Ո՞ւր է Տորինը:

Տորինը վազելով մոտեցավ:

— Բանալին, — գոչեց Բիլբոն:— Այն, որ քարտեզի հետ էր: Շուտ, թե չէ ուշ կլինի:

Տորինը հանեց բանալին, որ կախված էր իր վզից, և մտցրեց անցքը: Բանալին համընկավ: Տորինը պտտեց այն: Չըխկ... Ճառագայթն անհետացավ, լուսինը կորավ, երկինքը սևացավ:

Նրանք նորից սեղմեցին դուռը, և պատի մի մասը կամաց-կամաց ետ գնաց: Երկար, ուղիղ ճեղքեր հայտնվեցին: Հինգ ոտնաչափ բարձրությամբ, երեք ոտնաչափ լայնությամբ մի դուռ ուրվագծվեց և անձայն ու ծանր բացվեց դեպի ներս: Խորքից, ասես գուլորչի, դուրս լողաց խավարը, նրանց աչքերի առջև բացվեց մի անտակ սևություն՝ լայնաբաց մուտքը դեպի Սարի խորքը:

ԻՆՉ ԷՐ ՍՊԱՍՈՒՄ ՆՐԱՆՑ ՆԵՐՍՈՒՄ

Թզուկները երկար կանգնել էին դռան առջև և վիճում էին: Վերջապես Տորինը ճառ ասաց.

Եկել է ժամանակը, որ շատ պատվարժան միստր Բեգինսը, որը երկար ճամփորդության ընթացքում իրեն դրսևորեց որպես հիանալի գործընկեր, որպես հոբիտ, որը աչքի ընկավ խիզախությամբ ու հնարագիտությամբ, որոնք ապշեցնում են նրա ցածր հասակի հետ իրենց անհամապատասխանությամբ և, եթե կարող եմ այդպես արտահայտվել, օժտված հաջողակության պաշարով, որը գերազանցում է սովորականը, ճակատագրով հատկացվածը... Եկել է, կրկնում եմ, ժամանակը, որ նա մեզ մատուցի մի ծառայություն, որի համար նրան ներգրավել ենք մեր ընկերության մեջ, և վաստակի խոստացված բաժինը:

Դուք արդեն ծանոթ եք բացառիկ կարևոր դեպքերում Տորինի ոճին, դրա համար էլ նրա ճառը բառացիորեն չեմ վերապատմի: Նա դեռ շատ երկար ծավալվեց: Առիթն իսկապես կարևոր էր, բայց հոբիտն անհամբեր էր դարձել: Նա ևս բավականաչափ լավ էր ուսումնասիրել Տորինին և իսկույն հասկացավ, թե նրա մտքինն ինչ է:

— Եթե ինձնից սպասում եք, որ ես առաջինը մտնեմ գաղտնադռնով, ով Տորին Օուքենշիլդ, որդիդ Տրեյնի, թող անվերջ երկարի ոք մորուքը,— վրդովված ասաց Բիլբոն,— ապա այդպես էլ ասացեք: Իհարկե, ես կարող եմ և հրաժարվել: Առանց այդ էլ արդեն երկու անգամ ձեզ փրկել եմ, իսկ դա գործարքի մեջ չի մտնում, այնպես որ որոշ պարզևի ես արդեն արժանի եմ: Բայց, ինչպես իմ հայրն էր միշտ ասում. «Ամեն ինչ երեք անգամից է լինում»: Եվ, պատկերացրեք, չեմ հրաժարվի: Ես հիմա իմ բախտավոր աստղին ավելի եմ հավատում, քան առաջներում (նա նկատի ուներ անցած գարունը, հարազատ տունը թողնելուց առաջ, բայց նրան թվում էր, թե դա հազար տարի առաջ էր): Լավ, գլուխս ազատելու համար համաձայն եմ մի անգամ մտնել այնտեղ: Ո՞վ ինձ կընկերակցի: Նա չէր էլ սպասում, թե կամավորների մի ամբողջ խմբի կանչերը կսլի, դրա համար էլ հիասթափություն չապրեց: Ֆիլին ու Կիլին բացահայտորեն անհարմար զգացին և մի ոտքից մյուսը փոխվեցին: Մյուսները նույնիսկ չթաքցրին իրենց դժկամությունը՝ բոլորը, բացի ծերուկ Բալինից, հավերժական

պահակից, որը շատ էր կապվել հոբիտի հետ: Նա ասաց, որ համենայն դեպս կմտնի ներս և գուցե նույնիսկ մի տասը քայլ առաջ կգնա, որպեսզի ծայրահեղ դեպքում գոնե մեկը լինի, որ օգնություն կանչի:

Ի՞նչ կարող եմ ասել թզուկներին արդարացնելու համար: Որ նրանք մտադիր էին Բիլբոյին առատորեն վարձատրե՞լ իր ծառայությունների դիմաց: Քանի որ նրանք Բիլբոյին վերցրել էին հատկապես նրա համար, որ իրենց փոխարեն դժվար աշխատանք կատարի, ապա և չէին առարկում կատարելուն, մանավանդ որ ինքն էլ դեմ չէր: Բայց թզուկներն անպայման նրան օգնության ձեռք կմեկնեին փորձանքի պահին, ինչպես արդեն վարվել էին ճանապարհորդության սկզբում, տրոլների հետ հանդիպման ժամանակ, երբ դեռ ոչ մի պատճառ չունեին հոբիտին երախտապարտ լինելու: Ինչ որ ճիշտ է, ճիշտ է՝ թզուկները հերոսներ չեն, այլ հաշվենկատ մարդիկ, որոնք փողը ամեն ինչից վեր են դասում. պատահում են խորամանկ, խարդախ և ընդհանրապես անպետք թզուկներ: Բայց և կան և միանգամայն օրինավոր թզուկներ, ինչպես Տորինն և Ընկերությունը, միայն թե նրանցից չափազանց շատ բան սպասել պետք չէ:

Սև ամպերով պատված դժգույն երկնքում տեղ-տեղ աստղեր երևացին: Հոբիտը կախարդված դռնից ներս ծլկեց: Սարի խորքում քայլելը, պարզվեց, բարդ գործ է: Դա ձեզ համար ոչ գոբլինյան ցածր թունելներն են, ոչ էլ ծուռումուռ ստորգետնյա անցումներն անտառային էլֆերի քարայրում: Սարի տակ թունելը թզուկներն էին պատրաստել իրենց հզորության ու վարպետության ծաղկման շրջանում. ուղիղ, ասես քանոնով գծած, ողորկ հատակով ու ողորկ պատերով, հարթ ու հավասար թեքությամբ թունելն իջնում էր դեպի ինչ-որ խորհրդավոր սևություն:

Կարճ ժամանակից հետո Բալինը Բիլբոյին հաջողություն ցանկացավ և կանգնած մնաց թունելի մեջտեղում, որտեղից դեռևս երևում էր դռան աղոտ պատկերը, և թունելի հատուկ կառուցվածքի շնորհիվ թզուկների քչփչոցը շատ մոտրկից էր լսվում: Հետո Բիլբոն մատանին դրեց և սկսեց զգույշ առաջ գնալ դեպի թունելի խորքը: Ձայների չափազանց բարձր արձագանքից վախեցած՝ նա ինքն իրեն գերազանցեց զգուշության ու անշշուկ քայլելու մեջ: Նա վախից դողում էր, բայց դեմքին վճռականություն ու դաժանություն էր գրված: Ախր նա բոլորովին էլ այն հոբիտը չէր, որ մի ժամանակ առանց թաշկինակի դուրս վազեց Բեգ-Էնդից: Նա առանց թաշկինակի յուրա էր գնացել արդեն մի ամբողջ հավիտենականություն: Ստուգելով՝ տեղո՞ւմ է արդյոք դաշույնը, նա գոտին ձգեց ու շարունակեց ճանապարհը:

«Ահա քեզ, Բիլբո Բեգինս,— ասաց ինքն իրեն:— Քո սեփական կամքով գլխովին խրվեցիր այս գործի մեջ, դե հիմա էլ պատասխան տուր հիմարությանդ համար: Ի՞նչ ապուշն եմ ես,— նրա ներսում պնդում էր ամենևին ոչ տուկոյան ձայնը:— Իմ ինչին էին պետք վիշապի գանձերը: Ի՞նչ լավ կլիներ, թե որ կարողանայի արթնանալ ու հայտնվել ոչ թե այս

անիծյալ թունելում, այլ իմ դաշտում: Եվ թող գանձերը մնային այստեղ հավիտյանս հավիտենից»:

Բայց քանի որ դա երագ չէր, նա չարթնացավ, այլ շարունակեց գնալ առաջ ու առաջ: Վերջապես դռան գծագրությունն անհետացավ, Բիլբոն բոլորովին մենակ մնաց: Շուտով օդը տաքացավ: «Գուցե տապը խորքի՞ց է գալիս: Առջևում վառ հրացուք եմ տեսնում»,— մտածեց նա: Այդպես էլ կար: Կարմիր լույսը ավելի ու ավելի պայծառ էր վառվում, և թունելում շոգը գնալով ուժեղանում էր: Բիլբոյի գլխավերևում սկսեցին գոլորշու քուլաներ լողալ, պարուրել նրան: Բիլբոն քրտինքի մեջ կորել էր, նա ինչ-որ բլթբլթացող համաչափ աղմուկ էր լսում, որ նման էր կրակի վրա եռացող մեծ կաթսայի խլթխլթոցի և, միաժամանակ, հսկայական կատվի մռռոցի: Շուտով Բիլբոն անսխալ ճանաչեց խոշոր գազանի խռմփոցը: Առջևում, կարմիր հրացուքի մեջ մեկը քնած էր: Բիլբոն մի պահ կանգ առավ: Բայց միայն մի պահ, և իսկույն էլ առաջ շարժվեց: Դա նրա կյանքում ամենախիզախ քայլն էր: Բիլբոն իսկական հաղթանակ տարավ ինքն իր նկատմամբ, առջևում դարանող անծանոթ վտանգի դեմ հանդիման: Եվ այսպես, կարճատև դադարից հետո Բիլբոն գնաց առաջ: Այժմ պատկերացրեք այսպիսի տեսարան. Բիլբոն հասնում է թունելի ծայրը, մինչև մոտավորապես նույն մեծության ու ձևի մի բացվածքի, ինչ արտաքին դուռն էր, նայում է ներս. նրա առջև բացվում է հինավուրց թզուկների գանձարանը՝ ամենացածր քարայրը Սարի ամենախորքում: Այնտեղ մուժ է, հսկայական քարայրի սահմանները չեն երևում, կարելի է միայն կռահել դրա մեծության մասին. շատ մոտիկ, քարե հատակին մի հրե գանգված է: Եվ այդ գանգվածը Սմոգն է:

Աժդահա ոսկեկարմրավուն վիշապը պառկած էր ու պինդ քնած: Երախից ու ռունգներից դողդողացող ձայն էր դուրս գալիս և ծխի շիթեր, բայց առայժմ կրակ չէր ժայթքում: Նրա մարմնի տակ, բոլոր թաթերի և հաստ, ոլորված պոչի տակ, նրա չորս կողմը բարձրանում էին թանկարժեք գանձերի կույտեր. ոսկու ձուլակտորներ, ոսկեղեն իրեր, ակնեղեն, թանկարժեք քարեր՝ շրջանակներով, մարգարիտ ու արծաթ, որ այդ բոսոր լույսի տակ կարմիրին էին տալիս:

Սմոգը կողքի վրա էր քնած, թևերը ծալած վիթխարի չղջիկի նման. հոբիտը ներքևից տեսավ նրա երկար փորը, որի մեջ այդ հարուստ մահճում երկար պառկելուց թանկագին քարեր ու ոսկի էին խրվել: Պատի վրա աղոտ փայլվում էին օղազրահներ, սաղավարտներ, տապարներ, թրեր ու նիզակներ: Հատակին շարքերով դրված էին մեծ-մեծ կճուճներ ու ամաններ, որոնք լեփլեցնուն էին անհամար հարստություններով:

Ասել, թե Բիլբոյի շունչը կտրեց, շատ մեղմ կլիներ: Այն ժամանակից ի վեր, ինչ մարդիկ աղավաղել են էլֆերի լեզուն, որ սովորում էին այն դարաշրջանում, երբ աշխարհն անասելի գեղեցիկ էր, խոսքեր չեն գտվի Բիլբոյի ողջ զարմանքն ու հիացմունքը արտահայտելու համար: Նա առաջներում էլ վիշապների գանձարանների մասին պատմություններ ու

երգեր լսել էր, բայց չէր կարող երևակայել դրանց պերճությունը, ասենք ոսկու նկատմամբ թզուկների մոլուցքն էլ օտար էր նրան: Բայց այժմ նրա հոգին բերկրանքով էր համակված. կախարդվածի նման նա քարացել էր տեղում՝ մոռանալով սարսափելի հսկիչի մասին:

Նա նայում էր, նայում ու չէր կարողանում աչքը կտրել, հետո ասես նրան ինչ-որ ուժ ձգեց. գողեգող մոտեցավ գանձերի կույտին: Նրա գլխավերևում քնած էր վիշապը, որ սարսափելի ու ահավոր էր նույնիսկ քնած ժամանակ: Բիլբոն հափշտակեց երկու բռնակներով մի մեծ թաս, այնքան ծանր, որ հազիվ բարձրացրեց, և վախեցած հայացքով նայեց վերև: Սմոգը թևը շարժեց, ճանկերը բաց արեց, խոմփոցի ձայնը փոխվեց: Բիլբոն նետվեց դեպի ելքը: Բայց վիշապն առայժմ չէր արթնացել, ուղղակի հիմա նա ուրիշ երազ էր տեսնում: Փոքրիկ հոբիտոն սուրում էր երկար թունելով: Նրա սիրտը խփում էր, ոտքերը դողում էին: Նա թասը սեղմեց կրծքին ու մտքում ասաց. «Այ թե ով եմ ես: Հիմա նրանք կտեսնեն... Այդպես, ուրեմն. ես ավելի շատ մթերավաճառի՞ եմ նման, քան գողի: Դե թող փորձեն կրկնել»:

Բայց որևէ մեկը չէր էլ մտածում կրկնելու մասին: Բալինը երջանիկ էր հոբիտին ողջ տեսնելու համար և բոլորովին էլ ոչ պակաս հիացած: Նա գրկեց Բիլբոյին ու դուրս տարավ: Գիշեր էր, ամպերը ծածկել էին աստղերը, Բիլբոն պառկել էր փակ աչքերով, շունչը տեղը բերելով, և ըմբռնված էր թարմ օդը, չնկատելով, թե հուզված թզուկներն ինչպես են գովաբանում իրեն, թփթփացնում ուսին և խոստանում սերնդե սերունդ իրենց ընտանիքի բոլոր անդամների ծառայությունը:

Թզուկները դեռ թասը ձեռքից ձեռք էին փոխանցում ու ոգևորությամբ քննարկում, թե ինչպես մոտ ապագայում կտիրանան իրենց բոլոր գանձերին: Հանկարծ Սարի ներսում որոտի խուլ ճայթյուն լսվեց, ասես հանգած հարբուխ էր որոտում, որ որոշել էր նորից ժայթքել: Նրանք դուռը ծածկեցին և տակը մի քար դրեցին, որ չփակվի, բայց Սարի խորքից ահավոր դղրոյուն, մռնչոց ու դոփյուն էր լսվում, այնպես որ ժայռը նրանց տակ ցնցվում էր:

Թզուկներն իսկույն մոռացան իրենց ինքնավստահ պարծենկոտությունը և վախից կուչ եկան: Սմոգին անտես առնելը վաղ էր: Եթե ապրում ես վիշապի հետ կողք կողքի, ապա բարի եղիր հաշվի նստել նրա հետ: Վիշապներն իրենց հարստությունն օգտագործել չեն կարողանում, բայց դրա փոխարեն, որպես օրենք, յուրաքանչյուր առարկա հինգ մատի պես գիտեն: Սմոգը բացառություն չէր կազմում: Անհանգիստ երազը (այնտեղ ամենատհաճ կերպով գործում էր ինչ-որ մանրահասակ ռազմիկ, որ չտեսնված կերպով խիզոխաության տեր էր և սարսափելի թուր ուներ) փոխվեց նինջի, հետո վիշապը հանկարծ արթնացավ: Քարայրում ինչ-որ անձանոթ հոտ կար: Գուցե հոտը այդ անցքի՞ց էր գալիս: Չնայած անցքը փոքր էր, բայց միշտ թեթևակի տանգապ էր ներշնչում Սմոգին: Նա կասկածանքով հայացքը հառեց այնտեղ: Վաղուց պետք է փակած լիներ: Վերջին ժամանակներս նրան նույնիսկ թվում էր, թե այնտեղից թույլ

թակոց է լսվում: Նա գլուխը բարձրացրեց և օդ ներս քաշեց: Եվ այստեղ էլ նակտեց, որ թասը չկա:

Գողե՛ր... Հրդե՛հ... Սպանություն: Այն օրվանից, ինչ ինքը բնակվում է սարում, դեռ ոչ մի անգամ այդպիսի բան չէր պատահել: Նրա կատաղությունը նկարագրել չի լինի. այդպիսի կատաղություն ունենում են միայն հարստության մեջ լող տվող ունևորները, եթե հանկարծ կորչում է այն իրը, որը նրանք վաղուց ունեին, բայց որը կյանքում ոչ մի անգամ հարկավոր չի եղել: Սմոգի երախից կրակ ժայթքեց, քարայրը լցվեց ծխով, սարը սասանվեց: Նա փորձեց գլուխը մտցնել անցքը, հետո ինչքան ուժ ուներ մռնչաց և, վիզը ներս քաշելով, լեռնային պալատի լայնարձակ թունելներով որջից սուրաց դեպի Գլխավոր դարպասը: Նրա գլխում մի միտք էր նստած. քրքրել ամբողջ լեռը, բռնել գողին, պատահոտել ու կոխկրտել... Սմոգը դարպասից դուրս թռավ, ջուրը գետում թռաց, ֆշոցով գլորչի բարձրացավ: Կրակ շաղ տալով՝ Սմոգը օդ խոյացավ և վայրեջք կատարեց Սարի գագաթին, որ շրջապատված էր կրակի կանաչ ու ալ լեզուներով: Թզուկները լսեցին նրա թևերի սարսափելի աղմուկը և ծեփվեցին պատին՝ հուսալով թաքնվել վիշապի աչքից, որ թշնամուն էր փնտրում:

Նրանք բոլորն անխուսափելիորեն կկործանվեին, եթե դարձյալ չլիներ Բիլբոն:

— Շո՛ւտ,— շշուկով հրամայեց նա:— Դեպի դուռը: Մտեք թունել: Այստեղ մնալ չի կարելի:

Հենց այն է, նրանք ուզում էին սուզվել լեռան խորքը, երբ հանկարծ Բիֆոլը գոռաց.

— Իմ եղբայրները... Բոմբուրն ու Բոֆուրը: Մենք մոռացել ենք նրանց: Նրանք հովտում են, ներքևում...

— Նրանք կկործանվեն, մեր պոնիներն էլ հետը, մենք կմնանք առանց մթերքի...— տնքացին մնացած թզուկները: — Ոչինչ անել չենք կարող:

— Անմտություն,— ընդհատեց նրանց Տորինը: Նա վերստացավ իր նախկին արժանապատվությունը:— Մենք չենք կարող նրանց լքել: Ներս կմտնեն միստր Բեգինսը, Բալինը, ինչպես նաև Ֆիլին ու Կիլին: Բոլորը միանգամից վիշապի փայ չեն դառնա: Մնացածները... պարանն ո՞ւր է: Շո՛ւտ...

Հավանաբար, արշավի ամբողջ ընթացքում նրանք այսպիսի իրարանցման մեջ դեռ չէին ընկել: Վերևում, լեռնային կիրճերում խուլ թնդում էր մոլեգնած վիշապի մռնչոցը: Ցանկացած բռնաբան նա կարող էր կրակ թափելով թռչել ներքև կամ Սարի շուրջը պտույտ գործել և նրանց տեսնել այն պահին, երբ կատաղորեն պարաններն էին ձգում գառիթափի եզրին: Բոֆուրը հասցրեց բարձրանալ, ամեն ինչ խաղաղ էր: Հետո հայտնվեց Բիֆոլը, նա հևում էր ու փնչացնում, պարանները ճռճում էին, բայց շուրջը առաջվա նման խաղաղ էր: Ապա վերև քաշեցին

գործիքներն ու սննդամթերքի պարկերը... Եվ այստեղ ամպրոպ պայթեց: Լսվեց թևերի ուժգին շաչյուն: Ժայռերի կատարներին դիպավ կարմիր լույսը: Դա Սմոգն էր:

Նրանք հագիվ էին հասցրել սուզվել թունելը և ներս քաշել իրենց պարկերը, երբ Սարի թիկունքից դուրս թռավ վիշապը: Նրա թևերը ահավոր շաչյուն էին արձակում, որ նման էր քամու ոռնոցի, կրակը լիզում էր Սարի լանջը: Հրե շունչը այրեց դռան առջևի խոտը, ներս թափանցեց կիսաբաց դռնից և վառեց թզուկներին: Դողդոջուն բոցը նետվեց դեպի վեր, ժայռերի սև ստվերները պար եկան: Հետո նորից խավար իջավ: Ներքևում պոնիները խրխնջացին, պարանները կտրեցին և խուճապահար փախան: Վիշապն ընկավ նրանց ետևից:

— Էլ չենք տեսնի...— ասաց Տորինը: — Եթե Սմոգը մեկին նկատեց, էլ նրանից փրկություն չկա: Էստեղ էլ մեզ վիճակված է մնալ, եթե, իհարկե, ձեզ մոտ ցանկություն չառաջանա Սմոգի աչքի առաջ բաց տարածության միջով գետը վերադառնալ:

Այդպիսի հեռանկարը ոչ ոքի էլ չէր շոյում: Նրանք մուտքից հեռու սողացին և այդպես պառկեցին, մինչև կիսաբաց դռնից երևաց աղոտ լուսաբացը: Նրանք ամբողջ մարմնով դողում էին, չնայած ներսում տաք էր և հեղձուկ: Գիշերվա ընթացքում նրանք մի քանի անգամ լսեցին Սարի շուրջը պտտվող վիշապի մեկ ուժեղացող, մեկ թուլացող մռնչոցը:

Տեսնելով պոնիներին և ճամբարի հետքերը, վիշապն, իհարկե, գլխի ընկավ, որ գետից ու լճից ինչ-որ մեկը եկել է, և հիմա իրար ետևից սանրում էր Սարի լանջը այն կողմից, որտեղ կանգնած էին պոնիները: Բայց քարե դուռը նա չէր նկատել, իսկ փոքրիկ դարատափը թույլ չէր տալիս, որ այրող կրակը թունել հասնի: Վիշապն ապարդյուն խուզարկում էր Սարը, լուսադեմին, վերջապես, նրա բարկությունն իջավ, ու նա ուղղվեց դեպի իր ոսկե մահիճը՝ քնելու և ուժ հավաքելու: Կողոպուտը նա չէր մոռացել և չէր ների, թեկուզ անցներ հազար տարի, երբ ժամանակը իրեն՝ վիշապին, ածխացած քար կդարձներ, բայց կարող էր սպասել: Անշտապ նա սողաց իր որջը և աչքերը փակեց:

Լույսը բացվելու հետ թզուկների վախը մի քիչ անցավ: Նրանք հասկացան, որ նման կարգի իրադարձություններն անխուսափելի են, երբ գործ ունես գանձերի այդպիսի ահեղ ու խարդախ պահապանի հետ, և առայժմ իրենց մտադրությունից հրաժարվելը վաղ է: Միևնույն է, իրենք, ինչպես արդարացիորեն ասաց Տորինը, այստեղից գնացողը չեն: Իրենց պոնիներնը կորել էին կամ վիշապը կերել էր, անհրաժեշտ էր սպասել, մինչև Սմոգը թուլացներ իր զգոնությունը, իսկ իրենք սիրտ անեին ետդարձի ճանապարհը ոտքով անցնելու: Դեռ լավ էր, որ մթերքի մի մասը փրկեցին ու կարող էին որոշ ժամանակ դիմանալ:

Նրանք երկար քննարկում էին, թե ինչ անեն, բայց Սմոգից ազատվելու ոչ մի հնար չկարողացան գտնել: Հոբիտը շատ էր ուզում հանդիմանել թզուկներին այն բանի համար, որ հենց սկզբից այդ խնդիրը նրանց

մտահղացման ամենաթույլ տեղն էր: Բայց այդ ժամանակ, ինչպես հատուկ է անելանելի դրության մեջ ընկածներին, թզուկներն սկսեցին փնթփնթալ ու կշտամբել հոբիտին այն բանի համար, ինչն սկզբում իրենց այնքան դուր էր եկել, այսինքն՝ որ նա վերցրել է թասը և չափազանց վաղ զայրացրել Սմոգին:

— Իսկ գողին ուրիշ ի՞նչ կհարմայեք անել,— զայրացած վրա պրծավ Բիլբոն:— Ինձ վարձել են ոչ թե վիշապներ սպանելու, դա ռազմիկների գործն է, այլ գանձ գողանալու համար: Ես գործն սկսեցի այնպես, ինչպես կարող էի: Իսկ դուք, ինչ է, սպասում էիք, որ ես շալակած կբերեմ Տրորի ողջ հարստությունը: Եթե մեկը պետք է բողոքի, դա ես եմ: Դուք պետք է հինգ հարյուր գող վերցնեիք ձեզ հետ, ոչ թե մեկ: Ձեր պապն, իհարկե, ամեն տեսակ գովասանքի արժանի է, բայց ձեր մտքով չանցավ ինձ ծանոթացնել նրա հարստության չափսերին: Այդ ամբողջ գանձը վերև հանելու համար ինձ հարկավոր կլինեի մի քանի հարյուր տարի, այն էլ եթե ես հիսուն անգամ ավելի մեծ լինեի, իսկ Սմոգը՝ գառնուկի պես պատլիկ:

Դրանից հետո թզուկները ներողություն խնդրեցին Բիլբոյից:

— Ի՞նչ եք առաջարկում, միստր Բեգինս,— հարգալից տեղեկացավ Տորինը:

— Եթե հարցնում եք այն մասին, թե ինչպես դուրս բերել գանձերը, ապա առայժմ չեմ պատկերացնում: Անկասկած դա կախված է նրանից, թե որքանով հաջող ընթացք կստանան մեր գործերը և կհաջողվի՞ արդյոք ազատվել Սմոգից: Առհասարակ վիշապներից ազատվելը իմ մասնագիտությունը չէ, բայց ես կաշխատեմ ինձնից կախված ամեն ինչ անել: Անձամբ ես ոչ մի բանի վրա հույս չունեմ և կուզենայի միայն ողջ ու առողջ տուն հասնել:

— Դե, տուն հասնելուն դեռ շատ ժամանակ կա: Ի՞նչ անենք այսօր, հիմա:

— Լավ, եթե ուզում եք իմանալ իմ կարծիքը, ապա մենք պետք է նստած մնանք այնտեղ, որտեղ որ նստած ենք: Ցերեկը, երևի, կկարողանանք մաքուր օդ դուրս գալ: Իսկ շուտով, հնարավոր է, սիրտ անենք, մեկնումեկին ուղարկենք ներքև՝ պահեստ, մեր պաշարները համալրելու համար: Բայց հիմա առաջարկում եմ հետևյալը: Ես մատանի ունեմ: Հենց այսօր, ցերեկը, երբ Սմոգը ամենայն հավանականությամբ կքնի, ես կմտնեմ այնտեղ: Գուցե մի ինչ-որ նոր բան տեղի ունենա: «Ամեն վիշապ իր թույլ տեղն ունի»,— ասում էր իմ հայրը, բայց մտածում եմ, որ նա հիմնվում էր ոչ անձնական փորձի վրա:

Թզուկները, ինքնըստինքայն հասկանալի է, ոգևությամբ ընդունեցին նրա առաջարկը: Նրանք արդեն շատ էին հարգում փոքրիկ Բիլբոյին: Կեսօրին նա պատրաստ էր երկորդ անգամ մտնել վիշապի որջը: Եթե նա ավելի շատ բան իմանար վիշապների և նրանց խարդախությունների

մասին, երևի այդքան իր վրա վստահ չլինեք և չմտածեք, թե Սմոգը քնած կլինի:

Դրսում արևը փայլում էր, բայց թունելում մութ էր, ինչպես գիշերը: Կիսաբաց դռնից ընկնող լույսի շերջը շուտով վերացավ: Այնքան անաղմուկ էին Բիլբոյի քայլերը, որ ավելի անձայն կարող էր լինել միայն ծխի քուլան թույլ քամու բերանին: Թունելի հեռավոր ծայրը հասնելով՝ նա արդեն շնորհավորում էր իրեն: Այնտեղից լույսը հազիվ էր երևում:

«Ծեր Սմոգը հոնգնել ու քնել է,— մտածեց Բիլբոն:— Նա ինձ տեսնել չի կարող, լսել՝ նույնպես: Մի՛ վհատվիր, Բիլբո»: Նա չգիտեր կամ էլ մոռացել էր վիշապների սուր հոտառության մասին: Բացի դրանից, նրանք բավական ոչ ձեռնտու մի յուրահատկություն ունեն`քնում են կիսաբաց աչքերով, եթե որևէ բան նրանց մեջ կասկած է հարուցում: Բիլբոն քարայրից ներս նայեց: Սմոգը, թվում է, պինդ քնած էր և պառկած էր մեռածի պես՝ մթության մեջ, իր կրակը հանգրած, ռունգներից նույնիսկ ծուխ դուրս չէր գալիս: Բիլբոն, այն է, ուզում էր ոտքը իջեցնել հատակին, երբ հանկարծ վիշապի ձախ աչքի տակ կոպի տակից բարալիկ, կարմրավուն մի ճառագայթ փայլեց: Սմոգը ձևացնում էր, թե քնած է: Նա հետևում էր մուտքին: Բիլբոն ընկրկեց և մի անգամ էլ փառք տվեց ճակատագրին մատանու համար: Եւ այստեղ Սմոգը խոսեց.

— Ահա, գողը բարեհաճեց... Ես քո հոտը գգում եմ, լսում եմ քո շնչառությունը: Շնորհ արա, խնդրեմ, էլի վերցրու, այստեղ ամեն ինչ առատ է, մի՛ ամաչիր...

Սակայն Բիլբոն այդքան էլ տգետ չէր վիշապների հարցում: Եթե Սմոգը մտածում էր հրապուրելով ներս քաշել, ապա սխալվում էր իր հաշիվներում:

— Շնորհակալություն, ով Սմոգ Սարսափելի,— պատասխանեց նա:— Ես նվերների համար չեմ եկել: Ես ուղղակի ուզում էի տեսնել՝ իրո՞ք այնքան վիթխարի ու ահավոր ես դու, որքան պատմում են: Ես հեքիաթներիս այնքան էլ չեմ հավատում:

— Եվ ինչպիսի՞ն եմ քո կարծիքով...— հարցրեց վիշապը ականա շոյված, չնայած Բիլբոյի ոչ մի խոսքին էլ չհավատաց:

— Իրականում երգերն ու հեքիաթները հեռու են իսկությունից, ով Սմոգը, Կործանում արարող,— պատասխանեց Բիլբոն:

— Որպես գող ու ստախոս՝ դու շատ դաստիարակված ես,— նկատեց վիշապը:— Դու, պարզվում է, գիտես իմ անունը, բայց ինձ քո հոտն ինչ-որ անձանոթ է: Ո՞վ ես դու և որտեղի՞ց:

— Ես Բլրատակից եմ. իմ ճանապարհն անցել է լեռների վրայով, լեռների միջով և օդով: Ես նա եմ, ում ոչ ոք չի տեսնում:

— Էդ մեկը ինքս էլ եմ տեսնում,— պատասխանեց Սմոգը:— Բայց հազիվ թե դա քո իսկական անունն է:

— Ես Հանելուկներ հանողն եմ ու Սարդոստայններ Ջարդողը, ես Խայթող Ճանճն եմ, ինձ ընտրել են, որ թիվը բախտավոր լինի:

— Հրաշալի մականուններ են,— փնչացրեց վիշապը:— Բայց բախտավոր թիվը միշտ չէ, որ շահում է:

— Ես նա եմ, ով կենդանի-կենդանի թաղում է բարեկամներին, ջրասույգ անում և կենդանի հանում ջրից: Ես նա եմ, ով անվնաս է դուրս գալիս խարույկից, ջրից, գետնի տակից:

— Ինչ-որ դժվար է հավատալը,— քմծիծաղեց վիշապը:

— Ես արջերի բարեկամն եմ և արծիվների հյուրը: Մատանի գտնողը, Երջանկություն բերողը, Տակառների հեծյալը,— շարունակեց Բիլբոն, շատ գոհ իր հանելուկներից:

— Դա արդեն լավ է,— խրախուսեց Սմոգը:— Բայց շատ մի՛ հրապուրվիր: Սանձիր քո երևակայությունը:

Վիշապների հետ հենց այդպես պետք է խոսես, երբ չես ուզում իսկական անունդ բացահայտել (որ չափազանց խելամիտ է) և չես ուզում բարկացնել նրանց ուղղակի մերժումով (որ նույնպես չափազանց խելամիտ է): Ոչ մի վիշապ չի դիմանա հանելուկներով խոսելու և դրանց լուծելու վրա ժամանակ կորցնելու գայթակղությանը: Սմոգն ամեն ինչ չէ, որ հասկացավ (ի տարբերություն ձեզ, չէ՞ որ ձեզ հայտնի են Բիլբոյի բոլոր արկածները), բայց ինչ-որ բան գլխի ընկավ և գոհ ծիծաղեց իր նողկալի մտքում:

«Այդպես էլ կարծում էի,— մտածեց նա:— Պարզ է, լճի մարդիկ ինչ-որ զարշելի բան են մտադրվել: Տակառների ողորմելի վաճառականներ, թող ես մողես դառնամ... Ես մի ամբողջ հավիտենականություն դրանց կողմերը չեմ նայել, բայց հիմա դրանցով կզբաղվե՛մ»:

— Հիանալի է, Տակառների հեծյալ,— ասաց նա բարձրաձայն:— Գուցե քո պոնի՞ն էր Տակառ կոչվում: Նա իսկապես բավական յուղալի էր: Երևում է դու միայն օդով ու ոտքով չես եկել մինչև այստեղ: Պետք է զեկուցեմ քեզ, անցած գիշեր ես վեց պոնի կերա և շուտով կբռնեմ ու կուտեմ մնացածներին: Ի հատուցումս համեղ ընթրիքի, ես քեզ մի օգտակար խորհուրդ կտամ. թզուկների հետ գործ մի՛ ունեցիր, քեզ համար դա ավելի լավ կլինի:

— Թզուկների հե՞տ,— հարցրեց Բիլբոն զարմացած ձևանալով:

— Ձևանալ պետք չէ,— ընդհատեց Սմոգը:— Ով՞ ով, բայց ես հո գիտեմ թզուկների համն ու հոտը: Չլինի՞ կարծում ես, թե ես կարող եմ ուտել թզուկի տակի պոնին և հոտը չզգալ... Քո վերջը վատ կլինի, Տակառով գող, եթե շարունակես թզուկների հետ գործ ունենալ: Այդպես էլ նրանց հաղորդիր իմ անունից:

Նա Բիւրոյից թաքցրեց, որ մի հոտ միայն, հոբիտի հոտը չճանաչեց, քանի որ առաջներում երբեք Նրա հետ չէր շփվել և հիմա բավականին մտահոգ էր:

— Հը, շա՛տ փող ստացար երեկ իմ թասի համար,— շարունակեց վիշապը:— Դե ազնվորեն ասա: Ո՞նց թե, բոլորովին ոչի՞նչ: Նրանց շատ է նման: Նրանք, ուրեմն, թաքնվում են քո թիկունքում, իսկ դու Նրանց փոխարեն տանջվիր, գողացիր ինձնից, ինչ որ աչքդ կկտրի, այո՞: Եվ ինչո՞ւ ես կաշվիցդ դուրս գալիս: Քեզ պատկառելի գումա՞ր են խոստացել: Մտքովդ էլ չանցնի, դեռ ուրախ եղիր, թե գլուխդ պրծացնես:

Բիւրն շատ վատ գգաց: Ամեն անգամ, երբ վիշապի աչքի ճառագայթը, որ շարունակ շրջում էր քարայրում, ընկնում էր Նրա վրա, սարսափից ցնցվում էր, ու Նրան մի պահ անբացատրելի ցանկություն էր տիրում դուրս թռչել քարայրի մեջտեղը, հանել մատանին և ամեն ինչ խոստովանել Սմոգին: Մի խոսքով, վիշապի հմայքներն սկսել էին ազդել Նրա վրա: Իր ողջ արիությունը հավաքելով՝ Բիւրն պատասխանեց.

— Քեզ ոչ բոլորն է հայտնի, ով Հզորագույն Սմոգ, միայն ոսկին չէ, որ մեզ բերել է այստեղ:

— Հա՛-հա՛-հա՛,— ծիծաղեց Սմոգը: — Ահա և բերանիցդ թոցրիր: Մեզ: Միանգամից ասա՝ «մենք տասնչորսն ենք», միստր Բախտավոր Թիվ: Ուրախ եմ լսելու, որ դուք ուրիշ գործեր էլ ունեք մեր կողմերում: Այդ դեպքում, գուցե դեռ ամեն ինչ կորած չէ ձեզ համար: Իսկ քո մտքով չի՞ անցել, որ ոսկին գողանալը՝ կգողանայիր, քիչ-քիչ, ասենք թե էսպես մի հարյուր կամ ավելի տարվա ընթացքում, բայց հեռու կտանեի՞ր: Ինչի՞դ է պետք գանձը Սարի վրա կամ անտառում: Ո՞վ երկնային ուժեր... Ոչ մի անգամ չե՞ս խորհել՝ շահութաբե՞ր է արդյոք այդ գործը: Տասնչորսերորդ մասը... ինչքա՞ն են խոստացել քեզ: Իսկ ինչպե՞ս տեղ կհասցնես: Իսկ տեղափոխելու արժե՞քը: Իսկ ինչքա՞ն կգնա զինված պահպանության ու հարկերի վրա:

Եվ Սմոգը բարձր հռիռաց: Նա չար ու ստոր հոգի ուներ. նա գիտեր, որ իր ենթադրությունները ճշմարտությունից հեռու չեն: Բայց կարծում էր, թե այդ բոլորը լճի մարդկանց հնարածներն են, և ավարի մեծ մասը կմնա Լճաշեն քաղաքում, որն իր երիտասարդության տարիներին կոչվում էր Եսգարոտ:

Դժվար է հավատալ, բայց խեղճ Բիւրն իսկապես ապշած էր: Մինչև հիմա Նրա մտադրություններն ու ուժերը կենտրոնացված էին այն բանի վրա, թե ինչպես հասնի մինչև Սարը և գտնի մուտքը: Նա ոչ մի անգամ չէր մտածել այն մասին, թե ինչպես գանձերը Սարից դուրս հանի, առավել ևս՝ իր բաժինը ինչպես հասցնի Բեզ-Էնդ՝ Բլրատակ: Այժմ Նրա մեջ անախորժ կասկած առաջացավ. իսկ եթե թզուկները գիտեն այդ կարևոր հանգամանքի մասին և թաքուն ծիծաղում են իր վրա՞: Ահա թե վիշապի

խոսքն ինչ ներգործություն է ունենում անֆորձների վրա: Իհարկե, Բիլբոն պետք է զգուշանար, բայց ախր շատ բռնակալն էր այդ Սմոգը:

— Ահա թե քեզ ինչ կասեմ,— Բիլբոն փորձեց չհանձնվել վիշապին և հավատարիմ մնալ իր բարեկամներին,— ոսկու մասին մենք հիշեցինք ոչ իսկույն: Մենք այստեղ ենք ժամանել լեռների վրայով ու տակով, ջրով ու օդով, եկել ենք վրեժ լուծելու համար: Ով անչափելի հարուստ Սմոգ, դու հո չես կարող չգիտակցել, որ քո հարստությունը քեզ համար շատ թշնամիներ է ստեղծել:

Այստեղ Սմոգը նորից քրքջաց... Այդ սպանիչ քրքիջից Բիլբոն տապալվեց գետնին, իսկ վերևում թզուկները սեղմվեցին իրար, որոշելով, որ հոբիտին անժամանակ ահավոր վախճան վիճակվեց:

— Վրե՛ժ,— ֆռթացրեց Սմոգը, և նրա աչքերը վառվեցին վառ կրակով, կայծակի պես քարայրը հատակից մինչև առաստաղ լուսավորելով:— Վրե՛ժ: Սարատակի թագավորը վաղուց է մեռել, իսկ ո՞ւր են կորել նրա ազգականները: Չի երևում, թե նրանք ինձ հետ հաշիվները մաքրելու համար կռվի կբռնվեն: Դեյլի տիրակալ Գիրիոնը մահացել է, նրա ժողովրդին են կերել եմ, ինչպես գայլը ոչխարներին, իսկ ո՞ւր են նրա որդիների որդիները: Նրանք իսկի մոտիկ գալ չեն համարձակվի: Ես սպասում եմ, երբ ուզում եմ. ոչ ոք չի հանդգնում դիմադրել: Անցյալի բոլոր ռազմիկներին են ոչնչացրի, իսկ այժմ այդպիսիները չեն ծնվում: Այն ժամանակ ես դեռ ջահել էի ու թույլ, հիմա ծեր եմ և հզոր, հզոր...— հրճվանքով չարախնդաց վիշապը:— Իմ զրահը տասն անգամ ամուր է վահաններից, ատամներս՝ թրեր են, ճանկերս՝ նիզակներ, պոչիս հարվածը նման է կայծակի հարվածի, թևերս ինձ թռցնում են փոթորիկի արագությամբ, իմ շունչը մահ է:

— Ես լսել եմ,— ծվաց սարսափած Բիլբոն,— որ վիշապները ներքևից են խոցելի, հատկապես... հատկապես կրծքի շրջանում: Բայց այդքան հիմնավորապես պաշտպանված անձնավորության մոտ ամեն ինչ, իհարկե, մտածված է:

— Քո տեղեկությունները հնացել են, Խավարի գող, կտրեց Սմոգը:— Վերևից և ներքևից ես ծածկված եմ երկաթե թեփուկներով և թանկարժեք ամուր քարերից պատրաստված զրահով: Ոչ մի դաշույն ինձ չի խոցի:

— Ես ինքս էլ կարող էի դա գլխի ընկնել,— պատասխանեց Բիլբոն:— Իսկապես Սմոգ Անխոցելուն հավասարը չի գտնվի: Ուրիշ էլ ո՞վ ունի ադամանդե այդպիսի հոյակապ բաճկոնակ:

— Այո, այդպիսի անթև բաճկոնակն իսկապես էլ շատ հազվագյուտ է,— հաստատեց Սմոգը, որքան էլ դա անհեթեթ լինի՝ բավական գոհ: Նա որտեղի՞ց իմանար, որ հոբիտն արդեն անցյալ անգամ էր հասցրել նկատել նրա հազվագյուտ հանդերձը և այժմ երագում էր այն մոտիկից զննել, դրա համար իր պատճառներն ունենալով:

Վիշապը շրջվեց մեջքի վրա:

— Նայի՛ր,— հրամայեց նա:— Ի՞նչ կասես:

— Տևցող է: Հիանալի է: Անթերի: Շլացուցիչ,— բացականչեց Բիլբոն, միաժամանակ մտածելով՝ «Ծեր դմբո: Ախր ձախից քո կրծքի վրա անցք կա, տկլոր մարմինդ դուրս է ցցվել, ինչպես խխունջը խեցու միջից»:

Տեսնելով այն, ինչ ուզում էր, միստր Բեգինսը որոշեց քանի շուտ է ողջ ողջ գլուխն ազատել:

— Դե, այլևս չգբաղեցնեմ Ձերդ Հոյակապությանը և չգրկեմ ձեզ անհրաժեշտ հանգստից,— ասաց նա:— Պոնիներն այնքան էլ հեշտ չեն բռնվում: Գողերը՝ նույնպես,— վերջում կծեց նա՝ գլխակորույս դուրս փախչելով թունելից:

Հոբիտն իզուր չգսպեց իր ձեռն առնելու ցանկությունը. որքան էլ արագ էր վազում նա, միևնույն է, վիշապը հասցրեց իր սարսափելի դունչը խցկել անցքից ներս և նրա ետևից կրակի շիթ բաց թողնել: Բարեբախտաբար գլուխն ամբողջությամբ չմտավ անցքի մեջ, բայց կրակն ու ռունգներից դուրս եկած գոլորշին վառեցին Բիլբոյին: Այնպես որ նա սուլում էր վախից ու ցավից, իսկը կույրի նման սայթաքելով: Սմոգի հետ զրույցն այդքան խելացիորեն վարելու համար Բիլբոն ինքն իրենից այնքան գոհ էր, որ տարվեց դրանով ու վերջում սխալ թույլ տվեց: Դա սթափեցրեց նրան: «Խելացի բան չէ կենդանի վիշապի վրա ծիծաղելը»,— ասաց ինքն իրենց, և հետագայում այդ խոսքը դարձավ նրա սիրելի ասացվածքը, իսկ հետո նաև հայտնի առած: «Արկածի վերջը դեռ շատ հեռու է»,— ավելացրեց նա: Եվ դա նույնպես զուտ ճշմարտություն էր:

Օրն արդեն մթնում էր, երբ, վերջապես, հոբիտը թունելից դուրս եկավ և «շեմքին» գիտակցությունը կորցրեց: Թզուկները նրան ուշքի բերեցին, այրվածքներին դեղ քսեցին, որ պահում էր Տորինը: Բայց դեռ երկար ժամանակ նրա ծոծրակի ու կրունկների վրա բուրդը չէր աճում: Մինչև Բիլբոն ուշքի կգար, բարեկամներն ամեն կերպ աշխատում էին ոգեպնդել նրան: Նրանք տեսչում էին լսել Սմոգի պատմությունը հատկապես այն մասին, թե ինչու նա այդպես ահավոր աղմուկ բաճրացրեց, և ինչպես է Բիլբոն ողջ մնացել:

Բայց հոբիտը նյարդայնացած էր ու մտահոգ և նրանից քիչ բան հնարավոր եղավ դուրս քաշել: Մինչև նրանք խոսում էին, մոտիկ ժայռին ամբողջ ժամանակ նստած էր ծեր կեռնեխը և, գլուխը կողքի թեքած, ականջ էր դնում: Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան վատ էր Բիլբոյի տրամադրությունը, որ նա ճանկեց քարն ու շարտեց կեռնեխի վրա: Սա թռավ տեղից, բայց իսկույն էլ վերադարձավ:

— Չգվելի թռչուն է,— ջղայնացած գոռաց Բիլբոն:— Նա ինձ դուր չի գալիս, իմ կարծիքով, մեզ ականջ է դնում:

— Հանգիստ թողեք նրան,— սաստեց Տորինը:— Կեռնեխները օրինավոր և բարեհամբույր թռչուններ են: Այս կեռնեխը շատ ծեր է, գուցե նա վերջինն է կեռնեխների հնագույն ցեղից, որ ապրել են այս վայրերում և

կուտ են կերել իմ հոր ու պապի ձեռքից: Նրանց ցեղը հավերժական էր ու կախարդական: Իսկ գուցե սա էլ է նրանցից, որ ապրել են սրանից մի երկու հարյուր տարի առաջ: Դեյլի բնակիչները հասկանում էին նրանց լեզուն և որպես սուրհանդակ ուղարկում էին Լճաշեն քաղաք և ուրիշ տեղեր:

— Դե, այդ դեպքում իմ մոտ որոշ նորություններ կգտնվեն Լճաշեն քաղաքի համար,— մռայլ նկատեց Բիլբոն,— միայն հազիվ թե այնտեղ մեկը լինի, որ հասկանա կեռնեխների լեզուն:

— Ինչպե՞ս: Ի՞նչ է պատահել,— մեկը մյուսին ընդհատելով՝ գոռացին թզուկները:— Դե պատմիր...

Եվ Բիլբոն պատմեց վիշապի հետ ունեցած խոսակցությունը, խոստովանեց, որ իրեն մի սարսափելի միտք է տանջում՝ վիշապն իր հանելուկներից եզրակացություն արեց:

— Ինձ թվում է, նա գլխի ընկավ, որ մենք այստեղ ենք ընկել Լճաշեն քաղաքի միջով և նրա բնակիչներից օգնություն ստացել: Այնպիսի նախազգացում ունեմ, որ հաջորդ գրոհը նա ձեռնարկելու է այդ ուղղությամբ: Ո՞վ ինձ դրդեց, որ դուրս տամ տակառներով լողալու մասին:

— Ոչինչ, ոչինչ... Եղածն էլ ետ չես դարձնի: Համ էլ ես լսել եմ, որ վիշապի հետ խոսելիս չես կարող սխալ թույլ չտալ, դժվար է,— հուսադրող տոնով ասաց Բալինը, որը շատ էր ուզում մխիթարել հոբիտին:— Եթե ուզում ես իմանալ, ապա իմ կարծիքով դու այդ վիճակից լավ ես դուրս եկել՝ պարզել ես շատ օգտակար բաներ և կենդանի մնացել, իսկ դրանով շատ քչերը կարող են պարծենալ՝ ում որ վիճակվել է վիշապի հետ մի քանի խոսք փոխանակել: Հավանական է, մեզ դեռ շատ պետք կգա ծեր մողեսի ադամանդե անթև բաճկոնակի բացվածքը:

Նրա խոսքերը զրույցին նոր ուղղություն տվեցին և բոլորը սկսեցին քննարկել, թե ինչպես են սպանել վիշապներին կյանքում և հեքիաթներում, տարբեր տեսակի խոցող ու կտրող հարվածներ, հարվածներ ներքևից, կողքից, վերևից, զանազան ձևեր ու հնարաքներ և ռազմական խորամանկություններ:

Խոսակցության ընթացքում Բիլբոն նայում էր երկարող ստվերներին, և նրա թախիժն ու վատ նախազգացումները ավելի ու ավելի էին ուժեղանում:

Վերջապես նա ընդհատեց թզուկներին.

— Ես համոզված եմ, որ այստեղ մնալն այնքան էլ անվտանգ չէ, համ էլ այստեղ նստելն ինչ միտք ունի: Թարմ խոտը վիշապը վառել է, արդեն գիշեր է, ցուրտ: Կարող եմ երդվել, որ վիշապն էլի կհարձակվի մեր թաքստոցի վրա: Սմոգը հիմա գիտի, թե ես ինչպես եմ մտել որջը և, վստահ եղեք, գլխի կընկնի, թե թունելն ուր է տանում: Նա լանջը փշուր-փշուր կանի, որպեսզի մեր մուտքի ճանապարհը փակի, իսկ եթե դրա հետ միաժամանակ ճգմի մեզ, ինչ կա որ, ավելի կուրախանա:

— Ի՛նչ մռայլ մտքեր են, միստր Բեգինս,— ասաց Տորինը:— Ինչո՞ւ Սմոգը թունելի մուտքն իր կողմից չի փակել, եթե չի ուզում մեզ ներս թողնել: Եթե փակեր, կլսեինք:

— Չգիտեմ, չգիտեմ: Երևի սկզբում ուզում էր երկրորդ անգամ ինձ այնտեղ քաշել, իսկ հիմա հետաձգել է գիշերվային որսից հետո կամ էլ չի ցանկանում իր ննջարանը կեղտոտել, մի՛ վիճեք, խնդրում եմ: Ամեն րոպե Սմոգը կարող է դուրս թռչել: Մեր միակ փրկությունն է՝ ավելի խոր մտնել թունել և դուռը փակել:

Նա այնքան կրակոտ էր խոսում, որ թզուկները հնազանդվեցին, ներս մտան, բայց հապաղեցին դուռը ծածկել: Դա նրանց անմտություն էր թվում. ով գիտե, կհաջողվի՞ դուռը որից բացել ներսից, իսկ բանտարկյած մնալ մի շինությունում, որտեղից մի ելք կար միայն՝ վիշապի որջի միջոց, նրանք շատ էլ չէին ուզում: Առավել ևս, որ և՛ դրսում, և՛ ներսում ամեն ինչ խաղաղ էր: Նրանք երկար ժամանակ նստել էին կիսաբաց դռնից ոչ հեռու և շարունակում էին գրուցել: Խոսք բացվեց թզուկների վերաբերյալ վիշապի կեղտոտ ակնարկների մասին: Երանի Բիլբոն դրանք լսած չլիներ: Ինչպե՞ս էր նա ցանկանում հիմա թզուկներին հավատալ, երբ նրանք երդվում էին, իբրև թե իսկապես չեն մտածել այն ժամանակի մասին, երբ վիշապից գանձերն արդեն խլած կլինեն:

— Մենք նախօրոք գիտեինք, որ մեր փորձը մեծ վտանգի հետ է կապված,— բացատրեց Տորինը,— հիմա էլ գիտենք: Բայց ես համոզված եմ, որ դեռ բավականաչափ ժամանակ կունենանք խորհելու, թե ինչպես վարվենք այսուհետև, այն բանից հետո, երբ մենք կտիրանանք հարստությանը: Ինչ վերաբերում է ձեր բաժնին, միստր Բեգինս, ապա, հավատացնում եմ, անսահման երախտապարտ ենք ձեզ, և դուք կվերցնեք, ինչ որ կուզեք, հենց որ բաժանելու բան լինի: Ես հասկանում եմ ձեր անհանգստությունը ոսկին տեղ հասցնելու կապակցությամբ, համաձայն եմ, որ բարդ խնդիր է, քանի որ ժամանակի ընթացքում այս վայրերը վտանգագերծ չեն դարձել, այլ ավելի շուտ հակառակը, բայց մենք անպատճառ կօգնենք և մեզ վրա կվերցնեք ոսկին տեղափոխելու ծախսերի մի մասը: Ուզում եք հավատացեք, ուզում եք մի՛ հավատացեք...

Այստեղ խոսքը շուռ եկավ բուն գանձի և առանձին իրերի վրա, որ մնացել էին Տորինի և Բալինի հիշողության մեջ: Անվնաս պահապանվե՞լ են արդյոք վաղուց արդեն մահացած Բլեդորտին մեծ թագավորի բանակների համար պատրաստած նիզակները: Երեք անգամ ջրդեղված ծայրերով և ոսկեգարդ կոթերով նիզակներն այդպես էլ չհասցրին թագավորին հանձնել և վարձն ստանալ: Վահաններ, որ կռել էին վաղուց զոհված ռազմիկների համար: Տրորի ոսկե մեծ գավաթը, երկու բռնակներով, թռչունների և ծաղիկների դրվագված ու փորագրված պատկերներով, թռչունների աչիկները և ծաղիկների թերթիկները թանկարժեք քարերից էին: Օղագրահներ՝ ոսկեզոծ ու արծաթապատ, անխոցելի: Դեյլի Տիրակալի՝ Գիրիոնի մանյակը հինգ հարյուր վառ կանաչ զմրուխտներով, որը նա թզուկներին էր տվել որպես վարձ՝ ավագ որդու

համար նրանց պատրաստած օղագրահի դիմաց. երբեք և ոչ ոք մաքուր արծաթե մանր օղակներից պատրաստած, իր ամրությամբ երեք անգամ պողպատն գերազանցող նման օղագրահ չի կրել: Բայց ամենասքանչելին հսկայական ադամանդն էր, որ թզուկներն ինչ-ինչ ժամանակներում գտել էին Սարատակում և անվանել էին Սարի Սիրտ, Տրեյնի Արկենստոն:

— Արկենստոն, Արկենստոն...— մտախոհ կրկնում էր Տորինը՝ կզակը ծնկներին հենած:— Ասես հազարանիստ գունդ լիներ: Օջախի լույսի տակ նա փայլում էր, ինչպես ջուրը արևից, ինչպես ձյունը աստղերի փայլից, ինչպես ցողը լուսնյակ գիշերին:

Բիլբոն այդ բոլոր խոսակցությունները մի ականջով էր լսում: Գանձերի կախարդական ձգող ուժն այլևս նրան չէր գրավում: Նա բոլորից ավելի մոտիկ էր նստել դռանը և որսում էր դրսից ու թունելի խորքից հասնող ամենաթույլ հնչյունները:

Քանի մուրճը խտանում էր, այնքան Բիլբոն նյարդայնանում էր:

— Փակե՛ք դուռը,— աղաչեց նա:— Շարունակաչքիս վիշապ է երևում, վախենում եմ: Լռությունն ինձ ավելի է սարսափեցնում, քան երեկվա դրոյոյունը: Փակեք դուռը, քանի ուշ չէ:

Հոբիտի ձայնի մեջ ինչ-որ բան կար, որը թզուկներին ստիպեց կատարել նրա խնդրանքը: Տորինը անուրջներից սթափվելով վեր կացավ և ոտքով մի կողմ հրեց դռան առջև դրված քարը, որ չէր թողնում դուռը փակվի: Ինչ-որ բան շրիկաց: Դռան բանալու անցքն անհետացավ: Նրանք փակվեցին Սարի մեջ... ընդմիջտ:

Եվ առավել քան ժամանակին... Հազիվ էին նրանք դռնից մի քիչ հեռացել, երբ ահավոր հարված իջավ Սարի լանջին, ասես հարվածեցին տիտանների ձեռքերում տարուբերվող վիթխարի կաղնե բաբաններով: Ժայռը գվվաց, թունելի պատերը ճաքճքեցին, քարերը թափվեցին թզուկների գլխին: Թե ինչ տեղի կունենար, եթե դուռը չփակեին, վախենում եմ նույնիսկ երևակայել: Նրանք նետվեցին թունելի խորքը, ուրախանալով, որ առայժմ կենդանի են, քանի դեռ թիկունքում լսում են մռնչոց ու թնոյուն: Կատաղությունից վիշապը ցրիվ էր տալիս ժայռերը, իր հսկայական պոչի հարվածներով փշրում էր քարերը, դարատափը, խանձված խոտը, որի վրա նստած էր կեռնեխը, խիտունջածածկ պատերը, նեղ ելուստը. բոլորը փոշի դարձրեց, հովտի վրա քարաբեկորների հեղեղ տեղաց:

Սմոգն ըստ երևույթին ծածուկ դուրս էր եկել որջից, սուսուփուս օդ բարձրացել և ապա դանդաղ ու ծանր, ինչպես մի հրեշավոր ագռավ, թռչք կատարել սարի շուրջը, որոշելով արևմտյան կողմում հանկարծակիի բերել որևէ մեկին կամ որևէ բան և գտնել անցքը, որտեղով անցել էր գողը: Երբ նա ոչ ոքի չգտավ և անցք չտեսավ այնտեղ, ուր ենթադրում էր, ապա, անզուսպ կատաղությամբ բռնկված, սկսեց խորտակել ատելի լանջը:

Այդպիսով իր չարությունը թափելով՝ Սմոգը որոշ չափով խաղաղվեց ու վճռեց, որ այդ կողմից իրեն այլևս չէին անհանգստացնի: Այժմ մտում էր իրականացնել մեկ վրեժ ևս:

— Տակառների հեծյալ,— փնջացրեց նա:— Ջրի վրայով է ժամանել, նշանակում է գետով է լողացել: Նրա հոտն ինձ ծանոթ չէ, բայց եթե նույնիսկ Լճաշենից էլ չէ, ապա, միևնույն է, առանց նրանց օգնության յուր չէր գնա: Նրանք իմ թափը կտեսնեն և միտքները կպահեն, թե ով է Սարատակի իսկական թագավորը:

Վիշապը, կրակի ու ծխի մեջ կորած, երկինք խոյացավ և սուրաց հարավ, դեպի Արագահոս գետը:

ՔԱՆԻ ՏԱՆՏԵՐԸ ՏԱՆԸ ՉԷՐ

Այդ միջոցին թզուկները նստած էին անթափանց խավարի մեջ: Բոլոր կողմերից նրանց շրջապատում էր մեռելային լռությունը: Նրանք քիչ էին ուտում և քիչ էլ խոսում էին: Ժամանակն անցնում էր, ու նրանք չգիտեին հիմա գիշեր է, թե ցերեկ կամ քանի՞ օր է անցել: Վախենում էին շարժվել, քանի որ թունելում բարձր արձագանք էին տալիս իրենց ձայներն ու շփթփոցները: Նրանք քնում ու արթնանում էին միևնույն անվերջանալի խավարի ու լռության մեջ: Նստելով այնտեղ, ինչպես նրանց թվում էր, շատ օրեր, նրանք սկսեցին խեղդվել օդի անբավարարությունից, գլուխներն արդեն մթազնում էին: Այլևս դիմանալ չէին կարող: Թվում էր, թե նրանք կուրախանային նույնիսկ վիշապի վերադարձը վկայող ձայներից: Լռության մեջ նրանց թվում էր, թե Սմոգը նոր դավ է նյութում: Եվ հետո, նրանք հո չէին կարող այդպես հավերժ նստել:

Վերջապես Տորինը չհամբերեց.

— Փորձենք դուռը բացել: Ես ուղղակի կմեռնեմ առանց մաքուր օդի: Ավելի լավ է այնտեղ Սմոգն ինձ ոչնչացնի, քան թե այստեղ խեղդվեմ:

Թզուկներից մեկը վեր կացավ և խարխափելով հասավ այն տեղին, նորտեղ առաջ դուռն էր: Բայց պարզվեց, որ թափված ժայռաբեկորները փակել են թունելի վերին ծայրը: Բանալին ու հմայությունն այսուհետ անկարող էին բացել այն.

— Ծուղակն ընկանք,— ողբացին նրանք:— Վերջ: Էստեղ էլ մեռնելու ենք:

Չգիտես ինչու, հենց այն պահին, երբ թզուկների հուսահատությունը ծայրահեղության հասավ, Բիլբոն զգաց, որ իր սիրտը թեթևացավ, ասես թե նրա անթև բաճկոնի տակից մի ծանրություն հանեցին:

— Դե, դե,— սիրտ տալով ասաց նա:— «Քանի ողջ ես՝ հուսա», ասում էր իմ հայրը: Հիշեցեք, ամեն ինչ երեք անգամից է: Ինչ լինում է՝ թող լինի, ես կիջնեմ ներքև: Երկու անգամ եղել եմ այնտեղ, իմանալով, որ վիշապն ինձ սպասում է, երրորդ անգամ էլ սիրտ կանեմ: Բոլոր դեպքերում միակ ելքը դեպի լույս աշխարհի տանում է ներքև: Եվ այս անգամ դուք ստիպված կլինեք հետևել ինձ:

Նրանք համաձայնեցին. էլ ի՞նչ էր մնում անելու: Տորինն առաջինը մոտեցավ Բիլբոյին:

— Այժմ ավելի զգույշ եղեք,— շնչաց հոբիտը,— կատարյալ լռություն պահպանեք: Սմոգը գուցե իսկի տեղում էլ չէ, գուցեև տեղում է: Իզուր ռիսկի չդիմենք:

Նրանք գնում էին ու գնում: Թզուկները, բնական է, չէին կարող հոբիտի նման անշշուկ շարժվել, նրանք ամեն կերպ փնջացնում էին, ոտքերով քստքստացնում, իսկ արձագանքը բազմապատիկ ուժեղացնում էր փնջոցն ու քստքստոցը: Բիլբոն շատ անգամ քարացավ տեղում ու վախով ականջ դրեց, բայց ներքևից ոչ մի ծպտուն չէր լսվում: Երբ մինչև ներքևի անցքը, ըստ նրա ենթադրության, քիչ էր մնացել, նա դրեց մատանին և թզուկներից բավական առաջ անցավ: Մատանու անհրաժեշտություն չկար. առանց դրան էլ բոլորն անտեսանելի էին, քանի որ համատարած խավար էր տիրում: Այնքան, որ հոբիտը չնկատեց ինչպես դուրս եկավ թունելից. նա ձեռքով հենվեց դատարկությանը և... գլուխկոնծի թռավ փոսի մեջ:

Բիլբոն պառկած էր բերանքսնիվայր, շունչը պահած, չհամարձակվելով շարժվել: Ոչինչ տեղի չունեցավ: Երբ նա դանդաղ գլուխը բարձրացրեց, իր վերևում, բարձր ու հեռու, սպիտակին տվող մի կետ տեսավ, որ բոլորովին նման չէր վիշապի արձակած կարմիր լույսին: Սակայն փոսում կանգնած էր վիշապի թանձր ու գարշ հոտը:

Վերջապես միտոր Բիլբո Բեգինսը այլևս չկարողացավ տանել անորոշությունը:

— Անիծվես դու, ծեր մողես,— ծղրտաց նա բարձրաձայն:— Բավական է տափկնոցի խաղաս... Լուսավորիր ինձ ու հետո խժռիր, եթե կարողանաս բռնել...

Անտեսանելի դահլիճում միայն թույլ արձագանք լսվեց: Բիլբոն վեր կացավ և այդ ժամանակ գլխի ընկավ, որ չգիտե, թե որ կողմը գնա: «Հետաքրքիր է, Սմոգն ինչո՞վ է զբաղված,— մտածեց նա:— Այսօր ցերեկը (թե երեկոյան) նա հաստատ տանը չէր: Եթե Օյնն ու Գլոյնը աբեթն ու կայծքարը չեն կորցրել, կարելի է կրակ ստանալ ու մի լավ տնտղել շուրջը: Հետո էլ, տեսնենք, գուցե որևէ բան տեղի ունենա»:

— Կրա՛կ,— գոռաց նա:— Ո՞վ կրակ կտա...

Թզուկներն, իհարկե, իրար էին անցել, երբ Բիլբոն թրմփոցով փոսը գլորվեց, և մուքից ոչ հեռու խռնվել էին իրար գլխի:

— Շը՛շ-շ... Ֆշացին նրանք՝ հոբիտի ձայնը լսելով:

Հոբիտն այսպիսով հայտանաբերեց, թե որ կողմում են նրանք, բայց բոլորովին էլ միանգամից չհաջողվեց թզուկներից որևէ օգուտ ստանալ: Միայն, երբ Բիլբոն ոտքերը գետնին խփելով սուր ձայնով գոռաց. «Կրա՛կ,

կրա՛կ».— Տորինը սթափվեց և Օյնին ու Գլոյնին ուղարկեց թունելի մյուս ծայրը՝ արեթն ու կայծքարը բերելու:

Որոշ ժամանակ անց կրակն առկայծեց. երևաց Օյնը, ոչ մեծ ջահը ձեռքին, Գլոյնը մի քանի հատ էլ թևի տակ դրած էր բերում: Բիլբոն ճարակորեն վազեց դեպի անցքը և հափշտակեց ջահը: Բայց չկարողացավ համոզել թզուկներին, որ վառեն մնացած ջահերը և միանան իրեն: Ինչպես հանգամանորեն բացատրեց Տորինը, միսոր Բեգինսը դեռևս մնում էր պաշտոնական Գողն ու Հետախույզը: Եթե նա իր կյանքը վտանգի ենթարկելով հարկ է համարում կրակ վառել, ապա դա իր գործն է: Իսկ իրենք առանց թունելից դուրս գալու կսպասեն նրա զեկույցին: Թզուկները նստեցին անցքի մոտ և սկսեցին հետևել Բիլբոյին:

Նրանք տեսան, թե ինչպես փոքրիկ գորշ կերպարանքը, ջահը բարձր բռնած, կտրեց անցավ քարայրը: Քանի Բիլբոն մոտիկ էր, նրանք ջահի լուսյով տեսնում էին ոսկու փայլը և լսում զևզոցը, երբ հոբիտի ոտքը կաչում էր որևէ ոսկե առարկայի: Հետո կրակն սկսեց հեռանալ, վետվետաց ինչ-որ տեղ վերևում. դա Բիլբոն էր մագլցում գանձերի կույտի վրա: Շուտով նա հայտնվեց կույտի կատարին և շարունակեց ետ ու առաջ շարժվել: Թզուկները տեսան, որ նա մի ակնթարթ կռացավ, բայց չկարողացան հասկանալ, թե ինչու:

Իսկ նա խոնարհվեց Արկենստոնի պատճառով: Բիլբոն Սարի Սիրտը իսկույն ճանաչեց Տորինի նկարագրածով, ասենք ամբողջ աշխարհում չէր կարող երկու այդպիսի ադամանդ լինել, նույնիսկ մեկ ուրիշ այդպիսի նմանը չունեցող գանձարանում: Դա էլ հենց այն սպիտակավուն փայլն էր, որ Բիլբոյին վեր էր քաշում: Աստիճանաբար կետը վերածվեց լուսափայլ սպիտակ գնդի: Այժմ գունդն առկայծում էր երփներանգ կայծով, որովհետև ջահի լույսը խաղում էր նրա նիստերի մեջ: Վերջապես գունդը հայտնվեց ուղիղ հոբիտի առջև, և նրա շունչը կտրվեց: Գանձերից ամենամեծագույնը լուսավորում էր խորքից եկող սեփական լույսով, միաժամանակ, անհիշելի ժամանակներում թզուկների հանած, հղկած ու փայլեցրած քարն իր մեջ էր հավաքում դրսի լույսը և բեկում տասնյակ հազարավոր սպիտակ կայծկլտուն նիստերով, և այդ սպիտակ լուսավորությունը հուրհրատում էր ծիածանի բոլոր գույներով: Բիլբոյի ձեռքը, հնազանդվելով խորհրդավոր ուժին, ձգվեց դեպի Արկենստոնը և վերցրեց այն: Նրա կարճ մատները չէին կարողանում պարփակել մեծ ու ծանր քարը, բայց Բիլբոն հաջողացրեց բարձրացնել այն և, աչքերը փակելով, խցկեց գրպանը:

«Այ հիմա ես իսկական գող եմ,— մտածեց նա:— Հասկանալի է, ես սրա մասին կասեմ թզուկներին... իր ժամանակին: Չէ որ նրանք ասում էին, որ ես կարող եմ իմ փայլն ինքս ընտրել: Ես կընտրեի Արկենստոնը, իսկ իրենք թող վերցնեն մնացած բոլորը»: Բայց, այնուամենայնիվ, նրա սիրտը մի տեսակ անհանգիստ էր, ասես զգում էր, որ այն ժամանակ խոսքը գնում էր Արկենստոնի մասին, և որ դրա պատճառով Բիլբոն դեռ մեծ անախորժություններ կունենա:

Նա շարժվեց առաջ, իջավ կույտի մյուս կողմից, ջահի լույսը ծածկվեց: Բայց շուտով թզուկները հեռվում նորից տեսան նրան. Բիլբոն հատում էր քարայրը: Վերջապես հասավ մեծ դռներին: Նրա վրա թարմ օդի հոսանք փչեց, որը քիչ էր մնում ջահը հանգցներ: Նա երկյուղածորեն նայեց դռնից դուրս և զանազանեց ընդարձակ միջանցքերի գծագրությունն ու լայն սանդուղքի սկիզբը, որ գնում էր վեր, դեպի խավար: Բայց առաջվա նման վիշապի ոչ մի հետք չկար: Հենց այն է Բիլբոն ուզում էր շրջվել, ինչ-որ մի սև բան սրընթաց անցավ նրա մոտով՝ թեթևակի դեմքին դիպչելով: Բիլբոն ճչաց, սայթաքեց ու փռվեց գետնին: Ջահը ձեռքից ընկավ ու հանգավ:

«Երևի պարզապես չղջիկ էր,— շփոթված մռթմռթաց Բիլբոն:— Հիմա ի՞նչ անեմ... Որտե՞ղ է արևելքը, որտեղ՝ հարավը, հյուսիսը կամ արևմուտքը...»:

— Տորին, Բալին, Օյն, Գյոլն, Ֆիլի, Կիլի,— գոռաց նա ողջ կոկորդով մեկ, բայց սև անընդգրկելի տարածության մեջ նրա ձայնը շատ բարախիկ ու հազիվ լսելի հնչեց:— Լույսը հանգավ... Ո՞վ կա այդտեղ... Եկե՛ք, օգնեցե՛ք...

Ո՞ր կորավ հանկարծ նրա քաջությունը...

Թզուկներին հասան հոբիտի թույլ բացականչությունները, բայց նրանք հասկացան միայն «օգնեցե՛ք» բառը:

— Ի՞նչ պատահեց,— շվարած հարցրեց Տորինը:— Բանը, ինչպես երևում է, վիշապը չէր, թե չէ հոբիտը այլևս գոռալ չէր կարողանա:

Նրանք մի քիչ էլ սպասեցին ու ականջ դրին, բայց, բացի Բիլբոյի հեռավոր ճիչերից, ոչ մի ձայն չէր լսվում:

— Որևէ մեկդ մի ջահ էլ վառեք,— հրամայեց Տորինը:— Ինչ արած, ստիպված ենք օգնության գնալ մեր Գողին:

— Վերջապես ժամանակն է, որ մենք էլ նրան օգնենք,— արձագանքեց Բալինը:— Ես հաճույքով կգնամ, մանավանդ որ հիմա, իմ կարծիքով, մեզ վտանգ չի սպառնում:

Գյոյնը մի քանի ջահեր վառեց, թզուկները մեկը մյուսի ետևից դուրս եկան թունելից և, պատերը բռնելով, շտապեցին ճիչերի կողմը:

Շատ շուտով նրանք դեմ առան Բիլբոյին, որը նույնպես ընդառաջ էր գալիս իրենց: Հենց որ կրակի առկայծումը տեսավ, իրեն ձեռքը հավաքեց:

— Չղջիկից վախեցա, և ջահը հանգավ, այսքան բան,— բացատրեց նա:

Նրանք թեթևացած շունչ քաշեցին, բայց իսկույն էլ սկսեցին փնթփնթալ, դժգոհ այն բանից, որ գուր տեղը վախեցել են: Իսկ ինչ կասեին, եթե Բիլբոն այդ բոպեին նրանց ցույց տար Արկենստունը, ուղղակի չգիտեմ: Բայց բավական էր գանձերի կողքով անցնելիս աչքի ծայրով նշմարել դրանց փայլը, որ նրանց սրտերը վառվեին գլխավոր կրքով: Իսկ երբ թզուկի սրտում, թող նույնիսկ ամենապատվական թզուկի, վառվում է

կիրքը ոսկու և թանկարժեք քարերի նկատմամբ, ապա նա դառնում է խիզախ, իսկ երբեմն նույնիսկ կատաղի:

Դրա համար էլ թզուկներին երկար համոզելու հարկ չեղավ: Նրանք անհամբեր նետվեցին քարայրը զննելու: Յուրաքանչյուրը մի վառվող ջահ վերցրեց, ու, դահլիճի շուրջը պտտվելուց հետո, թզուկները մոռացան վախի ու զգուշության մասին: Սկսեցին բարձր-բարձր խոսել, իրար կանչել, միմյանց զանազան իրեր ցույց տալ, որ հանում էին կույտի միջից կամ իջեցնում պատից: Նրանք թանկարժեք իրերը մոտեցնում էին աչքներին, դիտում լույսի տակ, շոշափում էին ու շոյում, ջոկում էին թանկարժեք քարերը և խցկում գրպանները, իսկ ինչ որ տանել չէին կարող, հոգոց հանելով նորից գցում էին տեղը՝ մատների արանքից բաց թողնելով: Տորինն այդ տեսակետից համարյա ոչնչով չէր տարբերվում մյուսներից: Ընդ որում նա դեսուդեն էր նետվում, ինչ-որ բան էր փնտրում ու չէր գտնում: Նա Արկենստոնն էր փնտրում, բայց առայժմ ոչ ոքի ոչինչ չէր ասում:

Թզուկները պատերից իջեցրին զենք ու զրահը և հագան: Այդ պահին ի՛նչ արքայական տեսք ուներ Տորինը՝ զգեստավորված ոսկե թեփուկավոր օղազրահով, ալսուտակներով զարդարված գոտիով, արծաթակոթ տապարը ձեռքին:

— Միստր Բեգինս,— ձայն տվեց նա:— Ստացեք առաջին պարզևը ձեր բաժնի հաշվին... Հանեք հին թիկնոցը և հագեք այ սա...

Եվ նա Բիլբոյի վրա գցեց ոչ մեծ մի օղազրահ, որ հյուսված էր վաղ ժամանակներում, էլֆերի արքայազներից մեկի համար: Արծաթակուռ պողպատից այդ օղազրահին, որ էլֆերը միտրիլ էին կոչում, մարգարտակուռ ու բյուրեղապակյա գոտի էր վայելում: Հոբիտի գլխին կաշվե թեթև սաղավարտ դրեցին՝ դրոշմվածքներով, ներսից պողպատե օղագոտիներով, եզրերին մանր ադամանդներ շարած:

«Ես ինձ հրաշալի եմ զգում,— մտածեց Բիլբոն:— Բայց իմ տեսքը պետք է որ շատ անհեթեթ լինի: Այ թե ձեռ կառնեին ինձ տանը, Բլրատակում: Այնուամենայնիվ, ափսոս, որ հայելի չկա այստեղ...»:

Միստր Բեգինսը, ի տարբերություն թզուկների, հարստությունը տեսնելով գլուխը չկորցրեց և դիմացավ դրա հմայքներին: Թզուկները դեռ փորփրում էին գանձարանը, բայց Բիլբոյին այդ զբաղմունքը ձանձրացրեց.

— Տորին,— բացականչեց նա:— Հետո՞ ինչ ենք անելու: Մենք զինվեցինք, բայց մի՞թե զենքն ու զրահը երբևէ օգնել են հաղթելու Սմոգ Սարսափելուն: Գանձերը դեռ նվաճված չեն: Առայժմ մեզ համար կարևորը ոչ թե ոսկին է, այլ այստեղից դուրս գալը: Առանց այդ էլ մենք բավական ժամանակ է դիմանում ենք ճակատագրի փորձությանը:

— Դուք ճիշտ եք,— ասաց Տորինը՝ ինքն իրեն բուռը հավաքելով:—
Գնանք: Այժմ ես ձեզ կտանեմ: Հազար տարի էլ անցներ, պալատի ելքերն
ու մուտքերը ես չեի մոռանա:

Նա թզուկներին ահվաքեց, և, ջահերը գլխներից վեր պահելով, բուրրո
միասին դուրս եկան բարձր դռնից, ափսոսանքով ետ նայելով:

Փայլիլուն օղագրահները նրանք նորից ծածկեցին հին թիկնոցերով,
իսկ փայլուն սաղավարտները՝ մաշված կնգուղներով: Նրանք գնում էին
Տորինի ետևից, ասես մթութայն մեջ կրակների շղթա լինեին, շարունակ
ականջ դնելով՝ վիշապի ձայնը չի՞ լսվում արդյոք: Չնայած շուրջն ամեն
ինչ ժամանակից քայքայված էր կամ քանդված, փչացած ու
աղտոտված՝ հրեշի ելումուտ անելուց, Տորինը ճանաչում էր
յուրաքանչյուր միջանցքը, յուրաքանչյուր շրջադարձը: Նրանք մագլցում
էին երկար սանդուղքով, նորից շրջադարձ կատարում ու նորից
աստիճաններով վեր բարձրանում: Աստիճանները ողորկ էին, փորված
ուղղակի ժայռի մեջ, լայն ու հարմար: Թզուկները բարձարանում էին վեր
ու վեր, բայց ոչ մի տեղ կենդանի շնչի մի հետք անգամ չհանդիպեցին,
միայն ստվերներ էին գողերի պես այս ու այն կողմ փախչում ջահերի
միջանցիկ քամուց թրթռացող կրակների մոտենալու հետ: Սանդուղքներն
իրենց ողջ հարմարությամբ հանդերձ հոբիտի կարծիք ոտքերի համար
չէին: Բիլբոն արդեն ուժասպառվել էր և զգում էր, որ մի քիչ էլ՝ ու ինքը մի
քայլ անգամ անել չի կարող: Եվ այստեղ հանկարծ առաստաղը վեր
նետվեց, դժգույն մի շող երևաց, օդը մաքրվեց, առջևում մի թույլ լույս
առկայծեց լայն, կիսով չափ վառված դռներից, որ կորացած կախված էին
ծխնիներից:

— Սա Տորի գլխավոր դահլիճն է,— ասաց Տորինը,— այստեղ
խնջույքներ էին անում և հավաքվում էր թագավորական խորհուրդը:
Այստեղից արդեն Գլխավոր դարպասը հեռու չէ:

Նրանք անցան նախկին դահլիճի միջով. այնտեղ փտել էին սեղանները,
փոշիացել էին ածխացած, շուռ եկած աթոռներն ու նստարանները.
հատակին, շշերի, թասերի ու կոտրված եղջյուրե գավաթների
արանքներում, փոշու մեջ, գանգեր ու ոսկորներ էին ընկած: Նրանք մի
դուռ էլ անցան, էլի մի դուռ անցան, և հանկարծ ականջներին ջրի քչքչոց
հասավ, և լույսն ավելի պայծառ դարձավ:

— Այստեղից իր սկիզբն է առնում Արագահոս գետը,— ասաց Տորինը:—
Նա մեզ դուրս կբերի Գլխավոր դարպասի մոտ:

Ժայռի մութ անցքից դուրս էր վազում վարար գետն ու հոսում հնագույն
վարպետների հմուտ ձեռքերով քարի մեջ փորված նեղ ջրհորդանով:
Կողքով գնում էր սալարկած ճանապարհը, այնքան լայն, որ այնտեղով
իրար կողքի շատ մարդիկ կարող էին անցնել: Բարեկամները սլացան այդ
ճանապարհով, շրջանցեցին ելուստը և... ո՛վ հրաշք,, հորդեց ցերեկային
լույսը: Նրանց առջև մի բարձր կամար հայտնվեց՝ սևացած, պլոկված,
բայց հնագույն փորագրությունների հետքերով: Միգապատ արևը Սարի

ճյուղավորումների միջով թույլ շողեր էր ուղարկում, որոնք ոսկեգոծում էին շեմքը: Ձահերի ծխից տազնապահար՝ չղջիկների երամը փոթորկի պես անցավ նրանց գլխավերևով: Ճամփորդները վախեցած առաջ նետվեցին և սայթաքեցին քարերի վրա, որոնք հղկվել էին ու ծածկվել լորձով, որովհետև դրանց վրայով մշտապես սողացել էր վիշապը: Այնուհետև գետը սլանում էր դեպի հովիտ՝ ազատ խշշալով, փրփրելով: Նրանք ցած գցեցին այժմ արդեն ոչ պիտանի ջահերն ու քարացան՝ իրենց աչքերին չհավատալով. խումբը դուրս էր եկել Գլխավոր դարպասից և նրանց առջև փռված էր հովիտը, որտեղ առաջ Դեյլ քաղաքն է եղել:

— Այո,— ասաց Բիլբոն:— Այ արդեն չէի սպասում, թե մի օր կհաջողվի նայել այս դարպասից: Երբեք ավելի մեծ հաճույքով չեմ զմայլվել արևով և դեմքիս չեմ զգացել քամին: Բու-ու-ո՛ւ: Բայց լավ էլ պաղ քամի է, հա՛:

Իրոք որ արևելյան սուր քամի էր փչում՝ անգթորեն ձմեռ գուլակելով: Սարի ճյուղավորումների վրա պտույտ գործելով՝ քամին թռչում էր հովիտ և ոռնում ժայռերի մեջ: Ճամփորդներն այնքան էին խաշվել վիշապի քարայրի շոգ խորխորատներում, որ հիմա բաց օդում նրանց վրա դող էր գալիս:

Հանկարծ Բիլբոն հոգնածություներից բացի նաև սաստիկ քաղց զգաց:

— Այժմ ամեն ինչից դատելով, վաղ առավոտ է,— ասաց նա,— և, ուրեմն, նախաճաշելու ժամանակն է, եթե ուտելու բան ճարվի: Բայց ես վստահ չեմ, թե Սմոգի քարայրի գլխավոր մուտքը այդ նպատակի համար ամենաանվտանգ տեղն է: Չի՞ կարելի արդյոք ավելի հանգիստ տեղ գտնել:

— Ճիշտ է,— ձայնարկեց Բալինը:— Ես, երևակայեք, մի այդպիսի տեղ գիտեմ. հին պահակակետը Սարի հարավ-արևմտյան ծայրին:

— Իսկ հեռո՞ւ է,— տեղեկացավ հոբիտը:

— Հինգ ժամվա ոտքի ճանապարհ է: Գնալը դժվար կլինի, նախազգուշացնում եմ: Դարպասից գետի ձախ ափով գնացող ճանապարհը քարուքանդ է եղել: Դրա փոխարեն նայեք այստեղ... Գետը Դեյլի ավերակների մոտից թեքվում է դեպի արևելք: Այնտեղ մի ժամանակ կամուրջ կար: Կամուրջը տանում է դեպի աջ ափը բարձրացող զառիվեր սանդուղքը: Այնտեղից կընկնենք Ագռավի Բարձունքը տանող ճանապարհը: Այնտեղ էլ կա, կամ եղել է, մի արահետ, որ ճանապարհից թեքվում է դեպի պահակակետ: Եթե նույնիսկ սանդուղքը պահպանվել է, միևնույն է, այնտեղ բարձրանալը հեշտ բան չէ:

— Ով երկնային ուժեր,— տնքաց հոբիտը:— Նորից գնալ, նորից ինչ-որ տեղ մագլցել, նույնիսկ նախաճաշել չեն թողնում: Հետաքրքիր է, որքան նախաճաշ, ճաշ ու ընթրիք ենք բաց թողել, մինչև նստած էին այդ զգվելի բնում առանց ժամ ու ժամանակի:

Ընդհանուր առմամբ ասած, այն ըրրպեից, ինչ վիշապը ջախջախեց կախարդական դուռը, անցել էր երկու գիշեր ու մեկ ցերեկ. և լավ թե վատ,

բայց ինչ-որ ուտելիք կար, իսկ Բիլբոն բոլորովին կորցրել էր ժամանակի հաշիվը, և նրա համար մի գիեշտը, թե մի շաբաթը մեկ էր:

— Ի՛նչ եք ասում,— ծիծաղեց Տորինը (ևս նորից ուրախացել էր ու թանկարժեք քարերը զնգզնգացնում էր գրպաններում):— Այդ իմ պալա՞տն եք զգվելի բույն անվանում: Կացեք, այ մի օր կհավաքեն, կմաքրեն ու կրկին կվերանորոգեն...

— Որը տեղի կունենա Սմոգի մահից հետո,— խոժոռ փնթփնթաց Բիլբոն:— Ի դեպ, ո՞ւր է նա:— Ես համեղ նախաճաշ կտայի այդ բանն իմանալու համար: Հուսով եմ, նա սարի կատարին չի նստել ու վերևից մեզնով հիանում:

Այդ միտքը մեծ իրարանցում առաջացրեց, և թզուկներն արագ համաձայնեցին Բիլբոյի ու Բալինի հետ:

— Հարկավոր է հեռանալ այստեղից,— ասաց Դորին:— Ես ամբողջ ժամանակ թիկունքիս զգում եմ նրա հայացքը:

— Այստեղ շատ ցուրտ է ու տհաճ,— ավելարցրեց Բոմբուրը:— Ծարավից այստեղ չենք մեռնի՝ ջուրը կողքներիս է, իսկ այ, ուտելիք, ինչ-որ չեմ տեսնում: Վիշապն այստեղ, հավանական է, միշտ էլ սով է զգում:

— Գնացինք, գնացինք,— գոռացին մյուսները:— Արագ դեպի Բալինի արահետը:

Ժայռից դեպի աջ ճանապարհի առհասարակ չկար: Նրանք գլաքարերի միջով առաջ շարժվեցին գետի ձախ ափով: Ամայությունը, անմարդաբնակությունը նորից սթափեցրին նույնիսկ Տորինին: Կամուրջը, որի մասին հիշում էր Բալինը, վաղուց քանդվել էր, դրա քարերը, որպես հասարակ գլաքարեր, թափվել էին ծանծաղ, աղմկոտ գետը: Նրանք առանց դժվարության հաղթահարեցին ծանծաղուտը և հինավուրց աստիճաններով մագլցեցին բարձր ափը: Կարճ ժամանակ անց ընկան հին ճանապարհը և շուտով դուրս եկան ժայռերի մեջ ծածկված խոր լեռնագոգը: Այստեղ մի քիչ հանգստացան, նախաճաշեցին չորահացով, վրայից էլ ջուր խմեցին: (Եթե ուզում եք իմանալ ինչ բան է չորահացը, ապա կարող եմ ասել միայն, որ նրա հիմքում չորացած հացն է, որ գործանակնում հավիտյանս չի փչանում, սննդարար է համարվում, բայց ամենևին ոչ համեղագույն, քանի որ հետաքրքրությունն ներկայանցում է միայն ծնոտների վարժության տեսակետից: Լճաշեն քաղաքի բնակիչները դա հատուկ պատրաստում էին երկար ճանապարհորդությունների համար):

Ապա նրանք շարժվեցին առաջ: Ճանապարհը գետից թեքվեց, և այժմ անշեղորտն սկսեց մոտենալ Սարի հարավային ճյուղին: Վերջապես նրանք ոտք դրին լեռնային արահետի վրա, որը կտրուկ դեպի վեր էր գնում: Դանդաղ և երկար բարձրանում էին ճամփորդները մեկը մյուսի ետևից և կեսօրից հետո մի կերպ հասան գագաթի ծայրն ու տեսան, որ արևմուտքում աշնանային պաղ արևը մայր է մտնում:

Նրանք մի հարթ տեղ գան, որ երեք կողմերից զառիվայր իջևող եզրեր ունեն, իսկ չորրորդը վերջանում էր ժայռով, որի մեջ դռան նման մի անցք կար: հարթակից լայն տեսադաշտ էր բացվում դեպի Արևելք, Հարավ և Արևմուտք:

— Այստեղ,— ասաց Բալինը,— վաղ ժամանակներում միշտ ժամապահներ էին կանգնում: Այս դուռը տանում էր ժայռափոր մի սենյակ, որ փոխարինում էր պահակային շինությունը: Սարի շուրջը մի քանի այդպիսի պահակակետեր կային, բայց մեր բարեբախտ ժամանակներում առանձնապես դրանց անհրաժեշտությունը չկար, և մեր ժամապահները, հավանաբար, երես էին առել ու կորցրել զգոնությունը, հակառակ դեպքում մենք աղետից դեռ շատ առաջ կլսեինք մեր կողմերում վիշապի հայտնվելու մասին, և ամեն ինչ կարող էր այլ ընթացք ստանալ: Մենք կարող ենք թաքնվել այստեղ և շատ բան տեսնել՝ մնալով անտեսանելի:

— Ինչ միտք ունի, քանի որ մեզ արդեն նկատել են բարձրանալիս,— առարկեց Դորին, որն անդադար հայացքներ էր գցում վերև, ասես սպասում էր այնտեղ տեսնել Սմոգին՝ ծանրումեծ բազմած բարձունքին, ինչպես ագռավը զանգակատան վրա:

— Ուրիշ ոչինչ չի մտում անելու,— պատասխանեց Տորինը:— Այսօր մենք այլևս քայլել չենք կարող:

— Իմաստուն խոսքեր,— բացականչեց Բիլբոն՝ գետնին փռվելով: Պահակատանը ինչքան ասես մարդ կտեղավորվեր. ետևի պատի մեջ մի ելք կար դեպի մեկ ուրիշ սենյակ, որը դրսի ցրտից ավելի լավ էր պաշտպանված: Երևում էր, Սմոգի տիրապետության ժամանակներում նույնիսկ վայրի գազաններն այստեղ չէին մտել: Ճամփորդներն այնտեղ դարսեցին իրենց ուղեբեռը, ոմանք իսկույն պառկեցին ու քնեցին, մյուսները նստեցին դրսի դռան մոտ և սկսեցին քննարկել հետագա գործողությունները: Ինչի մասին էլ որ խոսում էին, ամեն անգամ վերադառնում էին միևնույն հարցին՝ որտե՞ղ է Սմոգը: Նրանք հայացքները դարձրին դեպի Արևմուտք և ոչ ոքի չտեսան, Արևելքում՝ նույնպես, Հարավում վիշապի ոչ մի նշան, բայց այնտեղ թռչունների երամներ էին վիստում: Ճամփորդները նայեցին այդ կողմն ու մտածեցին՝ տեսնես դա ի՞նչ է նշանակում... Արդեն հայտվեցին սառը փայլով առկայծող առաջին աստղերը, իսկ նրանք այդպես էլ ոչ մի մտքի չհանգեցին:

ԿՐԱԿ ՈՒ ՋՈՒՐ

Իսկ հիմա, եթե դուք, ինչպես և թզուկները, ուզում եք նորություններ իմանալ Սմոգի մասին, վերադառնանք երկու օր ետ, երբ նա լանջը գաղտնի դռան հետ միասին կործանեց ու մոլեգնած թռավ գնաց:

Երեկո էր: Եսգարոտի Լճաշեն քաղաքի բնակիչները նստած էին իրենց տներում, վախեցած ուժեղ քամուց ու խոնավ օդից, բայց մի քանիսն,

այնուամենայնիվ, զբոսնում էին առափին ու հիանում լճի հայելու մեջ արտացոլվող աստղերով: Մենավոր Լեռը միշտ աչքից ծածկում էին լճի հեռավոր ծայրին գտնվող ոչ բարձր բլուրները, որոնց միջև հյուսիսից հոսում էր Արագահոս գետը: Բնակիչները միայն սրածայր գագաթն էին տեսնում, այն էլ պարզ եղանակին, բայց նրանք հազվադեպ էին նայում այդ կողմը, որովհետև նույնիսկ առավոտվա լույսով Սարը չարագույժ էր ու մռայլ: Այժմ գիշերային խավարն էր քողարկում նրան:

Հանկարծ գագաթը բռնկվեց ինչ-որ լույսով: Բայց միայն մի ակնթարթ:

— Նայեք,— ասաց զբոսնողներից մեկը:— Նորից լույս... Այնցյալ գիշեր ժամապահներն էլ են կրակ տեսել այնտեղ՝ կեսգիշերից մինչև լուսաբաց. կրակները մեկ երևացել են, մեկ անհետացել: Ինչ-որ վատ բան է կատարվում այնտեղ:

— Գուցե Սարատակի արքան ոսկի է հալում,— նկատեց մյուսը:— Նա վաղուց է ուղևորվել Հյուսիս: Արդեն ժամանակն է, որ երգերն իրականանան:

— Էլ ի՞նչ արքա...— փնթփնթաց մի մռայլ ձայն:— Միտներդ պահեք իմ ասածը. կրակը ժայթքում է վայրագ վիշապը, Սարատակի միակ թագավորը, որին մենք գիտենք:

— Դու միշտ վատ բաներ ես կանխագուշակում,— փնթփնթացին հարևանները:— Մեկ ջրհեղեղ, մեկ ձկների ժանտամահություն: Գոնե մի անգամ որևէ ուրախ բան մտածեիր...

Հանկարծ բլուրների միջև պայծառ մի լույս երևաց և ոսկեգոծեց լճի հյուսիսային ծայրը:

— Սարատակի թագավորը...— գոռացին բոլորը:— «Ոսկե գետեր կհոսեն հովիտ»: Սարերից ոսկի գետ է հոսում:

Ամենուր բացվեցին պատուհանները, վազող ոտքերի ձայներ լսվեցին: Նորից համընդհանուր ցնծություն բարձրացավ, բայց մռայլ ձայնի տերը վազեց քաղաքագլխի մոտ:

— Վիշա՛պը: Վիշա՛պն է թռչում: Գետինը մտնեմ...— բղավեց նա:— Կամուրջները կտրեք: Ի զե՛ն: Ի զե՛ն:

Լսվեց փողերի ձայնը, մարտական տազնապ հնչեց, արձագանքը սփռվեց ժայռապատ ափերին: Ցնծությունը դադարեց, ուրախությունը սարսափի փոխվեց: Ահա այսպես եղավ, որ վիշապը քաղաքը հանկարծակիի չբերեց:

Շուտով լճաբնակները կարմիր մի կայծ տեսան, որ դեպի իրենց կողմն էր շարժվում, վայրկյան առ վայրկյան բոցավառվելով ու մեծանալով՝ այնքան որ մեծ էր վիշապի թռիչքի արագությունը: Այստեղ նույնիսկ ամենահիմարները ստիպված եղան խոստովանել, որ մարգարեությունը ինչ-որ ուրիշ կերպ կատարվեց: Նրանց շատ քիչ ժամանակ էր մնում: Քաղաքում բոլոր ամանները ջուր լցրեցին, բոլոր ռազմիկները զինվեցին,

յուրաքանչյուր նետը և յուրաքանչյուր տեգը պատրաստ վիճակի բերեցին, կամուրջը հավաքեցին և ոչնչացրին: Հազիվ էին նախապատրաստությունները վերջացրել, երբ լսվեց ուժգնացող մի մռնչուն. լիճը, վիշապի թևերի հզոր բախյունից ավելոծված, ծփում էր կարմիր ալիքներով:

Մարդկանց գոռում-գոչյունի ուղեկցությամբ Սմոգը սուրաց ցած, ուղիղ կամրջի վրա, և մտահոգ կանգ առավ: Կամուրջն անհետացել էր, մարդիկ խռնվել էին կղզում, որ շրջապատված էր չափազանց խոր, մութ ու սառը ջրով: Եթե Սմոգը սուզվեր լիճը, այնպիսի ծուխ ու գոլորշի կբարձրանար, որ մառախուղը ցամաքը կպատեր մի քանի օր շարունակ: Բայց լիճը Սմոգից ուժեղ էր, արագորեն կհանգսներ նրան: Սմոգը մռնչոցով նետվեց քաղաքի վրա: Սև նետերի ամպը սուրաց վերև, նետերը չրակոցով զարկվում էին նրա գրահին, իսկ նրա շնչից բոցավառվող կոթերը ֆշշոցով ընկնում էին լիճը: Ոչ մի հրավառություն չէր կարող համեմատվել գիշերային այդ տեսարանի հետ: Լսելով նետերի սուլոցը, փողերի սուր ձայնը՝ վիշապը կատաղությունից վերջնականորեն խելքը թռցրեց: Արդեն շատ վաղուց ոչ ոք չէր համարձակվել դիմադարձ լինել նրան: Հիմա էլ ոչ ոք չէր համարձակվի, եթե չլիներ մռայլ ձայնով մարդը, որի անունը Բերդ էր. նա վազում էր ետ ու առաջ, խրախուսում նետաձիգներին, համոզում քաղաքագլխին՝ մարտնչել մինչև վերջին նետը:

Բոցը թափվում էր վիշապի երախից: Նա պտտվում էր քաղաքի վրա՝ լուսավորելով լիճը. առափնյա ծառերը հուրհրատում էին, իսկ նրանց տակ օրորվում էին սև ստվերները: Հետո վիշապը սլացավ ներքև, նետերի փոթորկին ընդառաջ, մուլեգնությունից ինքն իրեն կորցրած, մենմիակ ցանկությամբ՝ վառել քաղաքը: Հարդե տանիքները, փայտե հեծանները իսկույն բռնկվեցին, չնայած վիշապի տեղ հասնելուց առաջ դրանք թրջել էին: Հարյուրավոր ձեռքեր ամեն անգամ ջուր էին լցնում այնտեղ, որտեղ կայծ էր ընկնում: Վիշապը նորից պտտվեց քաղաքի վրա: Պոչի մի հարված, և քաղաքապետարանի տանիքը ցրիվ եկավ, գիշերային երկինք նետվեցին անհնազանդ կրակի լեզուները: Էլի ու Էլի ներքև սուրաց վիշապը, և տուն տան ետևից վառվեց ու փուլ եկավ: Ոչ մի նետ չկարողացավ կանգնեցնել վիշապին, ոչ մեկը ճահճային ճանճի խայթոցից ավելի վնաս չպատճառեց նրան:

Բոլոր կողմերից մարդիկ ջուրն էին նետվում: Կանանց ու երեխաներին նավակներ էին նստեցրել ու հավաքել շուկայի հրապարակի կենտրոնում: Լիճն էին նետում գենքերը: Լաց ու կոծը բռնել էր քաղաքը: Դեռ վերջերս այնտեղ ուրախ երգեր էին հնչում թզուկների մասին, այժմ թզուկներին անիծում էին: Քաղաքագլուխն արդեն թաքուն ուղղվեց դեպի իր մեծ ոսկեգօծ նավակը՝ մտադիր լինելով իրարանցումի մեջ փախչել: Շուտով դատարկված քաղաքն անխուսափելիորեն պետք է այրվեր, և լճի մակերևույթին ոչ մի հետք չէր մնա:

Վիշապն էլ հենց այդ էր երագում: Թող ինչքան ուզում են լցվեն նավակները, մտածում էր նա, թքած: Փառավոր որս կլինի, կամ թե չէ

սովից կմեռնեն: Իսկ թե փորձեն ցամաքի վրա ոտք դնել՝ ինքը հո էստեղ է ու էստեղ: Հիմա ինքը կիրդեհի առափնյա անտառները, կվառի ցանքսերն ու արոտավայրերը: Վաղուց նա այդպես չէր զվարճացել, ինչպես հիմա՝ մի ամբողջ քաղաք կորստյան մատնելով:

Բայց վառվող ավերակների մեջ նստած էր նետաձիգների մի ամբողջ խումբ: Նրանց կապիտանը Բերդն էր, մռայլ ձայնով ու խոժոռ դեմքով նույն ռազմիկը, որին բարեակամները մեղադրում էին այն բանում, որ միշտ ջրհեղեղ ու ձկների ժանտամահություն է կանխագուշակում: Բայց դրա հետ միաժամանակ նրանք հիանալի գիտեին, որ նա խիզախ ու արժանավոր մարդ է: Նա Գիրիոնի՝ Դեյլի տիրակալի, հեռավոր շառավիղներից էր, որի կինն ու որդին Դեյլի ավերման ժամանակ Արագահոս գետով փրկվել էին: Այժմ նա նետահարեց այնքան, մինչև որ արձակեց բոլոր նետերը, բացի մեկից: Հրդեհի կրակը մոտենում էր Բերդին: Ընկերները նրան մենակ էին թողել: Նա աղեղը լարեց վերջին անգամ:

Հանկարծ խավարի միջից թևածեց ու անվախ նրա ուսին նստեց մի թռչուն: Բերդը անսպասելիությունից վեր թռավ, բայց դա ծեր կեռնեխ էր: Նա խոնարհվեց Բերդի ականջին և կչկչաց: Բերդը զարմացավ այն բանից, որ ինքը հասկանում է թռչունի լեզուն, բայց չէ՞ որ նա ծագումով հնագույն Դեյլ քաղաքից էր:

— Սպասիր...— ասաց նրան կեռնեխը:— Լուսինը դուրս է գալիս: Գտիր մուգ կետը Սմոգի կրծքին, երբ նա կթռչի քո գլխավերևով...

Բերդը զարմացած լռեց, իսկ կեռնեխն այդ ընթացքում պատմեց նրան այն մասին, թե ինչ էր տեսել ու լսել Սարում:

Այստեղ Բերդն ամբողջ ուժով ձգեց աղեղը: Վիշապը նորից պտտվեց քաղաքի վրա, այս անգամ շատ ցածրից. արևելքում այդ ժամանակ դուրս եկավ լուսինը և արծաթագոծեց վիշապի լայն բացված թևերը:

— Նետ իմ,— ասաց ռազմիկը:— Սև նետ: Ես քեզ պահպանել եմ մինչև վերջին րոպեն: Դու դեռ երբեք ինձ հուսախաբ չես արել, ես միշտ քեզ գտել ու ետ եմ բերել: Ես քեզ իմ հորից եմ ստացել, իսկ նա՝ իր նախնիներից: Եթե դու իսկապես դուրս ես եկել Սարատակի իսկական թագավորի դարբնոցից, ապա հիմա վերև թռիր և անվրեպ խփիր...

Վիշապը ցած նետվեց, և այն պահին, երբ նա իջնում էր, լուսնի լույսը շողշողաց նրա փորի վրա, երփներանգ շողերով փայլփլելով թանկարժեք քարերին: Բայց մի տեղ մութ մնաց: Աղեղնալարը երգեց, սև նետը սուլեց օդում և զարկվեց ուղիղ վիշապի կրծքի մութ կետին: Այն խոր մտավ, ամբողջությամբ՝ ատամնավոր ծայրը, կոթը և թևերը: Սուր մռնչոցով, որը խլացրեց մարդկանց, տապալեց ծառերն ու ճեղքեց քարերը, Սմոգը օդում վեր ու վար արեց, շուռ եկավ ու փլվեց ներքև:

Նա փլվեց ուղիղ քաղաքի վրա: Մահվան դողի ու ցնցումների մեջ նա ավլեց այրվող քաղաքը, կայծերն ու խանձողները թռան դեսուդեն: Լիճը

եռաց, թանձր գոլորշին հանկարծակի սպիտակին տվեց մթության մեջ: Թշուղ լսվեց, լճի մակերեսին փոթորկածուկ մի ձագար հայտնվեց ու... ամեն ինչ լռեց: Այսպես եկավ Սմոգի և Եսգարոտի վերջը:

Բայց Բերդը ողջ էր:

Երկնակամարում լուսինն ավելի ու ավելի վեր բարձրացավ, սառը քամին ավելի ու ավելի ուժգին ոռնաց, նա սպիտակ մեզը ոլորեց, պտուտակեց, քշեց արևմուտք և այնտեղ ծվեն-ծվեն արեց ու ցրիվ տվեց Սև Անտառի մերձ ճահիճների վրա: Այդ ժամանակ լճի մակերևույթին հայտնվեցին բազմաթիվ սև կետեր՝ նավակներ: Քամին լճից բերում էր Եսգարոտի բնակիչների ձայները, որոնք ողբում էին իրենց քաղաքը, բարիքները, ավերված տները: Եթե այն ժամանակ նրանք ընդունակ լինեին որևէ բանի մասին մտածելու, բացի իրենց դժբախտություններից, ապա կհասկանային, որ պետք է փառք տան ճակատագրին. քաղաքի բնակչության երեք քառորդն, այնուամենայնիվ, կենդանի էր մնացել, անտառները, դաշտերը, արոտավայրերը, անասունները և նավակների մեծ մասը փրկված էին, իսկ վիշապը՝ մեռած: Բայց վերջին իրադարձությունների իմաստը դեռ չէր հասել նրանց գիտակցությանը:

Վշտացած, սառած՝ նրանք հավաքվեցին ափին, և նրանց զայրույթը շուռ եկավ քաղաքագլխի դեմ, որն Եսգարոտից փախել էր այն ժամանակ, երբ մյուսները դեռևս պատրաստ էին հաստատակամորեն պաշտպանել քաղաքը:

— Նա, գուցե, լավ գլուխ ունի առևտրական գործերի համար, հատկապես, երբ խոսքը գնում է իր սեփականի մասին,— փնթփնթում էին նրանք,— բայց վտանգի պահին նրա վրա հույս դնել չի կարելի:

Եվ նրանք սկսեցին զովաբանել Բերդի քաջագործությունը, նրա վերջին հիանալի նետահարումը:

Եթե նա կենդանի լիներ, մենք նրան թագավոր կդնեինք: Ավա՛ղ... Չոհվեց Բերդը՝ Գիրիոնի վերջին շառավիղը, վիշապին նետահար անողը:

Այս խոսքերի վրա խավարից հայտնվեց մի բարձրահասակ կերպարանք: Մարդու վրայից ջուր էր հոսում, սև մազերը թափվել էին դեմքին և ուսերին, աչքերը վառվում էին կատաղի կրակով:

— Բերդը չի զոհվել,— գոռաց նա:— Նա խոր սուզվեց լիճը, երբ Եսգարոտի վրա ընկավ անշունչ թշնամին: Ես Բերդն եմ, Գիրիոնի շառավիղը, վիշապին հաղթողը...

— Բերդ արքա՛ն, Բերդ արքա՛ն...— լսվեցին բացականչությունները, իսկ քաղաքագլուխն ատամները կրճտացրեց:

— Գիրիոնը Դեյլի տիրակալն էր, այլ ոչ թե Եսգարոտի թագավորը,— ասաց նա:— Լճաշեն քաղաքում քաղաքգլուխներ միշտ ընտրել են ծերերից ու իմաստուններից և ոչ թե հասարակ ռազմիկներից: Թող Բերդը գնա իր թագավորությունը, նրա վերադարձին ոչինչ չի խանգարում: Ով

ուզում է, կարող է գնալ նրա հետ, եթե գտնում է, որ Սարի հովանու տակի սառը քարերը լճի կանաչ ափերից ավելի լավն են: Խելամիտները կման այստեղ, կվերակառուցեն իրենց քաղաքը, իսկ հետո կվայելեն խաղաղությունն ու առատությունը:

— Բերդ թագավորին ենք ուզում,— շարունակեց գոռալ ժողովուրդը,— հերիք եղավ, առևտրականներից ձանձրացել ենք արդեն:

— Կեցցե նետաձիգը, կորչեն փողի պարկերը...— միահամուռ գոչեցին բոլորը, և արձագանքը կրկնվեց ափին:

— Ո՞վ եմ ես, որ թերագնահատեմ նետաձիգ Բերդին,— շողմաձայն շարունակեց քաղաքալուիսը (Բերդն այժմ կանգնած էր նրա կողքին):— Այսօր նա նշանավոր տեղ է վաստակել մեր քաղաքի բարերարների ցուցակում: Նա արժանի է, որ իր մասին անմահ երգեր հյուսեն: Բայց ինչո՞ւ, իմ ժողովուրդ,— քաղաքագլուիսը հասակով մեկ ձգվեց ու ձայնը բարձրացրեց,— ինչո՞ւ եք ամեն ինչում ինձ մեղադրում: Ո՞ր մեղքիս համար եք ուզում ինձ վռնդել: Ո՞վ է վիշապին քնից արթնացրել, ես ձեզ եմ հարցնում: Ո՞վ է մեզնից թանկագին ընծաներ ու լիառատ օգնություն ստացել և ստիպել մեզ հավատալ, իբր թե հնուց եկած կանխագուշակություններն սկսում են իրականանալ: Ո՞վ օգտվեց մեր դյուրահավատությունից և բորբոքեց մեր երևակայությունը: Եվ ի՞նչ ոսկյի ուղարկեցին նրանք մեզ որպես պարգև: Կրակ ու կործանում... Ումի՞ց հատուցում պահանջենք մեր կորուստների համար, օգնություն՝ մեր որբևայրիների ու երեխաների համար:

Ինչպես տեսնում եք, քաղաքագլուիսն իզուր չէր զբաղեցնում իր պաշտոնը: Նրա խոսքերի արդյունքն այն եղավ, որ ժողովուրդը մոռացավ նույնիսկ մտածել նոր թագավորի մասին և իր վրդովմունքն ուղղեց Տորինի ու Ընկերության դեմ: Բոլոր կողմերից գայրալից բացականչություններ ու սպառնալիքներ էին լսվում, և նրանցից շատերը, որ առաջ բոլորից բարձր էին երգում հնագույն երգերը, այժմ ամենից բարձր էին գոռում, թե թզուկները դիտավորյալ են վիշապին իրենց վրա ուղարկել:

— Անխելք մարդիկ եք,— ասաց Բերդը:— Ի՞նչ միտք ունի ավելորդ խոսքեր ասել ու գայրանալ այն խեղճերի վրա: Նրանք անկասկած, առաջինն են կրակից կործանվել, ավելի շուտ, քան Սմոգը հարձակվեց մեզ վրա:

Եվ այդ պահին նա հիշեց այն առասպելական հարստությունը, որն այժմ ոչ ոքի չէր պատկանում և ոչ ոք էլ չէր պահպանում, ու լռեց: Բերդը մտածեց Դեյլի վերականգնման առթիվ քաղաքագլխի խոսքերի մասին, պատկերացրեց, թե ինչպես նորից կողոպտանքն ոսկե զանգերը: Միայն թե համախոհներ և աշխատողներ գտներ:

Եվ այն ժամանակ նա նորից խոսեց.

— Հիմա վիճաբանելու ժամանակը չէ, քաղաքագլուիս, ժամանակը չէ իշխանությունը փոխելով զբաղվել: Հարկավոր է գործ անել: Առայժմ դեռ

ձեզ եմ ծառայում, չնայած կգա ժամանակը, և ես, գուցե, իսկապես էլ կտեղափոխվեմ Հյուսիս նրանց հետ, ովքեր կուզենան հետևել ինձ:

Նա գնաց հեռևելու ճամբարի կառուցմանը և հիվանդներին ու վիրավորներին օգնություն ցույց տալու: Իսկ քաղաքագլուխը մնաց գետնին նստած և, հոնքերը կիտած, նայում էր նրա ետևից: Նա խելքը գլխին մարդ էր, դրա համար էլ այլևս ոչինչ չխոսեց, միայն բարձրաձայն հրամայեց կրակ ու ուտելիք բերել:

Ուր որ գնում էր Բերդը, ամեն տեղ լսում էր արագորեն, ինչպես կրակն անտառում, տարածվող խոսակցությունը անչափելի հարստության մասին, որը հիմա ոչ ոքի չէր պահպանում: Խոսում էին այն մասին, որ հավանաբար կլինի հատուցել իրենց բոլոր կորուստները և դեռ ավելին, հարստանալ ու ազատ պերճանքի առարկաներ գնել Հարավում: Այդ երազանքներն օգնում էին նրանց դիմանալ աղետալի վիճակին, օգնում էին կարճել ցուրտ, վշտալի գիշերը: Ապաստան կառուցել հաջողվեց ոչ բոլորի համար (քաղաքագլուխն, իհարկե, ուներ), մթերքը չէր հերիքում (նույնիսկ քաղաքագլխի պաշարներն էին վերջացել): Շատերն այդ գիշեր մրսեցին կամ վշտից հիվանդացան և շուտով մահացան: Հաջորդ ամիսներին էլ շատերը հիվանդացան ու տառապեցին սովից:

Այդ ժամանակ Բերդը ձեռնամուխ եղավ մարդկանց ղեկավարելուն, հրամաններ էր տալիս իր հայեցողությամբ, բայց միշտ քաղաքագլխի անուկից: Հեշտ չէր ղեկավարել մարդկանց, օթևան կառուցել, միջոցներ ձեռնարկել նրանց պաշտպանելու համար: Մեծ մասն, իհարկե, մինչև ձմեռ չէր ապրի, եթե օգնությունը չհասներ: Բերդն առաջին հերթին սուրհանդակներ ուղարկեց գետն ի վեր՝ անտառային էլֆերի արքայից օգնություն խնդրելու: Սուրհանդակներն էլֆերի գործին հանդիպեցին ճանապարհի կեսին, թեև վիշապին սպանելուց անցել էր ընդամենը երեք օր:

Անտառային էլֆերի արքան պատահածի մասին լսեց իր սեփական սուրհանդակներից և թռչուններից, որ բարեկամաբար էին վերաբերվում էլֆերին: Մեծ հուզում բարձրացավ թևավորների ողջ ցեղի մեջ, որոնք ապրում էին վիշապի Ամայության հարևանությամբ: Անթիվ անհամար երամները պտտվում էին օդում, արագաթև սուրհանդակները ճեղքում էին ամբողջ երկինքը: Անտառում, որտեղ ապրում էին էլֆերը, սուլոց, ծվծվոց ու կչկչոց բարձրացավ: Նորությունը տարածվեց նաև Սև Անտառում՝ «Սմոգը մեռել է»: Տերևները խշշում էին, ամեն տեղ ականջ էին դնում: Լուրը հասավ մինչև Մառախլապատ լեռան սոճու անտառները: Բերդը դա լսեց իր գերանակապ տանը, և գործիները խորհուրդ արեցին իրենց քարայրներում:

— Վախենում եմ, որ մենք այլևս չենք լսի Տորին Օուքենշիլդի մասին,— ասաց անտառային էլֆերի թագավորը: Ավելի լավ էր, նա իմ գերին մար: Բայց, ինչպես ասում են, ամենաչար քամին էլ բարի լուր է բերում:

Չէ՞ որ նա էլ երբեք չէր մոռանում Տրորի հարստության մասին առասպելները: Ահա թե ինչու Բերդի սուրհանդակները հանդիպեցին թագավորին, երբ նա բազմաթիվ նիզակակիրների ու նետածիզների հետ շարժվում էր իրենց կողմը: Նրանց գլխավերևում ամպի նման թռչում էին ագռավները, մտածելով, որ արդեն մոտ է պատերազմը, որպիսին այս կողմերում չի եղել ահա արդեն շատ-շատ տարիներ:

Լսելով Բերդի խնդրանքը իրենց օգնելու մասին՝ արքան խղճաց լճաբնակներին, և քանի որ էլֆերը լավ ու բարյացակամ ժողովուրդ էին, փոխեց իր երթուղին, չնայած սկզբում գնում էր ուղիղ դեպի Սարը, և գետով շտապեց ներքև՝ Երկար Լիճ: Քանի որ էլֆերը բավարար թվով նավակներ ու լաստեր չունեին իրենց տրամադրության տակ, գործն ստիպված եղավ ոտքով գնալ, բայց պարենի մեծ պաշարն արքան ուղարկել էր ջարային ուղիով: Էլֆերը արագոտն ժողովուրդ են, և չնայած նրանք ետ էին վարժվել անհուսալի ճահճային հողերից, որ ընկած էին անտառի ու լճի միջև, անցումն արագ կատարեցին: Արդեն վիշապի մահվանից հինգ օր հետո նրանք մոտեցան լճի ափերին և տեսան քաղաքի ավերակները: Ինչպես և պետք էր սպասել, նրանց դիմավորեցին ցնծությամբ, բնակիչներն ու քաղաքագլուխը համաձայնեցին ցանկացած գործարք կնքել էլֆերի արքայի հետ՝ օգնության փոխարեն:

Շուտով գործողությունների պլանը պատրաստ էր: Կանանց ու երեխաների, ծերերի ու հիվանդների հետ լճի վրա մնացին քաղաքագլուխը և որոշ արհեստավոր մարդիկ ու հմուտ վարպետ էլֆեր: Նրանք մանցին ծառերը տապալելու և անտառից գետով ուղարկած գերանները բռնելու: Հետո սկսեցին ափի երկարությամբ խրճիթներ կառուցել, որպեսզի ձմռանը մարդկանց տեղավորեն: Քաղաքագլխի կարգադրությամբ և նրա հսկողությամբ սկսեցին նոր քաղաքի պլան կազմել, որը պետք է ավելի գեղեցիկ ու մեծ լիներ նախկինից, բայց ոչ թե լճի հին հատվածում, այլ ավել հյուսիս:

Լճի բնակիչներն այլևս չէին սարսափում այն տեղից, որտեղ ընկած էր մեռած վիշապը: Նրան այլևս վերադարձ չկար դեպի իր ոսկե մահիճը, նա անշարժացել էր լճի հատակում, ինչպես քարե սարսափելի քանդակ: Եվ հարյուրավոր տարիներ անց հսկայական ոսկերոները խաղաղ եղանակին սպիտակին էին տալիս ծանծաղ ջրերում, հին քաղաքի ավերակների մեջ: Հազարից մեկն էր համարձակվում նավակով լողալ այդ անիծյալ տեղով, իսկ վիշապի նշանավոր գրահից թափված թանկարժեք քարերը հանելու համար ոչ ոք սիրտ չէր անում սուզվել:

Մնացած տղամարդիկ, ովքեր դեռ ծեր չէին ու ամուր էին, և էլֆերի համարյա ողջ զորքը արշավեցին դեպի Սարը:

Եվ այսպես, քաղաքի կործանման տասնմեկերորդ օրը զորքի գլխամասը անցավ լճի ծայրին գտնվող քարե դարպասով և ոտք դրեց ամայի հողին:

ԱՄՊԵՐԸ ԿՈՒՏԱԿՎՈՒՄ ԵՆ

Այժմ վերադառնանք Բիլբոյին ու թզուկներին: Նրանք հերթով ամբողջ գիշեր հերթապահում էին մինչև առավոտ, սակայն կասկածելի ոչինչ չնկատեցին: Բայց ցերեկը առաջվանից ավելի շատ թռչուններ հավաքվեցին: Նրանք երամներով գալիս էին հարավից, իսկ Սարի մերձակայքում ապրող ագռավները պտտվում էին Սարի վրա ու անդադար կռկռում:

— Ինչ-որ տարօրինակ բան է կատարվում, — ասաց Տորինը: — Աշնանային չուի ժամանակն անցել է, ասենք թռչուններն էլ բոլորը տեղացի են, իսկ հեռվում ես տեսնում եմ լեշով սնվող գիշանգղներ, նրանք ասես ճակատամարտի են սպասում:

Հանկարծ Բիլբոն ձեռքը պարզեց:

— Տեսեք, ծեր կեռնեխը վերադարձել է... նշանակում է, նա փրկվել է, երբ Սմոգը ջնջում էր մեր լանջը: Բայց խիտնջները հազիվ թե կենդանի մնացած լինեն:

Եվ, իրոք, կեռնեխը թռավ նրանց մոտ, նստեց քարին, թևերը թափահարեց և կչկչաց: Հետո գլուխը կողքի թեքեց և ականջ դրեց, հետո նորից կչկչաց և նորից գլուխը կողքի թեքեց:

— Իմ կարծիքով, նա ինչ-որ բան է ուզում ասել մեզ, — ենթադրեց Բալինը,— բայց ես գլխի չեմ ընկնում թե ինչ: Կեռնեխները չափազանց արագ ու անհասկանալի են բլբլում: Իսկ դու գլխի ընկնում ես նա ինչ է ասում, Բեգիս...

— Ուղի բոլորը,— պատասխանեց Բիլբոն, որ բացարձակապես ոչինչ չէր հասկացել:— Ըստ իս ծերուկը շատ հուզված է:

— Գոնե դա արջնագռավ լիներ,— նկատեց Բալինը:

— Իսկ ինձ թվում է, դու ագռավներին չես սիրում: Անցյալ անգամ նրանցից ուղղակի փախար:

— Ախր նրանք ագռավներ էին... ըստ որում զգվելի անտաշներ, կասկածելի տեսակի: Լսեցի՞ր, մեզ ինչ խոսքեր էին ասում: Ոչ, արջնագռավները բոլորովին ուրիշ են: Տրորի ժողովուրդը մի ժամանակ սերտ բարեկամություն էր անում նրանց հետ, նրանք մեզ գաղտնի տեղեկություններ էին բերում, իսկ մեզանից ամեն տեսակ փայլփյուն առարկաներ էին նվեր ստանում, որոնք հաճույքով թաքցնում էին իրենց բներում: Նրանք երկար են ապրում, հիանալի հիշողություն ունեն և այն ամենը, ինչ-որ գիտեն ու հիշում են, հաղորդում են իրենց երեխաներին: Երիտասարդությանս տարիներին ես շատ արջնագռավներ էի ճանաչում: Ախր հենց այս բարձունքն էլ մի ժամանակ անվանեցին Ագռավի, այն պատճառով, որ այստեղ պահակատան վերևում ապրում էր արջնագռավների նշանավոր իմաստուն մի գույգ՝ ծեր Կռավանը և իր

կինը: Սակայն չեմ կարծում, որ այդ հինավուրց տոհմից որևէ մեկը կենդանի մնացած լինի:

Հենց որ նա լռեց, կեռնեխը բարձր ճիչ արձակեց ու իսկույն թռավ գնաց:

— Մենք նրան չենք հասկանում,— ասաց Բալինը,— բայց նա, համոզված եմ, հասկանում է մեզ: Ուշադրությամբ հտեւեւիր, հիմա ինչ-որ բան կլինի:

Մի քիչ անց թւերի բախյուն լսվեց, կեռնեխը վերադարձավ, այն էլ ոչ մենակ, այլ մի ծեր, շատ զառամյալ արջնագռավի հետ: Համարյա կույր, քաչալ գլխով, վիթխարի արջնագռավը հագիվ էր շարժվում: Վայրէջք կատարելով հարթակի վրա՝ նա դանդաղ, դժվարությամբ ցատկոտելով մոտեցավ Տորինին:

— Ով Տորին, որդի Տրեյնի, և Բալին, որդի Ֆանդիի,— կռկռաց նա, և այս անգամ Բիլբոն ամեն ինչ հասկացավ, որովհետև արջնագռավը խոսում էր ոչ թե թռչնային, այլ մարդկային լեզվով:— Ես Ռոսկն եմ, Կռավանի որդին: Կռավանը մահացել է, դու մի ժամանակ նրան ճանաչում էիր: Հարյուր հիսուներեք տարի է ացնել այն օրվանից, ինչ ես դուրս եմ եկել ձվից, բայց հիշում եմ այն բոլորը, ինչ պատմում էր հայրս: Այժմ ես Սարի շրջակայքում ապրող մեծ արջագռավների առաջնորդն եմ: Մենք քիչ ենք, բայց դրա փոխարեն հիշում ենք Սարատակի նախկին թագավորին: Իմ հպատակների մեծ մասը հիմա բացակայում է, որովհետև Հարավից մեծ նորություններ են հասել մեզ. դրանց մի մասը քեզ ուրախություն կպատճառի, իսկ մյուս մասը կվշտացնի: Նայիր, թռչունները բոլոր կողմերից հավաքվում են Սարի ու Դեյլի մոտ, քանի որ լուր է տարածվել Սմոգի մահվան մասին...

— Մեռել է, մեռել է,— իրար ընդհատելով գոռացին թզուկները:— Ուրմեն մենք իզուր էինք վախենում, գանձերը հիմա մերն են:— Նրանք բոլոր տեղերից վեր թռան և ուրախությունից ցատկոտեցին:

— Այո, նա մեռած է,— պատասխանեց Ռոսկը:— Կեռնեխը, թող որ երբեք չթափվեն նրա փետուրները, տեսել է, թե ինչպես է կործանվել Սմոգը, իսկ նրան կարելի է հավատալ: Սմոգը ընկել է Եսգարոտի բնակիչների դեմ մղած կռվում, երեք գիշեր սրանից առաջ, լուսնի դուրս գալու հետ:

Տորինը դժվարությամբ հանգստացրեց թզուկներին և համոզեց մինչև վերջ լսել արջնագռավին: Չառամյալ արջնագռավը, ճակատամարտը նկարագրելով, շարունակեց.

— Այդպիսին է ուրախալի լուրը, Տորին Օուքենշիլդ: Առանց վախի վերադարձի՞ր քո ապարանքները, գանձերը առժամանակ քունն են: Առժամանակ, որովհետև միայն թռչունների երամները չէ, որ ձգվում են դեպի այստեղ: Գանձերի պահապանի մահվան լուրը տարածվեց ամենուր, իսկ Տորիի հարստությունների մասին առասպելը չի հնացել, քանի որ անդադար պատմել են դրա մասին: Շատերը երազում են, որ ավարի մի մասն էլ իրենց հասնի: Արդեն դեպի այստեղ է շարժվում Էլֆերի

գործը. նրանց հետ էլ՝ գիշակերները, որոնք կռվի ու արյունահեղության հույս ունեն: Լճի բնակիչները տրտնջում են և իրենց հասած աղետների համար մեղադրում են թզուկներին: Նրանք անօթևան են մնացել, շատերը մեռել են: Սմոգը կործանեց նրանց քաղաքը, դրա համար էլ նրանք նույնպես մտածում են իրենց կորուստները հատուցել ձեր գանձերի հաշվին, անկախ այն բանից՝ դուք ո՞րք եք, թե մեռած: Թող ձեր իմաստությունը հուշի ձեզ, թե ինչ ճանապարհ ընտրեք: Լսեք իմ խորհուրդը. Լճաշեն քաղաքի քաղաքագլխին չվստահեք, ավելի շատ վստահության արժանի է նա, ով նետահար արեց վիշապին: Նրա անունը Բերդ է: Նա Դեյվից է, Գիրիոնի շառավիղներից: Նա խոժոռադեմ մարդ է, բայց հուսալի: Մենք շատ կուզեինք թզուկների, մարդկանց և էլֆերի միջև հաշտության ականատես լինել: Բայց այդ հաշտությունը ձեզանից բավականին ոսկի կխլի: Ես վերջացրի:

Եվ այստեղ Տորինը ազատություն տվեց իր գայրույթին:

— Շնորհակալ եմ քեզից, Ռոակ, որդի Կռավանի: Քեզ և քո ցեղին մենք, հասկանալի է, չենք մոռանա: Բայց քանի մենք կենդանի ենք, ոչ մի գող և բռնակալ չի կարող խլել մեր ոսկին: Եթե ուզում ես մեր շնորհակալությանն արժանանալ, մեզ լուր բեր այն մասին, թե ով է մոտենում Սարին: Եվ էլի մի խնդրանք ունեմ. եթե ձերոնց մեջ չափելներ կան, ուժեղ թւերով, սուրհանդակ ուղարկիր իմ ազգականներին, հյուսիսային լեռներ, թող պատմեն մեր աղետների մասին: Ամենագլխավորը՝ լուր տան իմ հորեղբորորդի Դեյնին, որ ապրում է Երկաթե Բլուրներում: Դա բոլորովին էլ հեռու չէ այստեղից: Նա շատ փորձված ռազմիկներ ունի: Թող մեզ օգնության շտապի:

— Չգիտեմ քո որոշումը լավ բանի կհասցնի, թե վատ,— կռկռաց Ռոակը,— բայց ես քո խնդրանքը կկատարեմ:

Եվ նա ծանրորեն թռավ գնաց:

— Ետ դեպի Սարը,— բացականչեց Տորինը:— Մեր ժամանակը քիչ է:

— Իսկ ուտելիք մեզ հարկավոր է շատ,— միջամտեց Բիլբոն, որ միշտ գործնական էր: Նա գտնում էր, որ վիշապի կործանումով իրենց արկածներն ըստ էության վերջանում են (որում խիստ սխալվում էր): Նա կտար ավարի իր ողջ բաժինը, միայն թե այս պատմությունը խաղաղությամբ ավարտվեր:

— Ետ դեպի Սարը,— խմբով կրկնեցին թզուկները, ասես Բիլբոյի խոսքերը չէին էլ լսել: Վերջինս հարկադրված էր հետևել նրանց:

Թզուկների տրամադրության տակ մի քանի օր էր մնում: Նրանք մեկ անգամ էլ հետազոտեցին քարայրները և որոշեցին, որ ներս մտնել կարելի է միայն Գլխավոր դարպասից, այնուամենայնիվ Սարատակ տանող մյուս բոլոր անցքերը (բացի գլխավոր դռնից) Սմոգը վաղուց փլուզել էր, դրանց հետքն էլ չէր մնացել: Դրա համար էլ թզուկները ջանասիրաբար

ձեռնամուխ եղան գլխավոր մուտքը ամրացնելուն և դեպի այն տանող
նոր արահետ բացելուն: Ներսում որքան ասես բահ գտնվեց, կացիներ ու
մուրճեր, որ մնացել էին հնագույն հանքափորներից և հյուսներից, իսկ
այդպիսի գործերում թզուկներն առաջվա պես իրենց հավասարը չունեին:

Մինչև նրանք չարչարվում էին, արջնագռավները շարունակ լուրեր էին
բերում: Այսպես թզուկներն իմացան, որ Էլֆերի թագավորը թեքվել է դեպի
լիճը, նշանակում է, դեռ ժամանակ կա: Պարզվեց մի հաճելի նորութուն
ևս. Էլֆերի մի քանի պոնիներ փախել են և հիմա թափառում են
Արագահոս գետի ափերին, թզուկների նախկին ճամբարից ոչ հեռու,
որտեղ մթերքի որոշ պաշարներ էին պահպանվել: Արջնագռվան այնտեղ
տարավ Ֆիլիին ու Կիլիին, որոնք բռնեցին պոնիներին և նրանց բարձած
բերեցին այն ամենը, ինչ որ կարող էին: Չորս օր անցավ և վերջապես,
թզուկներն իմացան, որ Լճաշեն քաղաքի և Էլֆերի միացյալ բանակները
մոտենում են Սարին: Այդ օրերի ընթացքում նրանց հույսերն ամրապնդվել
էին. ուստիքը պետք է որ մի քանի շաբաթ բավականացներ (գլխավոր
սնունդն, իհարկե, չորահացն էր, որից կարգին ձանձրացել էին, բայց
նույնիսկ չորահաց ունենալն ավելի լավ էր, քան ոչինչը): Նրանք հասցրել
էին դարպասի առաջ մի հաստ ու բարձր քարե պատ կանգնեցնել: Պատի
մեջ դիտանցքներ էին թողել, որտեղից կարող էին կրակել, բայց մուտք
չէին թողել: Դուրս ու ներս էին անում շարժական սանդուղքներով, իսկ
շինանյութերը վերև էին քաշում պարաններով: Նոր պատի մեջ նրանք
ցածրիկ մի կամար էին բացել այնտեղից դուրս եկող վտակի համար, իսկ
դրանից այն կողմ նեղ հունն այնպես էին փորել, որ Սարի ու զառիթափի
միջև, որտեղից գետը գահավեժ իջնում էր դեպի Դեյլ, լայն մի ջրամբար էր
գոյացել: Այժմ դարպասին հասնել կարելի էր միայն լողալով կամ ժայռի
երկայնքով անցնող նեղ ելուստներով: Պոնիներին նրանք տարան հին
կամրջից վեր բարձրացող աստիճանների մոտ, բեռներն իջեցրին և
առանց հեծյալների ուղարկեցին հարավ՝ իրենց տերերին:

Հանկարծ մի անգամ գիշերը հովտում կրակներ բռնկվեցին, բազում
կրակներ, ասես այնտեղ խարույկներ ու ջահեր էին վառել:

— Նրանք եկել են,— բացականչեց Բալինը:— Հսկայական ճամբար է:
Երևի մթնշաղին են մտել հովիտ:

Այդ գիշեր թզուկները քիչ քնեցին: Լույսը նոր բացված՝ նրանք պատի
ետևից ռազմիկների մի խումբ տեսան: Ռազմիկները դանդաղ
բարձրանում էին դեպի վեր: Շուտով թզուկները զանազանեցին լճի
զինված մարդկանց և Էլֆ նետածիզներին: Նրանք մազլեցին ժայռերի
վրա ու հայտնվեցին ջրվեժի եզրին: Եվ այ թե զարմացան՝ իրենց առջև
ճամբար ու դարպասի փոխարեն նոր տաշած քարերից շարված պատը
տեսնելով:

Նրանք կանգ առան, խորհրդակցեցին, ձեռքերով ինչ-որ բան ցույց
տվեցին, և հենց այդ պահին Տորինը բարձրաձանեց նրանց.

— Ովքե՞ր եք դուք: Ինչո՞ւ եք Սարատակի թագավորի դարպասը եկել զինված, կարծես պատերազմ եք ուզում: Ի՞նչ եք կամենում...

Նրան չպատասխանեցին: Ոմանք իսկույն ետ դարձան, մյուսները մի որոշ ժամանակ էլ տնտղեցին ամրությունները, ապա հետևեցին առաջիններին: Այդ նույն օրը նրանք ճամբարը տեղափոխեցին և ծածկեցին Սարի երկու ելուստների միջև: Ժայռերի մեջ երգեր և ուրախ ձայներ լսվեցին, որ վաղուց չէր եղել: Էլֆերը հնչեցրին տավիղները, լսվեցին զարմանահրաշ մեղեդիներ: Եվ երաժշտության ձայների հետ սառը օդն ասես թե ջերմացավ, ու թզուկներին հասավ դաշտային ծաղիկների մեղ բուրմունքը, կարծես ոչ թե խոր աշուն էր, այլ գարուն: Բիլբոն անձկորեն ցանկանում էր փախչել խստաշունչ բերդից, իջնել ցած, միանալ խարույկների շուրջը ծայր առած ուրախ խրախճանքին: Ջահել թզուկների սրտերը նույնպես թունդ էլան. լավ կլիներ ամեն ինչ այլ կերպ ընթանար, քրթմնջացին նրանք, լավ կլիներ ընկերակցել այդ քեֆչիներին: Բայց Տորինը հոնքերը կիտեց ու գայրալի հայացք գցեց նրանց վրա: Այդ ժամանակ թզուկները բերեցին տավիղներն ու գանձարանում գտած մյուս երաժշտական գործիքները և նվագեցին ու երգեցին, ցանկանալով Տորինի սիրտը շահել: Բայց նրանց երգը նման չէր Էլֆերի երգերին, այլ ավելի շատ նմանվում էր այն առաջինին, որ թզուկները մի ժամանակ երգել էին հոբիտի բնում:

Դաժան կռվի մեջ վիշապը ընկավ,
Արքան ետ խլեց գահն օրինական,
Այդպես կմեռնի ամեն թշնամի՝
Ասաց մեր արքան:

Եվ վարպետները հմուտ ու բարի
Ոսկուց, արծաթից ու անգին քարից
Ձուլեցին թասեր, գավաթներ սիրուն,
Եվ շողշողացին սուտակ, մարգարիտ:

Նրանց արվեստը գաղտնիք ունի հին՝
Այնպես անել, որ թագին ու գահին
Սուտակը շողա աստղերի փայլով,
Եվ այդ փայլն իր մեջ հավիտյան պահի:

Շուրջը ամենուր ազատ է հիմա,
Առատություն է բոլորիս համար,
Դե, Անտառային Ժողովուրդ, առաջ,
Արքային պետք են լավ բարեկամներ:

Թող կոչն այս հնչի ամեն ականջում.
Քարանձավները ձեզ տուն են կանչում,
Դե, Անտառային Ժողովուրդ, առաջ,
Արքան ձեզ բացսիրտ, խնդուն է կանչում:

Դաժան կռվի մեջ վիշապը ընկավ,
Արքան ետ խլեց գահն օրինական,

Այդպես կմեռնի ամեն թշնամի՝
Ասաց մեր արքան:

Իսկապես էլ երգը Տորինին դուր եկավ, ևս փափկեց, զվարթացավ և սկսեց մոտավորապես հաշվել, թե որքան ժամանակ հետո Դեյնը կհասնի Մենավոր Լեռան մոտ, եթե եղբորից լուրն ստանալուն պես Երկաթե Բլուրներից դուրս գա: Բիլբոն տխրեց՝ երգը և դրան հաջորդող խոսակցությունը լսելով. դրանք արդեն չափազանց ռազմատենչ թվացին նրան:

Հաջորդ առավոտյան թզուկները նիզակակիրների մի ջոկատ տեսան, որն անցնում էր գետն ու հովտով վեր բարձրանում: Սրանք տանում էին Էլֆերի թագավորի կանաչ դրոշակը և Լճաշենի երկնագույն դրոշակը: Շուտով նրանք հայտնվեցին ուղիղ դարպասը փակող պատի առաջ:

Եվ նորից Տորինը բարձր ձայնով դիմեց նրանց.

— Ո՞վ եք դուք, որ գենքը ձեռքներիդ եք եկել Տորինի, Տրեյնի որդու, Սարատակի թագավորի դարպասի մոտ...

Այս անգամ ևս պատասխան ստացավ: Բարձրահասկան, թխամազ դեմքով մարդն առաջ եկավ:

— Ողջունում եմ քեզ, Տորին: Ինչո՞ւ ես փակվել այդտեղ, կարծես ավազակ լինես որջում: Ես ու դու առայժմ թշնամիներ չենք, մենք հույս չունեինք ձեզ կենդանի տեսնել և հիմա ուրախ ենք: Իսկ քանի որ կենդանի եք, ապա խելք խելքի տալու և խորհրդակցելու բան ունենք:

— Ո՞վ ես դու, և ինչի՞ մասին պետք է խորհրդակցենք:

— Ես Բերդն եմ, իմ նետից ընկավ վիշապը: Ես ազատագրել եմ քո հարստությունը: Մի՞թե դա քեզ չի վերաբերում... Բացի դրանից ես Գիրիոնի անմիջական ժառանգն եմ, Դեյլից: Քո գանձարանում բավական թանկարժեք զարդեղեն կգտնվի, որ մի ժամանակ Սմոգը գողացել է այդ քաղաքից: Մի՞թե չարժե այս մասին խորհել: Այնուհետև, վերջին կռվում Սմոգն ավերեց Եսգարոտի բնակիչների տները, իսկ ես առայժմ ծառայում եմ նրանց քաղաքագլխին: Նրա անունից ես հարցնում եմ քեզ. մի՞թե դու չես կարեկցում ուրիշի վշտին և տառապանքներին: Քո դժվար թոպեին նրանք քեզ օգնեցին, իսկ դու ի պատասխան նրանց կործանում բերեցիր, թեպետև ոչ դիտավորյալ:

Ինչ արած: Ասված էր արդարամիտ և ազնիվ, չնայած հպարտ ու մռայլ տոնով: Բիլբոն մտածեց, որ Տորինը կնդունի ասվածի օրինականությունը: (Այն մասին, որ ինքը մեն-մենակ էր հայտնաբերել վիշապի խոցելի տեղը, ոչ ոք ոչ մի անգամ չհիշեց: Ասենք ևս չէր էլ սպասում): Բայց Բիլբոն նկատի չէր առել ոսկու իշխանությունը և թզուկների բնավորությունը: Տորինը երկար ժամեր էր անցկացրել գանձարանում, և ազահուությունը հիմնավորապես տիրել էր նրան: Գլխավորապես ևս փնտրում էր Արկենստոնը, բայց այդ ընթացքում նաև ուրիշ հրաշալի իրեր էր

նկատում, որոնց հետ կապված էին հիշողություններ իր ժողովրդի վաստակի ու տառապանքների մասին:

— Ամենագլխավոր և խարդախ հարցը պահել ես վերջում, — պատասխանեց Տորինը:— Ոչ ոք իրավունք չունի ոտնձգություն կատարել իմ ժողովրդի հարստության նկատմամբ, քանի որ Սմոգը, դրանք գողանալով, իմ ժողորդին գրկեց օթևանից, իսկ ոմանց էլ կյանքից: Գանձերը վիշապին չէին պատկանում, և հիմա դրանց օգնությամբ նրա չարագործությունները քավել հնարավոր չէ: Ապրանքի գինը և լճի բնակիչներից ստացած օգնությունը մենք ազնվորեն կհատուցենք: Սակայն ոչինչ, լսո՞ւմ եք, ոչինչ չենք տա, եթե մեզ ուժով սպառնան: Քանի մեր դռների մոտ զինված զորք է կանգնած, մենք ձեզ դիտում ենք որպես մեր թշնամիներ ու կողոպտիչներ: Ես էլ իմ հերթին կհարցնեմ ձեզ. իսկ գանձերի ո՞ր մասը կտայիք մեր տոհմին, եթե մեզ մեռած գտնեիք...

— Հարցը հիմնավոր է,— պատասխանեց Բերդը,— բայց դուք չեք կործանվել, իսկ մենք էլ կողոպտիչներ չենք: Եվ, ախր, բացի իրավունքներից, գոյություն ունի նաև պարզապես խղճահարություն, որ հարուստը կարող է տածել կարիքավորների նկատմամբ, եթե նրանք իրեն բարեկամաբար են վերաբերվել դժբախտության պահին: Ընդ որում իմ մյուս հարցերն անպատասխան մնացին:

— Կրկնում եմ, ես մտադիր չեմ բանակցություններ վարել իմ դարպասը պաշարած զինված ռազմիկների հետ: Առավել ևս էլֆերի հետ, որոնց նկատմամբ բարի զգացմունքներ չեմ տածում: Մեր բանակցությունները նրանց չեն վերաբերում: Գնացեք այստեղից, քանի դեռ ձեզ վրա նետեր չեն թռել: Եթե կկամենաք նորից ինձ հետ խոսել, նախ էլֆերի զորքը ետ ուղարկեք անտառ, որտեղ նրանց տեղն է, այն ժամանակ էլ վերադարձեք, բայց առանց զենքի...

— Էլֆերի թագավորը իմ բարեկամն է, նա օգնել է լճի բնակիչներին ծանր ժամանակներում և դա արել է զուտ բարեկամաբար, անշահախնդրորեն,— առարկեց Բերդը:— Մենք ձեզ ժամանակ կտանք մտածելու: Մինչև մեր գալը խելքի եկեք...

Այս խոսքերով Բերդը ետ դարձավ, և ջոկատն իջավ ճամբար:

Մի քանի ժամ էլ չէր անցել, երբ ջոկատը նորից հայտնվեց: Առջևից գալիս էին փողահարները, և նրանցից մեկը, փողահարելով, հայտարարեց.

— Եսգարոտի և Անտառի անունից մենք դիմում ենք Տորին Օուքենշիլդին, Տրեյնի որդուն, որ իրեն կոչում է Սարատակի թագավոր: Մենք նրան առաջարկում ենք կատարել իրենց ներկայացված պահանջները կամ թե չէ այսուհետև կհամարենք մեր երդվյալ թշնամին: Նա պարտավոր է հարստության մեկ տասներկուերորդ մասը տալ Բերդին, որպես վիշապին սպանողի և Գիրիոնի ժառանգորդի: Այդ բաժնից Բերդը օգնություն կհատկացնի Եսգարոտին, որքան որ հարկավոր համարի: Բայց եթե Տորինը ցանկանում է իր հարևանների

բարեկամությունն ու հարգանքը ձեռք բերել, որ հնում մտնում էր իր նախահայրերի սովորույթների մեջ, ապա ինքը իր կողմից բաժին կհանի լճի բնակիչներին սատար լինելու համար:

Ի պատասխան Տորինը խլեց աղեղը և նետը արձակեց մունետիկի վրա: Նետը խրվեց վահանի մեջ և թրթռաց:

— Եթե դա է քո պատասխանը,— գոռաց մունետիկը, ապա Սարը հայտարարում եմ պաշարված: Դուք այնտեղից դուրս չեք գա այնքան ժամանակ, քանի դեռ չեք հրավիրի հաշտության և բանակցությունների: Մենք ձեզ վրա զենք չենք բարձրացնի, բայց և դուրս չենք թողնի այստեղից: Նստեք ձեր ոսկիների վրա և կերեք այն, թե որ ուզում եք:

Այս ասելով բանբերներն արագ հեռացան, իսկ թզուկները մնացին՝ իրենց վիճակի մասին մտածելով: Տորինն այնպես մռայլվեց, որ ոչ ոք չէր համարձակվի նրան հակաճառել, եթե նույնիսկ ուզենար, բայց դժբախտությունն էլ հենց այն էր, որ թզուկների մեծ մասը համամիտ էր նրան, բացառությամբ գիրուկ Բոմբուրի, Ֆիլիի ու Կիլիի: Բիլբոն հասկանալի է, իրադարձությունների նոր շրջադարձը չէր ողջունում: Առանց այդ էլ վաղուց Սարը զգվեցրել էր նրան, էլ ուր մնաց նստել պաշարման մեջ... Սա արդեն չափից դուրս էր...

«Ամբողջ Սարի ներսը ներծծված է վիշապի գարշահոտությամբ,— մռթմռթում էր նա քթի տակ,— սիրտս խառնում է այդ հոտից: Իսկ այդ չորահացն էլ արդեն կոկորդիցս կուլ չի գնում»:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՈՂԸ

Օրերը ձգվում էին՝ դանդաղ ու տաղտկալի: Թզուկները ժամանակը սպանում էին գանձերը դասավորելով ու կարգի բերելով: Վերջապես Տորինը խոսք բացեց Տրեյնի Արկենստոնի մասին ու թախանձանքով խնդրեց քրքրել բոլոր անկյունները:

— Իմ հոր Արկենստոնը,— ասաց նա,— մեկ-մենակ ոսկու գետից թանկ է, իսկ ինձ համար առավել ևս գին չունի: Այս ամբողջ հարստությունից հատկապես դա եմ ես ինձ համար նախընտրել և դաժանորեն վրեժ կլուծեմ ամեն մեկից, ով կգտնի այն ու կթաքցնի:

Բիլբոն լսեց նրա խոսքերն ու խիստ վախեցավ. ի՞նչ կլինի, եթե քարը գտնեն: Նա քարը թաքցրել էր լաթերի կապոցի մեջ, որ գիշերը բարձի փոխարեն դնում էր գլխի տակ: Բայց լռեց, որովհետև քանի տաղտուկն անտանելի էր դառնում, այնքան նրա գլխում աստիճանաբար պլանը հասունանում էր:

Ամեն ինչ անփոփոխ էր մնում, երբ հանկարծ արջնագռավները նոր լուր բերեցին, որ Դեյնը հինգ հարյուր թզուկներով դուրս է եկել Երկաթե Բլուրներից և մի երկու օր հետո կլինի Դեյլում:

— Վախենում եմ, որ նրանք չկարողանան աննկատ մոտենալ Սարին,— վերջացրեց Ռոակը:— Չլինի թե հովտում մարտն սկսվի: Դա ինձ դուր չի

գալիս: Նրանք, իհարկե, համարձակ ժողովուրդ են, բայց հազիվ թե նրանց ուժը պատի հաղթել այդ գործին, որ ձեզ պաշարել է: Իսկ եթե նույնիսկ հաղթեն, ապա ի՞նչ է սպասում ձեզ: Նրանց կրնկակոխ հետևում է ձյունն ու ձմեռը: Ինչո՞վ կկերակրվեք դուք, առանց հարևանների օգնության ու բարեհաճության: Վիշապը չկա, բայց այնպես չլինի, որ գանձերը ձեզ մահ բերեն:

Սակայն Տորինին հնարավոր չէր խելքի բերել:

— Ձմեռն ու սառնամանիքը մարդկանց ու էլֆերին էլ կդադեն,— առարկեց նա:— Նրանք գուցե և չեն դիմանա ամառի անապատի կյանքին: Հենց որ նրանց վրա հարձակվեն իմ ազգականները և ձմեռը հույս տա, նրանք ուզած-չուզած այլ կերպ կխոսեն:

Այդ գիշեր Բիլբոն վճռեց: Անլուսին գիշեր էր, երկինքը սև: Հենց որ լրիվ մթնեց, Բիլբոն քաշվեց ետին սենյակի անկյունը և կապոցից հանեց պարանն ու քրջերի մեջ փաթաթված կրկենստոնը: Հետո բարձրացավ պատի վրա: Այնտեղ Բոմբուրն էր հերթապահում:

— Լավ ցուրտ է,— ասաց Բոմբուրը:

— Իսկ ներսում բավական տաք է,— նկատեց Բիլբոն:

— Էն էլ ո՞նց: Բայց ես դեռ մինչև գիշերվա տասներկուսը պետք է կանգնեմ,— փնթփնթաց գիրուկը:— Չզվելի պատմությունն ստացվեց: Աստված չանի, որ ես Տորինին դատապարտեմ, թող անսահման աճի նրա մորուքը, բայց նա միշտ ինքնասածի է եղել և երբեք խելքի ճկունությամբ աչքի չի ընկել:

— Ճկունության տեսանկյունից ես էլ հիմա մի բան չեմ,— նկատեց Բիլբոն:— Ոտքերս բոլորովին փայտացել են, տրորել եմ քարե աստիճաններին ու քարհատակ միջանցքներում ման գալով: Ամեն ինչ կտայի, որ մի քիչ քայլեի փափուկ խոտի վրայով:

— Իսկ ես ամեն ինչ կտայի մի կում որևէ թունդ բանի, մի կուշտ ընթրիքի ու փափուկ անկողնի համար...

— Ցավոք սրտի, քանի պաշարումը շարունակվում է, չեմ կարող նման բան առաջարկել ձեզ: Բայց դրա փոխարեն ահա թե ինչ կառաջարկեմ. արդեն վաղուց է ժամապահ չեմ կանգնել և հաճույքով քո փոխարեն կհերթապահեմ, եթե ուզում ես: Միևնույն է, այսօր քունս չի տանում:

— Դու լավ ընկեր ես, Բիլբո Բեգինս, ես հաճույքով կհամաձայնեմ: Եթե որևէ բան նկատես, չմոռանաս, նախ ինձ արթնացրու...Ես կպառկեմ դռան մոտ, մուտքից դեպի ձախ:

— Գնա, գնա,— ասաց Բիլբոն:— Ես քեզ կարթնացնեմ կեսգիշերին, իսկ դու կարթնացնես հաջորդ ժամապահին:

Հենց որ Բոմբուրը գնաց, Բիլբոն մատանին դրեց մատին, պարանը կապեց, անցավ պատի վրայով և սկսեց ցած իջնել: Նա առջևում հինգ ժամ ուներ: Բոմբուրը կքնի, նա ուզած ժամանակ կարող է քնել, Սև

Անտառի արկածներից հետո նա շարունակ ուզում էր նույն հրաշալի երազները տեսնել: Մնացածներն աշխատում էին, և հազիվ թե թզուկներից որևէ մեկի մտքով անցնի ոչ իր հերթապահության ժամանակ պատի վրա բարձրանալ:

Անթափանց խավար էր, ճանապարհն անձանոթ: Վերջապես, Բիլբոն կարողացավ հասնել մինչև գետի ոլորանը և մնում էր ծանծաղուտն անցնել, որպեսզի դուրս գար ճամբարի մոտ: Գետն այստեղ խոր չէր, բայց լայնատարած էր, և փոքրիկ հոբիտը մթության մեջ դժվարությամբ անցավ մյուս կողմը: Նա արդեն համարյա մյուս ափին էր, երբ հանկարծ սայթաքեց լարձուն քարի վրա և աղմուկով շրմփաց պաղ ջրի մեջ: Հազիվ էր ցամաք դուրս եկել ցրտից դողալով ու ջուր թքելով, երբ վազելով մոտեցան Էլֆերը, լապտերները ձեռքներին, ու սկսեցին փնտրել քարերի մեջ:

— Ոչ, դա ձուկ չէր,— ասաց մեկը: Այստեղ լրտես է թաքնված:

Ծածկեք լապտերները, թե չէ սրանք նրան ավելի շատ կօգնեն, քան մեզ, եթե նա այն զվարճալի փոքրիկ էակն է, թզուկների ծառան:

— Ծառա՛, էլ ինչ կուզեիք,— վրդովված փնջացրեց Բիլբոն և իսկույն էլ բարձր փոշտաց: Էլֆերն անմիջապես վազեցին ձայնի կողմը:

— Այս կողմը լուսավորեք,— ձայն տվեց նրանց Բիլբոն:— Ես այստեղ եմ, այստեղ...— Նա մատանին մատից հանեց և դուրս եկավ գլաքարերի ետևից:

Էլֆերը վայրկենապես սթափվեցին ու բռնեցին նրան:

— Ո՞վ ես դու: Թզուկների հոբիթ՞ուրը: Ի՞նչ ես անում այստեղ: Ինչո՞ւ մեր ժամապահները քեզ չեն նկատել,— հարցերի տարափ տեղացին Բիլբոյի գլխին:

— Ես միսոր Բիլբո Բեգինսն եմ,— պատասխանեց նա արժանապատվությամբ,— Տորինի ուղեկիցը: Ես ձեր թագավորին դեմքով շատ լավ եմ ճանաչում, բայց նա, հավանական է, արտաքնապես ինձ չի ճանաչում: Ինձ Բերդը հաստատ կհիշի, և հենց նրան էլ ուզում եմ տեսնել:

— Ահա թե ինչ,— ասացին Էլֆերը:— Իսկ ի՞նչ գործ ունես նրա հետ:

— Ինչ էլ որ լինի, հարգելի Էլֆեր, դա միայն ինձ է վերաբերում: Եթե դուք ցանկություն ունեք հարազատ անտառները վերադառնալու և ոչ թե հավերժ նստելու այս ձանձրալի ցուրտ տեղում, ապա շուտ ինձ տարեք խարույկի մոտ, որ չորանամ, իսկ հետո հնարավորություն տվեք պետերի հետ խոսելու: Միայն թե շուտ: Ես երկու ժամից ավելի չեմ կարող այստեղ մնալ:

Այ թե ինչպես պատահեց, որ փախուստից մի երկու ժամ հետո Բիլբոն նստած էր մեծ վրանի առջև, թե՛ խարույկի մոտ, իսկ կողքին, հետաքրքրասիրությամբ նրան նայելով, նստած էին անտառի Էլֆերի

արքան և Բերդը: Հոբիտը հագել էր էլֆերի պատրաստած զենք ու զրահը և փաթաթվել հին վերմակով. այսպիսի տեսարան ամեն օր չես տեսնի:

— Գիտեք, ճիշտն ասած,— Բիլբոն խոսեց իր ամենագործնական տոնով,— ստեղծվել է բացարձակապես անտանելի իրավիճակ: Անձամբ ես սաստիկ հոգնել եմ այս ամբողջ պատմությունից: Ես տուն եմ ուզում, արևմուտք, այնտեղ բնակիչներն ավելի ողջախոհ են: Բայց, հասկանո՞ւմ եք, այս գործում ես էլ իմ շահը ունեմ՝ տասնչորսերորդ բաժինը, ինչպես ավանդում է գրությունը: Բարեբախտաբար ես այն պահել եմ:— Նա օղագրահի վրայից հագած հին բաճկոնի գրպանից հանեց Տորինի ճմրթված, ծալծլված գրությունը, որ վերջինս թողել էր հոբիտի տան օջախի թարեքի վրա:— Ընդհանուր երկամուտի տասնչորսերորդ մասը,— շարունակեց նա:— Անձամբ ես պատրաստ եմ ուշադիր քննել ձեր պահանջները և ամբողջից հանել իրավացիորեն ձեզ հասանելիք գումարը, ապա հետո միայն իմ բաժնի նկատմամբ իրավունք ներկայացնել: Բայց դուք չգիտեք Տորին Օուքենշիլդին: Հավատացնում եմ ձեզ, նա այդպես էլ կնստի ոսկու կույտի վրա, մինչև սովից մեռնի, եթե դուք այստեղից չհեռանաք:

— Դե թող մեռնի...— ասաց Բերդը:— Այդպիսի անուղեղ կամակորին այդպես էլ պետք է:

— Միանգամայն ճիշտ եք,— շարունակեց Բիլբոն:— Ես ձեզ հասկանում եմ: Բայց մյուս կողմից ձմեռն է մոտենում, շուտով այստեղ և՛ ձյուն կլինի, և՛ սառնամանիք: Մթերքը չի բավականանցի, նույնիսկ էլֆերի համար դժվար կլինի: Ուրիշ դժվարություններ էլ կառաջանան: Դուք չե՞ք լսել Դեյնի և Երկաթե Բլուրներից եկող թզուկների մասին:

— Ինչ-որ ժամանակ լսել ենք: Իսկ մեզ հետ ի՞նչ կապ ունեն նրանք,— հարցրեց արքան:

— Այդպես էլ գիտեի: Ուրեմն ես ունեմ որոշ տեղեկություններ, որոնք ձեզ հայտնի չեն: Դեյնը, պետք է ձեզ հայտնեմ, այստեղից երկու օրվա ճանապարհի վրա է գտնվում, նրա հետ ամենաքիչը հինգ հարյուր կատաղի թզուկներ կան. նրանցից շատերը փորձված ռազմիկներ են, մասնակցել են գոբլինների դեմ մղած սարսափելի պատերազմներին, դուք, անկասկած, լսել եք այդ մասին: Երբ նրանք հասնեն այստեղ, մեծ անախորժություններ կծագեն:

— Ինչո՞ւ ես այդպես բոլորը պատմում մեզ,— խիստ հարցրեց Բերդը:— Մատնում ես քո բարեկամների՞ն, թե մեզ ես վախեցնում:

— Թանկագին Բերդ,— ծվաց Բիլբոն:— Եզրակացություններ անելիս մի՛ շտապեք: Կյանքումս այսպիսի կասկածամիտ մարդկանց չեմ հանիդպել: Պարզապես փորձում եմ տհաճություններից ազատել բոլոր շահագրգռված անձնաց: Այժմ ես ձեզ մի առաջարկություն կանեմ:

— Կլսենք,— արձագանքեցին արքան և Բերդը:

— Ավելի ճիշտ, կտեսնեք,— ուղղեց հորհուրը:— Ահա...— Եվ նա քրջերի միջից հանեց Արկենաստունը:

Էլֆերի արքան, որի աչքերը սովոր էին գեղեցիկ իրերի նայելու, ցնցված էր: Նույնիսկ Բերդը լուռ զմայլվեց քարով: Ասես լուսնի լույսով լցված գունդ լիներ, որ ձյան փաթիլների շողերից հյուսված ցանցով կախված էր նրանց առջև:

— Սա Տրեյնի Արկենաստունն է,— բացատրեց Բիլբոն:— Սարի Սիրտը: Եվ Տորինի սիրտը: Նրա համար այս քարն ավելի թանկ է, քան ոսկու գետը: Սա տալիս էմ ձեզ: Սա կօգնի ձեզ բանակցություններ վարելու:

Եվ Բիլբոն ոչ առանց ափսոսանքի հրաշալի քարը մեկնեց Բերդին: Վերջինս կախարդվածի նման աչքերը հառեց իր ափի մեջ գտնվող Արկենաստունին:

— Բայց սա ինչպե՞ս է քո ձեռքն ընկել և ինչո՞ւ ես տալիս քո սեփականի պես,— հարցրեց նա՝ մեծ ճիգով հայացքը քարից կտրելով:

— Դ-դե,— շփոթված պատասխանեց հորհուրը,— դա ոչ բոլորովին է իմը, բայց ես... հասկանո՞ւմ եք, ես պատրաստ եմ իմ բաժնից հրաժարվել: Գուցե ես Գող եմ, կողքից նայողին՝ ավելի լավ է երևում, անձամբ ինքս երբեք ինձ այդպիսին չեմ համարել, բայց շատ թե քիչ ազնիվ Գող եմ: Հիմա ես կվերադառնամ, և թող թզուկներն ինչ ուզում են անեն: Հուսով եմ, քարը ձեզ օգտակար կլինի:

Էլֆերի արքան նայեց Բիլբոյին, որպես արմանք-զարմանք մի բանի:

— Բիլբո Բեգինս...— ասաց նա:— Դու ավելի արժանի ես Էլֆերի թագավորական ասպագենը կրելու, քան շատերը նրանցից, ում վրա ավելի լավ է դա նստում: Բայց ես ինչ-որ կասկածում եմ, թե Տորին Օւլքենշիլդը ևս այդպես կմտածի... Երևակայիր, ես, այնուամենայնիվ, թզուկներին ավելի լավ եմ ճանաչում, քան դու: Ահա իմ խորհուրդը, մնա մեզ հետ, այստեղ քեզ պատիվ և հյուրընկալություն ցույց կտրվի:

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ,— պատասխանեց Բիլբոն և խոնարհվեց:— Կարծում եմ, լավ չի լինի բարեկամներին լքել հիմա, այն բանից հետո, երբ մենք երկար ապրել ենք միասին: Բացի դրանից, ես խոստացել եմ ձերուկ Բոմբուրին արթնացնել գիշերվա ժամը տասներկուսին:

Որքան էլ նրան համոզեցին, նա չմնաց: Այն ժամանակ նրա հետ ուղեկցողներ դրեցին, և արքան ու Բերդը հրաժեշտի ժամանակ պատվի առան:

Երբ Բիլբոն անցնում էր ճամբարի միջոց, վրաններից մեկի դռան առջև նստած, մուգ թիկնոցով փաթաթված մի ծերունի վեր կացավ և մոտեցավ նրան:

— Գերագանց արարք էր, միստր Բեգինս,— ասաց նա Բիլբոյի մեջքին թփթփացնելով:— Հասարակը՝ հասարակ, բայց միշտ մի ինչ-որ անսպասելի բան կանի:

Դա Հենդալֆն էր:

Առաջին անգամ այդքան օրերի ընթացքում Բիլբոն հրճվանք ապրեց: Բայց երբ տեղնուտեղը ցանկացավ հարցեր տալ հրաշագործին, նա հոբիտին կանխեց:

— Ամեն ինչ իր ժամանակն ունի: Եթե չեմ սխալվում, իրադարձություններն իրենց ավարտին են մոտենում: Հիմա քեզ համար դժվար կլինի, բայց մի՛ ընկճվիր: Գուցեն դուրս պրծնես: Բոլորիդ այնպիսի նորություններ են սպասո՛ւմ, որոնց մասին նույնիսկ արջնագռավները չեն լսել: Բարի գիշեր:

Մտահոգված, բայց և միաժամանակ հուսադրված Բիլբոն շարունակեց ճանապարհը: Նրան բերեցին անվտանգ ծանձադուտը և բարեհաջող ու չոր հասցրին մյուս ափը. այստեղ նա հրաժեշտ տվեց Էլֆերին և սկսեց մագլցել վեր, դեպի դարպասը: Հանկարծ անսահման հոգնածություն տիրեց նրան, բայց, այնուամենայնիվ, պարանով վեր բարձրացավ դեռևս կեսգիշեր չեղած: Պարանը, փառք աստծո, կախված էր այնտեղ, որտեղ թողել էր: Նա արձակեց պարանը, թաքցրեց, իսկ հետո նստեց պատին և խորասուզվեց մտքերի մեջ: Ի՞նչ կլինի հետո... Նրա հոգում տազնապ կար:

Ժամը տասներկուսին նա արթնացրեց Բոմբուրին, հետո կուչ եկավ անկյունում ու, չլսելով գիրուկի շնորհակալությունները (նա գիտակցում էր, որ այնքան էլ արժանի չէ դրանց), պինդ քնեց, գլխից դուրս վանելով բոլոր հոգսերը: Եվ, որպես գաղտնիք ասենք, նա երագում խոզապուխտով ձվածեղ տեսավ:

ԱՄՊՐՈՊԸ ՃԱՅԹԵՑ

Հաջորդ առավոտյան լուսումուրփին ճամբարում փողեր հնչեցին: Շուտով նեղ կածանի վրա երևաց բանբերը: Պատից քիչ հեռու նա կանգ առավ, ձայն տվեց թզուկներին և հարցրեց՝ արյդոք Տորինը համաձա՞յն է լսել նոր դեսպաններին, քանի որ նորություններ կան և հանգամանքները փոխվել են:

— Հավանաբար Դեյնը մոտենում է,— ասաց Տորինն իր գինակիցներին:— Լսել են նրա մոտենալու մասին: Ես այդպես էլ կարծում էի, որ սրանք տրամադրությունն արագ կփոխվի: Թող գան փոքր խմբով, առանց զենքի, և ես կլսեմ նրանց...— ձայն տվեց բանբերին:

Կեսօրին մոտ նորից ծածանվեցին Անտառի և Լճի դրոշները: Եկան քսան մարդ: Նեղ արահետի ծայրին նրանք ցածր դրեցին թրերն ու նիզակները և մոտեցան դարպասին: Թզուկները զարմանքով տեսան

Բերդին և Էլֆերի արքային, որոնց առջևից գալի էր մի ծերունի, թիկնոցով ու կզնուղով, ձեռքին երկաթով օղակված փայտե մի զարդատուփ:

— Ողջունում եմ քեզ, Տորին,— ասաց Բերդը:— Դու դեռ կարծիքդ չե՞ս փոխել:

— Իմ կարծիքը չի փոխվում այն բանից, որ մի քանի անգամ արևը ծագում ու մայր է մտնում,— պատասխանեց Տորինը:— Դու եկել ես ինձ դատարկ հարցեր տալո՞ւ: Ես տեսնում եմ, Էլֆերի գործը տուն չի ուղարկված, ինչպես կարգադրել էի: Իզուր ես եկել: Քանի նրանք այստեղ են, ես հրաժարվում եմ բանակցություններ վարել:

— Այդպես, ուրեմն, գոյություն չունի՞ ոչ մի բան, որի համար դու տայիր քո ոսկու մի մասը:

— Ոչ մի այնպիսի բան, որ կարող ես ինքդ առաջարկել:

— Իսկ ի՞նչ կասես Տրեյնի Արկենստոնի մասին,— հարցրեց Բերդը, և նույն վայրկյանին էլ ծերունին բացեց զարդատուփն ու թանկարժեք քարը բարձրացրեց վեր: Քարը փայլատակեց վառ սպիտակ փայլով: Չարմանքից Տորինի լեզուն բռնկվեց: Երկար ժամանակ բոլորը լուռ էին:

Վերջապես Տորինը խոսեց, և նրա ձայնը զսպված չարությունից խռպոտ հնչեց.

— Այդ քարը պատկանել է իմ հորը: Դա իմն է: Ինչո՞ւ պետք է ես ետ գնեմ իմ սեփականությունը...— Հետաքրքրասիրությունը գերազանցեց ամեն ինչին, և նա, իրեն չզսպելով, հարցրեց.— Ինչպե՞ս է ձեր ձեռքն ընկել մեր թագավորական տոհմի մասունքը: Ճիշտ է, գողերին այդպիսի հարցեր չեն տալիս:

— Մենք գողեր չենք,— առարկեց Բերդը:— Այն, ինչ քեզ է պատկանում, կտանք քեզ, փոխարենը կստանանք մերը:

— Ինչպե՞ս է ձեզ մոտ հայտնվել, հարցնում եմ,— սաստկացող ցասումով գոռաց Տորինը:

— Ես եմ տվել,— ծղրտաց մահու չափ վախեցած Բիլբոն՝ պատի ետևից գլուխը դուրս հանելով:

— Դո՞ւ... Դո՞ւ...— ոռնաց Տորինը, շուռ եկավ դեպի հոբիտը և երկու ձեռքով ճանկեց նրան:— Ողորմելի հոբիտ... Ախ դու... զզվելի Գո՛ղ...— Վրդովմունքից Տորինը բառեր չէր գտնում և խեղճ Բիլբոյին թափահարում էր շան լակոտի պես:— Երդվում եմ Դյուրինի մորուքով...— Կուզեի հիմա տեսնել Հենդալֆին... Անիծյալ լինի նա, որ քեզ խցկեց մեր շարքերը... Թող չորանա նրա մորուքը... Իսկ քեզ ժայռից ցած կնետեմ:— Եվ Տորինը Բիլբոյին վեր բարձրացրեց:

— Կաց, քո ցանկությունը կատարված է...— լսվեց ինչ-որ մեկի ձայնը: Չարդատուփով ծերունին թիկնոցն ու կզնուղը վրայից դեն նետեց:— Հենդալֆն այստեղ է: Եվ, կարծես, ճիշտ ժամանակին: Ձեզ դու չի՞ գալիս

իմ Գողը, ինչ արած, բայց, բարի եղեք, մի տանջեք նրան... Դրեք ցած և նախ լսեք, թե ինչ կասի:

— Դե բոլորդ այստեղ դավադրություն եք կազմակերպել...— մռնչաց Տորինը և դժկամորեն Բիլբոյին դրեց պատի վրա:— Այլևս երբեք գործ չեմ ունենա հրաշագործների և նրանց բարեկամների հետ: Ի՞նչ կարող ես ասել որպես արդարացում, դու, առնետի ծնունդ:

— Ա՛յ-ա՛յ-այ՛, ի՛նչ տհաճ է այս բոլորը,— ասաց Բիլբոն:— Գուցե դուք հիշո՞ւմ եք, որ թույլատրեցիք ինքս ընտրեմ իմ տասնչորսերորդ մասը... Հնարավոր է, ես ձեր թույլտվությունը չափազանց տառացիորեն հասկացա: Ինձ ասել էին, որ թզուկները երբեմն ավելի սիրալիր են խոսքով, քան թե գործով: Ճիշտ է, ժամանակ կար, երբ դուք, կներեք համարձակությանս, գտնում էիք, որ ես ձեզ որոշ օգուտ եմ տվել: Առնետի ծնունդ... Լսեցիք, չէ՞: Ուրեմն դա է շնորհակալությունը ծառայություններիս համար, որ խոստացել էիք ինձ, Տորին, ձեր և ձեր ընտանիքի կողմից: Ընդունեք, որ ես տնօրինել եմ իմ բաժինը, ինչպես ինքս եմ կամեցել, և վերջացնենք այս ամենը:

— Այդպես էլ կանեմ,— մռայլ ասաց Տորինը:— Ես քեզ հետ բոլոր հարաբերություններին վերջ կտամ: Տե՛ս հա՛, էլ իմ ձեռքը չընկնես:— Նա շրջվեց և գոռաց պատի վրայով,— Ինձ դավաճանել են... Հաշվարկը ճիշտ է եղել. ես չեմ կարող ետ չզնել Արկենստոնը, մեր տոհմի գանձը: Դրա համար ես տալիս եմ հարստությանս տասնչորսերորդ մասը՝ արծաթով ու ոսկով: Դրա վրա կգնա դավաճանի բաժինը, թող նա չքվի այդ պարգևի հետ, իսկ դուք էնտեղ բաժանեք, ինչպես կուզեք: Նրան մի քիչ կհասնի, կասկած չունեմ: Վերցրեք նրան, եթե ուզում եք, որ կենդանի մնա: Ես առանց ափսոսանքի եմ բաժանվում նրանից:

— Իջիր քո բարեկամների մոտ,— մռթմռթաց նա՝ դիմելով Բիլբոյին,— թե չէ ինքս ցած կզցեմ:

— Իսկ արծաթն ու ոսկի՞ն,— հարցրեց Բիլբոն:

— Կտանք իմ կարգով, երբ վերջացնենք գործերը: Իջիր:

— Մինչև փրկագին տալը քարը կմնա մեզ մոտ...— բացականչեց Բերդը:

— Որպես Սարատակի թագավոր այնքան էլ լավ չեք պահում ձեզ,— ասաց Հենդալֆը Տորինին:— Բայց դեռ ամեն ինչ կարող է փոխվել:

— Հենց այդ է որ կա,— սպառնալից հաստատեց Տորինը. և այնքան մեծ էր հարստության իշխանությունը նրա հոգու վրա, որ նա արդեն մտմտում էր, թե ինչպես Դեյնի օգնությամբ հափշտակի Արկենստոնը և խոստացած փրկագինը չվճարի:

Բիլբոն պարանով իջավ պատից, և այդքան չարչարանքների դիմաց, որպես պարգև, նրան մնաց միայն Տորինի նվիրած օղագրահը: Թզուկներից շատերը ամոթից չէին կարողանում նայել նրա աչքերին և անկեղծորեն ափսոսում էին, որ Բիլբոն խայտառակ կերպով վտարվեց:

— Տոտեությո՛ւն,— գոռաց Բիլբոն:— Գուցե դեռ կհանդիպենք որպէս բարեկամներ:

— Կորի՛...— մռնչաց Տորինը:— Քո հագին թզուկների ձեռքով պատրաստված օղագրահ է, այն չափազանց լավն է քեզ նմանի համար: Նետով այն չի ծակվի, բայց եթե դու հենց հիմա փասափուսադ չքաշես էստեղից, ես քո ոտքերը կնետահարեմ, ողորմելի արարած... Շո՛ւտ...

— Մի՛ շտապիր,— ասաց Բերոդը:— Մենք ձեզ մինչև վաղը առավոտ ժամանակ ենք տալիս: Կեսօրին կգանք և կստուգենք՝ արդյոք պատրա՞ստ է փրկագինը: Եթե ամեն ինչ առանց խաբերության լինի, մենք էլ կգնանք, էլֆերի գորքն էլ կգնա: Իսկ հիմա՝ ցոտեությո՛ւն:

Նրանք վերադարձան իրենց ճամբարը, իսկ Տորինն անհապաղ Ռոակի սուրհանդակին ուղարկեց Դեյնի մոտ, կարգադրեց պատմել, ինչ-որ այստեղ տեղի էր ունեցել, և շտապեցնել նրան:

Անցավ ցերեկը, անցավ գիշերը: Առավոտյան քամին փոխվեց, ամպամած էր ու մռայլ: Լուսաբացին մարդկանց ու էլֆերի ճամբարում իրարանցում սկսվեց. դետքերը հայտնեցին, որ լեռան արևելյան թևից գորք է երևացել: Դա Դեյնն էր: Նա ամբողջ գիշեր առանց դադարի քայլել էր, դրա համար էլ ավելի շուտ հասել, քան սպասում էին: Նրա յուրաքանչյուր ռազմիկ մինչև ծնկները հասնող պողպատե երկար օղագրահ էր հագած, իսկ ոտքերին նուրբ ու ճկուն մետաղալարերից հյուսված զանգապաններ էին, որի գաղտնիքը Դեյնի հպատակների սեփականությունն էր: Թզուկներն առհասարակ արտասովոր ուժեղ ու դիմացկուն էին իրենց հասակի համեմատ, իսկ Դեյնի ռամիկներն աչքի էին ընկնում առանձնահատուկ ուժով: Նրանք ձեռքներում բռնել էին երկծայր ծանր մարտական բրիչներ, բացի դրանից ամեն մեկի կողքին կախված էր կարճ ու լայն թուրը, իսկ թիկունքին՝ կլոր վահանը: Նրանց մորուքները սանրված էին երկճյուղ, հյուսված ու մտցրած գոտու տակ: Սաղավարտները երկաթից էին, ոտնամանները՝ նույնպես երկաթից, իսկ դեմքերը՝ դաժան:

Փողերը փչեցին՝ մարդկանց ու էլֆերին զենքի կոչելով: Թզուկների բանակը մոտենում էր շշմեցնող արագությամբ. նրանք կանգ առան գետի ու լեռան արևելյան թևի միջև, որից հետո մի քանի ռազմիկ անցան գետը, ճամբարին չհասած զենքերը ցած դրին ու ձեռքները վեր բարձրացրին՝ ի նշան խաղաղասիրական մտադրության: Բերոդն ինքը դուրս եկավ նրանց դիմավորելու, նրա հետ էլ՝ Բիլբոն:

— Մեզ ուղարկել է Դեյնը, Նեյնի որդին,— ասացին թզուկները:— Լուր ստանալով, որ վերածնվել է Նախկին թագավորությունը, մենք շտապեցինք միանալու մեր ազգականներին: Իսկ ո՞վ եք դուք: Ինչո՞ւ եք կանգնել ամրոցի պատի տակ, ասես թշնամիներ:

Եթե հավուր պատշաճի հնաոճ հարգալիրության խոսքերը հաղորդենք սովորական լեզվով, ապա կստացվի այսպես. «Դուք այստեղ անելու ոչինչ չունեք: Մենք, միևնույն է, կանցնենք, այնպես որ մի կողմ քաշվեք, կամ էլ

կյռվենք»: Թզուկներն ուզում էին խցկվել Սարի ու գետի ոլորանի միջև, քանի որ այդ նեղ պարանոցը, երևում է, ավելի թույլ էր պաշտպանված:

Բերդը, բնական է, հրաժարվեց թույլ տալ թզուկներին անցնելու դեպի Սարը: Նա հաստատ որոշել էր նախ ստանալ ոսկին և արծաքը Արկենստոնի փոխարեն. նա չէր հավատում, թե Տորինը այսպիսի նշանակալի ռազմական համալրում ստանալուց հետո կկատարի իր խոստումը: Նորեկները ամբողջ կհասցնեին մթերքի մեծ պաշարներ, որովհետև Դեյնի զինվորները, չնայած արագ երթին, մեջքներին հսկայական հակեր էին տանում: Այդ դեպքում պաշարվածները երկար ժամանակ կդիմանային շրջապատմանը, իսկ այդ ընթացքում Նորանոր թզուկներ կգային օգնության, քանի որ Տորինը դեռ շատ ազգականներ ուներ: Թզուկները կարող էին նաև ուրիշ մուտքեր բացել ու այնտեղ պահակություն կարգել, և այդ դեպքում պաշարողները ստիպված կլինեին տառացիորեն շրջապատել ողջ Սարը բոլոր կողմերից, իսկ դրա համար նրանք այդքան ժողովուրդ չունեին:

Բերդը կատարելապես ճշտորեն կռահեց թզուկների մտադրությունը (իզուր չէր, որ արջնագռավները ետ ու առաջ իեն թռչում Տորինի ու Դեյնի միջև): Բայց թզուկների ճանապարհը առայժմ փակված էր, դրա համար, ինչքան էլ որ տաքանային, մեկ է, պատգամավորները ստիպված էին հեռանալ՝ իրենց մորուքների մեջ հայիոյանքներ փնթփնթալով: Բերդն իսկույն իր սուրհանդակներին ուղարկեց դարպասի մոտ, բայց ոչ մի փրկագին այնտեղ չհայտնաբերեցին: Ավելին, պատի ետևից նրանց վրա նետեր թռան, և նրանք վախեցած ետ դարձան: Մարդկանց և էլֆերի ճամբարում իրարանցում բարձրացավ, ինչպես ճակատամարտից առաջ: Դեյնի թզուկներն արդեն գրոհում էին գետի արևելյան ափի երկայնքով:

— Տկարամիտներ,— քմծիծաղեց Բերդը,— բա այդքան կիպ կմոտենա՞ն Սարին... Դրանք վերգետնյա կռվից բան չեն հասկանում, սովորել են հանքերում պատերազմել: Նրանց աջ թևի կողմում մենք ժայռերում թաքնված աղեղնավորներ ու նիզակավորներ ունենք: Ասում են թզուկների օղագրահները լավն են, բայց մենք դա կստուգենք: Նրանց վրա կհարձակվենք հիմա, երկու կողմից միաժամանակ, քանի դեռ ուշքի չեն եկել:

Բայց էլֆերի արքան ասաց.

— Ոչ, հանուն ոսկու ես չեմ շտապի մարտ սկսել: Միևնույն է, թզուկները մեզանից չեն անցնի և ինչ էլ որ ձեռնարկեն, մենք իսկույն կնկատենք: Հուսանք, որ հաշտությունը դեռ հնարավոր է: Իսկ եթե, դժբախտաբար, գործը կռվի հասնի, ինչ արած, թվական գերակշռությունը մեր կողմն է:

Թագավորը, սակայն, հաշվի չէր առել թզուկների բնավորությունը: Այն գիտակցությունը, որ Արկենստոնը պաշարողների ձեռքին է, նրանց զրկել էր հանգստությունից: Նրանք զգացին, որ Բերդն ու բարեկամները տատանվում են ու որոշեցին հարվածել անհապաղ: Հանկարծակի,

առանց որևէ նախազգուշացման նրանք լուռ գրոհի գնացին: Աղեղները երգեցին, նետերը սուլեցին: Կռիվն սկսեց:

Եվ հանկարծ, Էլ ավելի անսպասելի, մուփն ընկավ: Երկինքը ծածկվեց սև ամպերով: Փոթորիկ բարձրացավ ու ամպրոպը որոտմունք բերեց (և դա ձմռան նախօրյակին), կայծակը լուսավորեց Սարի գագաթը: Իսկ ամպրոպաբեր ամպերից ներքև մեկն Էլ հայտնվեց, մի սև մրրիկ, որ սլանում էր դեպի Սարը ոչ թե քամու ուղղությամբ, այլ հյուսիսից, ասես թռչունների երամ լիներ, այնքան հոծ, որ թևերի արանքով լույս չէր անցնում:

— Կանգ առե՛ք,— հանկարծ գոռաց Հենդալֆը: Նա կանգնեց գրոհող թզուկների և մարդկանց ու Էլֆերի շարքերի միջև և ձեռքերը վեր բարձրացրեց:— Կանգնեք,— կրկնեց նա որոտալից ու ահեղ ձայնով, և նրա գավազանը փայլատակեց կայծակի նման:— Արհավիրք է սպասվում... Ավա՛ղ, ավելի շուտ, քան ես կարծում էի: գոբլիններն են մոտենում... Նրանց հետ է Բուգը, որի հորը՝ Ազոգին, դու սպանեցիր Մորայայի հանքերում, ով Դեյն: Տեսեք: Գոբլինների բանակի գլխավերևով չղջիկներ են սուրում: Գոբլիններն արշավում են վարգերին հեծած:

Խուճապը տիրեց զարմացած ռազմիկներին: Մուրը գնալով թանձրանում էր: Թզուկները սրասափով նայում էին երկնքին: Էլֆերի կրծքից տնքոց դուրս թռավ:

— Այստե՛ղ,— գոռաց Հենդալֆը:— Մենք դեռ կհասցնենք խորհուրդ անել: Դեյնը՝ Նեյի որդին, թող գա մեզ մոտ:

Այսպես սկսվեց կռիվը, որին ոչ ոք չէր սպասում: Հետո այն կոչեցին հինգ բանակների ճակատամարտ: Դրա մասին հիշելն ահավոր է: Մի կողմում գոբլիններն էին ու հրեշավոր վարգերը, մյուս կողմում՝ Էլֆերը, մարդիկ և թզուկները:

Այդ ճակատամարտի պատմությունն այսպիսին է. Գերագույն գոբլինի մահվան րոպեից նրա ցեղի թշնամությունը թզուկների նկատմամբ վերաճեց մահացու ատելության: Սուրհանդակները չափ զցած վազվզում էին նրանց քաղաքների, գաղութների, ամրոցների միջև. գոբլինները որոշել էին տիրանալ ամբողջ Հյուսիսին: Գաղտնի կերպով նրանք տեղեկություններ էին հավաքում. բոլոր սարերի տակ գեներ էին կռում, բանակներ էին զինում: Հետո գոբլիններն արշավի դուրս եկան: Նրանք գնում էին գետնի տակով, թունելներով կամ գիշերվա քողի տակ: Եվ, վերջապես, Հանոբադ մեծ լեռան խորքում, որտեղ նրանց մայրաքաղաքն էր գտնվում, չլսված, չտեսնված գործ հավաքվեց: Գոբլինները որոշել էին սպասել ամպրոպին և հարձակվել՝ հանկարծակիի բերելով թզուկներին: Այստեղ նրանք լսեցին Սմոգի կործանվելու լուրը և ուրախացան: Գիշեր ու զօր նրանք լեռների միջև կրկնակոխ սլանում էին Դեյնի ետևից և հանկարծ հայտնվեցին Սարի մոտ: Ոչ ոք, նույնիսկ արշնագռավները չէին իմացել նրանց արշավանքի մասին: Թե Հենդալֆին ինչ էր հայտնի,

հնարավոր չէ ասել, բայց բոլոր դեպքերում, այսքան հանկարծակի հարձակումը նրա համար էլ էր անսպասելի: Խորհրդի ժամանակ Հենդալֆը, Էլֆերի արքան, Բերդը և Դեյնը հետևյալ պլանը մշակեցին. գործիչներն համընդհանուր թշնամի են, և նրանց գալու հետ իրենց երկպառակտությունները պետք է մոռացվեն: Միակ միջոցն այն է, որ գործիչներին քաշեն Սարի երկու ճյուղավորումի մեջտեղը, իսկ իրենք ամրանան վերևում: Բայց եթե գործիչները զորքի մի մասն անցկացնեն Սարով, իրենց շրջապատելով բոլոր կողմերից, ապա դաշնակիցները կորած են, քանի որ այդ դեպքում թշնամին կգրոհի թիկունքից և վերևից: Ամպրոպն անցավ, որոտը գլորվեց հարավ-արևելք, բայց չոջիկների ամպը ավելի ու ավելի էր ցած իջնում, պտտվում նրանց գլխավերևում, լույսը փակելով ու սրտերը սարսափով լցնելով:

— Դեպի սարը,— գոռաց Բերդը:— Տեղերը գրավենք, քանի ժամանակ ունենք...

Հարավային ճյուղավորման վրա, ամբողջ լանջով մեկ կանգնած էին Էլֆերը, արևելյանում մարդիկ ու թզուկները: Բերդը առավել ճարպիկ մարդկանց ու Էլֆերի ջոկատներով բարձրացավ արևելյան ճյուղավորման կատարը, որպեսզի դիտի հյուսիսային կողմը: Ի՛նչ ահավոր տեսարան... Թշնամու բազմությունից Սարի ողջ շրջապատը սևացել էր: Մի րոպե անց առջևի գործիչները շրջանցեցին Սարի թևն ու լցվեցին հովիտը: Դրանք գործիչների լավագույն հեծյալներն էին, որոնց գոռում-գոչյունը սիրտ էր ճաքեցնում: Բերդի զորքից քաջարի մի ջոկատ կտրեց ճանապարհը՝ փորձելով շեղել նրանց: Հետո մարդիկ այս ու այն կողմ փախան. բայց շատերը սպանվեցին: Ինչպես և մտածում էր Հենդալֆը, գործիչները, անսպասելի դիմադրությունից մոլեգնած, կենտրոնացան առաջապահ զորքերի թիկունքում և այժմ կատաղորեն նետվում էին դեպի հովիտ ու լեռան ճյուղավորումների միջև: Նրանց սևաբոսոր դրոշներին թիվ չկար: Գործիչները սլանում էին խառնիխուռն ու խելահեղ հոսանքով:

Դա սարսափելի ճակատամարտ էր: Բիլբոյի արկածներից ամենավտանգավորը, որով հետագայում ամենից շատ էր նա հպարտանում և որը հաճույքով էր հիշում, չնայած նրա դերն այդ ժամանակ բավականին աննշան էր: Ճիշտն ասած, նա հենց սկզբից դրեց մատանին ու աչքից կորավ, թեպետ դրանով վտանգից լիովին չփրկվեց: Կախարդական մատանին գործիչների հարձակման դեպքում լրիվ չափով չի փրկում և ետ չի վանում թռչող նետերն ու սիզակները: Դրա փոխարեն, այնուամենայնիվ, օգնում է ոտքերի արանքից դուրս սողալ, և ձեր գլուխը թիրախ չի դառնում որևէ ճարպիկ, մոլեռանդ գործիչի համար, որը ցանկանում է իր թրով հատկապես դա թռցնել: Այն թռցնել կարող են միայն պատահաբար:

Առաջինը գրոհի նետվեցին Էլֆերը: Նրանց ոգևորում էր դաժան, սառն ատելությունը գործիչների նկատմամբ: Նրանց չարությունն այնքան ուժեղ էր, որ թրերն ու սիզակները մթության մեջ առկայծում էին սառը փայլով: Երբ թշնամու զորքը կուտակակվեց հովտում, Էլֆերը նրանց վրա նետերի

տարափ տեղացին: Նետերի ետևից հազարավոր նիզակներ թռան: Գոբլիները խլացուցիչ ոռնոց արձակեցին: Ժայռերը սևացան գոբլիների արյունից:

Հազիվ էին գոբլիները ուշքի եկել էլֆերի գրոհից, երբ հովտում մռնչուն տարածվեց: «Մորայա» և «Դեյն» զոչելով մյուս կողմից դուրս թռան երկաթե Բլուրների թզուկները՝ թափահարելով մարտական բրիչները, իսկ նրանց ետևից առաջ նետվեցին Լճաշեն քաղաքի ռազմիկները՝ երկար թրերով:

Խուճապը պատեց գոբլիներին: Նրանք շրջվեցին նոր թշնամուն ընդառաջ, և այդ ժամանակ էլֆերը տասնապատիկ ավելի մեծ քանակով նորից գրոհի անցան: Շատ գոբլիներ արդեն փախուստ էին տալիս գետի երկայնքով, որպեսզի ծուղկից խույս տան, վարճերն արդեն սկսեցին հարձակվել իրենց հեծյալների վրա, հոշոտելով դիակներն ու վիրավորներին: Արդեն, թվում էր, հաղթանակը մոտ է, երբ հանկարծ վերևից նոր կանչեր լսվեցին: Իսկապես էլ գոբլիները բարձրացել էին Սարը հակառակ կողմից և այժմ կատաղի հոսանքով լանջերով ձգվում էին ներքև. ուշադրություն չդարձնելով յուրայիններից նրանց, ովքեր ոռնոցով պոկվում ու գլորվում էին անդունդը: Գոբլիներն ուզում էին լեռան թևերը գրոհել վերևից, դարպասի կողմից: Սարից արահետներ էին գնում դեպի լեռան ճյուղավորումները. մարդիկ, էլֆերն ու Դեյնի թզուկները չէին հերիքում, նրանք չէին կարող բոլոր արահետները փակել: Հաղթանակի հույսը նվազեց: Սև լավայի միայն առաջին գրոհը հաջողվեց կասեցնել:

Վաղուց կեսօրն անցել էր: Գոբլիները նորից կուտակվեցին հովտում: Արդեն սրընթաց այստեղ էին գալիս գիշատիչ վարճերը, իսկ նրանց հետ էլ՝ Բուզի գվարդիան՝ դրանք հսկայական չափերի գոբլիներ էին՝ պողպատե կեռ թրերով: Ամպրոպի երկինքը գնալով մթնում էր: Առաջվա նման մեծ-մեծ չղջիկները պտտվում էին մարդկանց ու էլֆերի գլխավերևում և վամպիրի պես կայչում վիրավորներին: Բերդը ողջ ուժերով պաշտպանում էր արևելյան թևը, բայց աստիճանաբար ստիպված էր նահանջել: Իսկ էլֆերին, արքայի հետ միասին, քշել էին ընդհուպ մինչև Ագռավի Բարձունքի պահակակետը:

Հանկարծ մի բարձր կանչ լսվեց, դարպասից հնչեց փողի ձայն: Նրանք Տորինին մոռացել էին: Պատի այն մասը, որ քանդել էին լինգով, փուլ եկավ ջրամբարի մեջ: Անցքից դուրս թռան Սարատակի թագավորն ու նրա զինակիցները: Ո՞ւր էին կորել նրանց թիկնոցներն ու կնգուղները: Դրանք փոխարինված էին շողշողուն ասպազենով: Թզուկների աչքերը վառվում էին կարմիր կրակով: Մթնշաղում Տորինի ոսկե զենք ու զրահը լույս էր տալիս ածուխից շիկացած մետաղի նման:

Սարի գլխին նստած գոբլիներն սկսեցին նրանց վրա քարեր շարտել, բայց թզուկները շարունակում էին իջնել՝ ելուստից ելուստ թռչկոտելով: Այսպես նրանք լանջն ի վար վազելով իջան հովիտ և մարտի բռնվեցին:

Վարդերն ու հեյծյալներն ընկնում էին մեռած կամ թզուկների ճնշման տակ փախուստի դիմում: Տորինը կատաղի ուժով թափահարում էր թուրը, և թվում էր, թե նա անխոցելի է:

— Ինձ մո՛տ: Ինձ մոտ, էլֆեր ու մարդիկ: Ինձ մոտ, իմ հարազատներ...— կոչ էր անում նա, և ձայնը զնգում էր հովտում, ինչպես շեփորը:

Նրան օգնության նետվեցին Դեյնի թզուկները: Այնտեղ վազեցին նաև շատ մարդիկ, և Բերդը չկարողացավ պահել նրանց: Մյուս կողմից հայտնվեցին էլֆերի նիզակակիրները: Գոբլիններին նորից ջարդեցին: Հովիտը ծածկվեց զգվելի դիակների սև կույտերով: Վարդերին քշեցին: Տորինը թրով նեղեց Բուգի գվարդիային, բայց հո նա չէր կարող բոլոր շարքերը միանգամից խոցել: Արդեն շատ մարդիկ էին ընկել, և՛ թզուկներ, և՛ հրաշագեղ էլֆեր, որ կարող էին երկար ապրել իրենց անտառներում: Որքան հովիտը լայնանում էր, այնքան Տորինի գրոհը թուլանում էր: Նրա զինակիցները չափազանց քիչ էին, թևերն անպաշտպան: Շուտով թշնամիները հարձակման անցան, և Տորինի թզուկներն ստիպված եղան օղակ կազմել, որովհետև բոլոր կողմերից նրանց շրջապատել էին գոբլիններն ու գայլերը: Բուգի գվարդիան ոռնոցով արշավում էր թզուկների վրա, իսկը ավազուտ կղզին գրոհող ալիքների պես: Բարեկամներն արդեն չէին կարողանում օգնել թզուկներին, քանի որ Սարից գոբլինների նորանոր բազմություններ էին թափվում, և ամենուրեք մարդկանց ու էլֆերին կամաց-կամաց պարտության էին մատնում:

Բիլբոն դառնությամբ էր նայում այս տեսարանին: Նա էլֆերի հետ միասին դիրք էր գրավել բարձունքի վրա, մասամբ այն պատճառով, որ այնտեղից փրկվելու հավանականությունն ավելի մեծ էր, մասամբ էլ (ինչպես նրան հուշում էր գիտակցության տուկոյվյան մասը) այն պատճառով, որ վերջին անխուսափելի մարտում կգերադասեր պաշտպանել էլֆերի արքային: Հենդալֆը, ի դեպ ասած, նույնպես նստած էր կողքը, մտքերի մեջ խորասուզված, ըստ երևույթին պատրաստվելով ինչ-որ վերջին կախարդական պայթյունը սարքել:

«Այժմ արդեն քիչ է մնացել,— մտածում էր Բիլբոն:— Հենց որ գոբլինները դարպասը գրավեն, բոլորս կկտորվենք կամ գերի կընկնենք: Երբ մտածում ես, թե զուր տեղը ինչքան տառապանքներ կրեցինք, իսկապես լացդ գալիս է: Իմ կարծիքով, ավելի լավ էր ծերուկ Սմոգը շարունակեր պառկած մնալ իր այդ անհիծյալ գանձերի վրա, միևնույն է, դրանք հիմա այս զգվելի արարածներին են բաժին դառնալու: Խե՛ղճ գիրուկ Բոմբուրը, խեղճ Բալին, Ֆիլի ու Կիլի, և Բերդն էլ, և Լճաշենի բնակիչները, և ուրախ էլֆերը՝ բոլորը կկործանվեն... Վա՛յ ինձ... Շատ երգեր եմ լսել ճակատամարտերի մասին, և այնպես էր ստացվում, իբրև թե պարտությունն էլ կարող է փառք բերել: Իսկ իրականում, այս բոլորը շատ անախորժ է, եթե չասենք ցավալի: Ինչպես կուզենայի մի ինչ-որ հեռու տեղ հայտնվել»:

Հանկարծ քամին ամեարը ցրեց, մայրամուտի կարմիր շերտը կտրատեց արևամուտքը: Բիլբոն շրջվեց լույսի կողմը, նրա կրծքից բարձր մի կանչ դուրս թռավ, սիրտն սկսեց արագ զարկել. պայծառ շերտի ֆոնի վրա նա թռչող մուգ ստվերներ տեսավ:

— Արծիվներ՛րը... Արծիվներ՛րը...— բղավեց նա:— Արծիվները գալիս են...

Աչքերը Բիլբոյին հազվադեպ էին դավաճանում: Իրոք որ արծիվներն էին թռչում, շարք-շարքի ետևից, անհամար մի գորագունդ, որ հավանաբար հավաքվել էր Հյուսիսի բոլոր բներից:

— Արծիվներ՛րը... Արծիվներ՛րը...— Բիլբոն թռչկոտում էր ու ձեռքերը թափահարում: Էլֆերը նրան տեսնել չէին կարող, բայց լսեցին: Նրանք ձայնակցեցին ճիչին, և կանչերը տարածվեցին ողջ հովտով մեկ:

— Արծիվներ՛րը,— մեկ անգամ էլ բղավեց Բիլբոն, բայց այստեղ վերևից նետված քարը զարկվեց նրա սաղավարտին, Բիլբոն տապալվեց գետնին և այլևս ոչինչ չտեսավ ու չլսեց:

ԵՏԴԱՐՁԻ ՃԱՆԱԴԱՐՀԸ

Երբ Բիլբոն ուշքի եկավ, շուրջը բառացիորեն ոչ ոք չկար: Նա պառկած էր Ագռավի Բարձունքի լերկ քարերի վրա: Անամպ ու ցուրտ օր էր: Բիլբոն փայտացել էր, ամբողջովին դողում էր, բայց գլուխն այրվում էր:

— Ի՞նչ է տեղի ունեցել,— հարցրեց նա ինքն իրեն:— Ընկած հերոսների շարքին առայժմ ինձ կարծես թե դասել չի կարելի: Չնայած դեռ ամեն ինչ կորած չէ:

Դժվարությամբ, ցավը հաղթահարելով, նա տեղում նստեց: Ներքև նայելով՝ հովտում կենդանի գոբլիններ չտեսավ: Գլուխն սկսեց մի քիչ պարզվել, նրան թվաց, որ այնտեղ Էլֆեր են երևում: Աչքերը տրորեց: Մարդկանց և Էլֆերի ճամբարը նախկին տեղում էր: Գլխավոր դարպասի մոտ ինչ-որ թեթև շարժում էր նկատվում, երևում է թզուկները պատն էին քանդում: Բայց մեռելային լռություն էր տիրում՝ ոչ երգ, ոչ իրար կանչող ուրախ ձայներ: Օդում սուգ էր կախված:

— Այնուամենայնիվ, երևի դա հաղթանակ է...— ասաց Բիլբոն, մղկտացող գլուխը շոշափելով:— Եվ, սակայն, տաղտկալի բան է:

Հանկարծ զառիթափի եզրից վերև մագլցող մարդու գլուխ երևաց. նա Բիլբոյի կողմն էր գալիս:

— Հե՛յ,— գոռաց Բիլբոն թույլ ձայնով:— Հե՛յ, ի՞նչ նորություն կա:

— Ի՞նչ ձայն է լսվում քարերի միջից:— Մարդը կանգ առավ, նայեց շուրջը:

Եվ այսպես Բիլբոն հիշեց մատանու մասին: «Թո՛ւ,— մտածեց նա:— Պարզվում է, անտեսանելի լինելը միշտ չէ, որ ձեռնտու է: Եթե մատանին չլիներ, ես, երևի, գիշերն անցկացնեի տաք ու հարմարավետ տեղում»:

— Այո ես եմ, Բիլթո Բեգինսը, Տորինի ուղեկցիչը,— գոռաց նա՝ մատանին հանելով:

— Լավ է, որ քեզ գտա,— ասաց մարդը դեպի նա քայլելով:— Արդեն վաղուց եմ փնտրում: Քեզ սպանվածների թվում կհաշվեին, եթե հրաշագործը չլիներ. նա հավատացնում էր, թե վերջին անգամ քո ձայնը հենց այստեղ է լսել: Դու ծա՞նր ես վիրավորված:

— Կարծես մենակ գլխիս են թրխկացրել,— պատասխանեց Բիլթոն:— Լավ է, որ սաղավարտով եմ, գանգս էլ ամուր է: Բայց, միևնույն է, թուլություն եմ զգում, և ոտքերս էլ ոնց որ ծղոտից լինեն:

— Ես քեզ կտանեմ ճամբար,— ասաց մարդը և հեշտությամբ գրկեց նրան:

Մարդը վստահ ու արագ էր քայլում: Կարճ ժամանակ անց նա արդեն Բիլթոյին դրեց գետնին, վրանի առջև: Դռան շեմքին կանգնած էր Հենդալֆը՝ ձեռքը վիրակապած: Դե որ հրաշագործն էլ վիրավորված լիների, էլ ինչ ասես մյուսներին մասին. զորքի մեջ համարյա մեկը չկար, որ տուժած չլիներ:

Բիլթոյին տեսնելով՝ ծերուկը շատ ուրախացավ:

— Բեգինս,— բացականաչեց նա:— Այ քեզ անակնկալ... Այնուամենայնիվ ողջ ես... Այ թե ուրախ եմ, հա՛... Ես արդեն վախենում էի, որ նույնիսկ քեզ է դավաճանել բախտը: Սարսափելի պատմություն ստացվեց: Քիչ էր մնում ամեն ինչ խորտակվեր: Բայց վերջի մասին քեզ հետո կպատմեմ: Հիմա գնանք...— Հանկարծ նա լրջացավ:— Քեզ սպասում են,— ավելացրեց նա և հոբիտին առաջորդեց վրան:— Տորին... — ասաց նա ներս մտնելով:— Ես նրան բերել եմ:

Այո, այնտեղ Տորին Օուքենշիլդն էր պառկած, ամբողջապես վերքերով պատված, ծակծկված զրահն ու ծոմնված բերանով տապարն ընկած էին հատակին: Տորինը բարձրացրեց գլուխը:

— Մնաս բարով, բարի Գող,— ասաց նա:— Ես գնում եմ սպասումի ապարանքները, իմ նախահայրերի մոտ, մինչև այն ժամանակ, երբ աշխարհը դեպի լավը փոխվի: Ես թողնում եմ ողջ արծաթն ու ոսկին, քանի որ այնտեղ, ուր ես եմ գնում, դա արժեք չունի: Ուզում եմ բարեկամաբար հրաժեշտ տալ քեզ, ետ վերցնել այն ժամանակ դարպասի մոտ ասած խոսքերս ու քավել իմ մեղքը:

Բիլթոն վշտացած ծնկի իջավ:

— Գնաս բարով, Սարատակի թագավոր,— ասաց նա,— ոսկու սարերը մեզ համար քո տեղը չեն բռնի ու մեր կորուստը չեն փոխհատուցի: Բայց ես, այնուամենայնիվ, ուրախ եմ, որ վտանգների ժամանակ քեզ հետ եմ եղել: Ամեն Բեգինսի չէ, որ պատիվ է վիճակվել այդպիսի արկածների մասնակից լինել:

— Դա ճիշտ չէ...— առարկեց Տորինը:— Քո մեջ լավն ավելի շատ է, քան դու կարծում ես, իզուր չէ, որ ծնվել ես բարեհաճ մի երկրում: Խիզախությունն ու իամաստությունը համաչափորեն են զուգակցվում քո մեջ: Եթե այս աշխարհ եկած արարածը ավելի շատ գնահատեր համեղ սնունդը, սեղանը, երգն ու ուրախությունը, և ավելի քիչ՝ ոսկին, ապա աշխարհն ավելի ուրախ կլիներ: Բայց ինչպիսին էլ որ լինի այս աշխարհը, տխուր թե ուրախ, ես հեռանում եմ այստեղից: Մնաս բարով...

Եվ Բիլբոն քաշվեց մի կողմ, մենակ նստեց անկյունում, փաթաթվեց վերմակի մեջ և, ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, լաց եղավ: Նա այնպես լաց եղավ, որ աչքերը կարմրեցին ու ձայնը խզվեց: Բարի սիրտ ուներ նա՝ Բիլբո Բեգինսը: Ահագին ժամանակ անցավ, մինչև նա սիրտ արեց ամենահասարակ մի կատակ անելու: «Ինչ հաջողություն,— ասաց նա ինքն իրեն,— որ ես ուշքի եկա հենց այն ժամանակ, երբ ուշքի եկա: Լավ կլիներ, իհարկե, Տորինը կենդանի մնար, բայց ես ուրախ եմ, որ մենք բաժանվեցինք որպես բարեկամներ: Դմբո ես դու, Բիլբո Բեգինս, ինչ շիլաշփոթ եփեցիր այդ քարով, և բոլորն իզուր. քեզ այդպես էլ չհաջողվեց խաղաղություն ու անդորր գնել, միևնույն է, ճակատամարտը տեղի ունեցավ: Բայց դու արդեն դրանում մեղավոր չես»:

Ամեն ինչի մասին, որ տեղի էր ունեցել իր անգիտակից վիճակի մեջ ընկնելուց հետո, նա հրաշագործից իմացավ ավելի ուշ: Հենդալֆի պատմածը լսելով՝ նա ավելի շատ վշտացավ, քան ուրախացավ: Նա հոգնել էր, տուն էր ուզում գնալ: Բայց դեռ ստիպված էր սպասել: Դրա համար էլ ես առայժմ կպատմեմ կատարված իրադարձությունների մասին:

Արծիվները վաղուց էին կասկածում, որ գոբլինները զորք են կուտակում: Գոբլինների տեղաշարժերը լեռներում նրանց սուր աչքերից չէին վրիպում: Այն ժամանակ նրանք էլ իրենց առաջնորդի գլխավորությամբ հավաքվեցին Մառախլապատ Լեռներում: Վերջապես, հոտն առնելով, որ ճակատամարտ է գնում, նրանք մի ակնթարթում փոթորիկի հետ միասին տեղափոխվեցին հովիտ: Հենց նրանք էին, որ գոբլիններին Սարի լանջերից քշեցին ներքև, ուղիղ նրանց թշնամիների կենտրոնը, կամ էլ նետեցին անդունդը: Արծիվներն արագ մաքրեցին Մենավոր Լեռը, և այդ ժամանակ էլֆերն ու մադրիկ լեռան թևերից իջան հովիտ ու մարտի մեջ մտան:

Բայց նույնիսկ արծիվների հետ իրենք, միևնույն է, ավելի քիչ էին, քան գոբլինները: Եվ այստեղ, երբ արդեն հուսահատությունը պատել էր Սարի պաշտպաններին, հայտնվեց ինքը՝ Բեորնը: Ոչ ոք չգիտեր, թե նա որտեղից հայտնվեց: Նա եկավ մենակ, արջի տեսքով, այնքան կատաղած, որ սովորականից ավելի մեծ էր թվում: Նրա մռնչոցը թմբուկների ու թնդանոթների դրոյունից ավելի բարձր էր, նա գայլերին ու գոբլիններին շարտեց աջ ու ձախ, ոնց որ փետուր լինեին: Բեորնը նրանց վրա հարձակվեց թիկունքից և ճեղքեց անցավ հենց առաջապահ զորքերի միջով: Թզուկները դեռ կռվում էին կլոր ցածրիկ բլուրի վրա: Այստեղ

Բերորնը կանգ առավ, վերցրեց թշնամու նիզակներից խոցված Տորինին և դուրս բերեց մարտի դաշտից:

Հետո վերադարձավ և կրկնապատկված կատաղությամբ հարձակվեց թշնամու վրա. ոչ ոք չէր կարողանում նրան դիմադրել, ոչ մի զենք նրան չէր խոցում: Նա ջնջեց Բուգի գվարդիան, տապալեց Բուգին և ուռքերով տրորտեց: Սարսափը պատեց գորլիներին, և նրանք ցաքուցրիվ սկսեցին փախչել: Մարդիկ, էլֆերն ու թզուկները, Բերորնի օգնությունից ոգևորված, թևավորվեցին ու հետապնդեցին գորլիներին: Թույլ չտալով, որ նրանք ծլկեն, ոմանց լցնում էին Արագահոս գետը, մյուսներին՝ Անտառային գետի մերձակա ճահիճները: Ճահիճներում էլ կործանվեց գորլիների գործի մեծ մասը, իսկ նրանք, որ կարողացել էին հասնել մինչև անտառի էլֆերի թագավորությունը, հենց այնտեղ էլ սպանվեցին կամ քշվեցին Սև Անտառ, որտեղ և կորան թավուտներում: Հետագայում երգում էին, որ այդ օրը կործանվել է Հյուսիսի ողջ գորլիների երեք քառորդը, և որ լեռները երկար տարիներ խաղաղություն են վայելել:

Հաղթանակն ապահովվել էր դեռևս երեկոյան, բայց երբ Բիլբոն ճամբար վերադարձավ, հետապնդումը շարունակվում էր, և հովտում մնացել էին գլխավորապես ծանր վիրավորները:

— Իսկ ո՞ր են արծիվները,— երեկոյան հարցրեց Բիլբոն Հենդալֆին, մի քանի վերմակի տակ պառկելով:

— Ոմանք մասնակցում են հետապնդմանը, իսկ շատերը վերադարձան իրենց բները: Նրանք չցանկացան մնալ այստեղ և լուսաբացին թռան գնացին: Դեյնը նրանց առաջնորդին ոսկի նվիրեց և հավերժ բարեկամության երդում տվեց:

— Ափսո՛ս: Այսինքն՝ ափսոս, որ նրանք թռել են, ես հաճույքով կուզենայի տեսնել նրանց,— քնկոտ ասաց Բիլբոն:— Գուցե ետդարձի ճանապարհին կտեսնեմ: Իսկ ես ե՞րբ կարող եմ տուն վերադառնալ:

— Երբ ցանկանաս,— պատասխանեց Հենդալֆը:

Բայց իրականում էլի մի քանի օր անցավ, մինչև Բիլբոն կբռներ վերադարձի ճանապարհը: Նախ Տորինին թաղեցին: Նրան թաղեցին Սարի խորքում, և Բերդը նրա կրծքին դրեց Արկենստոնը:

— Թող քարն այստեղ մնա այնքան ժամանակ, քանի Սարը կանգուն է,— ասաց նա:— Եվ թող երջանկություն բերի նրա ժողովրդին, որ կապրի այստեղ այսուհետ...

Էլֆերի արքան գերեզմանի վրա թողեց Օրկրիստը՝ էլֆերի թուրը, որ խլել էին Տորինից գերության մեջ: Երգերում ասվում է, իբրև թե երբ թշնամի էր մոտենում, թուրը մթության մեջ լույս էր տալիս, դրա համար էլ թզուկների ամբողջ վրա ոչ ոք հանկարածակի հարձակվել չէր կարող: Այժմ այստեղ բնակվեց Դեյնը՝ Նեյնի որդին, և այժմ նա դարձավ սարատակի թագավոր, ու ժամանակի ընթացքում դեռ շատ թզուկներ հավաքվեցին նրա գահի շուրջը: Տորինի տասներկու ուղեկիցներից

մնացել էին տասը. խիզախ ու հավատարիմ Ֆիլին ու Կիլին զոհվել էին՝ իրենց վահաններով ու մարմնով ծածկելով Տորինին, քանի որ նա իրենց հարազատ քեռի էր գալիս: Այդ տասնյակը մնաց Դեյնի հետ, և Դեյնը հարստությունը խղճով տնօրինեց:

Ինքնըստինքյան հասկանալի է, խոսք անգամ լինել չէր կարող այն մասին, որ գանձերը հավասար բաժանեին. ինչպես որոշել էին սկզբում, Բալինի, Դվալինի, Դորիի, Նորիի և Օրիի, Օյնի ու Գլոյնի, Բիֆուրի ու Բոֆուրի, Բոմբուրի ու Բիլբոյի միջև: Բայց Բերդն ստացավ ամբողջ արծաթի և ոսկու տասնչորսերորդ մասը ճուլակտորներով ու պատրաստի իրերով: Այդ ժամանակ Դեյնը ասաց.

— Մենք կկատարենք հանգուցյալի տված խոստումը. չէ՞ որ նա այժմ տիրացել է իր Արկենստոնին:

Նույնիսկ տասնչորսերորդ մասը առասպելական հարստությունն դուրս եկավ, ցանկացած մահկանացու թագավորի հարստությունից առավել: Այդ բաժնից Բերդը շատ ոսկի ուղարկեց Լճաշեն քաղաքի քաղաքագլխին և առատ նվիրատվություններ արեց իր բարեկամներին ու զինակիցներին: Էլֆերի արքային նա նվիրեց Գիրիոնի գմրուկստները, իր ամենասիրած թանկարժեք քարերը, որ նոր միայն վերադարձել էին իրեն:

Իսկ Բիլբոյին նա ասաց.

— Ոսկին ու արծաթը նույնքան քոնն են, որքան և իմը, չնայած որ նախկին պայմանագիրն իր ուժը կորցրել է, չէ՞ որ շատերն են մասնակցել գանձերի նվաճմանն ու փրկությանը: Դու հրաժարվեցիր քո բաժնի նկատմամբ ունեցած իրավունքից, սակայն ես չէի կամենա, որպեսզի իրականանային Տորինի խոսքերը, որոնց համար նա հետո զոջաց: Եթե հիշում ես, նա ասաց, իբրև թե մենք ժլատ կլինենք: Ես քեզ ավելի առատորեն կպարգևատրեի, քան մյուսներին:

— Դու շատ բարի ես,— պատասխանեց Բիլբոն,— բայց, ազնիվ խոսք, այսպես ինձ համար ավելի հեշտ է: Ախր եթե ես մի բեռ ոսկի տանեմ ինձ հետ, ապա ճանապարհն առանց կռվի ու սպանության չի անցնի: Իսկ ի՞նչ պետք է անեմ ոսկին տանը: Ոչ, ավելի լավ է թող քո ձեռքում մնա:

Վերջ ի վերջո Բիլբոն համաձայնեց երկու ոչ մեծ արկղ վերցնել, մեկը արծաթով, մյուսը՝ ոսկով լցված, որքան կարող էր տանել պոնին:

— Այսքանից գուցե մի կերպ գլուխ հանեմ,— ավելացրեց Բիլբոն:

Վերջապես հասավ բարեկամներին հրաժեշտ տալու ժամանակը:

— Մնաս բարով, Բալին,— ասաց նա:— Մնաս բարով, Դվալին, մնաք բարով, Դորի, Նորի, Օրի, Օյն, Գլոյն, Բիֆուր, Բոֆուր և Բոմբուր: Թող որ երբեք չնոսրանան ձեր մորուքները:— Եվ, դառնալով դեպի Սարը, ավելացրեց:— Մնաս բարով, Տորին Օւլքենշիլդ... Մնաք բարով, Ֆիլի ու Կիլի... Թող երբեք ձեր հիշատակը չմարի:

Թզուկները, որ ճանապարհում էին նրան դարպասից դուրս, մինչև գետին խոնարհվեցին, բայց հուզմունքից մի խոսք անգամ չկարողացան ասել:

— Ցտեսություն, բարի ճանապարհ, դեպի ուր էլ որ տանի այն,— վերջապես խոսեց Բալինը:— Եթե երբևէ մտքովդ անցնի այցելել մեզ, երբ մեր պալատը նորից հրաշագեղ կդառնա, ապա տես ի՞նչ խնջույք կսարքենք...

— Եթե դուք երբևէ անցնելու լինեք իմ տան մոտով,— ասաց Բիլբոն,— մտքը առանց դուռը թակելու: Թեյը տրվում է ժամը չորսին, բայց համեցեք, ինդրեմ, երբ կամենաք:

Եվ նա շրջվեց:

Էլֆերի գործը բռնեց ետդարձի ճանապարհը: Այն, որքան էլ ցավալի է, խսիտ փոքրացել էր, բայց ողջ մնացածները, միևնույն է, ուրախանում էին. վիշապը մեռած էր, գորբիկները՝ ջախջախված, Էլֆերը երգում էին գարնան մասին, որ գալիս էր ձմռանը փոխարինելու:

Հենդալֆն ու Բիլբոն գնում էին Էլֆերի քրաքյին ետևից, իսկ նրանց կողքով քայլում էր Բեորնը մարդու կերպարանքով և ամբողջ ճանապարհին ծիծաղում էր ու բարձր երգում: Այդպես նրանք գնացին, մինչև հասան Սև Անտառի սահմաններին: Այստեղ ստիպված էին դադար առնել, քանի որ հրաշագործն ու Բիլբոն չուզեցին անտառ մտնել, որքան էլ Էլֆերի արքան համոզում էր հյուրընկալվել իր պալատում: Հենդալֆն ու Բիլբոն որոշել էին անտառը շրջանցել հյուսիսից, անցնելով ամայի տեղանքով, որ ընկած էր անտառի և Գորշ լեռների միջև: Ճանապարհն, իհարկե, երկար էր ու ձանձրալի, բայց հիմա, առանց գորբիկների, այստեղ ավելի անվտանգ էր թվում, քան Սև Անտառի թավուտի մութ կածաններում: Մանավանդ որ նրանց հետ էր նաև Բեորնը:

— Մնաս բարով, Էլֆերի արքա,— ասաց Հենդալֆը:— Ու թող զվարթ լինի ձեր կանաչ անտառը, աշխարհը դեռ բավականաչափ երիտասարդ է... Ուրախություն եմ ցանկանում ձեր ողջ ժողովրդին...

— Գնաս բարով, Հենդալֆ,— պատասխանեց արքան,— Ցանկանում եմ քեզ հետագայում էլ հանկարածիկի հայտնվես հենց այն ժամանակ, երբ ամենից շատ ես հարկավոր: Որքան հաճախ հյուր լինես իմ պալատում, ինձ համար այնքան հաճելի կլինի:

— Խնդրում եմ քեզ,— ասաց Բիլբոն, կմկմալով ու մի ոտքից մյուսին փոխվելով,— ինձանից նվեր ընդունեք...— Եվ նա արքային մեկնեց մարգարտագարդ արծաթե մանյակը, որ հրաժեշտի ժամանակ նրան էր տվել Դեյնը:

— Ինչո՞վ եմ արժանացել այս ընծային, ով հոբիտ,— հարցրեց արքան:

— Ը-ը-ը՛, ես կարծում եմ... ինձ թվում է... շփոթված կմկմաց Բիլբոն,— ես... ը-ը-ը՛... պարտական եմ ձեզ, ը՛մ-մ-մ... հյուրընկալության համար: Գողերին էլ է հատուկ երախտագիտության զգացումը: Ես շատ եմ խմել ձեր գինին և շատ եմ կերել ձեր հացը:

— Ես ընդունում եմ քո ընծան, ով Բիլբո Առատածեռն,— հանդիսավոր ասաց արքան:— Քեզ դասում եմ էլֆերի բարեկամների շարքը և օրհնում եմ. թող որ չկարճանա քո ստվերը, այլապես գողությունը չափազանց հեշտ գործ կդառնա: Գնաս բարով...

Էլֆերը շրջվեցին դեպի անտառ, իսկ Բիլբոն բռնեց վերադարձի երկար ճանապարհը: Այդ ճանապարհին էլ նրան քիչ դժվարություններ ու զանազան արկածներ չպատահեցին: Այնուամենայնիվ վայրի տեղանքը վայրի էլ մնում էր: Այն օրերին բացի գոբլիններից այնտեղ ուրիշ շատ այլ պիղծ արարածներ էին քարշ գալիս: Բայց այս անգամ Բիլբոն ոչ մի անգամ լուրջ վտանգի չենթարկվեց: Կամաց-կամաց, ձմռան կեսերին, նրանք հասան Բեորնի տունը և հյուր մնացին: Ծննդյան տոները շատ ուրախ անցան, ամեն տեղից Բեորնի հրավերով բազմաթիվ հյուրեր հավաքվեցին: Մառախլապատ Լեռների գոբլինները նրանց այլևս չէին անհանգստացնում. պարտությունց հետո նրանք սսկվել էին ու թաքնվել խոր որջերում: Վարդերը հեռացել էին անտառներից, և մարդիկ այժմ աներկյուղ ճանապարհորդում էին: Բեորնը այդ կողմերում առաջնորդ դարձավ և կառավարեց Վայրի Երկիրը: Ասում են, որ նրա ժառանգները սերնդե սերունդ տիրապետում էին արջ դառնալու ունակությանը: Սրնաց մեջ վատերն էլ էին հանդիպում, չար մարդիկ, բայց մեծամասնությունը հոգով Բեորնի էր նմանվում, թեև նրանք ավելի ցածրահասակ էին ու ոչ այնքան ուժեղ: Նրանց օրոք վերջին գոբլիններին վռնդեցին Մառախլապատ Լեռներից, և Վայրի Երկրին հարևանում էր խաղաղությունն ու ահնգստությունը:

Արդեն բացվել էր հիասքանչ և տաք գարունը, փայլում էր վառ արևը, երբ Բիլբոն և Հենդալֆը հրաժեշտ տվեցին Բեորնին: Ինչքան էլ Բիլբոն կարոտել էր հարազատ տանը, բայց էլի Բեորնի տնից ավստսանքով էր հեռանում, որովհետև Բեորնի այգու ծաղիկները գարնանը չէին զիջում թե՛ ամռան հրաշալի ծաղիկներին:

Նրանք ճանապարհ ընկան և շուտով հասան այն լեռնանցքին, որտեղ մի ժամանակ ընկել էին գոբլինների ճանկը: Այս անգամ նրանք լեռնանցքը բարձրացան առավոտյան և, ետ նայելով, տեսա վաղորդայնի թույլ արևով լուսավորված երկիրը: Այտեղ, հեռու հորիզոնում հազիվ երևում էր Մենավոր լեռը: Նրա ամենաբարձր գագաթին փայլփլում էր չհավված ձյունը:

— Ահա և ձյուն՝ կրակից հետո,— ասաց Բիլբոն:— Նույնիսկ վիշապների վերջը եկավ:— Եվ նա մեջքով շրջվեց դեպի Սարը, ասես թե վերջակետ դնելով իր ճանապարհորդությանը: Ամեն օրվա հետ տուկովյանը նրա

միջից դուրս էր գալիս, իսկ բեգինսայանը գերիշխում էր:— Հիմա ես մի բան եմ ցանկանում. որքան կարելի է շուտ ընկղմվել իմ բազկաթռոռի մեջ:

ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽ

Մայիսի մեկն էր, երբ ճանապարհորդները հասան Ռիվենդել դաշտավայրի եզրին, որտեղ գտնվում էր Վերջին (իսկ այս կողմից՝ առաջին) Ընտանեկան Հանգրվանը: Դարձյալ երեկո էր, պոնիները հոգնել էին, հատկապես նա, որ բեռն էր տանում: Երկու հեծյալն էլ հանգստի կարիք ունեին: Չառիվայր կածանով իջնելիս Բիլբոն ծառերի միջից լսեց էլֆերի երգը, կարծես թե նրանք այդպես էլ իրենց մեկնելու օրից մինչև հիմա չէին ընդհատել: Հազիվ էին հեծյալները իջել ստորին բացատը, էլֆերը երգեցին նախկին երգին շատ նման մի երգ.

Էլ վիշապ չկա,
Մահ ու ահ չկա,
Թշնամու համար
Թագ ու գահ չկա:
Չենքը ժանգոտում,
Ընկնում են գահեր,
Գանձը գին չունի,
Իզուր է պահել:
Տես, տերևներն են
Անուշ սվսվում,
Ջուրը կարկաչում,
Ու երգ է լսվում՝
Տրա-րա-րա-րա,
Տղաներ, առաջ:

Պայծառ շողում են
Աստղերը սուտակ,
Օդը մաքուր է
Լուսնի լույսի տակ,
Խարույկն է փայլում
Ոսկու պես հալչող.
Ինչո՞ւ թափառել,
Տղաներ, ինչո՞ւ...
Հոգնած եք, խուր,
Ո՞ր եք վռագում,
Մինչև հեռուներն են
Ձեզ կանչում իզուր,
Խելք հավաքեցեք,
Էլ ինչո՞ւ գնալ,
Չէ որ էլֆերն էլ

Խնդրում են մնաք:
Մնացեք, տղերք,
Հոգևած եք, ախրր,
Տրա-րա,
Տրա-րա-րա,
Հա-հա:

Հետո Էլֆերը դուրս եկան ծառերի ետևից, ողջունեցին և Բիլբոյին ու հրաշագործին կամուրջն անցկացնելով տարան Էլրոնդի տունը: Այստեղ ճամփորդներին գրկաբաց ընդունեցին և խնդրեցին պատմել իրենց արկածների մասին: Պատմում էր Հենդալֆը, քանի որ քունը գլխին Բիլբոն լռում էր: Արկածների մեծ մասին Բիլբոն անձամբ մասնակցել էր, և հենց ինքն էլ ճանապարհին շատ բան էր պատմել հրաշագործին: Բայց ժամանակ առ ժամանակ որևէ բան լսելիս Բիլբոն բացում էր աչքերը և ականջ դնում:

Այդպես նա իմացավ, թե Հենդալֆն ինչու էր բացակայում. նա մասնակցում էր բարի հրաշագործների մեծ խորհրդին, որ զբաղվում էր ճերմակ մոգությամբ և այդ բնագավառում բավական գիտակ էին: Վերջապես նրանց հաջողվել էր Սև Անտառի հարավային ծայրամասի իր մռայլ բնակատեղիից վտարել Նեկրոմանտին:

— Այնուհետև,— ավելացրեց Հենդալֆը,— անտառը ավելի պակաս վտանգավոր կդառնա, իսկ Հյուսիսը կազատվի նրա չար իշխանությունից: Բայց ավելի խաղաղ կլինեք, եթե նրան բոլորովին վտարեին այս աշխարհից, որտեղ մենք ենք ապրում:

— Ավելի լավ ցանկություն լինել չի կարող,— հաստատեց Էլրոնդը,— բայց վախենում եմ, որ դա տեղի կունենա դեռևս ոչ մեր ժամանակներում, և առհասարակ ոչ շուտ:

Ճանապարհորդության պատմությանը հետևեցին այլ պատմություններ, հետո էլի և էլի հին ու նոր իրադարձությունների մասին և այն մասին, ինչ առհասարակ չէր էլ եղել, և, վերջապես, Բիլբոյի գլուխը կախվեց կրծքին, ու նա քաղցր քնեց:

Արթնացավ սպիտակաթույր անկողնում, լուսինը պատուհանից ուղիղ ներս էր նայում: Ներքևից, առվի մոտերքից լսվում էին Էլֆերի զրնգուն ձայները.

Հե՛յ, եկեք երգենք, խմբովին երգենք,
Թող քամին սուրա, բարձրանա երկինք,
Թող մուգ երկնքում աստղերը շողան,
Թող ստվերները լուսնի տակ դողան:
Պարեցեք անհոգ, պարեցեք արագ,
Ուրքեր, թռչկոտեք խոտերի վրա,

Թող առուները զնգալով հոսեն,
Մայիսյան տոն է, խրախճանք ու սեր:

Քնել է հոգևած ճամփորդը, տեսեք,
Անտառում խաղաղ թող քնի մեզ հետ,
Քնի՝ գլուխը թավ խոտի վրա,
Թող օրոր ասի ուռենին նրան:

Մի՛ խշշա, Հացի, պապանձվիր, Բարդի,
Թող նրա քունը լինի անվրդով,
Կաղնի, լուռ մնա ու մի՛ շառաչի,
Թող հանգիստ քնի երազներում ջինջ:

— Մի խոսք, Ուրախ ժողովուրդ...— ասաց Բիլբոն գլուխը պատուհանից դուրս հանելով:— Գիշերվա ո՞ր ժամն է: Ճիշտ որ, ձեր օրորոցայինը հարբած գորբիկն էլ կարթնացնի... Ի միջի այլոց շնորհակալություն երգի համար:

— Իսկ քո խռմփոցը յոթ սարի ետևում քնած վիշապին էլ կարթնացնի,— ծիծաղելով առարկեցին նրանք:— Բայց մենք էլ ենք շնորհակալ քեզնից: Շուտով լույսը կբացվի, իսկ դու երեկվանից քնած ես:

— Էլդրոնի տանը քնելը փառավոր բան է,— պատասխանեց Բիլբոն,— բայց ես կուզեի էլի քնել այս տանը: Կրկին բարի գիշեր, իմ սիրելի բարեկամներ...— Եվ Բիլբոն նորից իրեն զցեց անկողին ու վեր կացավ միայն ուշ առավոտյան:

Նրա հոգևածությունը շուտով անցավ, և շատ անգամ պարեց ու կատակներ արեց Էլֆերի հետ առավոտ վաղ և ուշ գիշերին: Բայց նույնիսկ Էլֆերի հովտում այդ ուրախ կյանքը չէր կարող նրան պահել, ամբողջ ժամանակ նա տուն էր ձգտում: Դրա համար էլ մեկ շաբաթ հետո հրաժեշտ տվեց Էլրոնդին, մեծ դժվարությամբ համոզեց նրան ընծաներ ընդունել և Հենդալֆի հետ շարունակեց ճանապարհը:

Հենց նրանք դուրս եկան հովտից, երկինքը մթնեց, քամի բարձրացավ ու անձրև տեղաց:

— Մայիսին չեմ ձանձրանա,— ասաց Բիլբոն, դեմքը ձաղկող անձրևից թաքցնելով:— Բա ինչ, առասպելները մնացին ետևում, մենք տուն ենք վերադառնում: Երևի, առաջին լուրն է սա տան մասին:

— Առջևում դեռ շատ երկար ճանապարհ կա,— նկատեց Հենդալֆը:

— Համենայն դեպս այն տանում է դեպի տուն և ուրիշ ոչ մի տեղ,— պատասխանեց Բիլբոն:

Նրանք հասան գետին, որ Վայրի Երկրի սահմանն էր, և գրոշկող ափով իջան ծանոթ ծանծաղուտը: Ջուրը գետում բարձրացել էր, որովհետև ձյունը հալվում էր ու ամբողջ օրն անձրև էր գալիս: Նրանք մի կերպ անցան մյուս ափը և փութացին առաջ, որովհետև մուլն ընկնում էր

արդեն: Ճանապարհորդությունը կրկնվում էր հակառակ կարգով, այն բացառությամբ միայն, որ ընկերախումբը փոքր էր, տրամադրությունն ավելի տխուր և տրոլներ չկային:

Ճանապարհին Բիլբոն շարունակ ճանաչում էր տեղանքն ու վերհիշում, թե ինչ էր կատարվել այստեղ կամ այնտեղ մեկ տարի առաջ և ինչ էր ասվել այն ժամանակ (սրան թվում էր, թե տասը տարի է անցել): Դե, իհարկե, նա իսկույն նկատեց այն տեղը, ուր պոնին փախավ, իսկ իրենք ճանապարհից շեղվեցին և չափազանց տհաճ արկածի հանդիպեցին Թոմի, Բերթի և Բիլլի հետ:

Ճանապարհից ոչ հեռու Հենդալֆն ու Բիլբոն փորեցին հանեցին մեկ տարի առաջ իրենց թաքցրած ոսկին:

— Ինձ առանց այդ էլ մինչև կյանքիս վերջը հերիք է,— ասաց Բիլբոն:— Ավելի լավ է դու վերցրու, Հենդալֆ: Ով՞ ով, բայց դու կիմանաս, թե որտեղ գործածես դա:

— Իմանալը՝ կիմանամ,— պատասխանեց Հենդալֆը:— Բայց ես արդարացի բաժանման կողմն եմ: Ո՞վ գիտե, գուցե քեզ ոսկին ավելի շատ պետք գա, քան դու կարծում ես:

Նրանք ոսկին լցրեցին պարկերն ու գցեցին պոնիների մեջքին, որից սրանք շատ դժգոհ մնացին: Դրանից հետո նրանց ընթացքը խիստ դանդաղեց, քանի որ ճանապարհի մեծ մասը ստիպված եղան ոտքով քարշ գալ: Բայց դրա փոխարեն որքա՞ն հաճելի էր կանաչ փափուկ խոտի վրայով քայլելը: Հոբիտը գնում էր ու ըմբռնվում այդ հաճույքը, և քրտինքը սրբում կարմիր մետաքսե թաշկինակով: Բայց ոչ իր թաշկինակով, նրա պահուստից ոչ մեկը չէր փրկվել, այս թաշկինակը էլնորդն էր նրան փոխարինաբար տվել, քանի որ հունիս ամսի հետ ամառ էր եկել, ամառվա հետ էլ՝ շոգը:

Քանի որ աշխարհում ամեն ինչ վերջ ունի, նույնիսկ մեր պատմությունը, ապա եկավ օրը, երբ նրանք տեսան այն տեղանքը, որտեղ Բիլբոն ծնվել ու մեծացել էր, որտեղ յուրաքանչյուր բլուրն ու ծառը նրան ծանոթ էին, ինչպես իր հինգ մատը: Թմբի վրայից նա հեռվում տեսավ հարազատ Բլուրն ու հանկարծ կանգ առավ:

Ժայռերն ու գորշ բարձունքներն ի վեր
Ճամփան ոլորվում, ձգվում է երկար՝
Դեպի գետակը, որ ծով չի տեսել,
Գետնախուլցերը, ուր արև չկա:

Ճամփան ձգվում է մերթ կանաչների,
Մերթ հավերժական փյունների միջով,
Անցնում է ամռան ծաղկած դաշտերով,
Սարալանջերով՝ քարքարոտ ու չոր:

Գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր
Ճամփան ձգվում է հեռուն,

Հոգուդ խորքերից մտերմիկ մի ձայն
Կանչում է... ու տան կարոտն է եռում:

Կանգնում ես մի պահ, նայում ես շուրջդ,
Նայում ես, նայում ու մարգագետնում
Տեսնում ես ծանոթ բլուրներ, ծառեր,
Եվ քո հայրական տունն ես տեսնում դու:

Հենդալֆը աչքի ծայրով նայեց նրան.

— Բիլբո, թանկագինս,— ասաց նա:— քեզ ի՞նչ պատահեց: Ես քեզ չեմ ճանաչում...

Նրանք անցան կամուրջը, անցան ջրաղացի կողքով և հայտնվեցին միստր Բեգինսի տան մոտ:

— Ողորմած աստված... ի՞նչ է կատարվում,— զարմանքով բացականչեց նա:

Դռան մոտ ահագին ժողովուրդ էր հավաքված, տարբեր մարդիկ՝ պատկառելի և ոչ պատկառելի, բոլորը մտնում ու դուրս էին գալիս և, ինչպես սրտնեղությամբ նկատեց Բիլբոն, նույնիսկ ոտքերը չէին մաքրում փալասի վրա:

Ի միջի այլոց Բիլբոյի զարմանքը չի կարելի համեմատել հավաքվածների զարմանքի հետ: Բանն այն է, որ նա վերադարձել էր աճուրդի ամենաթեժ պահին: Պարտեզի դռնակին մեծ հայտարարություն էր փակցված, սևով սպիտակի վրա ազդարարելով, որ հունիսի 22-ին պարոն Գրաբը, Գրաբը և Բերոուզը աճուրդի կհանեն Բիլբո Բեգինսի, Հոբիտստան կոմսության Բլրատակի բեգ-Էնդիգի Եսկվայրի գույքը, վաճառքը կկայանա առավոտյան ուղիղ ժամը 10-ին: Այժմ համարյա երկրորդ նախաճաշի ժամն էր և իրերի մեծ մասը վաճառվել էր տարբեր գներով, ավելի ճիշտ ասած, ամենաէժան գներով, ինչպես և հաճախ արվում է աճուրդներում: Բիլբոյի ազգականները՝ Սակվիլ-Բեգինսները, այդ ժամանակ հենց զբաղված էին նրանով, որ չափում էին սենյակները, ցանկանալով ստուգել, թե այնտեղ կտեղվորվի՞ արդյոք իրենց սեփական կահույքը: Մի խոսքով, Բիլբոյին համարել էին անհայտ կորած, և ոչ բոլորն ուրախացան, երբ պարզվեց, որ նա ողջ է ու առողջ:

Միստր Բիլբո Բեգինսի վերադարձը մեծ աղմուկ բարձրացրեց ինչպես Բլրատակում, այնպես էլ Բլրի Ետևում և Գետի Այն Կողմում: Այդ իրադարձության նկատմամբ եղած բնական քաշքշուկը տևեց ևս մի քանի տարի: Շատ ջրեր հոսեցին մինչև միստր Բեգինսի կենդանի լինելն ընդունեցին: Հատկապես նրանց, ովքեր աճուրդում էժան գներով իրեր էին ձեռք բերել, ստիպված եղան շատ երկար համոզել, թե Բիլբոն ողջ է: Վերջ ի վերջո, որպեսզի ժամանակ շահի, Բիլբոն ետ գնեց իր սեփական կահույքի մեծ մասը: Բայց նրա արծաթե գդալներն այդպես էլ անվերադարձ կորան: Անկեղծ ասած, նա կասկածում էր, որ դա Սակվիլի-Բեգինսների ձեռքի գործն է: Ինչ վերաբերում է այս ազգականներին,

ապա նրանք այդպես էլ չհամաձայնեցին վերադարձած Բիլբոյին ճանաչել որպես իսկականը և բարեկամաբար չէին տրամադրված նրա նկատմամբ: Ախր նրանք շատ էին ցանկանում ապրել Բիբլոյի փառահեղ բնում:

Բացի դրանից, Բիլբոն հայտնաբերեց, որ ոչ միայն արծաթե գդալներն է կորցրել, այլև՝ բարի համբավը: Ճիշտ է, իր ամբողջ կյանքում նա էլֆերի հետ բարեկամ մնաց, նրանց այցելում էին թզուկներ, հրաշագործներ ու նման անձնավորություններ, բայց նա դադարել էր պատվավոր հոբիտ համարվելուց: Հոբիտստանում նա «մի քիչ պակասի» անուն էր հանել, այլ կարծիքի էին միայն նրա տուկոյան կողմի զարմիկներն ու զարմուհիները, բայց այս դեպքում էլ մեծերը չէին խրախուսում նրանց բարեկամությունը Բիլբոյի հետ:

Պետք է ազնվորեն ասել, որ դա նրան մազաչափ անգամ չէր հուզում: Նա միանգամայն գոհ էր կյանքից, թեյնիկն ավելի քաղցրալուր էր երգում օջախի վրա, քան առաջ՝ այն խաղաղ օրերին, մինչև Անկոչ Հյուրերի դարաշրջանը: Նա դաշույնը կախեց օջախի վերևում: Օղագրահը փռեց նախասենյակում, իսկ հետագայում նվիրեց թանգարանին: Ոսկին ու արծաթը գլխավորապես նվերների վրա գնաց (որը և որոշ չափով բացատրում է զարմիկների ու զարմուհիների կապվածությունը նրա հետ): Կախարդական մատանին խիստ գաղտնի էր պահում և օգտագործում էր, երբ տհաճ այցելուներ էին գալիս:

Նա սովորություն դարձրեց բանաստեղծություններ գրել և էլֆերին հյուր գնալ: Հարևաններից շատերը գլուխներն էին օրորում, մատները քունքին դնում ու ասում. «Խեղճ Բեգինս»: Նրա պատմություններին քչերն էին հավատում: Բայց Բիլբոն, չնայած ամեն ինչին, մինչև կյանքի վերջը շատ երջանիկ էր զգում, իսկ նրա կյանքը չտեսնված երկար եղավ:

Ճանապարհորդությունից տարիներ անց մի աշնանային երեկո Բիլբոն նստել էր առանձնասենյակում և հուշեր էր գրում: Նա մտածում էր կոչել «Գնալն ու գալը: Հոբիտի ճանապարհորդությունը»: Հանկարծ դռան զանգը տվեցին, մտավ Հենդալֆը, նրա հետ էլ մի թզուկ, ոչ այլ ոք, քան Բալինը:

— Մտե՛ք: Մտե՛ք,— գոչեց Բիլբոն: Նրանք տեղավորվեցին օջախի մոտ դրված բազկաթոռին: Բալինը նկատեց, որ միսոր Բեգինսի անթև բաճկոնը անհամեմատ ավելի շքեղ էր, քան առաջ, իսկական ոսկե կոճակներով: Իսկ Բիլբոն նկատեց, որ Բալինի մորուքը երկարել է ևս մի քանի մատնաչափ, և կապել է պերճ գոտի՝ թանկագին քարերով զարդարված: Բնական է, նրանք հուշերի գիրկն ընկան: Բիլբոն հարցրեց, թե ինչպես են ապրում Սարատակում և նրա շրջակայքում: Պարզվեց, որ լավն են ապրում, ավելի լավ հնարավոր չէ: Բերդը նորից կառուցել է Դեյլը, և այնտեղ մարդիկ են հավաքվել լճից, հարավից ու արևմուտքից, հովիտը մշակում են, և այն նորից բերքատու է դարձել: Ամայացած տեղանքը զարնանաը առատորեն ծածկվում է ծաղիկներով ու թռչուններով, աշնանը փառաբանվում է պտուղներով ու տոնական խնջույքներով: Լճաշեն քաղաքը նույնպես վերակառուցել են, այժմ կրկին հարստացել է, և Արագահոս գետով վեր ու վար են անում բեռներով լի նավակներ: Էլֆերը, թզուկներն ու մարդիկ ապրում են շատ համերաշխ:

Ծեր քաղաքագլխի վերջը վատ եղավ: Բերդը նրան շատ ոսկի տվեց Լճաշեն քաղաքի բնակիչների համար, բայց քանի որ քաղաքագլուխը պատկանում էր մարդկանց այն տեսակին, որոնք շատ արագ են վարակվում, ուստի բռնվեց վիշապի ցավով, վերցրեց ամբողջ ոսկին, փախավ Վայրի Երկիր և այնտեղ սովից մեռավ:

— Նոր քաղաքագլուխն իրեն շատ խելոք է պահում,— ավարտեց Բալինը,— և մեծ հեղինակություն ունի: Բնական է, ներկայիս բարգավաճումը նրա ծառայությունն է համարվում: Նոր երգերում արդեն երգում են այն մասին, թե ինչպես նրա օրոք, վերջապես, ոսկու գետեր հոսեցին:

— Ուրեմն , նշանակում է հնուց եկող կանխագուշակումները որոշ իմաստով իրականացել են,— նկատեց Բիլբոն:

— Իհարկե...— պատասխանեց Հենդալֆը:— Իսկ ինչու չպետք է իրականանային: Հուսով եմ, հավատո՞ղ չես կորցրել մարգարեության նկատմամբ այն բանից, որ ինքդ ես նպաստել դրանց իրականացմանը: Չլինի՞ լրջորեն մտածում ես, իբրև թե ամեն անգամ ջրից չոր ես դուրս եկել հենց այնպես, քո բախտավոր աստղի շնորհիվ: Իսկապես, հո ամեն ինչ միայն քո փրկության համար չէր այդես հաջող դասավորվում: Խոսք չկա, միսոր Բեգինս, դուք հրաշալի անձնավորություն եք, և ես ձեզ շատ եմ սիրում,— այստեղ նա բարեհոգաբար ժպտաց փոքրիկ հոբիտին,— բայց մի՛ մոռացեք, խնդրում եմ, որ աշխարհը շատ մեծ է, իսկ դուք այնքան էլ խոշոր դեմք չեք...

— Է՛հ,— ավելի լավ...— ծիծաղեց Բիլբոն:— Փոխարենը ես հիանալի ծխախոտ ունեմ... Եվ կախարդին մեկնեցիր ծխախոտատուփը: